



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնազրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնազրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material



33

2531


2532

2533

84  
4-79

10

W




708

2442.57 9


34

101 82 904

# ԱՐԴՅՈՒԹ-ՎԱՐ



ԹԱՐԳՄԱՆԵՑ



ՍԵՐԴԱՐ Խ. ՔԻՒԼՀԱՆՆԵԱՆ



معارف نظارت جلیله سنك رخصتیله طبع او لنشدر



Կ. ՊՈԼԻԱՆ  
ՏՊԱԳՐ. ԶԱՐԴԱՐԵԱՆ  
1882

# ԱՐԵՒՄ ԹԱՎԱԿ



ԳԼՈՒԽ Ա.

## ԶԱՐՑՈՒՐԱՆՔ ԵՒ ԱՂԵՏՔ

— Օ՞ն ուրեմն , յառաջ՝ Զեփիւռ , քաջ՝  
Եր , իմ գիրուկս , փոքր մղոն մալ ըն-  
դոստէ որ գիւղ հասնինք , Կ'երեւայ թէ  
ախոռի հոտը առնելով սկսար շուտ քա-  
լբլու :

Հայր Լիւքա , Լուվրէն Երմնօնվիլ տանող  
ճամբուն վրայ այսպէս կ'խօսակցէր իր  
բռչոյին հետ , և պարապ խօսքերով կ'ջա-  
նար սիրտ տալու Զեփիւռին՝ որ այսու տ-  
մենայնիւ իր ընդոստումը չէր արագացը-  
ներ :

Յանկարծ ծանրութիւն մը իյնալով խեղճ  
կենդանւոյն գաւակին վրայ , ոստում մը  
կ'ընէ և կ'սկսի պահ մը քառարշաւ ընթա-  
նալ , այնպիսի քառարշաւ մը որու նման

տարին երկու անգամ չէր պատահեր ի-  
րեն, վասն զի կարծես թէ ցնցումին սաստ-  
կութիւնը անոր թեւեր տուած էր : Հայր  
լիւքա կուզէ պոռալ . . . ուսկայն երկու  
զօրաւոր բաղուկներ զինքը կշրջապատեն  
և ուժգնաբար կ'պրկեն : Խեղճ գեղացին  
ահաբեկ՝ դաւակին վրայինը սատանայ կար-  
ծելով խօսելու զօրութիւն չ'ունենար, հե-  
տեւաբար մատաղաձիուն սանձը ձգելով  
ինքինք իր ճակատագրին կյանձնէ և իր  
ճամբու ընկերը չ'տեսնելու համար աչքերը  
կ'փակէ :

Իսկ Զեփիւռ որ ոյժ և յօժարութիւն  
չունէր երկայն ատեն քառարշաւելու,  
մանաւանդ աւազոտ տեղերու եկած ըլլա-  
լով, խստութիւնը մեղմացուց և վերստին  
իր սովորական քայլը ձեռք առաւ : Այս  
միջոցին Լիւքան շրջապատող բաղուկները  
բակուելով բարձրածայն քրքիջ մը ելաւ.  
Խեղճ գիւղացւոյն քիչ քիչ խելքը գլուխը  
եկաւ և սիրտն վերստին դտաւ իր արիու-  
թիւնը . հետեւաբար մտածելով թէ առանց  
չար ողի մ'ըլլալու ալ Զեփիւռին դաւակին  
վրայ կընար ոստումը պատահած լինել.  
դլուխը քիչ մը դարձուց, նայուածք մ'ը-

բաւ աչքին ծայրովը և փոխանակ թէեղզեր-  
բուղի կամ Աղմօտէի՝ ախորժելի դէմքով  
երիտասարդ մը տեսաւ որուն վրան գլու-  
խը քիչ մ'անկանոն էր, բայց այսու ամե-  
նայնիւ երկիւղալի բան մը չունէր :

— Բա՛րէ, դիտէ՞ք պարսն թէ որչափ  
վախ պատճառեցիք ինձ :

— Սակայն դուք ալ, խոշորուկ հայրս,  
դրեթէ քառորդ մղոն մը ճամբայ ըրիք ա-  
ռանց շարժելու և կարծեմ նաեւ առանց  
շունչ առնելու :

— Ասոր վրայ ալ կ'իսնդաք հա՞ . խըն-  
դալու բան է աս . եթէ մեռած տուն հաս-  
նէի, ի՞նչ պիտի ըսէր կնիկս :

— Քիչ մը կուլար և ապա ուրիշ մէկուն  
կ'նայէր :

— Ո՛հ, ասիկայ կարելի է, բայց իմ ազ-  
ջիկս, փոքրիկ Սիւզօնս . . . որ իր Լիւքա  
հայրիկը այնչափ կ'սիրէ :

— Ինչ որ է, այլ ևս չխօսինք ասոր վը-  
րայ, հայր Լիւքա՛, որովհետեւ դուք հիմա  
մեռած չէք, և կ'տեսնէք թէ վախնալու  
բան մը չկայ զի ես ո՛չ սատանայ եմ եւ  
ո՛չ դող :

— Տակաւին շատ վստահ չեմ ասոր վը-

բայ . . . մարդ մը որ պատահարի նման  
իմ եռեւս կ'իյնայ . . .

— Ի՞նչ ընեմ, քանի մը վայրկենէ ի վեր  
ձեղ կ'կանչէի, բայց վերջապէս նայեցայ  
որ չ'էք լսեր, վազեցի ու առանց ձեղի կե-  
ցընելու ձիուն վրայ հեծայ. վասն զի ես  
Ֆրանգօնիէն դասեր առած եմ:

— Արդարեւ, այս դասերու մէջ շատ  
յառաջ գացեր էք: Բայց միթէ կ'կարծէ՞ք  
որ ասանկ երկայն ժամանակ պիտի տանիմ  
դձեղ:

— Անշուշտ, մինչեւ ձեր տունը :

— Իմ տունս, և ի՞նչ ընելու համար :

— Այս գիշեր ինձի օթեւան տալու հա-  
մար :

— Երկնքէ ինկած մարդու մը օթեւան  
տալ . . .

— Ի՞նչ հոգ, ուրկէ իյնալս բաւական է  
որ էւելօք ձեղի կ'վճարեմ: Ստակը կ'սիրէ՞ք,  
հայր Լիւքա:

— Հարկ'աւ, եթէ պարկեշտութեամբ  
շահուի, կ'հաւանիմ:

— Լա՛ւ ուրեմն. քանի որ ճամբորդի մը  
կերակուր և անկողին տալու մէջ չարիք մը  
չկայ, այս իրիկուն պիտի ընդունիք զիս

ձեր տունը : Առ այժմ առէք սա քսան ֆը-  
րանքը և քիչ մ'ալ մտրակեցէք Զեփիւռը  
որ ժամ յառաջ երթանք տիկին Լիւքան  
հանդարտելու :

Երիտասարդը այնպիսի համոզիչ խօսքեր  
և այնքան անկեղծ կերպարանք ունէր որ  
գիւղացին բան մը չդտաւ նորա առաջար-  
կութեան դէմ կենալու : Նա մանաւանդ  
հայր Լիւքա ստակը շատ կ'սիրէր, և քսան  
ֆրանք, մեր գիւղին համար մեծ գումար  
մ'է ըսելով մատաղաձին կ'մտրակէ և ըն-  
դուստումը կ'շարունակուի :

Ճամբայ կտրած ատեն, Լիւքա նոր հար-  
ցումներ կ'ուզդէ իր ընկերին :

— Ա՛հ, կ'երեւայ թէ մերձավայրերէն  
կ'դաք, քանի որ առանց փեղոյրի կ'շընիք :

— Նայինք թէ ժամանակ ունեցա՞յ փե-  
ղոյրս առնելու հաղիւ թէ տափատ մը և  
թիկնոց մը հադայ :

— Ա՛յ, արդեօք լոգումը արդիլուած  
ջուրի մը մէջ լուացուելու վրա՞յ էիք :

— Ատոր պէս բան մը, մուտքը արդիլ-  
ուած տեղ մը դացած էի :

— Հասկցա՞յ, առանց հրամանագիր ու-  
նենալու կ'որսայիք :

— Այո՛, հայր Լիւքա, ճիշդ ըսածնուղ  
պէս. ինձի չվերաբերող անդի մը վրայ  
կորսայի :

— Ահաւասիկ այսպէս են այս երիտա-  
սարդները ասոնք տարակոյս ըսած բանդ  
չեն ճանչեր, ուրեմն ասանկ, առանց թիկ-  
նոցի և անվա՞րտի կորսայիք :

— Այո՛, որսալիք թռչունս շատ դիւրին  
և հանգիստ կերպով բռնելու համար :

— Այնզովից արմատ որսամոլ . . . այս-  
պիսի որս մը երբէք լսած չէինք :

— Բայց, հայր Լիւքա՛, կարծեմ Զեփիւ-  
ռը կասեցուց իւր քայլը :

— Ահ, հարկա՛ւ, խեղճը սովորութիւն  
չունի երկու բեռ տանելու :

— Որչա՞փ ալ նքթած եմ: Ո՞ր դիւզը  
կընակիք :

— Երմնօնվիլ:

— Սա տեսնուած դիւզն է :

— Ոչ, անիկայ Մոռֆօնդէն է: Մենք  
տակաւին մէկուկէս մղոն ճամբայ ունինք,  
նաեւ դիշերն ալ վրայ եկած ըլլալով, դո-  
ղերէն և դայլերէն կ'վախնամ:

— Բանէ մը մի՛ վախնաք, ես դձեղ պիտի  
պաշտպանեմ:

Երբ մեր ճամբորդները այսպէս խօսակցելով կ'երթային, ետեւի կողմէն ձիերու քառարշաւ մը լսեցին: Թէեւ խաւարը կոխած և հեռուէն մէկզմէկ ճանչել անկարելի եղած էր, սակայն աղմուկին աւելնալէն կ'հասկցուէր թէ ձիաւորները կ'մօտենային:

Յանկարծ Լիւքային երիտասարդ ընկերը ահարեկութիւն մունենալով.

— Այ, կ'գոչէ, զիս կ'հալածեն, շուտը ըրէ, իմ քաջ հայրիկս պէտք է խոյս տալ ասոնց ձեռքէն:

— Չեղ կ'հալածե՞ն, ի՞նչպէս, այն թըռչունի՞ն համար զոր շապիկով կ'որսայիք:

— Ինչու համար ըլլալը կարեւոր չէ հիմա. վերջը կ'պատմեմ ձեզի: Գիշերուան խաւարէն օդուտ քաղելով, պէտք է ճամբայ կարել այժմ:

Առանց գիւղացւոյն խօսքին սպասելու, երիտասարդը խեղճ ձին կ'մըլէ և շարունակ հարուածներ տեղալով կ'ստիպէ քառարշաւելու. հայր Լիւքա ի զուր կ'ողբայ կ'հայհոյէ և կ'գոչէ թէ իր ձին պիտի ճաթի. զի ընկերը ձիերուն աղմուկը և զինքը հալածողներուն մօտենալը լսելով, միմիայն

խոյս տալու կ'ջանար : Ասանկով Մօռֆօն-  
դէնը կ'անցնին , սակայն Զեփիւռ որ երբէք  
այսպիսի վարմաւնքի մը սովորած չէր , սաս-  
տիկ կատաղութեամբ մը անկուշելով , կից  
նետելով իր սանձը կ'խորտակէ և դէպ ի  
ճահիճ մը կ'ընթանայ :

Մինչդեռ հայր Լիւքա իր ձին կեցնելու  
կ'ջանայ , և ետեւէն ձիաւորները «կեցէք»  
կ'պօռան . մեր երիտասարդը կ'խնդայ և  
միանգամայն կ'հայհոյէ :

Վերջապէս Զեփիւռ ճահիճին մէջ մտնե-  
լով հօն լողացող բագերուն վրայ կ'թա-  
ւալդլորի և իր հեծեալներն ալ ջուրին մէջ  
ցեխոտ և տղմաթաթաւ կ'լինին :



## ԳԼՈՒԽ Բ .

### ՖԵՌԻՆ

— Միշտ ցովութիւն և շոայլութիւն ,  
դարձեալ վեց հարիւր ֆրանքի տոմսակ մը ,  
դոր պէտք է պարսնին համար վճարել :

— Սակայն, քեռի՛ս, պատոյ պարտք  
մ'է ասիկա :

— Բա՛րէ, պարո՞ն բոլոր պարտքերն ալ  
չուիրական խոստումներ են. բայց քանի որ  
ես գիտեմ ձեր բոլոր պիտոյքը կանխաւ  
հոգալ, պէտք չէ որ պարտք ընէք դուք .  
գիտէ՞ք արդեօք թէ որչափ ստահակու-  
թիւն կ'ընէք :

— Ե՞ս, սիրելի քեռիդ ի՛մ, բայց այդ-  
պիսի անառակութիւն մը չ'եմ տեսներ վը-  
րաս :

— Հա՛, դուք չեք տեսներ, շա՛տ լաւ,  
ես ձեզի պիտի ցուցնեմ, պարո՞ն, հոն  
դիմացս հանգարտ նստեցէք :

— Սիրելի քեռիդ ի՛մ, ես ձեզի ունե-  
ցած պարտաւորութիւնս աղէկ գիտեմ:

— Լուէ՛ ուրեմն : Հօռդանս Մօռանվալ,  
ձեր մայրը և իմ քոյլոս բարի, կարդադիր,  
խնայող և ամէն մարդու սիրելի կին մ'էր . . .

— Վերջապէս ամէն տեսակ բարեմաս-  
նութիւններ ունէր . . .

— Լուցէ՛ք պարո՞ն, քըոջս ինչ ըլլալը  
ես գիտեմ, խեղճ կին, որդիական սիրով  
կուրցած չէր տեսներ թէ դուք անտանե-  
լի, ստախօս և խաղամնլ էք : Զեր հայրն ալ

խելացի մարդ մ'էր , իր տաղանդները , իր  
արժանիքը , ախորժական բարքը ամէն ըն-  
կերութեանց մէջ հետազօտել կ'տային զին-  
քը : Եւ պատուով ի գործ դրած փաստա-  
բանութեան մէջ անուն պիտի ստանար ,  
բայց յանկարծ մահը անջատեց զայն իր ա-  
մուսինէն և բարեկամներէն : Դուք տակա-  
ւին շատ պզտիկ էիք այս կորուստը գնա-  
հատելու համար գոնէ չ'էք կրնար յիշել  
այն սիրելի Սէն-Ռէալը :

— Ո՞չ , քեսիս , սակայն իր յիշատակը  
սիրելէ և մեծարելէ ետ կեցած չ'եմ :

— Եթէ մեծարէիք անոր յիշատակը , պա-  
րո՞ն , այնքան անառակութիւններ չ'պիտի  
ընէիք : Ինչ և է խօսքերնուու դառնանք :  
Ես կենացս մէկ մասը բանակին մէջ ան-  
ցուցի . երբ Փարիզ ըրած դոյզն ճամբոր-  
դութեանցս մէջ քոյլու տեսնելու կ'երթայի  
դուք սուրս կ'առնէիք , և շամփուրի տեղ  
կ'գործածէիք , դարգմանակիս կատուին ճա-  
րակ կ'ըլլար . փեղոյլու և ուսաղիբներս կ'ա-  
պականէիք . և ատրճանակիս մէջ մօխիր կը  
լեցնէիք . թէեւ ասոնք սնոտի բաներ են  
բայց ձեր ուսումք կ'արդիլէին . վարժա-  
պետներն ալ մտիկ չ'էիք ընէր , լատինե-

ըէնի և պատմութեան դասատուին հետ կը  
խաղայիք, քնարի դասատուին քթին փամ-  
փուշտ կ'արձկէիք, դժագրութեան դասա-  
տուին դրպանը մօմի կտորներ կ'զնէիք . . .  
Զեղ ուղղութեան ածելու համար շատ ան-  
դամ քոյրս կ'յորդորէի . բայց խեղճ Հոռ-  
դանս ձեր վրայ սաստիկ սէր ունենալով  
կ'կարծէր թէ տարիքը պիտի կրնայ ձեր  
վարքը բարեփոխել :

— Ա՛հ, քեռիդ իմ, ոչ միայն մայրս,  
այլ բոլոր կանայք յօժարութիւն մ'ունէին  
ինձ համար :

— Այո' . . . ասոր համար է որ դուք  
ալ այնչափ կ'սիրէք զանոնք :

— Երախտագիտութեան համար է քե-  
ռիդ իմ :

— Ուրեմն պարկեշտ աղջիկները և կնիկ-  
ները գլխէ հանելով, նոցա ազօրինի ա-  
մուսին ըլլա՞ն ալ երախտագիտութեան  
համար է : Բայց յառաջ տանինք : Արդա-  
րեւ ձեր մօրը կորուսոք սաստիկ տառա-  
պեցուց զձեղ, վասն զի շատ կ'սիրէիք  
զայն . սակայն ասի բնական բան մ'է . ա-  
նոր վրայ լալով բան մ'ըրած չեղաք եթէ  
ոչ ձեր պարտաւորութիւնը : Հոռդանս,

մեռած ժամանակ, ինձի յանձնարարեց  
իւր զաւակը . ես ալ անոր խոստացայ ձեր  
վրայ հսկելու . և Աստուած դիտէ, մինչեւ  
հիմա ձեր ինձ տուած վիշտը : Երբ տաս-  
ուերկու տարեկան էիք դիշերօթիկ վար-  
ժարան մը դրի զձեղ . հոն քանի մը տարի  
բաւական աղէկ դացիք . ինձի կ'գրէին ձեր  
արագութեամբ յառաջ երթալը, որուն  
համար կաթոգին կ'ուրախանայի : Վերջա-  
պէս իմ սիրելի քեռորդիս տեսնելու համար  
Փարիզ եկայ . ուղղակի ձեր դպրոցը գա-  
լով երբ կ'հարցնեմ զձեղ . . . ամէն մարդ-  
վարանման մը կ'իյնայ . դեմքերնին կ'եր-  
կըննայ և կ'թոթովեն : Սակայն տեսնելով  
թէ իմ համբերութիւնս հատած կ'սրդողիմ,  
կ'պուամ, անատեն կ'իմացնեն ինձ թէ իմին  
անառակս փոքր աղջկան մը հետ ութ օրէ  
ի վեր աներեւութացեր է :

— Ա՞հ, քեռիդ իմ, ի՞նչ ընեմ, սիրա-  
հարութիւնը . . .

— Զե՞ս ամաչէր, պարո՞ն, տասնութեց  
տարեկանի մէջ առեւանգում ընել :

— Սակայն լիդ, որչ'փ դեղանի, որ-  
չա'փ խորագէտ էր :

— Եւ դուք ալ որչափ ստահա՛կ որչափ

անառակ' կ . . . վերջապէս Պ. Կիւսթավի և  
իր տարփածուին բնակած տեղը գտայ ,  
Ֆօդօնիէ փողոցը Փոքը սենեկի մը մէջ :  
Մանկամարդ աղջիկը իր մօրը տունը բերի ,  
չեմ գիտեր ինչ վիճակի մէջ . . . սակայն  
այս բանը իր անտարբեր ծնողացը կ'վերա-  
բերի : Եթէ քաղաքը թողում զձեղ , պա-  
րահանդէսներու կ'վաղէք , գէշ մարդիկնե-  
րը տունս կ'բերէք , լաւագոյն դինիս կ'խը-  
մէք , ձիերս կ'ճաթեցնէք , կառքս կ'խոր-  
տակէք , և ամենէն յոռեգոյնը՝ պարտքեր  
կ'ընէք : Եւ եթէ դիւղի տանս մէջ ձգեմ  
զձեղ , պարտէզս կ'աւերէք . որսի շուներս  
և ճագարներս կ'վիրաւորէք , դիւղացինե-  
րու հետ կ'ծեծկուիք : Աղէ՛ , պարո՞ն , ալ  
պէտք է որ այս բանը վերջանայ : Գիտեմ  
որ զինւոր ըլլալ չէք ուղեր . ես ալ չեմ  
ուղեր պնդել ատոր վրայ . զի կ'վախնամ  
թէ հոն ալ թերութիւններ ընելով հրացանի  
բոնուելու կ'դատապարտուիք : Բայց վերջա-  
պէս քսան տարեկան էք , ես ալ սկսած եմ  
ծերանալ . և ինծի տուած զբաղմունքէդ շատ  
յոդնած ըլլալով , այլ եւս հանդստանալ և  
զձեղ խելացի ընել կ'ուղեմ , ահա ասոր  
համար է որ , պարո՞ն , ձեղ պիտի ամուս-  
նացնեմ :

— Զիս ամուսնացնե՛լ։ Եւ ասիկա զիս  
խելացի՞ ընելու համար է։

— Հարկա՛ւ։ Զէ՞ք կընար շատանալ ձեր  
կնիկէն։

— Դործը գիտէ, նախ պէտք է որ ինձ  
հաճելի ըլլայ և ապա զիս սիրէ։

— Քեռորդիդ իմ, կ'կարծէք որ այդ  
բաները ես չեմ խորհած, Օրիորդը ձեզ  
հաճոյ պիտի լինի, վասն զի սքանչելի դե-  
ղեցկութիւն մ'ունի. նոյնալէս դուք ալ ա-  
նոր հաճելի պիտի ըլլաք, որովհետեւ բա-  
րեկիրթ աղջիկ մը իրեն սահմանուած այրը  
կ'սիրէ։ Ասկէ ի զատ դուք սերուն տղայ  
մ'էք, և թէ ընդհանրապէս կանայք աւե-  
լի միտում ունին ձեզի պէս աշխոյժ երի-  
տասարդներու։ Վերջապէս այս ամուսնու-  
թիւնը ինձի մեծ հաճոյք պիտի պատ-  
ճառէ։

— Ա՛հ քեռիդ իմ, իմ ամենամեծ իղձա՝  
սէրս ձեզի յայտնելու մէջ կ'կայանայ։

— Լա՛ւ ուրեմն, Պ. կիւսմթավ, դուն հի-  
մա Պէրլիին երկիրը կ'մեկնիս, և հոն կը-  
տեսնաս անոր քեռաղջիկը, ձեզի սահման-  
ուած դեռահաս Օրէլին։

— Բայց քեռի՛, ես ոչ Պէրլին և ոչ իր քեռաղջիկը կ' ճանչեմ։

— Հոգ չէ, հոն կ' ծանօթանաք . և մեծ ընդունելութիւն պիտի դատնաս զի արդէն քեզ կ' սպասեն : Պ. Պէրլին մեր բանակներուն համբարապետ եղած ատեն ճանչցած եմ որ բոլորովին անկեղծ և բարի մարդ մ'է :

— Բայց քեռի՛, դուք . . .

— Ես կարող չեմ հիմա տեղէս շարժիլ , սա անիծեալ յօդացաւութիւնս զիս Փարիզի մէջ կենալու կ' ստիպէ , բայց քիչ մը հանգարտ թողածին պէս պիտի դամ ձեզ տեսնելու , առ այժմ թող ներեն ինծի : Դուք որսի ալ կ' երթաք , զի Պ. Պէրլի որսամոլ է : Որչափ դոհ պիտի ըլլաս չարագործ : Աղէ՛ , ըստ որում խոհականութիւնը ձեռք առնել ցոյց կ' տաս , կ' ուղեմ անցեալ յիմարութիւններդ մօռնալ : Ահաւասիկ հարիւր լու , ճամբորդութեանդ եւ Պէրլիի դղեակը զուարճանալուդ համար , Բայց , այսուհետեւ կատարելապէս յարաբերութիւնը կտրելու էք նորաձեւութեան վաճառականաց և Օբէրայի պարուհեաց հետ մանաւանդ այս վոքքը Լիզին հետ , ո-

ըլքն որ ձեր առաջին սիրոյ առարկայն ըլ-  
լսլով, նա է որ կ'ստիպէ զձեղ անհնազան-  
դիլ առ իս : Վերջապէս, Պարո՛ն, խոհեմ  
եղէ՛ք : ապա թէ ոչ զձեղ բարեփոխելու  
համար խստութիւն կ'գործածեմ :

— Բաւ է արդ, քեռի՛, ուղղութեան ե-  
կայ :

— Թխագոյն ձին ա՛ռ . հիմա ժամը տա-  
սըն է, ճաշէն յառաջ դղեակ կ'համիս : Ես  
արդէն Պէնօային ըսեր եմ պարկդ պատ-  
րաստելու :

— Պէնօա՞ . ձեր դռնապանին որդի՛ն .  
բայց անիկայ սագի մը պէս ապուշ է :

— Աւելի աղէկ, մեքենայութիւն լարե-  
լու համար զայն չես կրնար գործածել:  
Աղէ՛ . ճամբայ ել և ըսածիս պէս ըրէ :

Կիւսթավ կ'գրկէ իր քեռին, և թխա-  
գոյն ձին հեծնելով Պէնօաին հետ միատեղ  
դէպի ի Պ. Պէրլիին երկիրը կ'մեկնի :



ԳԼՈՒԽ Գ.

ՄՕՐԱՔՈՅՑ

Վիլէդի և վօտուլանի մէջէն անցնելով,  
կիւսթավ իր խորհրդածութիւնները կը-  
նէր : Կմուածէր թէ կորդուելէ յառաջ  
պէտք է ճանչնալ աղջիկը, որովհետեւ չ'պի-  
տի ամուսնանար եթէ օրիորդ Օրէլի իր  
տեսած աղջիկներէն ալ աւելի գեղեցկու-  
թիւն, համեստութիւն և քաղցրութիւն չ'ու-  
նենայ : Կիւսթավ սիրոյ վերաբերեալ գործ-  
քերուն շատ կանուխ սկսած ըլլալով, իր  
քսան տարեկան հասակին մէջ՝ չափահաս  
մարդու մը փորձառութիւնը ունէր : Սա-  
կայն այս փորձառութիւնը թէ աղէկ և թէ  
դէշ կողմերը ունի : Աղէկ կողմը ունի, զի  
ասով իգական սրտին վրայ բաւական ծա-  
նօթութիւններ ստացած էր . դէշ կողմը ու-  
նի, վասն զի այնպէս կ'հաւտար թէ կա-  
տարելապէս կ'ճանչէ իգական սիրաը, և  
իրեն խարուին անկարելի կարծած ատեն,  
ալ աւելի խարուելու ենթակայ կ'գտնուէր :

Կիւսթավ ի բնէ անսպառ զուարթութեամբ լի էր, և երբ իր զուարթութեանը հետ մէկտեղ, քսակն ալ լեցուն ըլլար, ալ ամէն ինչ վարդագոյն կ'տեսնէր : Մտքի այս երջանիկ հանդամանաց մէջ, Պ. Կիւսթավ Լուվրէն անցնելով դէպ ի Սէնլի դարձաւ : Քանի կ'մօտենար այնչափ հետաքըրքրութիւնը կ'եւելնար Պ. Պէրլիի և նորաքեռաղջկանը վրայ : Կ'մոտածէր, բայց չէր յիշեր թէ զանոնք իր քեռւոյն տանը մէջ տեսած ըլլայ :

Կիւսթավ խորհեցաւ թէ իր Պէնօա նործառան, թերեւս կ'ճանչնայ Պ. Պէրլին, ուստի որոշեց զայն հարցաքննելու :

Պէնօա տասնեւութը տարեկան փցուն, յամառ և անմիտ մանչ մ'էր . նաեւ ցեցի մը չափ մեծ, տաճկի մը պէս ուժեղ, վարդի մը պէս թարմ :

Կիւսթավ քրքիջ մը փրցուց Պէնօաին նայած ատեն, զոր ճամբայ ենելէն ի վեր մոռցած էր : Եւ արդարեւ նորա դիրքն ու կացութիւնը շատ յարմար կ'գար մարդուն խնծիղը գրգռելու : Պէնօա երբէք ձի հեծած չէր, բայց գնդապետ Մօրանվալէ սաստիկ վախնալուն համար, այս բանը անոր

առջեւ ըսելու չ'համարձակելով, ըստ պատշաճի վարուած և ամենէն փոքր ձիուն վրայ հեծած էր, որուն վրայ Զուիցերացիի մը պէս լոջաբար կ'նատէր :

Կիւսթավ կ'կասեցնէ իր ձին որպէս զի Պէնօան կարենայ իրեն միանալ, բայց նոր ծառան որ գիտէր իր հօրմէն առած մէկ մանրամասն դասը, ծառալի մը առ իւր տէրն ունեցած պարտականութեանց վերայ, և երդում ալ ըրած էր բնաւ չշեղելու այն դասէն. կ'յիշէր թէ պէտք է միշտ Պ. Կիւսթավէն ակնածական հեռաւորութիւն մ'ունենալ. իր սկզբան վրայ հաստատ՝ տիրոջը կենալը տեսածին պէս ինքն ալ կանգ առաւ :

— Յառաջ վարէ, գոշեց Կիւսթավ համբերութիւնը կտրած :

— Ո՛չ Պարո՞ն, այնչափ անմիտ չեմ ես :

— Ինչպէս անմիտ, ես քեզի մօտեցիր կըսեմ:

— Ես աղէկ կ'ճանչնամ իմ պարտաւորութիւնս, պարո՞ն :

— Բայց, ապո՞ւշ, որովհետեւ ես կը պատուիրեմ :

— Նոյն բանն է. ես գիտեմ, պարո՞ն,

այն յարդանքը զոր ծառայ մը կ'պարտի իր  
տիրոջը . ուստի չեմ կընար յառաջանալ :

— Այ նղովից արմատ ապուշ , յարդանք  
ընեմըսելով , զիս իր ոտքը երթալ կ'ստիպէ :

Երբ կիւսիժավ կ'խմէ իր ձին և գէպ ի  
անոր վրայ կ'վաղէ , Պէնօայի ձին կ'ահաբեկի  
և ոչխարական ոստում մ'ընելով , իր հեծ-  
եալը փոսի մը մէջ կ'նետէ : Խեղճ տղան  
լալով վեր կ'ենէ և իր յարդանքին հետեւ-  
անքէն կարի դժգոհ ըլլալով՝ նորէն ձին  
կ'հեծնայ . բայց այս անդամ տիրոջը կ'հը-  
նազանդի :

— Օ՞ն , Պէնօա՛ , կ'յուսամ թէ այլ եւս  
ինծի մտիկ պիտի ընես :

— Այո՛ , պարո՞ն . . . այո՛ . . . հի՛ , հի՛,  
հի՛ . . .

— Ատ ինչ է , կ'լաս , մեծ պանդոյր :

— Տէ՛ր իմ . . . կարծեմ վիրաւորեցայ . . .

— Ո՞ւր տեղէդ :

— Պարո՞ն , ասկէ . . . ասկէ . . .

— Բայց ո՞ւր է , պիտի զուրցե՞ս :

— Մէջքիս և ազդրներուս մէջ տեղն է :

— Ապուշ , ետեի կողմ չե՞ս կընար ըսել :

— Պարո՞ն , ես իմ յարդանքս և պարտա-  
ւորութիւնս դիտեմ :

— Աս անառակը զիս պիտի կատղեցնէ  
իր պարտաւորութեամբը , Աղէ՛ , մեր գա-  
յած տանը մէջ զիստերդ կ'ըուժես : Հիմա ,  
պատասխա՞ն տուր ինծի , Պ. Պէլլին կը  
ճանչնա՞ս :

— Այո՞ , պարո՞ն :

— Ի՞նչպէս մարդ է :

— Ո՞չ մեծ , ո՞չ պատիկ , ո՞չ գեղեցիկ ,  
ո՞չ տղեղ :

— Տարի՞քը :

— Ո՞չ երիտասարդ , ո՞չ ծեր :

— Ահաւասիկ պէտք եղած տեղեկու-  
թիւնները առլինք : Քեռաղջիկն ալ կ'ճանչ-  
նա՞ս :

— Բայց , պարո՞ն , գալով քեռաղջկանը ,  
աղէկ մը չեմ յիշեր թէ զայն տեսած եմ :

— Օ՞ն ուրեմն . . . կ'տեսնեմ թէ բանէ  
մը տեղեկութիւն չ'ունիս : Բայց գեղատե-  
սիլ տուն մը կ'նշմարեմ , աս ըլլալու է Պ.  
Պէլլիին տունը .

Արդարեւ ճամբորդք իրենց ճամբուն  
վախճանը հասած էին : Կիւսթավ գեղջուկի  
մը կ'հարցնէ և իմանալով որ սխալած չէ ,  
Պէնօախին հետ մէկտեղ մեծ գաւթի մը մէջ  
կ'մոնէ , և ձիէն վար իջնելով Պ. Պէլլին կը

Հարցնէ : Դունապանը , Պ. Պէրլիին՝ պարտէ-  
ղին մէջ ըլլալը իմացնելով՝ կ'յաւելու թէ  
եթէ պարոնը չ'ուզէ սպասել սրահին մէջ ,  
կընայ պարտէզ երթալ . Կիւսթավ՝ իր աս-  
պընջականը տեսնելու անհամբեր ըլլալուն ,  
Պէնօան հոն կ'թողու և պատշպամէ մ'անց-  
նելով պարտէզ կ'մտնէ :

Մեր երիտասարդը շատ մը շուշանի և  
այժիտերեւներու ծառուղեաց մէջէն անց-  
նելով , կ'զարմանայ պարտէզին գեղեցիկ  
կացութեանը և այն վայելչաձեւութեանը  
վերայ որով նորա կարգադրութեանը հոգ-  
տարուած էր : Մուտքը՝ վարդի մացառնե-  
րով գոցուած թանձրախիտ ծաղկաստան-  
ներ հրաւէր կ'կարդային առ հանգստու-  
թիւն և առ սէր :

Արձաններ , կ'զարդարէին այս սիրուն և  
հեշտական վայրերը , բայց ոչ թէ տխուր  
Տանախտներու , դժբախտ Դանդալի , սոս-  
կալի և ժանտատեսիլ Բօլիֆէմի արձաննե-  
րը , այլ իր դօտին քակող Աստղիկը , իր  
նետերը սրող Սէրը և Գիւրիտօնի բոլորտի-  
քը խաղացող հրապոյըները կ'ընծայուէր  
ճեմողաց աչքին :

Կիւսթավ՝ կ'զարմանար ամէն բանի և կը

խորհէր թէ տանտէրը հանճարեղ և բարե-  
ճաշակ մարդ մ'ըլլալու է : Այս մտածմամբ,  
երբ ծառուղւոյ մը դարձուածքին մէջ ծաղ-  
կաստանի մը տակ նորատի կին մը կ'նշմա-  
րէ , կանգ կ'առնէ զայն նկատելու համար ,  
շտարակուսելով բնաւ թէ այս է Պ. Պէրլի-  
ին քեռաղջիկը և այս է իրեն սահմանուած  
օրիորդ Օրէլին : Երջանիկ կիւսթավ , որ-  
պիսի՛ հաճոյքով կ'հիանայ ի տես սքանչելի  
բերանոյ մը , վարդադոյն երեսի մը , բա-  
րեձեւ քթի մը , շնորհալի ճակտի մը՝ զոր  
կ'հովանաւորեն խարտեշագեղ մաղեր , վա-  
յելուչ և պերճ հասակի մը , բոլորչի ձե-  
ւերու , փոքր ոտքի մը՝ որ գոզցես հարե-  
ւանցի կ'հպի գետնին , և լանջքի մը որոյ  
իւրաքանչիւր շարժումը , ուժգին զարկ մը  
կ'գրգռէ մեր դիւցազնոյ սրտին : Իսկ աշ-  
քերը՝ գրքին վրայ խոնարհած ըլլալով , չը  
կրցաւ տեսնել զանոնք , բայց գուշակեց  
նոցա ազդու տպաւորութիւնը , և բերկ-  
րալի հեշտութիւնը :

Կիւսթավ , չկարենալով աւելի երկար  
ժամանակ հանդուրժել իր ծփանքին , ա-  
ւելի կ'մօտենայ : Դեռահաս կինը իմանալով  
զայս՝ գիրքը կ'թողու և անոր կ'նայի :

— Վատահ էի ասու արդէն , կ'ըսէ ինք-  
նիրեն կիւսթավ , ամենասքանչելի՛ աչքեր :  
— Ի՞նչ կ'ուզէ պարոնը , կ'հարցնէ այն-  
պիսի ձայն մը՝ որ մինչեւ երիտասարդին  
սրտին մէջ կ'թնդայ .

— Ներեցէ՛ք օրիորդ , ես կ'ուզէի . . .  
կ'գայի . . . բայց ստուգիւ , քանի որ ձեղ  
դտայ ալ բան մը չեմ փնտուեր :

Մանկամարդ կինը , «օրիորդ» անուան  
ժպտելովը հանդերձ , ողոքեալ երեւցաւ  
այն ազդեցութենէն և այն յուզումէն զոր  
իր տեսքը յառաջ կ'բերէր սիրուն պատան-  
ոյ մը վրայ :

Ի զուր է ասել թէ սիրտը , յատկութիւն-  
ները , բնութիւնը գործոյն էական մասը  
կ'կազմեն : Ակնահաճոյ գեղ մը , շնորհալի  
կերպարանք մը և հեշտական ձեւ մը կը  
հրապուրէ զմարդ : Հարցուցէ՛ք օրիորդաց  
նոյն խոկ կանանց թէ զիրենք մոլերեցնող  
դլխաւոր պատճառն այս չէ : Ես աղէկ  
դիտեմ որ եթէ մարդ միայն երեւութա-  
կան գեղ ունենայ , շուտով կ'գաղըրի հա-  
ճոյանալէ . և ասանկ ըլլալու է , ասիկա  
փոխարինութիւն մ'է այն բարի անձանց  
համար որք զուրկ են գեղեցկութենէ :

— Բայց, պարոն, ըստ դեռահաս կիւնը կիւսթավը նկատելէն յետոյ, արդեօք դուք էք մեր սպասած Պ. կիւսթավ Աէնթէալլ:

— Ես ինքս եմ, օրիո՞րդ. և դուք ալ հարկաւ Պ. Պէրլիին քեռաղջիկը օրիորդ Օրէլիին էք:

— Ո՛չ, պարո՞ն, ես Պ. տը Պէրլիին ամուսինն եմ:

— Ուրեմն, կ'ըսէ կիւսթավ մտքէն, այս նորատի տիկինը օրիորդ Օրէլիին մօրաքոյրըն է: Աղէ՛, այս տունը ինձ բնակարան Շնորհաց կ'երեւայ. անշուշտ հիմա ուրիշ սքանչելիք մը պիտի տեսնեմ:

Տիկին Պէրլի, կ'առաջարկէ կիւսթավին զինքն իր ամուսնոյն և օրիորդ Օրէլիին քով տանելու:

— Եւ արդարեւ, կ'ըսէ քաղցր ժպիտով մը, շատ ուրախ պիտի ըլլան, որովհետեւ ձեր գալստեան անհամբեր կ'սպասէին:

Ճամբան՝ մոտպրաղ և ծանրաքայլ երթալով, միմեանց սրտին խորը թափանցելու և գաղտնեացը վերահասու ըլլալու կը ջանային, և ո՛ գիտէ որպիսի բաղձանքի մը մղմամբ իրար նայելով, լոելեայն կ'հառաշէին:

Վերջապէս, տիկին Պէրլիի «Ահաւասիկ իմ ամուսինս» խօսքին վրայ կիւսթավին մտածմունքը փարատելով՝

— Տեսնենք ուրեմն սա ամուսինը, կը-սէ մտքէն, այս երջանիկ մահկանացուն, այնչափ դեղեցկութեանց ստացիչը, հար-կաւ շատ արժանիք, բնական տաղանդներ և բազում առաւելութիւններ ունենալու է:

Կիւսթավ աչքերը կ' վերցնէ և դիմացը յիսուն տարեկան, խոշոր, պալարալից, փոքրակին և տգեղ մարդ մը կ'տեսնէ, եւ անկէ յառաջ եկած քրքիջ մը հաղիւ թէ կ'զապէ: Այսու ամենայնիւ այն տեսքը մեր երիտասարդին թաքուն ուրախութիւն մը կ'առթէ, զոր ուշիմ ընթերցողը կրնայ դիւ-րաւ գուշակել:

— Բարեկամու ի՞մ, ըստ դեռատի տի-կինը, ահաւասիկ Պ. Կիւսթավ Սէն - Բէալլը զոր քեղ կ'ներկայացնեմ:

— Շատ աղէկ, եկէք պարոն, շատ ու-րախ եմ ձեզ տեսնելով, զի տասնուհինդ-օրէ ի վեր կ'սպասէի: Գրկենք զիրար: Զեր քեռին իմ բարեկամն է, և ստէպ ձեր վը-րայ խօսած է: Կըսէ թէ դուք քիչ մ'ա-նառակ էք . . . Աղէ, երիտասարդութիւն

է , մարդ կըից ենթակայ է , ամենքնիս ալ  
անառակութիւն ըրած ենք . ասոնք բնա-  
կան բաներ են : Բարեկամգ իմ , ահաւա-  
սիկ ձեղ կ'ներկայացնեմ ամուսինս որ ար-  
դարեւ իմ պարծանքս է :

Կիւսթավ , ձեռքը թոթուելու և սեղմե-  
լու թողած՝ և տակաւին ժամանակ դտած  
չէր Պ. Պէրլիին բաղաքավարական խօսքե-  
րուն պատասխանելու , որովհետեւ անհնար  
էր բառ մ'անգամ զուրցել , երբ այս մար-  
դը խօսիլ սկսէր :

— Տիկի՛ն , Օրէլիին իմացուցի՞ք մեր ե-  
րիտասարդ պարոնին դալուստը :

— Ո՛չ , բարեկամն . . .

— Աղէ՛կ , աղէ՛կ , չիմանալը աւելի ա-  
ղէկ , զարմանքը կ'գրաւենք , վասն զի այ-  
սօր չէր սպասեր ձեր դալուտեան . բարէ՛ ,  
որչափ ուրախ պիտի ըլլայ : Բարեկամ , ես  
չեմ զարմանար թէ դուք ալ ձեր սիրուհ-  
եաց համար նոյն բանն ընէք ի Փարիզ , զոր  
ինչ ես կ'ընէի ատենօք : Ես շատ հարուստ  
էի . . . դեղեցիկ կանանց մեծ ընդունե-  
լութիւն կ'տայի , բայց հիմա խելօք եմ . . .  
հա՛ , պարոն , որսալ դիտէ՞ք , զի ես մեծ  
ոլսորդ եմ . ո՛չ , աս ալ կիրք մ'է , բոլոր

օրը անտառներու մէջ կ'անցնեմ՝ նապաստակները և այծեամները հալածելով, բայց այսու ամենայնիւ աղէկ ալ կրակ կ'քաշեմ:

— Պարո՞ն, ես կ'որսամ միայն . . .

— Եատ լա՛ւ, ըսել է դուք ալ կ'որսաք, ուրեմն ձեզի հետ մեծ որսեր կ'ընենք. իմ անտառներս երէներով լի են, ընտիր պառականաց ջոկ մը և աղէկ հրացաններ ալ ունիմ: Բայց ինծի կ'գայ թէ ճաշի ժամանակն եկած է, ստամոքսու երբէք չը սխալեցներ զիս, երթանք սեղան նստելու և հոն բաժակ ի ձեռին տւելի պիտի խօսակցինք, Բարեկա՞մն, կ'տեսնեմ թէ հանճարեղ տղայ մ'էք, մեծ հաճոյք պիտի ունենամ ձեզի հետ ծանօթանալով:

Մինչդեռ Պ. տը Պէրլի իր հրամանները կ'տայ ծառաներուն, և կ'երթայ ըստ սովորութեանը խոհարանին նայուածք մը նետելու, կիւսթավ ձեռքը տիկինին տալով՝ հետը միատեղ որահը կ'անցնին: Նորատի օրիորդ մը նստած էր դաշնակին առջեւ:

— Ահաւասիկ, կ'ըսէ տիկին Պէրլի, ասէ օրիորդ Օրէլին:

Երկի՞նք, ի՞նչ աարբերութիւն ի մէջ մօրաքրոջ և քեռաղջկան: Եւ կիւսթավին աշ-

բերը հանդիսացուցին տիկին Պէրլիին ինչ  
որ արդէն նորա սիրուը կ'զգար : Դեռատի  
կինը , չտեսնել կեղծեց այս լոելեայն խոս-  
տովանութիւնը , սակայն երիտասարդը նրշ-  
մարեց թէ այս նախամեծարութեան համար  
նա տժդոհութեան նշան մը չէր արտա-  
յայտեր :

Օրիորդ Օրէլի մեծ , պիրկ և նաշհուտ  
էր . թէեւ երեսը դէշ բան մը չունէր , սա-  
կայն հաճոյատեսիլ ալ չէր , աչքերը մեծ և  
դուրս ելած , բերանը անձուկ , քիթը եր-  
կար և արծուային , մորթը աւելի դեղին  
քան ճերմակ , և վերջապէս իր բոլոր ան-  
ձին վրայ տարածեալ պաճուճագեղ մը ,  
նորա ձեւերուն այնպիսի անարդութիւն մը  
կ'ընծայէր որ ո՛չ սէր կ'դրդուէր և ո՛չ ցան-  
կութիւն :

Օրիորդը , տիկին Պէրլիին ձայնէն ոտք  
ելլելով , ծանրութեամբ մը կ'բարեւէ կիւս-  
թավը , և նորէն դաշնակին առջեւ կ'նստի :

— Ահաւասիկ , կ'ըսէ կիւսթավ մոքէն ,  
այն կինը , զոր մօրեղբայրս կ'սահմանէ ինձ  
· · · թէեւ չպիտի ամուսնանամ անոր հետ ,  
սակայն և այնպէս ուրախ եմ այս տունը  
գալուս համար . . .

— Պարո՞ն , ըստւ տիկին Պէրլի , կ'տես-  
նէք թէ իմ ամուսինս պարզաձեւ մարդ մ'է ,  
բարեհաճեցէք դուք ալ նոյնպէս վարուե-  
լու . միանդամայն ես պիտի ջանամ' ձեր  
տաղտկութիւնը նուազել :

— Ա՛հ , տիկին , ձեր ներկայութիւնը  
սխրալի բան մ'է ինձ համար :

Եւ երփտասարդը որ դեռատի տիկնոջ  
ձեռքը բռնած էր , համբուրեց զայն ե-  
ռանդով . մինչդեռ քեռաղջիկը դաշնակի  
թելերուն վրայ կ'պտտցնէր իրենը :

— Սեղա՛նի . . . սեղա՛նի . . . դոչեց Պ.  
Պէրլի սրահը մտնելով , ի՞նչ սատանայու-  
թիւն կ'ընէք հոս , փոխանակ կերակրոյ ու-  
րահը գալու : Ա՛հ , հասկցայ . . . երկու  
տարփածուք իրար կ'զննէին , կողմնակի  
աչօք կ'նայէին և կ'ժպտէին . . . Ա՛հ , այն-  
պէս չէ տիկին , այժմէն սկսան :

— Բարեկամո , չեմ կրնար ըսել . . .

— Այո՛ , այո՛ , իրաւ է , ատոր վրայ չես  
ուզեր խօսիլ . դո՞ւ , որ պաղ և խիստ  
սիրու մ'ունիս , չես մտածեր թէ մարդ կըր-  
նայ այսպէս վաղվաղակի բորբոքիլ . Ա՛հ ,  
կիւսթա՛վ , կնիկս զարմանալի է , նա կը  
խնդայ կ'ծաղրէ երբ այս կիրքերուն վրայ

իրեն խօսք բանամ . . . 0'ն ուրեմն , կե-  
րակուրը պիտի պազի . ձեռքերնիդ Օրէլի-  
ին տուէք բարեկամս , և դուք ալ քեռ-  
աղջիկո , ժայտեցէ՛ք քիչ մը :

Կերակրոյ սրահին մէջ կիւսթավ տիկին  
Պէրլիին և օրիորդ Օրէլիին միջեւ նստելով ,  
— Գոնէ , կ'ըսէ մտքէն , եթէ ձախ կող-  
մը դիս կ'նեղէ՝ աջո զայն պիտի տուժէ :

Պ. ալ Պէրլի , որ շատախօս ըլլալուն պէս  
շատակեր ալ էր , քիչ մը հանգիստ կ'թողու-  
իր ունկնդիրները : Յայնժամ իւր կինը կըր-  
նայ խօսակցիլ կիւսթավին հետ և կ'սրան-  
չանայ նորա խելացութեանը , զուարթո-  
թեանը և սիրաշահութեանը վրայ :

Օրիորդ Օրէլի քիչ , սակայն այնպիսի  
անքնական պչրանքով և սեթեւեթանօք կը  
խօսի , որ կեզծ համեստութեան մը քողին  
տակ ծածկուած տենչանքներ ի յայտ կը  
գան :

— Բարեկամս , կ'ըսէ Պ. ալ Պէրլի , մինչ-  
դեռ իր կինը ընտիր հաւ մը կ'յօշէր , հար-  
կաւ ձենէ է սա տեսնուած մանչը , որ  
բանջարանոցի մէջէն թրթնջուկ կ'ժողվէ :

— Այո՛ , պարոն , բայց կ'զարմանամ թէ՛  
ինչպէ՛ս համարձակեր է :

— Աղէ՛, թրթնջուկ ժողվելէն բան մը  
չելլար :

— Եատ ապուշ ըլլալուն՝ կ'վախնամ թէ  
հոս ալ անխելքութիւն մը կ'ընէ :

— Աղէ՛կ, աղէ՛կ, ան ճանրու կ'դայ,  
վասն զի իմ բոլոր մարդիկներս խելացի են :  
կ'սիրեմ ասիկա. և նաեւ ինչպէս որ կ'ըսեն.  
« Որպէս տէրը նոյնպէս ծառ ան :

Կիւսթավ ինքնիրեն խնդաց Պ. Պէրլիին  
կոշտութեանը վրայ, որ չէր նշմարեր թէ  
յարդանք մըրած ատեն իր անմտութիւ-  
նը ցոյց կ'տար :

Երիտասարդը առանց պատասխան տա-  
լու, աչ կողմին վրայ ծունկ մը . . . ոտք  
մը յառաջացուց, Դեռահաս կինը առջի  
բերան յետս կ'մղէ. յետոյ կ'հաւանի : Այլ  
եւս կիւսթավին երեսը չ'նայիր և սաստիկ  
յուզեալ կ'երեւի, բայց այսու ամենայնիւ  
անտարբերութեան և ցասման նշան մը  
չ'արտայայտէր :

Աս ի՞նչ է, պիտի ըսէք, այժմէն յան-  
դուգն ձեռնարկութիւններ, այժմէն ծուն-  
կեր, ոտքեր . . . ի՞նչ կ'ուղէք, ասանկ  
չարամէտ մարդիկ իրենց գործը շտապաւ  
կ'կատարեն . և ասոր մէջ այնչափ մեծ յան-

ցանք մը չունին : Բայց պարկեշտութիւնը ,  
պիտի ըսէք ինձ , պէտք է այսպէս ոտնա-  
կո՞ւ լնել : Ա՛հ , իրաւունք ունիք , պէտք է  
յարգել պարկեշտութիւնը : Սակայն քըն-  
նեցէք թէ բոլոր այս բաները սեղանի  
տակ կ'անցնին և չեն տեսնուիր : Ա՛հ , ըն-  
թերցո՞ղ , եթէ կարենաք օր մը սովորիլ  
սեղանի մը տակ , ուր գեղեցիկ կիներ և  
սիրուն երիտասարդներ կ'բազմին , խիստ  
ծաղրաշարժ բաներ պիտի տեսնէք , ապա  
գլուխնիդ գուրս հանելով , նայեցէք այն  
խօնարհ աչքերուն , այն անկեղծ և յստակ  
դէմքերուն . . . յայնժամ կ'հաւանիք թէ  
այն որ գաղտնի է պարկեշտութիւնը չը  
խանդարեր :

Սեղանէն ելան և սրահը անցան : Տիկին  
Պէրլի ընտիր ճաշակով մը կ'երգէր և օրի-  
որդ Օրէլի գաշնակի վրայ կ'զարնէր՝ որպէս  
ձի մը քարայտակին վրայ :

Տիկինը մեր երիտասարդին տեղեկացուց  
տան սովորութիւնները , և յորդորեց նաև  
իրենց տանը պէս վարուիլ հօն :

Կիւսթավ չկըցաւ արգիլել հառաջանք  
մը , աիկին Պէրլիի իր ամուսնոյն հետ հե-  
ռանոլը տեսնելով . . . մեծ բարեւ մուղ-

զեց առ գոռողն Օրէլի , և զի՞նքը իր սեն-  
եակը տանող ծառայի մը հետեւելով ,  
ճամբուն վրայ Պէնօաի Հանդիպեցաւ որ  
կաղելով իրեն կ'ներկայանար :

— Հա՛ , ապուշ դու , ի՞նչու նորէն չ'տե-  
սայ զքեղ :

— Ա՛հ , պարսն հարկաւ կ'տեսնէք թէ  
հաղիւ ինքղինքս կ'բանեմ , խոհակերին ըսած  
գեղը յայտ կ'կսկծէ զիս : Ինձի ըսին թէ ,  
կեղեքածները բուժելու համար թրթնջու-  
կէ զատ լաւագոյն դեղ մը չկայ : Կարծեմ  
թէ կատակ մ'ըրին :

— Խեղճ Պէնօա՛ս , կ'տեսնեմ թէ , Պ. որ  
Պէրլիին մարդիկները յիրաւի շատ խորա-  
գէտ են . աւելի աղէկ , անոնք քեզ պիտի  
կըթեն : Գնա՛ , պառկէ ապուշ , և ջանա որ  
ուրիշ անգամ չխարուիս :

— Այո՛ , պարսն : Եթէ ինձի պէտք ու-  
նենաք , ահաւասիկ իմ խուցս :

— Ա՛հ , ես քեզի բան չեմ հարցներ :

Կիւսթավ հանուեցաւ , միշտ տիկին Պէր-  
լիի վրայ խորհելով , որուն մոլեկան ցան-  
կութեամբ սիրահարած էր : Պէնօա ան-  
կողին մտաւ թրթնջուկին և խոհարար կը-  
նոջ անէծք կարդալով : Տէրը սիրով և յու-

սով կ'հառաջէր , ծառան կ'հեծէր և դէմ-  
քը կ'խորշոմէր . Մեր քաջը երազին մէջ  
տիկին Պէրլին , սովորականէն աւելի սիրուն ,  
աւելի գեղանի և աւելի հրապուրիչ տե-  
սաւ : Անոր հետ միասին մրտենեաց և վար-  
դերու ծաղկաստանի մը մէջ էր . նորա վա-  
յելուչ հասակը և հեշտալի մարմինը գրկա-  
խառն կ'սեղմէր . և շրթանցը վրայէն կը<sup>1</sup>  
քաղէր այնպիսի կիզիչ համբոյր մը՝ որ իր  
զգայութեանց մէջ արբեցութիւն և զտ-  
ոանցում կ'ըերէր :

Պէնօան ալ երազեց իժէ գլուխի գեղ մը  
կ'ընէր :

---

## ԳԼՈՒԽ Դ

### Գ. Ե Գ. Ա. Խ. Ա. Դ. Բ.

Հետեւեալ օրը , արեւուն ծագման ատեն ,  
Կիւսթավ պարտէղը իջած էր : Ո՞ գիտէ ինչ  
պատճառաւ տիկին Պէրլին ալ հոն դանը-  
ռւելով , իրարու հանդիպեցան :

— Ինչպէս, տիկին, այժմէն ելած էք :

— Ո՞հ, պարոն, գիւղի մէջ հաճոյք մ'է կանուխ ելլելը :

— Որչա՞փ երջանիկ եմ ձեզի հանդիպելուն համար :

— Քանի որ հոս էք . շատ անդամ կը հանդիպինք իրարու : Երիկս որսի դնաց : Չեզ ալ տանելու համար արթնցնել կ'ուզէք, բայց դիտել տուի թէ գոնէ այսօր հանգստութեան պէտք ունիք : Ներեցէք որ այս զուարճութենէ զրկեցի զձեզ :

— Ա՞հ, տիկին, այդպէս մի՛ մտածէք, առանց ձեր ներկայութեան զուարճութիւն կըլլայ :

— Արդարեւ, Պ. Սէն-Բէալ, վաղաքաշական խօսքեր կ'ընէք :

— Ո՞չ, տիկին, այն միայն կ'խօսիմ զոր կ'զդայ սիրոս :

— Բայց կ'օխալիք պարոն, այն խօսքերը որ ինձ կ'ուզզէք քեռաղջկանս կ'պարտիք : Զէք մտածեր որ անոր հետ պիտի ամուսնանաք :

— Անոր հետ կարգուիլ, երբէք, տիկին :

— Ինչպէս, ձեր քեռւոյն դիտաւորութիւնները չպիտի կատարէք :

— Ո՞չ տիկին , ես չեմ ամուսնանար այն  
աղջկան հետ զոր երբէք չպիտի սիրեմ :

— Տակաւին ի՞նչ գիտէք , կարելի է Օ-  
լէլիին աւելի ծանօթանալով , կարծիքնիդ  
փոխէք : Զի Պ. առ Պէրլիին քեռաղջիկը ա-  
ռաքինութիւններ և տաղանդներ ունի . . .

— Կ'երեւայ թէ տիկին , զիս համոզել  
կուզէք :

— Բայց պարոն , պարտաւոր եմ , մանա-  
ւանդ այս ամուսնութիւնը ձեր քեռին ալ  
պիտի հաճոյացնէ :

— Եւ իմ երջանկութիւնս , տիկին , զայն  
բանի տեղ չէ՞ք դներ :

— Դուք ալ պարոն Աէն-Ռէալ , մինչեւ  
հիմա խորհած չէ՞ք այն երջանկութիւնը :  
Մեր լսածին նայելով , ձեր երջանկու-  
թիւնը և զուարճութիւնը հրապոյրք , նեն-  
դութիւնք և անհաստատութիւնք եղած  
են : Աղէկ զիտեմ որ զըեթէ բոլոր մար-  
դիկ յեղյեղուկ են . մանաւանդ երիտա-  
սարդները փոփոխութիւնը միայն կ'սիրեն :

— Բայց տիկին , ես զգաստացեր եմ այլ  
եւս :

— Քսան տարեկանի մէջ զգաստացաք :

— Գուշը որ այդպէս կ'յորդորէք զիս , միթէ չո՞ւնիք այն յօժարութիւնները :

— Սակայն ես ամուսնացեր եմ պարոն :

— Ո՞հ , այս . . .

— Ուրեմն , պիտի մեկնիք առկէ :

— Ինչու համար , տիկին :

— Քանի որ Օրէլին չէք սիրեր , այս տունը յայսմհետէ չ'հաճոյացներ զձեղ :

— Ա՞հ , տիկին երբէք չպիտի հեռանամձենէ :

— Յիրաւի , պարոն , ձեր ներկայութիւնը յոյժ կ'հաճոյացնէ զմեզ : Եւ կ'յուսամնաեւ թէ ստէպ Օրէլին նայելով . . .

— Կ'ազաչեմ տիկին , ալ չ'խօսինք ասոր վրայ :

— Աղէ , այսօրուան համար անանկ ըլլայ : Հիմա ձեզի ցուցնել կ'ուզեմ այս պարտիկին զուարճութիւնները :

Եւ սկսան ամէն կողմ շրջագայիլ : Նախ հովանաւոր և թանձրախիտ անտառակի մը մէջ մտան , ուր արեգական ջերմութիւնը բնաւ չէր թափանցեր , և հոն տիկին Պէրլի գրեթէ ամէն օր կարգալու և աշխատելու կերթալ , ապա նշդաբենիի մը քովէն անց-

նելով, լոռազարդ անձաւ մը այց առին  
և յետոյ ժայրի մը վրայ ելան :

— Տիկին, կըսէ, կիւսթալ, սա կողմը  
ի՞նչ է որ հոն չգացինք :

— Ա՛հ, անիկայ Լարիւրինթոս մ'է :

— Լարիւրինթոս, ո՛հ, նայինք, շատ կը  
սիրեմ այնպիսի տեղուանք ուր մարդ կ'մո-  
ւորի :

— Լաւ, քանի որ կ'փափաքիք, երթանք:

Նորատի կինը մտածեց թէ, Լարիւրին-  
թոս երթալը մերժելով՝ վախ ցուցուցած  
պիտի ըլլար և թէ վախը տկարութեան տ-  
պացոյց մ'է : Մանաւանդ երիտասարդը,  
նորա յուղումը պատճառող բան մ'ըսած  
չէր, Արդարեւ աչքերը շատ աղդեցական,  
դորովալից և սիրավառ էին, բայց Պ. Սէն-  
թէալ միշտ այսպիսի աչքեր ունի, Օ՛ն ու-  
րեմն, պէտք է զայն Լարիւրինթոս տանիլ :

Մի՛ կարծէք թէ ընթերցող, հոն այնպի-  
սի բաներ անցած ըլլայ, զորս չ'համարձա-  
կիմ պատմելու :

— Արդարեւ, կըսէ տիկին Պէրլի, կ'մոռ-  
նայի ձեզի ցուցնելու մեր գնդախաղի որ-  
րահը :

Այս ոլահը, նշդարիներով եւ շուշան-

ներով շրջապատեալ ըլլալով, մինակ վերէն  
լոյս կ'առնէր : Ներքսակողմը զարդարող  
դեղեցիկ մացառներ, և ամէն կողմ զե-  
տեղուած դալարադեղ նստարաններ կար-  
ծես թէ բնականէն շինուած փոքր ծաղ-  
կաստան մը կ'ձեւացնէին :

— Գնդամուղ կ'խաղաք, պարոն, հար-  
ցուց ժիւլի :

— Այո՛, տիկին :

— Ուրեմն կ'բարեհաճիք ինծի սորվեցը-  
նելու : Ամուսինս շատ քիչ գիտէ և միշտ  
տապալի կ'խաղայ : Ասկէ ի զատ ամուսին  
մը դուն ուրէք ունի իր կնկանը բան մը  
սորվեցնելու համբերութիւնը :

— Տիկին, ես կ'ուրախանամ ձեղի հաճոյ  
ըլլալ կարենալուս համար, եթէ կ'ուզէք  
կրնանք սկսիլ :

— Ո՛չ, մոռածեցէք թէ հիմա նախաճա-  
շի կ'սպասեն զմեզ : Այս իրիկուն յիշել  
կ'տամ ձեր խոստումը :

Քանի՛ քաղցր է դեղեցիկ կնոջ մը քով  
ըլլալ, որուն էրիկը որոը կ'սիրէ . օրն ի  
բուն անոր հետ է միայն :

Կիւսթավ, գնդապետ Մօրանվալը լաւ-  
եւս խաբելու համար, զրեց անոր թէ, Պ.

Պէրլիին տունը շատ գոհ էր , և թէ հոն  
պիտի մնար այնչափ ատեն՝ որչափ որ զին-  
քը պահել կ'ուղեն : Թէպէտե Օրէլիի վրա-  
յօք բան մը յայտնած չէր . սակայն այս նա-  
մակէն ուրախացաւ գնդապետը . ուստի  
վստա՞ ըլլալով որ քեռորդին իր կամքերը  
կատարած է , նամակ մը դրեց Պ. Պէրլիին,  
որով կ'յայտնէր թէ ամենայն ինչ ըստ իւր  
բաղձանքին կատարուած էին :

Մինչդեռ քեռին այսպէս կ'շարունակէր  
իր թղթակցութիւնը , քեռորդին ոլ իր սէ-  
րը յառաջ կ'տանէր : Ժիւլի (այս է տիկին  
Պէրլիին անունը) երիտասարդը շատ սիրուն  
գտած ըլլալով , ընտանութիւնը դիւրաւ  
մուտ կ'գտնէ : Խօսակցութեան մը մէջ կիւս-  
թավ կ'իմանայ թէ ժիւլի իր ծնողաց անա-  
շառութեամբը ամուսնացած ըլլալով , արժան  
անդամ տեսած չէին նորա կամքը հարցնե-  
լու : Արդարեւ Պ. Պէրլիին վրայ գանգատ  
մը չ'ունէր որ ներողամիտ էր և զինքը ազատ  
կ'թողուր : Բայց այսպիսի անհամեմատ մի-  
ացումէ մը սէր կրնա՞ր յառաջ դալ : Պ. աը  
Պէրլի տգեղ , անմիտ և շատախօս ըլլալովը  
հանդերձ , կնկանը տարիքին կրկինէն աւելի  
ունէր . իսկ ժիւլի , գոլովալից , հանճա-

ըեղ և միանդամայն զարմանագեղ էր :  
Նա՝ սէրը զգայարանաց պիտոյըը կ'հա-  
մարէր, բայց Ժիւլի կըթեալ ոգի մ'ունե-  
նալով, կ'ճանաչէր այն զգացման բոլոր  
քաղցրութիւնները : Ահա այսպէս այն ծը-  
նողք որք իրենց աղջիկը նոցա չ'սիրած մար-  
դու մը կ'տան, կ'դատապարտեն զայն եր-  
բէք անձնատուր չըլլալ բնութեան ամենա-  
քաղցր հաճոյից . . . Խեղճ կանայք . . .  
այն ամենատկար սեռը, որ անդադար մեր  
մեծ արանաց և հրապուրանաց նշաւակն է,  
առաքինութիւն, անտարբերութիւն և քա-  
ջութիւն ցուցնել կ'պարտի : Ստուգիւ այս  
բաները շատ յանիրաւի կարգադրուած են.  
և այն պարոնները որ քաղաքական օրէնքը  
շինած են . ալ աւելի բնական օրէնքը քըն-  
նել կ'պարտաւորէին :

Ամէն օր ճաշէն յետոյ, գնդախաղի որ-  
բահը կ'երթային ուր Ժիւլի կիւսթավէն դաս  
կ'առնուր : Արպիսի՛ զուարճարար է ուսու-  
ցանել այս խաղը գեղանի աշակերտուհւոյ  
մը : Երիտասարդը միշտ գունդերը գորգին  
մէջտեղը կ'դնէր, որպէս զի տիկինը գըն-  
դախաղին վրայ տարածի . յայնժամ կ'հիտ-  
նար կիւսթավ այն սքանչելի մարմար, զոլ

բեհեղեայ անօսոր շրջազգեատ մը կ'սքողէր  
առանց ծածկել կարենալու : իր աշակեր-  
տին ձեռքը ուղղելու համար երբեմն սպի-  
տակադոյն պարանոցի մը թեթեւակի կը  
հպէր . յայնժամ աչքերը կ'յենուր կուրծքի  
մը վրայ զոր համբուրելու ցանկութեամք  
կ'բորբոքէր : Ժիւլի կ'գանգտէր թէ ստէպ  
միւնոյն հարուածը կրկնել կ'տայ : Բայց  
կիւսթավ այնչափ քաղցրութեամք կ'ուսու-  
ցանէր որ երբէք բարկութեան առիթ մը  
չէր տար :

Օրիորդ Օրէլի բնաւ գնդամուղ չէր խա-  
ղար . նա իր պատիւը վտանգած կ'համա-  
րէր այնպիսի դաս մը սորվելով՝ զոր կարի  
արական կ'գտնէր : Աչքերը դժկամակու-  
թեամք խառն զարմացում մը կ'յայտնէին ,  
ամէն անգամ որ Ժիւլի և կիւսթավ պար-  
տէղ կ'երթային , բայց չէր համարձակեր  
բան մ'ըսել այն նկատողութեանը վրայ զոր  
մոքէն իր մօրաքրոջը անմտութիւնը կ'հա-  
մարէր :

Պ. ոը Պէրլի ամէն առտու կիւսթավը  
որսի տանիւ կ'ուղղէր . բայց սա ծունկը վի-  
րաւորած կեղծելով և թեթեւ իմն կաղա-  
լով . մինչեւ յայնմ իր տանտիրաջը ընկերա-

նալէ գերծած էր : Քանզի նա սէրը և տար-  
փանքը քիչ ճանաչելովը , կ'հաւատար թէ  
կիւսթավ , իր քեռազդիկը շատ կ'սիրէ . և  
նապաստակաց հետամուտ չըլլալու համար  
անոր ըրած մերժումները , Օրէլիին քով  
կենալու բաղձանքէն և յօժարութենէն ըլ-  
լալը կ'կարծէր :

Տէժարտէն անուն պարոն մը , կիւսթավէն  
երեք օր վերջը Պ. Պէրլիին տունը եկած  
էր : Ասիկա յիսուն տարեկան , վտիտ , շա-  
տակեր , ստախոս նաև հացկատակի մը պէս  
բանսարկու և փաշաքուշ մարդ մէր : Ա-  
մէն բան քիչ մը գիտէր . ըստ բաւականի  
քնար կ'չալէր և ստուերական պատկերներ  
կ'նկարէր : Ամէն իրիկուն Պ. աը Պէրլիին  
հետ տապալի խազալու միջոցին տիկին Պէր-  
լիին յարդ անքներ կ'ուզզէր , օրիորդ Օրէլի-  
ին՝ գովեստներ իր երգելու եղանակին վը-  
րայ . կատուին՝ զգուանք և շան՝ բոկեղ-  
ներ :

Վերջապէս կիւսթավ իր սէրը խոստովա-  
նած , և տիկինն ալ առանց ո՛ և է հաւա-  
նութիւն մը ցոյց տալու լոկ հաճոյական  
կերպով մտիկ ըրած էր : Ասկէ ի զատ տի-  
կին Պէրլի խորհելով թէ , թանձրախիտ նըշ-

դարենիներու մէջ երիտասարդի մը հետ  
առանձին խաղալը , վտանգաւոր կրնայ լի-  
նիլ , մանաւանդ քաջութիւնն ալ կ'նուա-  
զէր . . . ըստ որում մերժեց շարունակել  
դասերը :

— Աղէ՛ , զիս չ'սիրէր , կ'ըսէ՛ կիւսթավ ,  
յիրաւի ասիկա քծնող մ'է որ իմ անձկու-  
թիւնս միայն կ'զբօսցնէ . ես խենդ մ'եմ  
որ անոր համար կ'հառաջեմ . . . բայց հե-  
րիք է արդ . այլ եւս անոր չպիտի խօսիմ :

Ի վերայ այս որոշման , կիւսթավ ջանաց  
Օրէլիին սէր ցուցնելու . սակայն այս ջան-  
քը խիստ դժուարին էր : Տիկին Պէրլի ա-  
ռանց դուրս ենելու իր գործիքին քով  
տխուր և մտախոհ նստած՝ Օրէլիին համար  
կիւսթավին շինծու մեծարանքները կ'գի-  
տէր , և կանանց պչրանացը վրայ նորա  
փոքր տաղերը կ'լսէր : Երիտասարդը զայ-  
րանալով ինչ ընելիքը չէր գիտէր . իր յու-  
սահատութեանը մէջ Պ. Պէրլիին հետ որսի  
կ'երթայ , բայց փոխանակ կնճի և նապաօ-  
տակի , շուները կ'զարնէր . կտցարներու տեղ  
անձեղներ կ'որսար : Յերեկոյին տապալի  
խաղալ կ'ուզէ բայց միշտ սխալներ կ'ընէր .  
քուեայները գետինը կ'նետէր . երգել

կ'ուզէ բայց ձայն չ'ունէր . . քնար չալել կ'ու-  
զէ , ձեռքը կ'դողար : Պ. Պէրլի կ'ծաղրէ ,  
Պ. Տէժարտէն կ'խնդայ , խոկ Ժիւլի կ'հա-  
ռաջէ :

— Օ՞ն , կըսէ Պ. Պէրլի , երիտասարդք  
խենդի պէս սիրահարեր է իմ քեռաղջկա-  
նըս . . . Նայէ տիկին , հոն առանձին նըս-  
տող կիւսթավը . կ'տեսնե՞ս նորա խոժոռ  
դէմքը , թաղծալից և սեւամաղձոտ ճակա-  
տը : Աէրն է որ կ'ընէ այս բաները . ո՞հ ,  
ես փորձով գիտեմ . . . նորա հոս գայուն  
առջի օրերը յիշէ , բոլորովին տարբեր էր .  
կ'խնդար , կ'խօսէր , կ'երգէր և հազար  
ու մէկ խենդութիւններ կ'ընէր . սակայն  
այսօր հառաչելու միայն կ'բանալ բերանը  
աչքերը կ'վերցնէ դէպ ի երկինք . . . եւ  
որսի ատեն լրած ամէն անխելքութիւն.  
ները եթէ տեսնայիր խնդալէ պիտի մա-  
րէիր : Բարէ , ասիկա շըլլար ես պիտի  
դրեմ իր գնդապետ քեռւոյն . որպէս  
զի շուտով վախճան մը տայ ասոր . զի վեր-  
ջապէս պէտք չէ որ այս խեղճ տղան հիւծ-  
ուի : Այնպէս չէ Տէժարտէն :

— Կատարելապէս իրաւունք ունիք , զի . . .

— Գալով իմ քեռաղջկանս , թէեւ ան

բան մը չըսեր , բայց վստահ եմ որ խարե-  
րան ասկէ նուազ չխորհիր : ԱՇ , եթէ գըն-  
դապետը իր անիծեալ յօդացաւը չունե-  
նար , արդէն հոս եկած և գործը լմցած  
պիտի ըլլար :

— Բայց բարեկամն , վստահ էք ասոր  
վրայ :

— Այո , տիկին , այո , վստահ եմ որ այս  
ամուսնութիւնը մերինէն աւելի երջանիկ  
պիտի ըլլայ : Բայց ինչու ալ չէք խաղար  
դնդախազ : Ասիկա կ'զուարճացնէր մեր սի-  
րահարը : Կիւսթա՛վ , կնիկս կ'գանդատի թէ  
գնդախաղի գաս տալ չէք ուղեր այլ եւս :

— Ե՞ս , բարեկամ , ես այդպէս բան մը  
չըսի :

— Լռէ՛ , գուն ալ գործը մաւրէր :

— Երբ տիկինը կամի , կ'ըսէ կիւսթավ  
ոտք ելլելով , միշտ պատրաստ եմ նորա  
հրամանին :

— Շատ լաւ , ուրեմն , փարատեցէք քիչ  
մը ձեր մտատանջութիւնը , երիտասարդ :  
Ես Տէժարտէնի հետ տապալի պիտի խա-  
ղամ . գուք ալ գնդամուզ խաղացէք : Օ՛ն ,  
տիկի՛ն , գացէք , կ'տեսնէք թէ պարոնը  
ձեզ կ'սպասէ :

Անհնար էր դիմադրել , քանի որ Պ. Պէրլի  
այդպէս կ'ուզէր : Կիւսթավ ձեռքը Ժիւիին  
ներկայելով՝ զգաց թէ նա կ'դողար : Յուսոյ  
և հաճոյքի անորոշ զգացում մը վերստին  
իր սիրոը կ'արծարծէր :

Գնդախաղի սրահը եկան : Տիկինը լու-  
պահ և յուզեալ էր : Կիւսթավ այնչափ տը-  
խուր էր , որ վրան չգթալու համար շատ  
կարծր սիրտ ունենալու էր մարդ :

— Ի՞նչ ունիք մի քանի օրէ ի վեր , պա-  
րո՞ն , ըստ վերջապէս տիկին Պէրլի , չէ՞ք  
բարեհաճիր խօսելու :

— Իմ ունեցածս . . . ա՞հ , տիկին , հա՞րկ  
է նորէն ըսել : Ես զձեղ սաստիկ կ'սիրեմ ,  
և դուք զիս կ'ատէք :

— Ես զձեղ կ'ատեմ , ի՞նչ անիրաւութիւնն  
երիտասարդը դեռատի կնոջ ձեռքը առ-  
նելով սրտին վրայ կ'դնէ :

— Թողէք , պարոն , դուք իմ թշուառու-  
թիւնս կ'պատճառէք . . . Ահ , կիւսթավ ,  
տկարութիւնս մի՛ զեղծէք :

Բայց սիրահար մը երբ կ'իմանայ թէ կը  
սիրուի , իր եռանդը ալ աւելի կ'բորբոքի :  
Ժիւի կ'լար . Կիւսթավ զայն իր կուրծ-  
քին վրայ սեղմելով , նորա թափած ար-

ցունքները համբոյրներով կ'ծածկէր : Եռ-  
բատի կինը մերժել ուզեց . . . բայց ան-  
ծանօթ սէր մ'արդէն կ'շրջէր իր երակացը  
մէջ . բան մը չկրցաւ ընել , այլ յուզման  
դէմ յուզում և սիրոյ փոխարէն սէր :

— Տիկին , տիկին , գոչեց Պ. Պէրլի ,  
այսօր առաջին անգամն է որ կրկնախաղ  
(Հայ) եղայ , գուք ի՞նչպէս կ'երթաք :

— Պարոն , ըստ երիտասարդը , աս իրի-  
կուն շատ աղէկ կ'խաղանք , ձեր տիկին ա-  
մուսինը զգալի կերպով յառաջ կ'երթայ :

— Շատ լու , շատ լաւ :

Անտարակոյս խաղը երկար տեւեց . զի  
կիւսթավ և Ժիւլի հազիւ ընթրիքի ատեն  
եկան : Կիւսթավ զուարթագին էր , հա-  
ճոյքը և երջանկութիւնը իր աչքերէն կը  
շողային :

— Կարծեմ բաւական ընտելացաք , ը-  
ստ Պ. տը Պէրլի , ո՞վ շահեցու :

— Տիկինը :

— Բարէ , փաղաքշութեամբ կ'խօսիք , նա-  
տակաւին ձեզի չափ վարպետ չ'է , որ ինձի  
պէս ճարտար ձողահարուած մը դիտէք : Բայց  
տիկին , շատ յոդնած կ'երեւաս . և արդարի  
գնդամուզը յոդնեցուցիչ խող մ'է , միշտ

յոտին մնալ, երթալ, դալ :

— Ես անդամ մը , կ'ըսէ Տէժարտէն , երեք օր անընդհատ խաղացի . երկու խաղամոլներ էինք . . .

— Օ՞ն , Տէժարտէն ընթրիքի մէջ պատմեցէք զայդ :

Կերակրոյ սրահն էին : Պ. Տէժարտէն ըստիպուեցաւ իր պատմութիւնը ուրիշ առթիմը թողլոյ : Տիկին Պէրլի քիչ խօսեցաւ եւ իր նուազեալ աչքերը հաստատ բռնեց : Օրիորդ Օրէլի անխոտրաբար Ժիւլին և Կիւթավավը կը գիտէք , առանց գիտնալու թէ ինչու համար բանմը իմանալ կ'ուզէք :

Այս կեղծ պարկեշտները երբեմն շատ պայծառ տեսօղներ են : Գալով կիւթավին , ուրախ , զուարժ , Պ. Պէրլիին հետ յետին ծայլը յարգանօք կ'վարուէր և դովեստներ կ'չուայլէր :

Խեղճ ամուսինը երիտասարդէն շատ կ'ախորժէր : Սեղանէն ենելով ուժգնաբար նորա ձեռքը սղմեց , ըսելով թէ իր քեռին բարի վարուց մէջ կըթած է զինքը :

Յայսմհետէ ի՞նչ կ'ըսէ , եթէ կասկածներ ունենայ :

## ԳԼՈՒԽ Ե

### ԱՆԻՊՂՈՐՄ ՎԱԽԱՎ

Ժիւլիին արցունքները ցամքեցան : Կնկան  
մը իր տարփածուին համար ըրած զոհո-  
ղութիւնք նորա սէրը կ'յաւելու : Սակայն  
արանց համար միենոյնը չէ . հաճոյքը եւ  
երջանկութեան տեւականութիւնը կ'յափ-  
րացնէ զնոսա . ցանկութիւնը կ'բորբոքէ, իսկ  
ըմբոշխնելը և վայելումը կ'ուժացնէ . և սի-  
րահարութեան կապած զօդերը՝ հեշտու-  
թիւնը կ'արձակէ :

Աւրեմն ի՞նչ պէտք է ընել : Միթէ միա-  
սի՞ն ապրելու է ըստ վարդապետութեան  
Պղատոնի . . . ո՞հ , թէ և յայնժամ սէրը  
աւելի երկայն կ'առեւէ , սակայն սպասելէ  
պարտասած կ'դադրի : Մանաւանդ սիրոյ  
այս կերպը հասարակութեան ձախող ըլ-  
լալէն զատ՝ բնութեան և Աւետարանի մէջ  
ա՛լ այդպէս չ'է . որովհետեւ ըստած է թէ  
«Աճեցէք և բազմացարուք : »

Աւրեմն հարկ է ամենայն ինչ փիլիսոփա-

յական խմաստով ըմբռանել , մանաւանդ՝ սէ-  
րը : Պէտք է տառապի՞լ , երբ տարփածու մը  
կ'խարէ զմեղ . . . երբ սիրահար մը ան-  
հաւատարիմ է : Նախ՝ ասիկա անդարման  
ախտ մ'է . և ապա անհաւատարմութիւն մը  
անդգայութիւն չ'սեպուիր : Քանզի « Մարդը  
սխալական է : »

Եթէ մարդիկ համարձակ խոստովանէին  
իրենց տկարութիւնները , յայնժամ՝ վստա-  
հութիւնը վերստին պիտի ածէր սէրը . նա-  
խանձը՝ նիազ պիտի տանջէր սրտերը եւ  
գժտութիւնը պիտի դադրէր հեշտութեան  
դերեաց վրայ իր ջահերը և իր օձերը ար-  
ծարծելէ :

Բայց չ'եմ հասկնար թէ ինչու ըսի այդ-  
րանները : Զի ասոնք յարաբերութիւն մը  
չ'ունին մեր պատմութեան հետ . ուրեմն  
ընթերցո՞ղ , համարեցէր թէ բան մը չ'ըսի :

Կիւսթավ սիրոյ զօրութեամբը , փարա-  
տած էր ժիւլիին հառաջանքը , երկիւզը և  
տագնասպը : Ամէն օր առտու և երեկոյ կը  
խաղային :

Գնդամուղ խաղալը երբէք յանցանք մը  
չ'է , բայց երբ որ ծածուկ տեղ մը խաղալ  
ուզուի . . . տակաւին պէտք է . իր զգուշու-

թիւններն ընել : Ահաւասիկ այս զգուշու-  
թիւնը կ'մոռնային :

Սէր, երբ դու դրաւես մեզ ցանկութեան,  
Պարտէ հրաժեշտ տալ խոհեմութեան :

Իրիկուն մը Պ. Պէրլի պարտէզը կ'իջնէ ,  
կնոջը գնդամուղ խաղալը տեսնելու հա-  
մար : Բարի ամուսինը նշդարիներուն կ'մօ-  
տենայ , բայց հոն լոյս չ'տեսնելով .

— Կ'երեւայ թէ , կ'ըսէ մտքէն , կար-  
ծիքնին փոխեր են :

Յետս դառնալու վրայ էր . . . բայց ձայն  
մը զոր աղէկ կ'ճանչնար . այս բառերը ար-  
տասանեց :

— Ահ , Աստուած իմ , ի՞նչ հաճոյք կը  
վայելեմ . . .

— Էհ , բարէ , կնիկս է , կ'ըսէ մեր մար-  
դը և խաղի սրահը կ'մտնայ : Խաւարին մէջ  
ստքը քանի մը բաներու դարնուելով կ'իյ-  
նոյ և կիւսթավին վրայ կ'թաւալի :

— Դուք էք պարոն , կ'ըսէ երիտասար-  
դը որ անատեն չգիտեմ ինչու կանաչ նըս-  
տարանի մը քով ծնրադրած էր :

— Հարկաւ ես եմ . ասանկ մութի մէջ  
խաղան ալ նո՞ր ելաւ . . .

— Բայց պարո՞ն , տակաւին վայրկեան մը կայ մութննալուն :

— Բարէ , ծակե՞րն ինչպէս կ'դժոնայիք այսպէս խաւարին մէջ : Բայց ես լսեցի թէ տիկինը ուրախութեան աղաղակ մը կ'արձակէր :

— Ահ , տիկինը անատեն գունդը մէջտեղ կ'ձգէր :

— Օ՞ն ուրեմն , ձեր կարողութիւնը տեսնել կուզեմ . կնի՛կ , ըսէ լոյսը թող վառեն . ես ալ պիտի խաղամ :

Տիկին Պէրլի լոյսը վառել տալով , էրկանը հետ խաղացին : Պ. Պէրլի բոլոր խաղերն ալ շահեցաւ :

Պ. տը Պէրլի , գնդապետ Մօրանվալի նամակ մը գրեց , որուն մէջ մանրամասն կը յայտնէր , իր քեռորդւոյն պարկեշտութիւնը , օրիորդ Օրէլիին վրայ ունեցած սաստիկ սէրը , կնոջը համար ըրած մեծարանը և իրեն հետ ունեցած բարեկամութիւնը :

Մօրանվալ գնդապետը Պ. տը Պէրլիին պատասխան գրեց թէ կիւսթավին կը թուերուն վրայ շատ ուրախ էր . և թէ յօդացաւը քիչ մը զինքը հանդիսաւ թողած ըլլալով՝ ամուսնութիւնը կնքելու պիտի գալ .

բայց ասոր վրայ իր քեռորդւոյն բան մը  
չպիտի ըսէր . որովհետեւ իր անակնկալ  
գալստեամբք զարմացնել կ'ուղէր զայն :

Այս պարագայից մէջ , առառու մը եկան  
Պ. աը Պէրլիին իմաց տալու թէ , Մօնթէնեիի  
կողմը մատակ գայլի մը հետքը գանուած  
է : Այս լուրը մեր որսորդը յոյժ գրգռեց :  
Որչափ պարծանք է նորա համար սպան-  
նել այնպիսի կենդանի մոր մերձակայքը  
կ'աւերէր :

Կիւսթավ առջի օր ինկած ըլլալով , կուշ-  
տը շատ կ'ցաւէր և հետեւաբար այդ պա-  
րոններուն հետեւելու վիճակի մէջ չէր :

— Կարելի է որ , կ'ըսէ Պ. Պէրլի , այսօր  
չենք գտնար կենդանւոյն ապաստանը , սա-  
կայն , Մօնթէնեիի քով փոքր ագարակ մը  
ունիմ , այս գիշեր հոն կ'պառկինք : Կ'ա-  
պահովեմ զձեզ տիկին թէ չպիտի վերա-  
դառնամ առանց կենդանին սպաննելու :

Տիկին Պէրլի էրկանը այս դիտաւորու-  
թիւնը գովեց . Կիւսթավ այս նպատակին  
մէջ՝ դիւցազնական և աղնիւ նուիրում մը  
ըլլալը յայտնեց . և կանխաւ գաւառին ա-  
ղատիչը անուանեց զնա :

Մեր որսորդք յատից մինչեւ ցգլուխ զը-

ըահ հագած, շուները արձակուած, ձիերը թամբուած և հրաժեշտք կատարուած էին :

Օրիորդ Օւէլի անհանգիստ ըլլալով սենեակը մնաց : Տիկին Պէրլի իր սենեակը մըտաւ և հրամայեց ծառաներուն թէ եթէ մէկը գալու ըլլայ, չընդունին :

Գալով կիւսթավին, ան ալ ո՛ գիտէ հիւանդէ ինչ է, Պէնօային կ'պատուիրէ թէ իր խուցը գալով զինքը անհանգիստ չ'ընէ :

Հազիւ թէ ժամը ութը կ'զարնէր, երբ օտարական մը Պ. տը Պէրլիին տունը եկաւ : Ծառաները նորա կ'իմացնեն թէ ուզած մարդք չպիտի գտնայ, զի տիկինը հիւանդէ և պարոնն ալ երկու օրուան համար որսի դնաց :

— Ե՞հ, խաբեբայներ, կ'գոչէ զնդապետ Մօրանվալը, եթէ Պէրլի հսս չէ, ներսը կը սպասեմ :

Գնդապետը առանց ծառայներուն խօսքը մտիկ ընելու, ներս կ'մանայ և դաւիթին մէջ Պէնօան կ'տեսնէ :

— Այ, դուք էք, պարոն զնդապետ :

— Այո՛, տղաս, քեռորդի՞ս ուր է :

— Պ. զնդապետ, անիկայ հիւանդ իր

սենեակը պառկած է, ինծի ըսաւ թէ զին-  
քը անհանգիստ չընեն :

— Տիկին Պէ՛րլին :

— Ան ալ քիչ մ' անհանգիստ է . վասն զի  
խստիւ հրամայեց թէ չերթան իր սենեակը :

— Բայց օրիորդ Օրէլի , արդեօք ան ալ  
որսի դնաց . կ'յուժամ թէ նա առողջ է :

— Բնդհակառակը պարսն , ջերմ ունի ,  
առտուընէ ի վեր կ'պառկի :

— Բարէ . ուրեմն այս տունը հիւանդա-  
նոց մ'է : Աղէ . . . մինակ կ'սպասեմ :

Երբոր գնդապետը այս բառերը կ'ըսէր ,  
ձիերու մեծ ազմուկ մը լսուելով , ամէն  
մարդ դուռը վազեցին : Պ. Պէրլին և Տէ-  
ժարտէնը չ'տեսնա՞ն :

— Ի՞նչպէս եղաւ , կ'ըսէ գնդապետը իր  
բարեկամին , քու մարդիկներդ ինծի ը-  
սին թէ դուն երկու օր բացակայ սկսի  
ըլլաս :

— Այո՛ , սիրելի գնդապետս , ես ալ այն-  
պէս կ'կարծէի . բայց գործը ուրիշ կերպ  
եղաւ . մատակ գայլի մը ործը գտնուած  
ըլլալով , երբ Տէժարտէնի հետ կ'երթանը ,  
կ'իմանանք թէ գազանը սպաններ են : Ե՛  
ուրեմն , քեւորդիդ տեսա՞ր :

— Ո՞ւ, դեռ հիմա եկայ . բայց տանդ  
մէջ ամէն մարդ հիւանդ է :

— Բա՛ , տակաւին այս առտու բան մը  
չկար : Բարեկամն քեռորդիէդ մեծապէս  
գոհ եմ , քանզի շատ խոհեմ , կամարար և  
սիրուն սողայ մ'է . իր բոլոր հաճոյքը կնկանս  
հետ գնդամուղ խաղալն է :

— Արդարեւ , շատ բան , այս դաւա-  
սին օդը սքանչելիքներ կ'ընէ : Անհամքեր  
եմ զինք գըկելու :

— Գնայ դաիր , քեզ տեսնելով պիտի  
զարմանայ , զի ես բան մ'ըսած չ'էի :

— Օ՞ն , Պէնօա , աիրո՞դ քոյլ տար զիս :

— Բայց պարոն . . . արդիլեց ինծի . . .

— Աղէ . անմիտ , քեռւոյն համար չէ  
անոր արդելքը : Օ՞ն , քալէ նայիմ . . .

Պէնօա դողալով կ'առաջնորդէր զդժե-  
գառքետ : Միւս կողմէն Պ. Պէրլին ալ շոյ-  
տութեամբ մը վեր ելաւ :

Տիկին Պէրլիին պառկելու խօւցը վերնա-  
յարկն էր և պարտիզին վըայ կը նայէր :  
Պ. Պէրլի մինչեւ ունելիին առջեւը եկաւ .  
թէե դուռը ներսէն դոց գտաւ , ստկայն  
նա երկու բանալի կ'գործածէր , ուպէս զի

երբոր գիշերը սէրը արթննայ, դիւրաւ գա-  
լու . . .

Կրկին բանալի՛, սոսկալի բան մ'է . . .  
վտանդի կ'ենթարկէ զմարդ : Դուռը պար-  
զունակ մունէր, բայց մոռցած էին զայն  
դնելու, և շատ ապահով էին : Աղէտալի  
անզգուշութիւն . . .

Պ. Պէրլի ուղղակի կնոջը անկողնոյն եր-  
թալով՝ սրահակը կ'բանայ, և իր ամուս-  
նոյն այն փափառկ լանջքը համբուրել կար-  
ծելով . . . կիւսթավին ետեւը կ'համ-  
բուրէ . . .

Մէտիւզի, Սիլլայի գլուխը, Բասիլիսկո-  
սի, Սպինքսի աչքերը, Սինկեղի ակռաները  
Ասդարոդի մագիլները քիչ ազգեցութիւն  
յառաջ պիտի բերէին խեղճ ամուսնոյն վը-  
րայ, քան թէ կիւսթավին ետեւը : Աշ-  
քերը կայուն, բերանը բաց, թեւերը տա-  
րածեալ, անշարժ կ'մնայ . . . Ժիկի վեր-  
մակին տակ կ'մտնայ . . . բայց կիւսթավի  
ասանկ բաներ շատ տեսած ըլլալով, ոտք  
կ'ելնէ և քանի մը ձորձեր առնելով յա-  
խուռն, պատուհանը կ'բանայ և պարափ-  
ղին մէջ, ճիշդ իր քեռւոյն վրան կ'իյնայ,  
որ ի զուր կ'որոնէր զինքը :

Գնդապետը ունչքին վրայ կ'իյնայ : Կիւս-  
թավ քեռին ճանչնալով կ'սկսի ա'լ աւելի  
վազել . պատերէն , մացառներէն և խրամ-  
ներէն ցատրելէ յետոյ , սոնազդեստը եւ  
թիկնոցը կ'հագնի . ապա դաշտին մէջ ալ  
վազելով կ'տեսնէ հայր Լիւքան և Զեփիւ-  
ռը , զորն որ պատմեցի ձեզ այս հատօ-  
րին սկիզբը :



## ԳԼՈՒԽ Զ.

### ՍԱՏԱՆԱՅ ԵՒ ՍԵՒ ԿՈՎ

— Դո՞ւ ես Պէնօտ , կ'ըսէ Կիւսթավ զր-  
լուխը ճահիճէն դուրս հանելով :

— Այո՛ պարոն , ես եմ : Ա՛հ , տան մէջ  
շատ մեծ աղմուկ կայ : Քեռինիդ սովորա-  
կանէն ալ աւելի կ'պօռայ , կ'հայհոյէ . . .

— Հերիք է : Նախ եյտուած պէտք է սա  
անիծեալ բագերէն աղատել զիս և այս քաջ  
մարդն ալ դուրս հանել :

Երիտասարդը հայր Լիւքան նորէն Զե-

փիւռին վրայ դրաւ.. և ինքն ալ Պէնօափ  
բերած ձիուն վրայ հեծնալով վերստին ճամ-  
բայ ելան :

Կիւռթավ կ'ինսդար թէ՝ քեռին կարծե-  
լով՝ Պէնօայէն այնչափ վախցած էր : Աա-  
կայն երրոր գիշերուան դէպքերը միտքը  
բերելով, այնպիսի ծանը քննադատելի վի-  
ճակի մը ենթարկուած Ժիւլիին վրայ կը<sup>1</sup>  
մտածէր, մտատանջութեան և խոկման մէջ  
կ'ընկղմէր :

Իր այս մտակոծութեանը մէջ, մեր երի-  
տասարդը կ'հաւատար նաևս թէ՝ կանայք  
միշտ հնարագէտ ըլլալով՝ ամենադժուար  
հանդամանաց մէջէն իսկ կ'ազատին : Բայց  
այնպիսի դէպքեր կան, ուր ամէն իդական  
ոգի անկարող կ'գտնուի . և ահա տիկին  
Պէլլի ճիշդ այս դժնդակ վիճակի մէջ էր :

Ե վերայ այսր ամենայնի, ինչպէս որ մեր  
քաջը չէր կրնար երկայն ժամանակ տա-  
ռապիլ, և խորհելով թէ իր հառաջները  
այն դէպքէն բան մը չպիտի փոխէին, իր  
բախտին յանձնեց խնամել զպատահարս :

Վերջապէս իրմիօնիլ եկած էին . խել մը  
փոքր կամուրջներ ալ անցնելէ յետոյ, շնա-  
կան տան մառջե կ'կենան . Լիւքա իր բը-

Նակարանը տեսնելով կ'սկսի խօսելու :

— Ահա եկանք, չարագործ, բայց որ-  
շափ նեղութեամբ :

Կիւսթավ և Պէնօա ձիէն վար իջնալով  
կամաց մը դուռը կ'զարնեն . մինչդեռ հայր  
Լիւքա բոլոր ուժովը կ'պոռար .

— Մարի-Ժան . . . Սիւզօն . . . Նի-  
գօլա Թուփիէ . . .

— Բայց ձեր կինը չէք կանչեր, հայր  
Լիւքա :

— Ո՞հ, զայն արթնցնէլ չըլլար . . .  
Հէ, Մարի-Ժան, Նիգօլա :

Ասոր վրայ վերնայտրկէն լուսանցոյց մը  
բացուելով,

— Դուք էք, հարցուց կերկերած խո-  
շոր ձայն մը :

— Է՞հ, այո՛, Նիգօլա, եկուր բա՛ց, տղաս :

Տասը վայրկեան ետքը Նիգօլա դուռը  
բացաւ :

— Ասոնք քաղքին շինականներն են, զո-  
րոնք պէտք է օժեւանեմք, ըստ հայր  
Լիւքա :

Նիգօլա հնաղանդելու կ'պատրաստուէք .  
Կիւսթավ զայն կեցուց :

— Առանց ընթրիքի կ'սրկէք զմեզ պառ-

կելու հայր Լիւքա . ես կէսօրէն ի վեր ա-  
նօթի եմ . եթէ գէթ խնձի ձուազեղ մը չը  
տաք , գիտցէք որ տունը վեր ի վայր կ'ընեմ :

Մինչդեռ հայր Լիւքա մառանի բանալ-  
ւոյն կնկանը քով ըլլալը խորհելով կ'վա-  
րանէր , վերնայարկէն դժոխային աղմուկ  
մը լսուեցաւ : Միամիտ մարդը , իր կնկանը  
ձայնը ճանչնալով , հոն գտնուած դինւոյ  
թակոյիներու ետեւը կ'նստի . նիդօլա ա-  
խոռը կ'մտնայ , և Պէնօան ալ գոմին մէջ  
պահուելով՝ կիւսթավը միայն կ'մնայ աղ-  
մուկին դէմ դնելու :

Փռքը , յոյր , ատրագոյն և աչքերը բար-  
կալից կին մը , սանդուխէն չորս առ չորս  
վար իջաւ :

— Ի՞նչ ըսել է գիշեր ատեն այս ժխո-  
րը : Սա խէնէշ Լիւքա միթէ չ'գիտէ՞ր որ  
ես այսպիսի բաներու չեմ կրնար տոկալ:  
ինչո՞ւ լուվրին մէջ չ'է պառկած և արրշիուը  
ասանկ քնացած ատեն կ'արթնցնէ զիս :

Տիկին Լիւքա այսպէս խօսելով՝ զուարթ-  
երես օտարական մը կ'տեսնէ և կ'պակչի ,  
որուն տեսաքը արդարեւ խիթալի էր . վասն  
զի ճահիճին սիկը նորա հագուստը կ'ծած-

կեր և բաղերուն կտուցի հարուածներէն երեսը յարեան թաթաւած էր : Տիկինը ըընաւ չ'տարակուսելով թէ գողերը մտած են տանը մէջ , երկժանի մը , բահ մը և աւել մը կ'նետէ կիւսթավին դլխուն : Երբ այս վերջինը տան մէջ կ'խուսափէր , կինը դաւիթէն դուրս կ'ելնէ և դիւզին մէջէն անցնելով՝ իր բոլոր ուժովը կ'պոռայ :

— Գո՛ղ կայ , մարդասպա՞ն կայ :

Գիւղացիները ծանրաքուն կ'ըլլան . Հետեւաբար ո՛չ ոք կ'ալատասխանէ անոր աղաղակներուն : Տիկին Լիւքա յուսահատած՝ կ'սկսի պատուհանի ապակեաց քարեր նետելու , և « Կրակ կայ » պոռալու : Այս հրակ բառը լսածնուն պէս , գիւղացիները անմիջապէս կ'արթննան և կ'վաղեն : Քանզի գիւղ մը շուտով կ'այրի :

Արդարեւ մեք այն բանը միայն կ'լսեմք որ անուբ կ'մնասէ զմեղ . և սակայն այլոց վիշտը . . . բնաւ չ'եմք խորհիք :

— Ո՞ւր է կրակը , հարցուցին գիւղացիք :

— Տղաքներս , թէե կրակ չ'կայ , սակայն անկէ աւելի յոռեգոյնը կայ . կարծեմ Գօղաքներ կան գիւզին մէջ :

— Գօղաքնե՞ր , հարցուցին ամենը միաբերան :

— Այս՝ հարկաւ . արդէն իմ տունս գը-  
րաւեցին : Ահ , իմ փոքր Սիւզօնս արդեօք  
հիմա ի՞նչ վիճակի մէջ է :

— Պէտք է անոր օդնութեան երթալ ,  
բայն բոլոր շինականք , որք կռւոյ վտան-  
գէն չէին վախնար : Բայց այն մարդիկ որ  
շատ քիչ փոյթ ըրած էին , որոշեցին իրենց  
տունք ապաւինելով , հոն թշնամոյն սպա-  
սելու : Մէջերնէն աւելի խորագէտին մէկը ,

— Ինձի մտիկ ըրէք , կ'ըսէ , բաւական  
ատենէ ի վեր կռւոյ վրայ խօսք չկար ,  
ըստ որում չեմ կարծեր որ տիկին Լիւքային  
տեսածները Գօղաքներ եղած ըլլան :

— Ուրեմն ասոնք աւաղակներ են , պա-  
տասխանեց գեղջկուհին . իմ տունս փլու-  
զեցին և գեհենային աղմուկներ ըլին . ես  
կ'կարծէի թէ ամուսինս է , և դայն կշտամ-  
րելու համար վար կ'իջնայի , երբոր կար-  
միր և նեւ մարդ մը տեսայ :

— Ահ , Աստուած իմ , սատանան ըլլա-  
լու է , բսին կնիկները :

— Ճիրանները և պոչը տեսաք :

— Աղէկ մը տեսած չեմ պոչը : բայց  
կարծեմ մէկ հատ ունել : Աչքերը , սա-  
կայն , կրակ կ'ցայտեցնէին :

— Պէտք է կոռուիլ , ըսին գիւղացիք ,  
որք սատանայէն աւելի Գօղագներէն կը  
վախնային :

— Ժողովրդապետը արթնցնելու է , ըսին  
կնիկները , որպէս զի նա դեւ հալածէ :

Գիւղացիք բահերով՝ թիերով՝ բրիչներով  
և ամէն հոն գտնուած բաներով՝ զինուե-  
ցան և վաշտ մը կաղմեցին : Տիկին Լիւքան  
միջավայրը կեցաւ , միւս կնիկներ ալ ետևէն  
սկսան քալելու սատանային հետ մարտըն-  
չելու համար :

Մինչդեռ Պէնօա գոմին մէջ կովու մը  
ստինքը ձեռք ձդած ըլլալով՝ ամենուրէք  
խուզովութիւն եղած ատեն իրեն կոչունք կ'ը-  
նէր , խեղճ Լիւքան ալ տակառներուն տակ  
աւելի կ'թաքչէր . և նիգօլա՝ տան մէջ գող  
կայ կարծելով , ախոռէն դուրս եղնելու չ'էր  
համարձակեր : Միւս կողմէն մեր քաջ երի-  
տասարդը , իրեն կերակուր հայթայիթելու  
համար , առանց շուարելու երկրորդ դստի-  
կոնը կ'ելնէ , և գուռու մը բանալով՝ կնկան  
ձայն մը կ'լսէ . խարխափելով ձայնին եկած  
կողմը կ'յառաջանայ , ուր անկողին մը դըտ-  
նելով կ'վստահի թէ դեղջկուհի մը պառ-  
կած է : Մանաւանդ այս դեղջկուհին ինք-

զինք մեծ հաճութեամբ թոյլ տուած էր  
հպել, որով երիտասարդը կ'հասկնայ թէ  
նա շատ յոյր և կակուղ մարմին մ'ունի :

Որչա՞փ ալ անվեհեր է եղեր այս կինը որ  
երբէք սատանայէն չվախնար :

Եւ մոռնալով զժիւլին, որ անտարակոյս  
կ'թախծի և կ'մորմնքի իրեն համար, կիւս-  
թալ Մարի - Ժանի հետ կ'զուարճանայ :

Ա.Հաւասիկ մարդիկ, ուրեմն կրնա՞ք վրս-  
տահիլ անոնց հաւատարմութեանը :

Ա.յս միջոցին, զինեալ գիւղացիները տա-  
նը առջեւ եկան . խեղճ Լիւքա լսած աղ-  
մուկէն ահարեկած և պակուցեալ՝ տակառ-  
ներու տակէն ելլելով ամբոխին մէջը կը  
նետուի :

— Ա.Հաւասիկ մէկը, կ'պոռայ տիկին Լիւ-  
քա, կ'տեսնա՞ք թէ կարմիր և սեւ է :

Արդարեւ Լիւքա, ճահիճի գայուէն եւ  
վրան թափուած դինիի մրուրէն անձանա-  
չելի եղած էր : Գաւազանի հարուածներով  
վրան նետուեցան, և նա պոռալով պրծաւ :  
Երբոր զայն կ'հալածէին իր կինը ամբոխին  
ամենէն քաջը հանդիսանալով՝ գաւիթին մէջ  
մուաւ և իր Սիւզօն աղջիկը կանչեց :

Սիւզօն իր պատուհանը բանալով՝

— Ի՞նչ է այս աղմուկին պատճառը, կը հարցնէ :

— Մի՛ վախնար աղջիկս, դեւ մը սպըրդ գեցաւ մեր տան մէջ :

Նորատի աղջիկը՝ դեւ իր անկողնոյն վըրան կարծելով չ'ուզեց սենեկին մէջ մինակ մնալ: Եւ որովհետեւ պատուհանները բարձր չ'էին, մէկ սրունքը անցուց, յետոյ միւսը և վար պիտի սահէր, բայց շապիկը բեեռի մը կառչելով՝ ամէն կողմը յերեւան կ'ելլէ:

— Ցղաքնե՛ր, աչքերնիդ գոցեցէք, կը պոռայ մայր Լիւքա :

Միթէ երիտասարդներ ասանկ տեսարանի մը աչք կ'գոցե՞ն: Անոնք ընդհակառակը, լաւ կերպով նկատելու համար իւրենց լապտերները վեր վերցուցին:

— Ահ, մայր իմ, գոչեց Սիւզօն, հարկաւ սատանան է որ շապիկս կ'քաշէ, վարժապետս կ'ըսէր թէ նա՝ միշտ աղջիկները շապիկէն կ'կորդէ:

— Սպասէ՛ աղջիկս, ախոռին մէջի սանդուխը բերելով՝ քեզ պիտի քեցեմ: Եղբայր թումա, օ՛ն, գացէք սանդուխը բերէք:

Թումա գէպ ի ախոռը յառաջանալով, գուռը բացածին պէս, յանկարծ սեւ կով

մը կ'ելլէ , Թուման կը տապալէ և ահռելի  
պոռոշիւններ հանելով , մոլեգնաբար դիւ-  
ղացւոց մէջ կ'խոյանայ :

Պէտք է յիշել թէ Պէնօա դոմին մէջ ա-  
պաստանած էր : Եւ շատակեր տղան , ծա-  
ռաւն անցնելու համար , իր բոլոր ուժովը ,  
կովի մը ստինքը կ'քամէր : Արդէն խուլ բը-  
շիւններ խեղճ կենդանւոյն անհամբերու-  
թիւնը կ'յայտնէին , որսվ Պէնօա , իր որկ-  
րամոլութեանը զոհ պիտի երթար , եթէ  
Թումա ախոռին դուռը չ'բանար :

Գիւղացիները , իրենց մէջ կատաղի կով  
մը տեսնելով զարհուրած , չերկմտեցան բը-  
նաւ թէ խեղճ կենդանին դիւահարեր է :  
Նա մանաւանդ կովին սեւ ըլլալն ալ նոցա  
տարակոյսը կ'հաստատէր . . . կարծեմ՝ գի-  
տէք թէ չար ոգիք այս գոյնը շատ կ'սի-  
րեն : Միանդամայն սեւ հաւերով է որ դե-  
ւերը , ճիւաղները և խպլիկները կ'կոչեն :  
Արդարեւ Անքրը սպարապետուհին , միջ-  
նալուսին՝ ճերմակ աքաղաղ մը մեռցնելուն  
համար , Փարիզի մէջ հրոյ ճարակ եղաւ ,  
բայց եթէ աքաղաղը սեւ ըլլար , սատա-  
նաները պիտի աղատէին զայն :

Բանաստեղծներն ալ ընդունած են այս

գունոյ ազգեցութիւնը : Քանի մը ծաղ-  
րածուներ ըսին թէ բժիշկներուն սեւ ըզ-  
գեստ հաղնիլը , իրենց հիւանդներուն սու-  
դը բռնելու համար է : Ընդհակառակը եւ  
կ'կարծեմ թէ այս զգեստը նպաստաւոր  
սատանայի անձնատուր ըլլալու համար կը  
հաղնին , որպէս զի նա իրենց ուսուցանէ  
ժանտախտը , քոսը , ջրգողութիւնը , լուս-  
նոտութիւնը , մոլեգնութիւնը և այլ դժո-  
խային հիւանդութիւնները՝ բուժելու մի-  
ջոցները :

Վերջապէս մողերն անգամ երկայն ու  
սեւ հաղուստներ կ'հաղնին : Կարելի է հի-  
մա ինձի պիտի հարցնէք թէ որոնք են մո-  
դերը : Ասոնք այնպիսի մարդիկներ են որք  
բնութեան օրէնքը տապալելու , այսինքն  
անկարելի բաներ ընելու կ'տքնին : Յիրաւի ,  
ես երբէք կիւս տեսած չ'եմ . բայց պէտք  
է որ եղած ըլլայ , որովհետեւ ինչպէս որ  
մեք այսօր դողութեան և սպանութեան  
համար ատեաններ ունիմք . նոյնպէս ալյա-  
ռաջագոյն Եւրոպիոյ մէջ քաւդէութեան  
վրայ հաստատուած դատարաններ կային ,  
և ժողովուրդը չ'էր կրնար հաւատ չընծա-  
յել անոր , զի ատենակայներն անգամ կը

Հաւատային : Խսկ այսօր այլ եւս չեն տես-  
նուիր ո՛չ կախարդներ և ո՛չ մողեր : Այժմ  
քանի մը բախտագիւտք և քարտահանք մի-  
այն մնալով , սոյն արհեստն ալ օր ըստ օրէ  
խափանման վրայ է :

Սիւզօն սատանային և սեւ կովին վախէն  
ներս մոնելու դեդեւելով , վար սահեցաւ  
և ամբոխին մէջ մտաւ :

Մայր Լիւքա կ'ապահովէ իր մարդիկները  
թէ անշուշտ սատանան կովին հետ միատեղ  
կծիկը դրած է ուստի և հարկ է տան մէջ  
խաղաղութիւնը վերահստատել :

Ըստ որում տան ամէն կողմը շրջելէ զկնի  
մայր Լիւքա և իր խումբը վերնայարկի  
սենեակը մտնելով՝ Մարի - Ժանի դրանը  
առջեւ կ'դան ուսկից կոծեր և հեծկլտանք  
կլսուէր :

— Ահ , չարագործ , կ'ըսէ մայր Լիւքա ,  
ահաւասիկ սատանան որ Մարի - Ժանը կը  
նուաճէ :

Գիւղացիները չհամարձակելով դուռը  
բանալու մի զկնի միոյ քաշուեցան :

— Մարի - Ժան , սատանան քու սեն-  
եակդ մտաւ :

— Այո' , այո' , բայց ինծի ձգեցէք ,

ես մինակ կրնամ անոր հետ կոռուիլ :

— Զգոյշ կեցիր . չըլլայ որ մարմնոյդ մէջ մտնայ . շնչառութիւնդ աղէկ բռնէ . քանդի սատանաները ամէկ տեսակ ձեւերու կ'մտնան :

— Նա արդէն երեք անդամ մտաւ . բայց ներսը չմնաց , ահաւասիկ վերստին դուրս ելաւ :


Գիւղացիները կարծելով որ սատանան սենեակէն դուրս ելածին պէս ճիրանի հարուածներով իրենց վրայ պիտի ցատքի , շտապաւ և զարհուրած զիրար խռնելով , տապալելով վար իջան :

Այն կիները , որք ախոռին քովը կեցերէին , այնպէս համոզուեցան թէ սատանան կովի մը կերպարանօք մեկնած է . բայց աւելի ապահով ըլլալու համար ամէն կողմէ կ'նայէին : Այս միջոցիս լոյսը դամ քան զգամ կ'սկսէր ծագիլ , սակայն դեռ ամէն բան դժուարաւ կ'որոշուէր : Քանի մը դիւզացիք մոլորած՝ թէ դոմին մէջ և թէ ախոռին մէջ մտան և դէպ ի յառաջ քալելով , ոմանք Պէնօայի գլխին և ոմանք Նիդոլայի սրնգացը զարնուեցան : Այս պարոնները որ կուին վրայ կ'քնանային , իրենց

մարմնոյն վրայի քայլերը զգալով աղաղակ-  
ներ արձկեցին : Գիւղացիները կարծելով  
թէ դեւերու վրայէն կքալեն , պոռալով  
դուքս ելան :

— Տունը կախարդներով լի է , ըսին կա-  
նայք :

— Սատանան երիցս մտեր է Մարի-Ժանի  
մարմնոյն մէջ : Հոս չկենամք , փախչիմք :



## ԳԼՈՒԽ Է .

### ՄԱՐԻ - ԺԱՆ ԵՒ ՍԻՒԶՈՆ

Մարդիկ՝ եթէ ընդվայր երկիւղի մը անձ-  
նասուր ըլլալէ յառաջ քննադատէին , եթէ  
մաքառելէ յառաջ ուշի ուշով ունկնդիր լի-  
նէին , եթէ անմտութիւն մ'ընելէ յառաջ  
խորհէին , և եթէ ամուսնանալէ յառաջ լաւ  
ճանաչէին զիրեար , յայնժամ տղայք չպի-  
տի երկնչէին խուճապներէ , ցնորքներէ ,  
ուրուականներէ և կրկնատեսիներէ : Նո-  
րատի օրիորդք չպիտի դողային մառանը

իջնելու : Գիւղացիք աչքերնին չպիտի դո-  
ցէին գիշերը դերեզմանատան մ'առջեւ :  
Գեղեցիկ կանայք առանց սարսափելու պի-  
տի կարդային իրիկունը լորտ Պայրընի և Ան-  
նա Բատղլիֆի վիպասանութիւնները : Յայն-  
ժամ քիչ պատերազմներ պիտի տեսնուէր .  
որովհետեւ վեհապետաց դեսպանները՝ պի-  
տի ջանային իրենց նախարարները պատաս-  
խանատու ընել և ոչ թէ խաժամուժ ամ-  
բոխ մը զինուորութեան դատապարտելյա-  
նիրաւի : Երկու երիտասարդներ , մնոտի  
պատճառի մը համար չպիտի ոդորէին ըդ-  
միմեանս : Յայնժամ երիտասարդ մը չպի-  
տի ջանար յանկուցանել մի պարկեշտ օ-  
րիորդ՝ որով չուզեր ամուսնանալ : Կար-  
գուած մարդ մը , պակշոտ կանանց չպիտի  
ընծայէր այն սէրը՝ զոր իր կնկանը կ'պար-  
տի : Այն ատեն մարդիկ՝ բախտախաղի շը-  
պիտի երթային իրենց պատիւը վտանգելու  
և քսակնին պարպելու՝ ի նպաստ խաղա-  
րանի վարձակալ պարոններուն : Վիճակա-  
հանութեան չպիտի գրուէին , պետութիւնը  
հաճոյացնելու համար : Եւ մեծ ակմբոց չը-  
պիտի յաճախէին ուր պաղպաղակ , օշարակ  
և քաղցրաւենիք կ'վատնեն : Յայնժամ ծեր

մը նորատի օրիորդի մը , կարդադիր կին  
մը գինեմոլի մը հետ , հանճարեղ երիտա-  
սարդ մը տխմար և լվտի կնկան մը հետ  
չպիտի ամուսնանային :

Վերջապէս , եթէ տիկին Լիւքա հան-  
դարտովին վար իջած ըլլար , այն ատեն  
կիւսթավը գող մը կամ սատանայ մը չպի-  
տի կարծուէր , և Երմնօնվիլի բնակիչը դի-  
շեր ատեն անհանգիստ չպիտի ըլլային :

Ինչ և իցէ : Նոյն պահուն մեծ ազմկով  
մը խումբը կ'վերադառնար . մեր քաջը այն-  
պիսի շաղփաղի և վախկոտ մարդկանց գա-  
լրստեանը հանդարտովին սպասեց :

Գիւղացիք ցերեկուան մէջ քաջասիրտ ըլ-  
լալով , որոշած էին դիւթուած տունը այ-  
ցելելու . երբ մեծ փողոցը մոտան , մարդ  
մը տեսան որ սեւ կովը կ'բերէր :

— Ասիկա իմ էրիկս է , ըսաւ տիկին  
Լիւքա :

Արդարեւ հայր Լիւքան էր , որ դղեակի  
խրամներէն միոյն մէջ վրան և երեսը լուա-  
նալէ յետոյ , իր սեւ կովին հետ տունը կը  
վերադառնար :

Մօտեցան և տեղեկութիւն խնդրեցին :  
Հայր Լիւքա ընդունած դաւազանի հար-

ուածներէն դանդատելով՝ պատմեց նաեւ  
երիտասարդ օտարականի պատահիլը, ճա-  
հիճին մէջ իյնալը և գիշերուան մէջ գիւղ  
գալը, Յայնժամ սկսան հասկնալ թէ այս  
բաներու մէջ սատանան չ'կայ :

Մայր Լիւքա նախ իր էրիկը կշտամբեց  
երիտասարդ մը բերած ըլլալուն համար,  
բայց յետոյ երբ կ'իմանայ թէ այս երիտա-  
սարդը առատաձեռն է, այն ատեն կ'ու-  
րախանայ և թոյլ կ'տայ իր էրկանը գաւա-  
դանի հարուածոց փոխարէն զինքը փարելու :

Ստուգիւ մեր երիտասարդը հարուստ էր.  
վասն զի Պէնօա իր տիրոջը հագուստներէն  
մէկ մասը բերած էր և բաճկոնի մը մէջ  
բարեբախտաբար կ'գտնուէր հարիւր ըստ  
պարունակող քսակ մը զոր գնդապետը իր  
քեռորդւոյն խրկած՝ և այս վերջինը պա-  
տեհութիւն ունեցած չ'էր զայն ծախսելու  
տիկին Պէրլիի տունը :

Մեր գիւցազնը տեսնելով թէ ամէն բանէ-  
յառաջ տիկին Լիւքան հաճոյացնել պէտք է,  
ձեռքը ըստ մը գրաւ, նորա մնոցնել տա-  
լու այն վախը զոր յակամայս առթած էր :

Յայնժամ տան մէջ կիւսթավի հետ աղէկ  
վարուիլ սկսան մինչդեռ յառաջ մահ կ'ըս-

պառնային : Անոր ամենէն գեղեցիկ սենեակը տալով լաւադոյն նախաճաշ մը պատրաստեցին :

Բան մը միայն կ'տանջէր տակաւին խուն մի գիւղացւոց սիրտը : Այսինքն թէ ի՞նչ կ'նշանակէր Մարի - Ժանի կոխը : Ուրեմն տան մէջ արտաքոյ կարդի բան մ'եղած էր : Սպասուհին կանչելով կ'հարցաքննեն :

— Յարէ՛, կ'պատասխանէ Մարի - Ժան , հիմա կ'յիշեմ թէ երբոր դուք վեր ելաք և ընդուստ արթնցուցիք զիս , գէշ երազ մը կ'տեսնէի և մղձաւանջ մ'ունէի որ զիս կը խղդէր :

Գիւղացիները իրենց վախին պարապ ըլլալուն վրայ խնդացին , և Մարի - Ժանն ալ խնդաց ըսածին և թերեւս ըրածին վրայ : Վերջապէս հանդարտութիւնը վերանորոգելով՝ ամէն ոք իր օրական գործին վերադարձան :

Կիւսթավ Պէնօափ հետ միատեղ սենեակը քաշուելով , պատուիրեց անոր լաւ կերպով պատմելու , իր վախուստէն ետքը ինչ որ անցած էր տիկին Պէրլիի տունը :

— Նախ , կըսէ Պէնօա , քեռինիդ , զոր պատուհանէ մը վրան իյնալով գետինը

տապալած էիք , ոտք եղաւ ձեր ետեւէն վաղելու համար , բայց դուք այնչափ կը սուրհայիք որ անկարելի էր ձեզի հասնիլ . գնդապետը զայս խմանալով ետ դարձաւ և դէպ ի ինձ դալով հարցուց թէ որչափ ատենէ ի վեր դուք խենդեցած էք , վասն զի ձեր , շապիկով մացառներու և խրամ-ներու վրայէն ցատքելը տեսնելով , կ'կար-ձէր թէ խելքերնիդ կորուսած էք : Այս միջոցին Պ. Պէրլի ահաբեկ դէմքով մը վա-զելով ձեր Պ. քեռւոյն կ'գոչէր .

— Քեռորդիդ ինձի պղծութիւն ըրեր է , կնոջս սենեակը դտայ . . .

— Ես արդէն վստահ էի , ըստ յանկարծ գնդապետը , թէ շաղաշուտը կ'անդոսնէր զձեղ :

Եւ ձեր Պ. քեռին սկսաւ հայհոյել . մինչ-դեռ Պ. Պէրլի մեծ աղաղակներ ընելով , կ'անիծէր կնիկը , ամուսնութիւնը և գնդա-խազի սրահը : Ես այն ատեն դէպ ի տուն կ'վերադառնայի երրոր կեզեքածս բուժող խոհարարուհոյն հանդիպեցայ . ասիկա ի ընէ բարի կին մ'է , պարսն , և զձեղ շատ կ'սիրէ , որովհետեւ զիս տեսնելով ըստ .

— Կ'թողուս որ տէրդ առանց հադուստի

դաշտին մէջ վաղէ , շուտով իր սենեակը ե-  
լիր , հագուստը , ստակը և ձին առնելով  
ետեւէն վաղէ , անոր դացած ճամբան քեզի  
դիւրաւ ցոյց կ'տան , զի մերկ մարդ մը ա-  
մենուն աչքին . կ'զարնէ : Խոհարարին ըսածը  
ըրի և դիտէք թէ ուրտեղ հասայ ձեզի :

— Լաւ , Պէնօա , առայժմ դնայ :

Կիւսթավ առանձին մնալով , խորհեցաւ  
թէ ինչ ընել պէտք էր . Ժիւլիին հետ թըղ-  
թակցութիւն մը հաստատելու միջոց չ'կար .  
սակայն կ'տոչորէր զայն ապահովցնելու թէ  
զինքը միշտ սաստիկ կ'սիրէ . քանզի այս ա-  
պահովութիւնը , իրեն համար հանդիսոր և  
պատիւը զոհած կին մը կրնար փոփոդել :

— Պէտք է դրել , մտածեց կիւսթավ ,  
թերեւս այս բարի խոհարարուհւոյն միջ-  
նորդութեամբ նամակս անոր կրնամ հաս-  
ցընել : Գիւղացիներն ըսես , բնաւ չեն դի-  
տեր ծածուկ հաղորդութիւն մ'ընել : Է՛հ ,  
ուրեմն , ծպտելով ես անձամբ կ'երթամ .  
բայց պէտք է սպասել որ առջի վայրկեան-  
ները անցնին . մինչեւ այն ատեն էրկանը  
տքնութիւնը կ'նուազի և քեռիս ալ Փարփա-  
կ'վերադառնայ : Ուժ օր էրմնօնվիլի մէջ

անցնեմք . ութ օր , խեղճ ժիւլի , թէ և  
շատ երկար է , բայց այնպէս պէտք է :

Այս դիտաւորութենէ զկնի , խորհեցաւ  
թէ ինչ ընելու է ութ օր դիւղի մը մէջ :  
Բայց այս դիւղը երմանվիլ է , որուն ա-  
նունը միայն կ'յիշեցնէ սրտառուչ յիշատակ-  
ներ , և նորա ակնահաճոյ դիրքը կ'հրա-  
պուրէ զմարդ : Յովսէփ երկրորդը , անդ-  
հիւղի մը մէջ ճաշ ըրած էր : Ժան - Ժադ-  
թուսօ հոն անցուց իր կենաց վերջին մասը :  
Պ. Սէն Բէալն ալ կրնայ քանի մ'օր հոն ժա-  
մանակ անցնել : Մանաւանդ Մարի - Ժան  
մ' և փոքր Սիւզօն մ'ալ կար որ այս վերջ-  
նոյն սիրուն դէմքը խափանուած սիրոյ մը  
յիշատակները կ'յարուցանէր : Մեր երիտա-  
սարդը վար իջնալով տիկին Լիւքան կ'տես-  
նէ՝ որ աղաւնիները կ'փետտէր :

— Տիկին , դիւղին մէջ քիչ մը պտտիլ  
կ'ուզեմ : Ես առանձին այցելութեան հա-  
մար հոս եկայ , և նախամեծար համարեցի  
ձեր տան մէջ իջեւանիլ :

— Աղէկ ըրած էք , պարոն , ուղածնուդ-  
շափ կրնաք մեր տունը կենալ : Դուք պի-  
տի ախորժիք մեր երկրէն , ո՛հ , աղւոր բա-  
ներ պիտի տեսնաք :

— Արդէն մինչեւ հիմա տեսածներս ալ շատ աղէկ էին :

— Տակաւին ի՞նչ տեսաք : Սա դղեակին պարտէզը տեսնաք, շատ գեղեցիկ է : Աղջիկս ձեզ թող տանի, հիմա դղեակին մէջ բերդապահէն դատ մէկը չկայ . Սիւզօն, Սիւզօն :

— Եթէ կուզէք, կըսէ Մարի-Ժան յառաջ գալով, ես երթամ պարոնին հետ :

— Ոչ, ոչ, պէտք է որ գուն կարագ և պանիր շինես, Սիւզօնը պիտի երթայ :

Մարի-Ժան Սիւզօնի տրուած պատիւէն գոհ չըլլալով, տհաճութեամբ իր գործին վերսկսաւ :

Փոքր աղջիկը գեղեցիկ դիմարկը և իր կիրակնօրեայ ընթանոցը հագնելով, ուրախութեամբ պատրաստուեցաւ պարոնը առաջնորդելու . բայց մայրիկը՝ մտածելով թէ՝ անձամբ իր հիւրին ընկերանալով առաւել պատիւ մըլլած պիտի լինէր, պատուիրեց իր էրկանը կերակուրին վրայ նայիլ և պատրաստուեցաւ աղջկանը հետ երթալու, ասկէ ի զատ փոքրիկը թերեւս չկարենայ քաղաքացի պարոնի մը պէտք եղած զդուշութիւնը ընել : Մանաւանդ ի՞նչ պի-

տի ըսէր Նիդօլա , եթէ վերադարձին իմանար թէ Սիւզօն օտարականի հետ մինակ պտտելու դացեր է : Քանզի Նիդօլա թուրէ , օրիորդ Լիւքային նշանածն էր : Սիւզօն առանց աղէկ մը գիտնալու նախամեծար կ'համարէր երիտասարդի հետ մինակ երթալլ . սակայն Մարի - Ժան դոհ եղաւայտ նոր պայմանէն :

Իսկ Կիւսթավ , 16 տարեկան դեռահաս Սիւզօնի սեաւ մաղերը , կապոյտ աչքերը , գեղեցիկ ակռայները նկատելով կ'հառաջէր , որոնց քով , բոլոր Մարի - Ժանները կը տժդունէին :

Երեքը միատեղ գիւղին մէկ մասը անցան , և ի ճանապարհի Կիւսթավ նշմարեց թէ բոլոր բնակիչք գեղեցիկ ակռաներ ունին , այս որ յառաջ կ'դայ ջուրին առողջարարութենէ :

Դղեակին պարտէզը մտան . ի՞նչ հրապուրիչ տեղուանք , բարձրատարած և հովանուտ ծառեր , պայծառագոյն և զմրըստեայ դալարիք , խաչաձեւ և մանուածապատ հոսող վճիտ առուակներ , քարավաղներ , ամայի սորեր , գոյնզգոյն ծաղկոք մարդագետիններ , լիճ մը որ կ'ջրէ դղեակին պա-

տերը , և որուն ափանցը վրայէն կ'բարձ-  
րանայ բաղեղներով շրջապատեալ հին աշ-  
տարակ մը . այսպիսի հեշտական և ակնա-  
պարար վայր մը կ'հոլանի ի տես ճեմողաց ,  
բայց ի՞նչ օգուտ , ամայութիւնը փլանել  
կ'սպառնայ զայն :

Աշտարակին ստորոտը , մալուխով և կա-  
ռաններով զետեղուած լաստափայտ մը պը-  
ղընձոտ առուակներու վրայէն մէկ եղբէ  
միւսը երթալով անցուդարձի դիւրութիւն-  
ներ կ'ընծայէ :

Անապատ կոչուած մասին մէջ , բարձրա-  
ւանդակի մը վրայ կառուցեալ Ռուսօի փը-  
լուզած տնակը կ'տեսնուի : Պէտք չ'էր պա-  
հել այն տնակը որ ի յուշ կ'ածէ մի մեծ  
մարդու յիշատակը :

Անձաւի մը տակ կիւսթավ քանի մը տա-  
ղեր ընդօրինակելով՝

— Եթէ Ժիւլի հետս ըլլար , ըսաւ մըտ-  
քէն , յայնժամ այս մամռէ բազմոցին վրայ  
կ'նստէինք , ուր այլք այնչափ երջանիկ ե-  
ղած են : Տրփողները արդարեւ շատ ան-  
զգօն են : Պէտք է գիտնա՞ն օտարական  
այցելուներ թէ պարոն և տիկին այս ինչ ,  
սիրահարութեան համար հոս եկած են :

Մարգագետինէն ելնելով , դղեակին միւս  
կողմը անցան , ուր մարդ՝ ուռենիներով և  
ամէն կողմէ ջրով շրջապատեալ ճամբու մը  
վրայ կ'գտնուի . կղզիին քով գտնուած նա-  
ւակիկ մը դիւրութիւն կ'տայ այցելելու  
այն չքնաղ շիրիմը՝ ուր կը հանգչի ժան-  
ժագ թուա :

Գերմանիոյ , Զուխցերիոյ , Անդղիոյ և նը-  
շանաւոր իջեւաններու մէջ , ճամբու տե-  
տրներ կան . որք ճամբորդաց արձակ և ո-  
տանաւոր խորհրդածութիւնները պարու-  
նակելու յատկացեալ են : Այս ուղղատե-  
տրները , որոնց վրայ բան մը դրելու հա-  
մար ձեզ կ'ներկայուի , դուն ուրէք կ'փոխ-  
ուին . զի շատ դիւրին է անուն մը դրել  
քան թէ մտածութիւն մը :

Վերջապէս կիւսթավ և իր առաջնորդու-  
հիները տուն վերադարձան , ուր իրենց  
համար աղէկ ճաշ մը պատրաստած էին :  
Բստ դիւղային սովորութեան Սիւզօն , իր  
ծնողը , կիւսթավ , Մարի - ժան և Նիդօլա  
թուփէ միենոյն սեղանը նստեցան . միայն  
թէ իր պարտաւորութիւնը լաւ ճանաչող  
Պէնօա՝ տիրոջը ետեւը կենալով՝ նորա ծա-  
ռայել ուղեց :

Մայր Լիւքա՝ որ քիչ մը չարախօս էր, ճաշի ատեն, կիւսթավին պատմեց, գաւառին բոլոր դէպքերը, միայն խօսքը կ'ընդմիջէր իր էրկանը՝ դինի լեցնելու, Սիւզօնի՝ շիտակ նստելու պատուիրած ատեն :

Նորատի աղջիկը՝ երիտասարդին քովը նստած, ժպտելով կ'դիտէր զնա, և որովհետեւ դիւզի մէջ քիչ սովորութիւն կայ այդպիսի բաներու, ըստ որում Սիւզօնը շիկնեցաւ : Մայր Լիւքա ատաղձագործի մը պատմութիւնը կ'ընէր, որ իր աղջիկը հետէն ըլլալու համար Փարիզ դրկած էր :

— Վերջացնելու համար, պարո՞ն, ըստ նա կիւսթավին պնակը լեցնելէ յետոյ, դիտցէք թէ այս աղջիկը Փարիզի մէջ . . . պարոն ի կեանս ձեր, եթէ ներելի է. երկծի կառք մը առեր է, չեմ դիտեր ինչ կերպով . . . ինչո՞ւ չէք ուտեր պարոն . . . վերջապէս այս գեղեցիկ օրիորդը . . . գըլուխդ վերցուր Սիւզօն, թրթրակառքով գաւառը այցելելու եկաւ, և կ'հաւատա՞ք պարոն, աղջիկը իր ծնողացը տունը չեկաւ, իշխանուհւոյ մը կերպարանքը ունէր . . . ի՞նչ կ'ընես, Լիւքա՛, փոխանակ պարոնին դինի տալու : Զեր կենացը, ձեր

տիկին մօրը և պարոն հօրը կենացը , նաև  
ձեր բարեկամներուն կենացը . . .

Մայր Լիւքա ընդմիջեց խօսքը Նիդօլայի  
համար որ մեծ աղաղակով կ'հայհոյէր , և  
կ'ըսէր թէ իր բլիթէնի վրան կոխած են :  
Այս միջոցիս հայր Լիւքայի ձեռքէն ալ շիշը  
սեղանին վրայ իյնալով , դինին յօշածի մը  
վրայ կ'հոսի :

Կիւսթավ կ'խօսակցէր Սիւզօնի հետ , բայց  
Մարի - Ժան դանոնք չ'էր փախցներ աչքէն :

Գեղջկուհի մը ունի այն սէրը զոր ունի  
քաղքուհի մը : Սէրը երբեմն անմիտները  
հանճարեղ եւ շատ տխմարները խելացի  
կ'ընէ :

Ճաշէն յետոյ , Կիւսթավ մինակ անտառ  
ներու մէջ կ'շրջագայէր : Հովանավայրից և  
կանաչեղէն դորգերուն տեսքը , նորա միտ-  
քը բերին գնդախաղի գեղեցիկ որահը , և  
այն քաղցր դասերը զորս իր աշակերտուհին  
կ'սորվէր : Անիծեց էրիկները և քեռիները ,  
անիծեց նաև իր անդդուշութիւնը : Ահ ,  
եթէ պարզունակը դրուած ըլլա՛ր . . .

Դիւղ վերագարձին , Սիւզօնի վեհերոտ և  
անմեղ կերպարանքը դիտելով ,

— Ստուգիւ , ըսաւ , ես յանցաւոր եմա-

նոր ոտքին վրայ կոխելուս համար , այս  
փոքրիկը տակաւին ամօթխած է , ես անոր  
շառագնելուն պատճառ եղայ : Ես կնիկները  
կ'սիրեմ : Թէպէտ և այս մասին փոփոխա-  
միտ եմ , սակայն յանցանքը իմն չ'է : Անի-  
բաւութիւն մ'ըրի Պ. Փէրլիի , բայց եթէ ես  
չ'ընէի իմ տեղս ուրիշ մը պիտի ընէր : Ա-  
սիկա նաև ծառայութիւն մ'ալ է , արանց  
համար , որք փորձեն իրենց կիները : Այ-  
սու ամենայնիւ պէտք չ'է մոլորեցնել ան-  
մեզ աղջիկ մը և նորա կեանքը դժբաղդու-  
թեան վտանգել : Գալով կամովին մոլորիլ  
ուզող օրիորդաց , որք տեսականը ունին և  
դորձնականը կ'ուզեն , անոնց համար թոյլ-  
տուութիւն կայ . անոնք գիտեն ինչ որ կը  
ցանկայ սիրահար մը :

Գիւղացւոց քով միայն երեք բան կ'գըտ-  
նուի . աշխատիլ , ուտել , ընանալ : Կիւու-  
թավ ընթրիքը ընելէ յետոյ իր սենեակը  
քաշուեցաւ քնով դարմանելու համար նա-  
խորդ օրուանց յոգնութիւնը . Մարի-ժան  
նորա աչացը մէջ բան մը կարդալու ջանաց ,  
բայց երիտասարդը որ հանգստութեան  
պէտք ունէր , առանց ուշադրութիւն ընելու  
խոշոր աղջկան դաղտադողի նայուածոցը

վրայ, սենեակը մտաւ և գոցեց : Եւ ապա  
ամէն մարդ պառկելու գացին, զի նախորդ  
դիշերուան դէպքերէն անքուն մնացած էին :

Մարի - Ժանը միայն քնանալու փափաքք  
չզգաց . թէև պառկեցաւ, բայց մտիկը ը-  
րաւ . . . սպասեց . . . խոշոր աղջիկը ա-  
մէն դիշեր սատանայի հետ կռուելու ու-  
ժը ունէր :

Գիշերը կ'անցնէր և մէկը չ'եկաւ : Գի-  
տէք ընթերցո՞ղ : Աղջկան սէրը այնպիսի  
տապ մ'է որ կ'տոչորէ զնա : Ուստի, որով-  
հետեւ սաստիկ սիրով բորբոքած ժամանակ  
մարդ չ'կրնար քնանալ, Մարի - Ժան իր ան-  
կողնէն վար իջաւ : Կարծեց թէ յերեկոյին  
կիւսթավ նշան ըրած է և արդէն կ'սպասէ  
զինքը . մանաւանդ ասիկա քաղաքավարու-  
թիւն մ'է զոր կը պարտի նմա : Այսպէս  
խորհելով, պարդ վտաւակ մը հագաւ եւ  
վար իջաւ :

Խոշոր աղջիկը երիտասարդին պառկած  
սենեկին դըանը առջեւ դալով, նախ կա-  
մացուկ մը զարկաւ, յետոյ քիչ մ'ուժով,  
կիւսթավ վերջապէս արթնցաւ :

— Ո՞վ է ան, հարցուց :

— Ես եմ, որ հետս, երէկ դիշեր . . .

— ԱՇ , դո՞ւ ես Մարի - Ժան , այ , ի՞նչ  
կուղես այս ատեն :

— Աղէ՛ , հարցնել պէտք է , ես եկայ ,  
որ . . . որովհետեւ դուք չեկաք :

— ԱՇ , սիրելի բարեկամդի իմ , սատա-  
նան ամէն գիշեր չգար աղջիկները ի մեղս  
հրապուրելու . դեւերը երկաթէ չեն . եւ  
այն սաղայելը որ երէկ քեզ անհանգիստ  
ըրաւ այսօր քնոյ պէտք ունի :

Խեղճ աղջիկը դրան առջեւ ապշեալ մը-  
նաց : Զայրումը և դժկամակութիւնը յու-  
ղեցին զնա . նախանձն ալ չուշացաւ տեղի  
տալու . քանզի երիտասարդին՝ Սիւզօնի վը-  
րայ ըրած ուշադրութիւնները , և դեռատի  
աղջկան կարմրիլը , միտքը գալով՝

— Աղէ՛ , ըսաւ մտքէն , անոնք իրար կը  
սիրեն , և որովհետեւ ինձի դուռը բանալ  
չուղեր , պատճառը սա է որ . . . բայց ,  
ո՛ դիտէ կարելի է հիմա անոր հետ է :  
ԱՇ , պէտք է որ դիտնամ ասիկա :

Մարի - Ժան ականջը կղպանքին մօմեցը-  
նելով ներսէն հառաջանք , շարժում և խօս-  
քեր լսեց . Ասոր վրայ ապահով ըլլալու հա-  
մար , որոշեց երթալ Սիւզօնի դուռը դար-  
նելու , եթէ դեռահաս աղջիկը չպատաս-

խանէ , յայնժամ պարոնի սենեկին մէջ ըլ-  
լալը իմանալով , բոլոր տունը պիտի ար-  
թընցնէր , և առաջին անգամ Նիդօլա Թու-  
րէն , որպէս զի պատժէ օրիորդը : Ասիկայ  
նախատինք մը , պիղծ և վատժար բան մ'է ,  
և միանգամայն կ'արգիլէ երիտասարդը , իր  
դուռը Մարի - Ժանի բանալու :

Այս վերջինը նեղ անցքէ մ'անցնելով ,  
Սիւզօնի դուռը դարկաւ , պատասխան չ'ե-  
կաւ , երկրորդ անգամ եւ աւելի ուժով  
դարկաւ :

— Ո՞վ է ան , հարցուց անոյշ ձայն մը :  
Մարի - Ժան Սիւզօնի ձայնը ճանչեց . յան-  
ցաւոր էր , և շուտով պիտի հեռանար ,  
երբոր սաստիկ հարուած մ'իջուցին երաս-  
տանին վրայ : Խոշոր աղջիկը աղաղակ մը  
արձակեց և փախաւ :

Նիդօլա Թուրէ օրիորդ Սիւզօնը կ'սիրէր ,  
զոր իրեն կնութեան պիտի տային , որով-  
հետեւ շատ աշխատասէր էր և հարուստ  
քեռոյ մը ժառանգորդն էր : Քաղաքացի  
պարօնը անգաղար իր նշանածը կ'դիտէր ,  
և օրիորդ Սիւզօն անոր երեսը նայելով կը  
շիկնէր . Նիդօլա կասկածելով այսպէս իր  
տարիածուին վրայ բնաւ չ'էր կրնար քնա-

նալ : Սանդուխին վրայէն ոտքի ձայն մը  
լսելով, վար իջած և օրիորդ Սիւզօնի դը-  
րանը քով պահութած էր, և տեսնելով  
թէ մէկը օրիորդին դուռը կ'զարնէ, նիդօլա  
իր բոլոր ուժովը Մարի-Ժանի ետևը զար-  
կած էր, իր հակառակորդին զարնել կար-  
ծելով : Քանզի բարկութիւնը և նախանձը  
բնաւ չեն ճանչեր խորել զոք յայտնապէս  
և մեկին :

Մարի - Ժան դերբուկ սանդուխէն վեր  
ելնելով կ'փախչէր, բայց նիդօլա նորա ե-  
տեւէն զաղեց և զայն բռնելով,

— Այ, ասիկա պարոնը չէ, դոչեց նա  
զարմացմամբ :

— Ի՞նչպէս, դու ես, Նիդօլա ըստ աղ-  
ջիկը ոտք ելնելով :

— Ասիկա Մարի - Ժանն է եղեր : Ահ,  
եթէ դիտնայի այնչափ սաստիկ չ'էի զար-  
ներ, ես զքեզ դող մը կարծեցի, բայց  
ի՞նչ կ'ընէիր ուրեմն Սիւզօնի դրան առջեւ :

— Փոքրիկ տիրուհիս զիս կանչեց կար-  
ծելով, վար իջած էի, և դու, Նիդօլա :

— Ես, ոտքի ձայն մ'առնելով դուրս ե-  
լած էի, բայց քանի որ բան մը չկայ եղեր  
կ'երթամ պառկելու :

Երկուքն ալ իրենց սենեակը մտան . և  
խաբուած ըլլալնէն գոհ ըլլալով պառկե-  
ցան : Նիգօլա համոզուեցաւ թէ Սիւզօն իր  
սենեակն է . Մարի - Ժանն ալ հաւանեցաւ  
որ պարոնը իր սենեկին մէջ մինակ է :

Խեղճ նախանձուոներ , դուք կ'գայիք  
պատահարը երեւան հանելու որուն հա-  
մար կ'երկմտէիք , որ թերեւ առանց ձեզի  
տեղի չ'պիտի ունենար :

Սիւզօն , ինչպէս որ գիտէք , իր դրանը  
երկրորդ հարուածէն արթննալով՝ ո՞վ է ան  
հարցուց . պատասխան չ'տուին , աղաղակ  
մ'արձկեցին , նորատի օրիորդը Մարի - Ժա-  
նի ձայնը ճանչեց և խռովեալ ելաւ ան-  
կողնէն :

Միւս կողմէն , կիւսթավ երբոր արթըն-  
ցաւ , նեղութիւն կ'քաշէր նորէն քնանալու ,  
խորհեցաւ թէ շատ տմարդութիւն մ'ըրած  
էր ասանկ խեղճ աղջիկը արձակելով , գոնէ  
պէտք էր թեթեւ սփոփում մը տալ անոր :  
Արդարեւ Մարի - Ժան Սիւզօնի չափ գե-  
ղեցիկ չ'էր , բայց այն ալ իր արժէքը ունէր :

Մեր քաջը դուռը բացաւ և նեղ անց-  
քին մէջ քանի մը քայլ առնլով , Սիւզօնի  
հետ դէմ յանդիման գտնուեցաւ , զոր

Մարի - Ժանը կարծելով իր սենեակը քա-  
շեց , Սիւզօն դալու յանձն առաւ :

— Ասուուած իմ , ըսաւ երիտասարդը  
զարմանքով մը , ասիկա Մարի - Ժանը չէ :

— Ոչ պարոն , ես եմ :

— Սիւզօնն է : Օ՞ն ուրեմն գրուած է թէ  
ես միշտ անմոռութիւններ պիտի ընեմ . սա-  
կայն այս անդամ յանցանքը իմն չէ . եր-  
կինքը վկայ է թէ ես չուզեցի հրապուրել  
զայն . բայց ինչ կըսեմ . քանի որ բաղդը  
իմ գիրկս կ'ձգէ այս աղջիկը , շնորհակալ  
ըլլամ իմ երջանիկ ճակատագրէս :

Կիւսթավ , Մարի - Ժանի համար յոգ-  
նած , իսկ Սիւզօնի համար իր բոլոր ոյժը  
ստացած էր :

Ամենաքաղցր հաճոյքներն անդամ խիստ  
շուտ վախճան մ'ունին :

— Ի՞նչպէս եղաւ , հարցուց վերջապէս  
կիւսթավ , սիրելիս , որ գիշեր ատեն նեղ  
անցքին մէջ գտնուեցար :

— Պարո՞ն , մէկը եկաւ դուռս զարկաւ  
և ես արթննալով՝ դուրս ելայ . կ'վախնայի  
թէ չըլլա՞յ որ դուք հիւանդ ըլլաք :

— Խեղճ փոքրիկ , ըսել է որ զիս կ'մը-  
տածէիր : Ե՞հ , ուրեմն , բարկացա՞ր հիմա :

— Թէպէտև գոհ եմ, բայց միանդամայն բարկացայ թէ բնաւ չ'էք մնածեր զիս, ու ըովհետեւ Մարի - Ժանը կարծեր էք :

— Ընդհակառակը, շատ կ'խորհէի և կը սիրէի զքեղ, Սիւզօն, բայց չ'էի համարձակեր քեղի սէրս յայտնելու, ես կ'մեծարէի քո անմեղութիւնը, և նաև տակաւին հիմա, որ ամենաքաղցը երջանկութիւն մը կ'հատուցանես ինձ, կ'մերժեմ այն երջանկութիւնը եթէ քեղ վշտերու պատճառ պիտի լինի :

— Բաւ է արդ, կ'աղաչեմ:

— Բայց Նիգօլա Թուրէն չե՞ս սիրեր :

— Ո՛չ, արդէն չ'էի սիրեր . իսկ այժմ բնաւ չ'պիտի սիրեմ:

— Սակայն պիտի կարդուիս անօր հետ:

— Կարդուիլ, ո՛հ, պարոն, ո՛չ. այլ ես մէկու մը հետ չ'պիտի կարդուիմ. որովհեծետեւ ես մէկը խարել չ'եմ ուզեր, և ըստուգիւ չ'պիտի կրնամ սիրել իմ էրիկս քանի որ հիմա ձեզ միայն կ'սիրեմ:

— Իմս փոքրիկ Սիւզօն, ես ալ քեղ կը սիրեմ ի բոլոր սրտէ, բայց չ'եմ կրնար հետըդ կարդուիլ:

— Ո՛հ, այդ մասը աղէկ գիտեմ, պարոն :

— Եւ ծնողքդ ի՞նչ պիտի ըսեն, եթէ  
դու մերժես անոր հետ ամուսնանալ :

— Ասոր վրայ բան մը չեմ գիտեր :

— Օ՞ն, ուրեմն, կըսէ կիւսթավ մըտ-  
քէն, ես այսօր պատճառը չպիտի իմացը-  
նեմ անոր . Երբ որ ես կ'մեկնիմ, նա զիս կը  
մոռնայ և այս ապուշ նիդօլային հետ կ'ա-  
մուսնանայ :

Այսպէս խորհելով մեր երիտասարդք-  
բաղկացը մէջ կ'առնու գեռատի աղջիկը :

Գիշերը կը վերջանար ուստի պէտք էր  
զատուիլ :

— Պարո՞ն, ըստ Սիւզօն երկչուսու-  
թեամբ մը, կընա՞մ վերստին դալ դձեղ  
տեսնելու :

— Ա՛հ, ապահով եղէք թէ այս բանը  
իմ բոլոր բաղձանքս կը ընու :

Նորատի օրիորդք հեռացաւ, գոհ ըլլա-  
լով այն երջանկութենէն զոր կ'զգար և զոր  
տակաւին վայելել և ճաշակել կը յուսար :

Իսկ կիւսթավ, ցերեկը քնանալ որոշե-  
լով, նորէն կը պառկի, որովհետեւ հայր  
կիւթային տանը մէջ գիշերները թանկադին  
էին :

կէսօրուան մօտ՝ վար իջած ատեն , կիւս-  
թավ Մարի - Ժանի հանդիպելով .

— Սիրուհիդ իմ , ըսաւ անոր խիստ ձայ-  
նով մը , ձեղ կը պատուիրեմ այսուհետեւ  
գիշեր ատեն գալով իմ դրանս առջեւ դը-  
ղըրդիւն չ'ընել . թէ և անցեալ գիշեր որ-  
խալանք մը տեղի ունեցաւ , բայց յայսմհետէ  
կ'պարտիմ զգաստ լինիլ : Եթէ դուք նորէն  
այս գիշեր ի դործ գնէք ձեր անմոռութիւն-  
ները , անմիջապէս կ'ստիպուիմ այս տունը  
ձգելու :

Խեղճ Մարի - Ժան , ամօթահար՝ քանի  
մը բաղայք մրմնչեց , և հեռացաւ . շատ  
բարկանալով քաղաքացի երիտասարդաց  
դէմ , որոնց վրայ մարդ չգիտեր ինչպէս  
վստահելու է :

Սիւզօն անհամբեր կ'սպասէր երիտասարդ  
պարօնի արթննալուն , որն որ գիշեր ատեն  
իրեն այնչափ գեղեցիկ բաներ սորվեցու-  
ցած էր . և տակաւին հետեւեալ գիշերն  
ալ պիտի սորվեցնէր : Տասնութեց տարեկան  
սիրտ մը խիստ շուտ կը յարի :

Նիգօլա Թուփիէ իր կասկածներուն ի դե-  
րեւ ելլելը տեսնելով , այլ եւս չըրտեսեց  
իր նշանածը : Նաեւ ծնողքը վստահ ըլ-

լալով, չեին հսկեր իւրեանց աղջիկը : Մա-  
նաւանդ թէ անոնք բաւական զբաղմունք  
ունէին Պէնօախին հետ, որն որ միշտ ծա-  
ռերուն վրայ ելնելով՝ ոստերը կ'կոտրէր,  
կարագ շինել ուղելով՝ կաթը կը թափէր,  
վառեակները կ'փախցնէր և բագերը աղաւ-  
նիներու հետ կ'ներփակէր :

Այս կերպով տասնուհինդ օր անցաւ :  
Թէև մեր երիտասարդը ութ օր պիտի կե-  
նար կրմնօնվիլի մէջ, բայց օրիորդ Սիւղօնի  
գեղջկական և պարզ վայելչութիւնը մնու-  
ցնել տուին անոր, իր նախորդ սիրուհին :  
Այսու ամենայնիւ տասնվեցերորդ օրը, կիւս-  
թավ՝ որ տակաւին ի զուր կ'բռնադատէր  
փաքրիկ աղջիկը, նիգօլայի հետ կարգը-  
ուելուն համար, իմացաւ թէ այն տունը  
մնալով, անկարելի էր այս, ըստ որում  
գիւղացիի զգեստներ գնեց, Սիւղօնը գո-  
րովանօք դրկեց և բաւ գիւղացւոց թէ  
դէալ ի Փարիզ կ'մեկնի :

Սիւղօն թէև չէր յուսար այս չուն, սա-  
կայն բաւական ատենէ ի վեր յոյժ կ'զար-  
հուրէր . քանդի չպիտի կրնար ապրիլ տ-  
ռանց կիւսթավի . դեռատի աղջիկը աղա-  
ղակ մը ձգեց և մօրք ոտքը ինկաւ :

Կիւսթավ դողաց , դեղնեցաւ և չ'էր դի-  
տեր թէ տակաւին հոն մնալ պէտք է :

Պարզամիտ ծնո՛ղք , որք իրենց աղջկան  
դալուկը , պարզ տկարութիւն մը համարե-  
լով , կ'աճապարէին սթափել գնա . միւս կող-  
մէն կիւսթավ , Սիւզօնի նայուածքին հան-  
դիպելէ վախնալով , առանց գլուխը դարձը-  
նել համարձակելու , դիւղէն հեռացաւ :



## ԳԼՈՒԽ Ը

ՀԱՆՁԵՐԵԳ ԿԻՆ ՄՔ ԿԸ ՀԱԿՏԱՑՆԵԼ ԶՄՈՐԴ

ՍՊԱՆՉԵԼԵՑ ԻՌԻ

Մզոն մը երթալէ զկնի , կիւսթավ խիտ  
թփուտի մը մէջ մնաւ : Հոն գորշադոյն կը-  
տաւէ լայն տափատ մը և կապոյտ բաճկո-  
նակ մը հագաւ . մեծ փեղոյրով մը գլուխը  
ծածկեց և դէպ ի Պէնօա դալով , պատ-  
ուիրեց անոր Փարիզ երթալ զինքը իր Օլի-  
վիէ բարեկամին տունը սպասելու :

— Բայց ձիե՞րը ինչ ընեմ , պարո՞ն , ը-

սաւ Պէնօա , աղէկ գիտէք որ անոնք քեռ-  
ոյդ են :

— Ապուշ , այն որ քեռւոյն է , քեռ-  
որդւոյն ալ կը լլայ :

— Զիե՞րն ալ Պ. Օլիվիէի տունը տանիմ :

— Ա՛հ , դժուարութիւն մը կայ : Օլիվիէ  
ախոռ չ'ունի :

— Գետնայարկը փոքր ոենեակ մը չ'ունի :

— Աղէ , Օլիվիէին ըսէ , ձիերը թռղ ծա-  
խէ , վասն զի Փարիզի մէջ ստակի պէտք  
սիտի ունենամ :

— Ի՞նչպէս , պարոն , ուրեմն հետի մը-  
նամք : Զիուն վրայ ալ աղէկ կենալ սկսած  
էի . պարոն , եթէ անկէ մէկը միայն ծախ-  
ուի , միւսը երկուքնիս համար կ'ծառայէ .  
Ես ձեր ետեւը գաւակին վրայ կ'հեծնամ :

— Ինչ կ'ըսես թանձրամիտ , օ՞ն , բսածս  
կատարէ . Օլիվիէին տունը գնայ , և մին-  
չեւ իմ վերադարձիս անոր քովը կեցիր :  
Ա՛հ , Պէնօա եթէ Փարիզ մտած ժամանակդ-  
դժբախտաբար իմ քեռւոյս հանդպիս , ա-  
նոր կ'ըսես որ , այ , թշուառական , ի՞նչ  
ըսելու է . . . զայն ի դութ ածելու հա-  
մար «Հիւանդ է » ըսէ :

— Շատ աղէկ , պարո՞ն :

— Բայց ուր ըլլալս գիտնալ պիտի ուզէ :  
— Մեռած է, կըսեմ:

— Աչ չըլլար . քեռիս, իր սաստիկ եւ  
դաժան բնաւորութեանը հետ մէկտեղ,  
շատ կ'սիրէ զիս, և այս լուրը անոր մեծ  
վիշտ կ'պատճառէ : Կ'ըսես թէ, բարեկամ-  
ներէն մէկուն տունը գնաց, բայց անունը  
ինծի չըսաւ :

— Այո՛, պարոն, այնպիսի բարեկամ մը  
որուն անունը դուք ալ չ'էք դիտեք :

— Պէսօ՛ա, աղէկ գիտեմ որ, սխալ բան  
մը պիտի ընես :

— Ընդհակառակը պարոն, պիտի տես-  
նէք թէ ինչպէս պիտի խարեմ գնդապետը :

— Օլիվիէի տունէն բնաւ դուրս չ'պիտի  
ելնես, վասն զի կրնայ ըլլալ որ քեզի կը  
պատահին, և ուր ըլլալս կհարցնեն :

Պէսօա հեռացաւ և դէպ ի Փարիզ ար-  
շաւեց : Կիւսթավ՝ Պ. Պէրլիին տունը տա-  
նող ճամբան ձեռք առնլով.

— Արդեօք, ըստու մոքէն, անճանաչելի  
ըլլալու համար բաւական ծալտա՞ծ եմ.  
Ժիւլի լրտեսներ գրա՞ծ է, իրեն ուղղուած  
նամակները ստանալու համար . կրնա՞մ արդ-  
եօք վստահիլ այն խոհարար կնոջ, որ շա-

պիկով փախած երիտասարդի մը վրայ գութ  
ունեցած էր . բայց ան ալ , այսպիսի աղեկ  
տունէ մը չվռնտուելու համար , չուզեր  
անձը վտանգի ենթարկել : Սակայն այսու<sup>1</sup>  
ամենայնիւ , կյուսամթէ տիկին Պէրլի հը-  
նարքներ գտած է , էրկանը առջեւ զինքը  
արդարացնելու համար . թէպէտ և ասիկա  
դժուարագոյն կ'երեւայ , բայց և այնպէս  
անկարելի չէ . քանզի կանայք , մասնաւոր  
յատկութիւններ ունին , ակներեւ բան մը  
երկբայական ցուցնելու . և երբեմն էրիկ-  
ներն ալ , բնաւ չտեսնելու +--ջունիւնը ունին :

Ահա այսպէս երկայն ատեն մտածելէ  
յետոյ , մեր երիտասարդը վերստին ճակա-  
տագրին յանձնեց ինքինքը , որ ստէպի-  
րեն համար նպաստաւոր էր : Վերջապէս  
դիւզի առնը տեսաւ , զոր քաղցր վայր-  
կեանի մը մէջ շտապաւ թողած էր : Կանգ-  
առաւ յայնժամ տւելի աղատ շունչ առնե-  
լու համար : Վանդտկի մը մէջէն պարտէզը  
տեսաւ : Տան բոլոր պատուհանները գոց  
էին , պարտէզը ամայի էր : Կիւսթավ իր  
քայլերը կրկնապատկեց . գաւթին մեծ դը-  
րանը առջեւ մարդ մը տեսաւ : Փեղոյրը

աչքերուն վրայ առնելով , ներս մտաւ եւ  
տնապահին մօտեցաւ :

— Ո՞վ կուզէք , ըստ այս վերջինը բիրտ  
ձայնով մը :

— Պարոն Պէրլին :

— Փարիզ գնաց ան :

— Քեռաղջիկը :

— Քեռաղջիկն ալ :

— Կնիկը :

— Բարէ , Էրիկը երթալէն վերջը կնիկը  
հարցնել պէտք է : Եթէ անոնց ըսելու բան  
մունիք , Փարիզ , Սանթիէ փողոցը կընաք  
երթալ :

Տնապահը ուսը դարձուց . այս մարդը  
շատախօս չէր , այլ ծանր և վայրենամիտ  
էր : Կիւսթավ դրան ճամբան բռնելու վր-  
րայ էր երբ որ կին մը գետնայարկի որա-  
հէն գուրս ելաւ և իրեն եկաւ . ի՞նչ յա-  
ջողութիւն , ասիկա խոհարարուհին էր որ  
քովը մօտենալով , կամացուկ մըսաւ .

— Ես զձեզ ճանչցայ , պարոն , քանի մը  
բան ունիմ ձեզ հաղորդելու , ուստի դուքս  
ելէք , ճամբուն միւս կողմէն մեծ տանձե-  
նիին ետեւը դացէք :

Կիւսթավ այս նշանակուած ծառին ե-  
տեւը երթալով .

— Այս սպասուհին , ըստ մտքէն , որ  
դուն ուրէք կ'տեսնար զիս ստորին օրահի  
մը յատակէն՝ ճանչցաւ . բայց սա անպիտան  
տնապահը որ օրը քսան անգամ՝ իր առ-  
ջեւէն անցնիլս կ'տեսնար բնաւ չերկմտե-  
ցաւ . Ահ , կանայք ամէն պարագայի մէջ  
քաջ և ճարտար նայուածք մ'ունին , մէկ  
վայրկենի մէջ կ'տեսնան այն բաները զորս  
գուշակելու համար օրեր պէտք է մեզ :

Սպասուհին անմիջապէս եկաւ :

— Պարոն , շատ ժամանակէ ի վեր ձեզ  
կ'սպասէի . միմիայն ձեղի համար էր որ հոս  
մնացի , և Փարիզ չերթալու համար հի-  
ւանդ երեւցայ . տիկինը ինձի միայն կրնար  
աւանդել ձեղի տրուելիք նամակ մը . . .

— Նամակ մը , ուրեմն շուտ ըրէ տուր :

— Տիկինը կ'յուսար թէ , դուք շուտով  
կ'վերադառնաք զինքը տեսնելու . ես ալ  
սպասելէ կ'ձանձրանայի : Առէք , ահաւա-  
սիկ նամակը :

— Իմ նամակս ալ անոր կ'տանիք :

— Այո՞ , պարո՞ն , հիմա :

— Առ , Մարկերիթ , սա երկու լուն տու-  
ժելու համար այն ձանձրոյթը , զոր զգա-  
ցեր ես ինձի սպասելով :

— Ո՛չ , պարոն , ես ստակի պէտք չու-  
նիմ , տիկինը շատ բարիք ըրած է ինձի :  
— Մարկերիթ , կ'ուզեմ որ ասոնք առնես :  
— Պարոն , միայն ձեզի հնազանդելու  
համար կ'առնեմ :  
— Մնաս բարեաւ , Մարկերիթ , նամակս  
մի մոռնար :  
— Հանդարտ եղէք , պարոն , այս իրի-  
կուն տիկինը զայն պիտի ընդունի :  
Բարի ազջիկը հեռացաւ :  
— Առանց նորա , ըսաւ երիտասարդը ,  
Ժիւլիէն լուր չպիտի առնէի . ասիկա խո-  
հարարուհի մ'է , որ ապերախտ չ'է : Ու-  
րեմն կ'գտնուի երբեմն զգայուն սիրտ մը  
որ կ'սիրէ ծառայել իր տիրուհւոյն , աղատ-  
քեղը յօշատելով , և հաւ մը տապակելով  
միանդամայն : Կարդամք նամակը :

« Միրելի բարեկամի իմ .

։ Պէտք չ'ունիմ զրել ձեզի , ինչ որ կ'ըզ-  
դամ ձենէ հեռու : Կ'սիրեմ հաւատալ թէ  
ձեր սիրտը կ'մասնակցի իմ ցաւերուս եւ  
իբրեւ իմ սիրա կ'զգայ հեռաւորութեան  
բոլոր անձկութիւնքը : Այժմ կը պարտիմ

յայտնել, զոր ինչ ձեր բացակայութենէ ի  
վեր անցած է :

« Պ. Պէրլի, ձեր պատուհանէ ցատքելէն  
քիչ մը յետոյ, սենեակէս դուրս ելնելով,  
պարտէզը իջաւ, բայց անմիջապէս նորէն  
վեր ելաւ : Ես զրեթէ զգացմանս կիրար-  
կութիւնը բոլորովին կորուսած էի . սակայն  
այսու ամենայնիւ տակաւին Պ. Պէրլին պատ-  
րելու կ'ջանալի : Այս ջանքը ինծի համար  
չէր . ասով էրկանս սրտէն տառապիչ կար-  
ծիք մը հեռացնել կ'ուզէի : Զի ես նախա-  
մեծար կը համարիմ իմ հանդստութիւնս  
կորսնցնել . և երբէք չեմ կրնար մխիթար-  
ուիլ զՊ. Պէրլին վրդոված տեսնելով :

« Ուստի նոյն միջոցին շատ բարկացած  
ըլլալ կեղծեցի, երբ Պ. Պէրլի ինքզինքը կա-  
տաղութեան կ'տար . սաստիկ յանդիմանեցի  
զայն, իմ վրէժս չուծելուն համար, այն-  
պիսի երիտասարդէ մը որ քնոյս ժամանակ,  
սենեակս մտած, եւ իմ դիմադրութեանս  
հակառակ կ'նուաճէր զիս, եթէ նա յան-  
կարծ ներս մտած եւ զիս աղատած չըլ-  
լար, այս յանդուգն երիտասարդին ձեռ-  
նարձակութենէ :

« Ասոր վրայ խեղճ Պ. Պէրլի այլ եւս չ'էր

գիտեր ինչ ըսելիքը եւ որու հաւատալը ,  
մերթ ինծի կ'նայէր , և մերթ սենեկին մէջ  
կ'շրջադայէր : Իր վարանումը տեսնելով ,  
դառնապէս կ'լայի , և իմ արցունքներս բը-  
նաւ կեղծիք չ'էին : Յայնժամ Պ. Պէրլի , որ  
երբէք իմ լալս տեսած չ'էր , չ'երկմտեցաւ  
իմ անմեղութեանս , և ծունկերս իյնալով ,  
ներում ինզրեց ինձմէ : Կ'տառապէր գըն-  
դապետին այնպիսի բաներ ըսելուն վրայ ,  
որոնք եղած չ'էին :

« Պ. Պէրլի ձենէ վրէժ առնելու երդում  
ըրաւ . բայց ես չ'եմ վախնար այս սպառ-  
նալիքէն : Զի ես գիտեմ որ նա երէոց հետ  
միայն կրնայ կոիւ ընել : Ահա այսպէս խա-  
ղաղութիւնը վերահաստատած է . բայց այլ  
եւս չ'պիտի տեսնամ զձեզ : Ահ , կիւսթավ ,  
այս պատուհասը այնչափ անագորոյն է որ  
կրնայ իմ յանցանքս քաւել : Ուստի պէտք  
է որ արտասուքով վերջանայ իմ կեանքս :  
Ահ , եթէ ծնողք գիտնային թէ որչափ ան-  
տանելի է կենակցիլ այնպիսի մէկու մը  
հետ , զոր մարդ չ'կրնար սիրել , յայնժամ  
պիտի հարցաքննէին իրենց աղջկան կամքը  
զայն ամուսնացնելէն յառաջ : Իմ ծնողքս  
զիս զոհած են այնպիսի մարդու մը , որ

իմ ճաշակիս , խելքիս , բնաւորութեանս  
բոլորովին հակառակ է : Բայց և այնպէս  
ուրիշ մէկը սիրելով յանցաւոր եմ ես : ԱՇ,  
բարեկամ , կանայք որչափ արգահատող են :

« Մնայք բարեաւ , սիրելիս , երջանիկ  
եղէք , բայց երբեմն Ժիւլիին վրայ մտա-  
ծեցէք : »

— ՈՇ , սիրելի Ժիւլիս , հարկաւ քեզի  
վրայ կ'մտածեմ . և վերստին պիտի տես-  
նամ դքեզ :

Կիւսթավ համբուրեց նամակը , չկարե-  
նալով խնդալը բոնել , Պ . Պէրլիի դիւրա-  
հաւանութեանը վրայ , որ իր կնիկը երի-  
տասարդի մը հետ տեսնելով իսկ , տակա-  
ւին զայն անմեղ կ'կարծէ :

Այսպիսեաց համար է որ սուրբ Գիրքը  
կ'վկայէ .

« Աչք ունին և ոչ տեսանեն : »



## ԳԼՈՒԽ թ.

### ՀԱՐՍԱՆԻՔ ՄԸ

— Փարիզ վերադառնամք , կ'ըսէ կիւս-  
թավ , և ուղղակի Օլիվիէին տունը երթամք ,  
հոն խորագոյն կը մտածեմ Ժիւլին նորէն  
տեսնելու միջոցը , եւ հարկաւ այս նպա-  
տակիս կ'հասնիմ . որովհետեւ կ'ըսուի թէ  
« Յարատեւութեամբ մարդ ամէն բանին  
վախճանը կ'հասնի : » Բայց այս խօսքն ալ  
կիսով իմն ստոյգ է . զի ես հաղար ան-  
դամ խելօք և պարկեշտ ըլլալ փորձեցի և  
չկրցայ : Ինչո՞ւ մարդիկ իրենց կեանքը կը  
մաշեն , առանց հասնելու այն նպատակին  
զոր ձեռք բերելու կ'ջանան . մատենադիր-  
ները հարստանալ կ'յուսան . օդապարիկի  
հնարիչները , հաւերուն պէս թռուցանել  
կ'ուզեն զմարդիկ . ճամբորդները աշխար-  
հիս եզերքը կ'փնտռեն . մեքենագէտները ,  
կառքերը առանց ձիու թաւալեցնել կ'ջա-  
նան . ընադէտները ելեքտրականութեամք  
բուժել կ'ուզեն ջղային հիւանդութիւնները .  
բարեմիտ մարդիկ , անապակ բարեկամու-

թիւն , հաւատարիմ սէր կ'փնտռեն . դեռ  
այսպէս շատեր զորս մի առ մի չեմ կրնար  
թռւել : Ի վերջոյ բոլոր այս մարդկանց ջանքը  
ի դերեւ կ'ելնէ :

Այս խորհրդածութիւններն ընելով , կիւս-  
թալ դէալ ի Փարիզ կ'ճամբորդէր . բայց  
դեռ հինգ մղոն ճամբայ պիտի երթար ,  
խոնջութիւն զգաց : Այսու ամենայնիւ նոյն  
իրիկունը Փարիզ հասնիլ ուղելով , երկու  
կողմը կ'նայէր թէ պարապ տեղ ունեցող  
կառք մը կ'անցնի : Այս անգամ բաղդը չը-  
յաջողեց . զի Լուվրի , Սէնլիի , Մօրֆօն-  
թէնի բոլոր կառքերը լեցուն էին :

Երբոր կիւսթալ քայլերը կրկնապատկե-  
լու ջանալով , իրեն քաջալերութիւն կ'տար ,  
ետեւէն աղմաւկ մը լսեց , երեսը դարձը-  
նելով , փոքր կառք մը տեսաւ . որուն մէջ  
նստող խոշոր և միամիտ մարդուն զուարթ  
կերպարանքը ուրախութիւն կ'ազդէր :

— Աղէ , ըսաւ մեր քաջը , պէտք է բաղ-  
դը փորձել : Այս մարդը թերեւս չ'պիտի  
զւանայ ինձմէ իր քովէն տեղ մը տալու :  
Օ՞ն , կառքը յարձակիմք : Այսպէս ըսելով  
կիւսթալ փոքր կառքին վազեց :

— Հէ , բարեկամ , հաւատա՛ ինձ , թէ

կարի յոյժ յոդնած եմ. Մօրֆօնթէնի կառ-  
քին չհասայ. և հիմա որ Փարփղ պիտի եր-  
թամ, եթէ անհանգիստ չէք ըլլար, փոքր  
տեղ մը չնորհելով; շատ երախտապարտ  
կ'ընէք զիս:

— Ո՞հ, դիւրին բան է, ելէք, ձեզի հա-  
մար տեղ մը կայ. իմ կառքս մեծ է կըր-  
նամք հանգիստ ըլլալ:

— Մեծապէս չնորհակալ եմ, պարոն:  
կիւսթավ միամիտ մարդուն քով նստե-  
լով, խօսակցութիւնը կ'սկսի:

— Երմնօնպիլի մէջ մէկը կ'ճանչնամ, լիւ-  
քա կոչուած մշակ մը:

— Ճիշդ անոր տունն էի:

— Շատ լաւ, ուրեմն անոնց վրայ կրնաք  
ինծի լուրեր տալ Մայր Լիւքա միշտ կ'պուայ:

— Հիմա ալ աւելի:

— Փոքրիկ Սիւղօնը կըթուիլ սկսե՞ր է:  
Կ'յուսացուէր թէ սիրուն պիտի ըլլայ. բայց  
ստուգիւ, երկու տարի կայ որ Երմնօնպիլ  
գացած չեմ. և երկու տարուան մէջ ալ  
դեռատի աղջիկ մը վայելչապէս կ'աճի:

— Սիւղօն շատ գեղեցկապէս մեծցած  
է. շատ կըթեալ, կայտառ, ախորժելի և  
վերջապէս զարմանագեղ է:

— Հո՛, հո՛, ի՞նչպէս եռանգով կ'խօսիք :  
Միթէ դո՞ւք էք նիդօլա Թուփէ, որուն  
հետ պիտի ամուսնացնէր Լիւքա իր աղջիկը :  
— Ճիշդ, պարոն, ես եմ նիդօլա, ո-  
րիորդ Սիւզօնի նշանածը :

— Պ. Թուփէ, շատ գոհ եմ ձեզի հան-  
դիպելուս համար : Հարկաւ Լիւքային տու-  
նը լսած ըլլալու էք իմ անունս . ես անոր  
հօրեղբօրորդին եմ, Բիէր Լէտրիւ :

— Ի՞նչպէս, դո՞ւք էք Պ. Լէտրիւ, ԱՇ,  
շատ անգամ խօսած եմք ձեր վրայ :

— Փարուխմք ուրեմն, պարոն Թուփէ :

— Մեծաւ հաճութեամք, Պ. Լէտրիւ :  
Կիւսթավ ջանաց իր խնդալու փափաքք  
զսպելու : Մեծ վնաս մը չէ, քանի մը ժամ-  
ուան համար նիդօլա Թուփէի անունը կը-  
րել . մանաւանդ թէ միամիտ մարդուն  
խարուիլը իրեն առիթ պիտի տար զուար-  
ճանալու :

— ԱՇ, պարոն Թուփէ, ըսաւ Լէտրիւ,  
ստիպողական գործքերո՞ւ համար Փարիզ  
կ'երթաք :

— Միայն թէ վազը հոն գտնուելու եմ :

— Լաւ ուրեմն, ձեզի առաջարկութիւն

մը պիտի ընեմ, ես հիմա վիլէթ կ'երթամ, սանուհիներէս մէկուն հարսնիքն ընելու համար : Այս առառ հանդիսի արարողութեանը երթալ կ'պարտէի, զբաղմունքս չըներեցին, բայց սակայն կերակուրի պիտի հասնիմ: Պարոն, կ'ուղեմ որ դուք ալ հոն ըլլաք :

— Շատ բարեսիրտ էք Պ. Լէտրիւ, բայց այս հարսանեաց մէջ լիւքայի ազգականներէն մէկը կա՞յ:

— Ոչ, յինէ զատ մէկը չկայ: Բոլորն ալ արհեստաւոր մարդիկներ են, խաղախորդը, դարրինը, վարպետ գաղատոսը և վիլէթի աղբակրին դործակատարը: Ո՞հ, ասոնք մեծ և բարի անձեր են:

— Է՞հ, շատ աղէկ պարոն Լէտրիւ, կ'երթամ:

— Ահա ասանկ ըլլալու է, կ'զբօնումք, կ'ուտեմք, կ'պարեմք և միատեղ կ'տնկեմք:

— Շատ զուարթագին ընկեր մը կ'երեւաք ինծի:

— Հարկաւ, աղէկ նայեցէք ինծի, ես հտպիտ մ'եմ: Լիւքային տունը քեզի չըսի՞ն:

— Արդարեւ պատմեցին ինծի ձեր խեղկատակութեանը վրայ որոնք խիստ ծաղ-

ըելի բաներ են : Գեղեցիկ է հարսը , պարոն Լէտրիւ :

— Իմ սանուհիս , ո՞հ , շատ սիրուն է .  
թէ և քիչ մը պառաւած , մազերը կար-  
միր և գիթը քիչ մը մեծ է , սակայն խար-  
տեշադոյն և ժրագլուխ աղջիկ մ'է : Բըն-  
դեռի մը պէս վեր կ'վերցնէ մարդը , և հա-  
մազգեստ չունեցող պահակազօրքի մը պէս  
հրացանի վարժումներ գիտէ :

— Բարէ , որպիսի կին :

— Ահ , էրիկը գործ ունի այս գիշեր . . .

Այսպէս խօսակցելով Վիլէթ հասան :

— Մեղմութեամբ վարուինք , ըսաւ մեր  
երիտասարդը մտքէն , եթէ այս մարդիկ  
ինձմէ չ'ախորժին , փեղոյրս կ'առնեմ և կը  
մեկնիմ , մանաւանդ թէ հարսանեաց օր մը  
հրաւիրեալք ուրիշ բանով մը մտազբազ  
չեն ըլլար :

Գինեվաճառի մը պանդոկին առջեւ վար  
իջան :

— Հոս է տունը , ըսաւ Լէտրիւ :

Կիւսթավ և Լէտրիւ մեծ օրահը ելան .  
կոչնականները վայելչապէս կ'պարէին : Լէտ-  
րիւ ներս մտածին պէս , պարը դադրեցաւ ,  
ամէն ոք շրջապատեցին և սղմեցին զնա :

— Կնքահայրս, շատ կը վախնայինք թէ  
չըլլայ որ ճամբան վտանգի մը ենթարկած  
լինիք, ըստ մեծ և խոշոր կին մը, որուն  
հարս ըլլալը ճանչեց կիւսթավ. ըստ նկա-  
րագրութեան Պ. Լէտրիւի :

— Եկուր փարուխնք Լօլօթ, ըստ Լէտ-  
րիւ բազուկները իր սանին բանալով, այսօր  
մեծ օր մ'է, իմ փոքրիկս, հիմա կ'պա-  
րես, երեկոյին պիտի պարես, դիշերն ալ  
պիտի պարես . . .

— Ա. կնքահայրս միշտ կատակներ կ'ընէ,

— Պ. Լէտրիւ, ըստ փեսան, եթէ զլա-  
նայիք ձեր ներկայութիւնը, շատ պիտի նե-  
ղանայինք :

— Ո՞հ, միթէ ես զա՞նց կ'առնեմ ձեր  
հարսանիքը Պ. Տէթայլ, հա՛, աղէկ միաքս  
եկաւ, ես մէկը ունիմ ձեղի ներկայացնելու:

Մինչեւ այս ատեն ոչ ոք ուշագրութիւն  
ըրած էր կիւսթավին, որ մէկ կողմ կեցած  
կ'քննէր բոլոր տիկինները, և հաճութեամբ  
կ'դիտէր թէ հազիւ երեք կամ չորս հատ  
աղւորներ կային. թողուց այս նկատողու-  
թիւնը, երբոր Լէտրիւ ձեռքէն բոնելով  
զինքը փեսային ներկայացուց :

— Պ. Տէթայլ, ահաւասիկ բարեկամ մը,

զոր ձեղ կ'ներկայացնեմ, այս է Պ. Նիդօլա  
Թուփիէ, Լիւքայի աղջկան նշանածը. կ'ցա-  
վիմ որ շատ չպիտի կենայ հոս :

— Ինչո՞ւ ուրեմն, կնքահայր, անշուշտ  
պարոն Թուփիէ իր ներկայութեամբը պիտի  
պատուէ զմեզ :

— Շնորհակալ եմ, պարոն :

Այս փոխադարձ մեծարանքէ յետոյ, կեղծ  
Թուփիէ իր քաղաքավարական ձեւերովը ա-  
կումբին հաճոյիցը արժանացաւ :

— Կերակուրը պատրաստ է, ըստ խո-  
հարաբապետը :

Կերակրոյ սրահը ելան, ուր յիսունի չափ  
հարսանեակներ քիչ մը նեղութեամբ բաղ-  
մեցան :

Առջի սպասին, թաներ, կողեր և եր-  
շիկներ. իսկ երկրորդին, համեմով որթի,  
խողի և ճադարի միսերը կ'դառնային : Հոս  
չէին գիտեր մրդեղէն եւ թեթեւ կերա-  
կուրներ :

— Ահաւասիկ զօրացուցիչ ճաշ մը, ըստ  
Նիդօլա մտքէն, հարկաւ նոյն ինքն հարսը  
պատուիրեր է այս կերակուրները :

Նախաճաշի միջոցին, երեք նուադածուք,  
սրահին մէկ կողմը շինուած երաժշտարանի

մը մէջ գեղեցիկ կտորներ կը զարնէին :

Դինին սկսաւ դլուխները տաքցնելու , խեղկատակները թուլցան և ուրախութեամբ յուզուելով , սկսան ապակիները կոտրել : Պ. Լէտրիւ ծիծաղաշարժ բաներ ըրաւ . այս մարդը անդադար խօսող անարդ խեղկատակ մ'էր : Սոյն պահուն կիւթավ , քովի տիկնանց հետ ծանօթութիւն ընելու համար , խոշոր թխադոյն կնկան մը դառնալով , անոր գինի մատոյց և մէջը խառնելու համար , ջուրի դաւաթը ձեռքը առաւ :

— Ո՞հ , ես երբէք ջուր չ'եմ խմեր , պարո՞ն , էրիկս մեծ աղմուկ կ'ընէ եթէ ջուր խմեմ . որովհետեւ անկողինս կ'միզեմ : Երկու օր յառաջ սխալմամբ խմած էի . հարցուցէք Պ. Ռաթէլի , խեղճ մարդ որչափ թրջած էր :

— Առ ուրիշ , ուրեմն շատ աղէկ կ'ընէք որ չէք խմեր :

Մեր երիտասարդը խարտեաշի մը կողմը դարձաւ : Տիկին Ռաթէլի խոստովանութիւնը աղէկ արդիւնք մ'ըրած չէր : Հինգ վայրկեան անոր հետ խօսակցելով , իմացաւ թէ պյորի է , ստէպ նուագատեսիլներու կյա-

ճախէ և կիրակի օրեր գեղջկուհեաց կա-  
տակերգութիւնը կ'խաղայ :

— 0՞ն , ըսաւ կեղծ նիդօլա մտքէն , այրի  
կնկան մը հետ չեմ վախնար ո՛չ ամուսնա-  
կան գժառութիւն մը ձգելու և ո՛չ ալ իբր  
հրապուրիչ ամբաստանուելու , մանաւանդ՝  
կին մ' որ ամէն կիրակի կատակերգու-  
թիւն կը խաղայ հարկաւ խոհեմ պիտի  
լինի , և նորեկի մը սիրահարութեանը չպի-  
տի նմանի : Բայց դժբաղդաբար մեր երի-  
տասարդը կ'մոռնար երբեմն նիդօլա թու-  
փէ ըլլալը :

Յանկարծ հարսը սուր աղաղակ մ'արձը.  
կեց : Խեղկատակին մէկը Լոլօթի շրջա-  
ղդեստին տակը մտնալով նորա զանկապանը  
բռնած և բոլոր ուժովը քաշած էր : Վասն  
զի օրիորդ Լոլօթ , իրեն ուղղուած փաղաք-  
շական և անոյշ խօսքերէն մոռցած էր ժա-  
պաւէնը քակելու : Պ. Գատէ ճակնդեղի մը  
ալէս կարմրեցաւ :

Կնքահայրը դիտել տուաւ փեսային թէ ,  
շրջաղդեստին տակը մութ ըլլալով , պարոն  
Դատէ բան մը տեսած չէ :

Այս լուսատու խորհրդածութիւնը հան-  
դարսեց զՊ. Տէթալէ : Աղանդերը , սուրճը

և ըմպելիքները նորէն փայլեցուց ուրա-  
խութիւնը :

Հուսկ յետոյ պարի ժամանակը եկաւ :  
Ամէն ոք յիմարական ուրախութեամբ քըր-  
քիջ արձկելով, նաև զիրար հրելով, կըս-  
մըթթելով վար իջան : Հարսանիքի օր մը  
այսպիսի բաներ ներելի են :

Սէնթ - Անթուանի արուարձանէն մի ե-  
րենագործ մանչ, բաւական ատենէ ի վեր  
կողմնակի աշօք կ'դիտէր զՊ. Նիգօլա . կիւս-  
թավ առանց ուշադրութիւն ընելու նորա  
վառվուն նայուածքներուն, խնդալը և պա-  
րը կ'շարունակէր : Երենագործը ակնարկու-  
թեամբ հրաւիրեց տիկինը խաղալու հա-  
մար, և այս վերջինն ընդունեց . բայց կիւս-  
թավ որ աղմուկէն և տաքութենէն կ'թըմ-  
ըէր, առաջարկեց խարտեշագեղ տիկնոջ  
պարտիզի մէջ շրջան մ'ընելու : Տիկինը հա-  
ւանեցաւ և Պ. Նիգօլային հետ վար իջաւ  
երենագործին ըրած խոստումը մոռնալով :

Թեւ ի թեւ առւած շրջադայեցին, եւ  
մութ պրակի մը տակը նստեցան . կիւսթավ  
համբոյր մը քաղեց . այրի կինը ժպտեցաւ .  
ուրիշ բան մ' ալ առնել ուզեց . զայ-  
րացաւ և մերժեց : Քանզի նա զգաստու-

թիւնը չէր մոռնար : Ամուսնութեան , սի-  
րոյ և հաւատարմութեան վրայ խօսեցան :  
Խեղճ կին , արդեօք մոռցած էր թէ Պ .  
Նիգօլա օրիորդ Սիւզօնի նշանաձն է : Ոչ .  
բայց իր գեղեցկութեան զօրութեամբը օ-  
րիօրդ Սիւզօնը աչքէ հանելու կնկրտէր :  
Ովէ այն կինը որ իր գեղեցկութեան կա-  
րողութեանը վրայ չվստահիր :

Յանկարծ երենագործ պատանին ասոնց  
առջեւը ելաւ . կատղած էր եւ աչքերը  
կատուի մաչքին պէս կշողզողար .

— Պ. Թուփէ , ըսաւ կոռւփները գոցե-  
լով , ազնուութիւն չէ պարելէ արգիլել տի-  
կին մը որ ուրիշի մը խօսք տուած է :

Կիւսթավ իր սոսիին խօսքերը հանդար-  
տովին մտիկ ընելով բարձրածայն քրքիջ մը  
արձկեց : Երենագործը աւելի եւս գրգռե-  
ցաւ և կիւսթավի գթին վրայ կոռւփի հար-  
ռած միջեցուց . մեր քաջը սաստկութեամբ  
ոտք ելաւ և իր հակսուակորդին օձիքէն  
բռնեց . այս պարոնները սկսան կոռւիլ և  
իրարու գլուխ պատռել :

Գինելաճառի տղաքները , վարպետը , ըս-  
պասուհիները վազելով եկան . աղմուկը մին-  
չեւ պարի որահը տարածուեցաւ . ֆեսան

որ տակաւին առաջին անգամ կ'խաղար իր  
կնկանը հետ խորհեցաւ թէ իրեն կ'վերա-  
բերի խաղաղութիւնը ներմուծելի մէջ հան-  
դիսականաց : Աւստի Լոլօթի ձեռքը թող-  
լով շտապաւ վար իջաւ : Կիւսթավ, հա-  
կառակորդը գետինը տապալած և նորա  
ստամբախին վրայ մէկ ծունկը դրած էր .  
մէկ ձեռքովը կոկորդը կ'սղմէր , միւսովը  
ականջը կ'քաշէր . խեղճ յաղթուածը օգ-  
նութիւն կ'խնդրէր : Բարերազդարար պա-  
րողները եկած էին միախուռն . կիւսթավը  
բռնեցին , երենագործը կիսամեռ վերու-  
ցին , և ջանացին հաշտեցնել զմիմեանս :

Մեր երիտասարդը որ այս կերպով բա-  
ւական զուարճացած էր , հարցուց Պ. 8է-  
թայլի թէ ուր դրած են իր փեղոյրը :

— Բայց ինչո՞ւ , պարոն Նիդօլա , երթա՞լ  
կ'ուղէք :

— Այո՛ , պարոն փեսայ , Փարիզի մէջ  
շատ գործեր ունիմ :

— Գոնէ ընթրիքին սպասեցէք :

— Ենորհակալ եմ . բնաւ ախորժակ չու-  
նիմ :

— Քանի որ այդպէս կ'ողնդէք . կ'հար-  
ցընեմ Լոլօթի փեղոյրին տեղը , Աւր է կը-

Նիկս , հարցուց փեսան բոլոր սրահները  
մտնելով :

Նրբանցքի մը մէջէն անցնելով , փոքր  
դուռ մը տեսան : Սպասուհի մ' ըսաւ թէ  
փեղոյրները և թիկնոցակները հոն են : Բայց  
դրան բանալին չ' գտան :

— Կեցէք , ըսաւ աղջիկը , տիրուհիս  
բանալի մ' ունի որ բոլոր այս դռները կը  
բանայ :

Աղախինը բանալեաց տրցակով մը վե-  
րադարձաւ . Պ. Տէթայլ դուռը բացաւ և  
ներս մտաւ , յանկարծ աղաղակ մ' արձը-  
կելով ետ ետ քաշուեցաւ : Կիւսթավ դը-  
լուխը յառաջացուց և տեսաւ Լօլօթը ան-  
կողնոյ մը վրայ պառկած և Պ. Գատէն ա-  
նոր քովը . . .

Փեսան , առջի վայրկենին , երկմնուեցաւ  
տեսած բանին վրայ . ձեռքի ճրագով ա-  
ւելի յառաջ դնաց . պարոն Գատէ անկող-  
նոյ տակ թաքչեցաւ . Կիւսթավ , չ' գիտեմ  
ինչու , շատ հետաքրքիր էր տեսնելու թէ  
լօլօթ պիտի կրնա՞յ դինքը ազատել . . .

Պարոն Տէթայլ ինքզինքը կորոյս . ճրագը  
ձեռքէն ինկաւ , և իսկոյն Լօլօթի հագուս-  
տէն կրակ առաւ : Խեղճ նու , ահոելի ա .

զաղակներ ընելով ոտք ելաւ և վազեց մեծ  
տաշտի մը մէջ մոտաւ :

Պարոն Գատէ փախած էր :

Այս անկարգութեան մէջ, կիւսթավ իր  
փեղոյրը առնելով, տունէն դուրս ելաւ :



## ԳԼՈՒԽ Ճ.

### ԳԻԵՐԱՊԱՀԸ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ ԱՂՋԻԿԸ

— Ես միշտ առանց խորհելու կ'գործեմ,  
կըսէր կիւսթավ Սէն-Մարթէնի աւանէն  
իջնալով. եթէ քիչ մը խորհէի, բնաւ այս  
հարսնիքին չէի երթար, փոքրիկ այրին  
պարտէզը չէր իջնար և ամէնուն հետ կը  
պարէր. սա անմիտ եքենագործը ինձի հետ  
չէր ծեծկուեր, քիթս և աչքերս ճմլուած  
չէին ըլլար. Փեսան չէր երթար փեղոյրս  
փնտոելու մութ սենեկին մէջ ուր Պ. Գատէ  
ժամանակ ունեցած էր երկու երեք ան-  
դամ կապելու և քակելու. իր սիրուհւոյն  
զանկապանները. և վերջապէս խեղճ Լո-

Հօթը ջուրին մէջ չէր մտնար : Սակայն , ինչու կ' մտածեմ , պէտք է Օլիվիէին տունը երթալ . բայց հոն ալ , այսպիսի աղտոտու ցխոտ հագուստով պիտի տեսնուիմ : Այսպիսի երեւնալ և նոցա հեգնութեան նշաւակ լինիլ չեմ ուզեր . պէտք է ուրեմն փողոցի մէջ պառկիլ : Անիծեալ հարսանիք :

Կիւսթավ Սէն - Մարթէնի դուռը հասած էր . հոն կեցաւ . չէր դիտեր թէ որ կողմ դառնալու է : Յանկարծ միտքը բան մը գալով , ժպտեցաւ և սկսաւ դէպ ի Շարլօ փողոցը վազել :

Կարծեմ կյիշէք օրիորդ Լիզ մը , որով փախած էր Պ. Կիւսթավ ֆօգօնիէի փողոցը : Գնդապետը իր քեռորդին ձեռքակալած և օրիորդն ալ իր մօրը տունը տարած էր . բայց որովհետեւ անդադար երիտասարդ մը չ' փակուիր , նաեւ թափիչ աղջիկ մը կ' պարտի երթալ տանելու իր յաճախորդաց ճերմկեղէնը , կիւսթավ և Լիզ վերստին զիրար տեսած էին նախ շատ յաճախ և շատ կաթոգին . յետոյ քիչ անդամ և քիչ եռանդով , հուսկ յետոյ , կիւսթավ բոլորավին մոռցած էր փոքրիկ Լիզը :

Սակայն և այնպէս կ'սիրուի նորէն տես -  
նալ գեղանի աղջիկ մ'որ մեզի ճանչցուց  
սիրոյ բոլոր քաղցրութիւնները և զոր տա-  
կաւին կ'ներշնչէ երբ հանդպինք անոր :  
Նմանապէս կը պահուի բարեկամութիւն  
գեղեցիկ պատանւոյ մը համար որ թէ և  
փոփոխամիտ սակայն միշտ սիրելի կող-  
մեր ունի :

Փռքը աղջկան առևանգումէն յետոյ , չորս  
տարիէ ի վեր շատ մը դէպքեր անցած էր :  
Մայրը մեռած էր և աղջիկը իր հաշւոյն  
կ'աշխատէր . բայց որովհետեւ կիւսթավի  
հետ եղած դէպքերը շատեր իմացած էին ,  
և Աէնթ - Անթուանի սպասաւորները կ'հա-  
մարձակէին ծաղրելու երբոր փոքրիկ թա-  
փիչը խանութին առջեւէն անցնէր . խեղճ  
աղջիկը ծաղու նշաւակ լինիլ չ'ուզելուն հա-  
մար , դնաց սենեակ մը վարձելու Շարլօ  
փողոցին մէջ : Ալ այնուհետեւ օրիորդ Լիզ  
աղատ էր , և այնչափ պարկեշտութեամբ  
կ'ապրէր , որչափ կրնայ ապրիլ օրը քսան ...  
շահելով փեղոյր հագնիլ ուզող օրիորդ մը :

Պ. Կիւսթավին յիշածը ահա այս օրիորդ  
Լիզն էր , զոր վերջին անգամ տեսնելուն ,  
ուր բնակիլը իմացած էր :

Մեր քաջը ծառուղիներէն վազելով անցաւ . Շարլօ փողոցը եկաւ . բայց թիւը մոռցած էր , ի՞նչ ընելու է . բոլոր գոները զարնելու է , բարէ , ասոր կ'զայրանան հիւանդները որոնք անհանգիստ պիտի ըլլան . կ'զայրանան այն անձինք որոնք ունենալ կ'երաղէին ինչ որ չունին երբէք . կ'զայրանայ այն բանաստեղծը որ զինքը Ակադեմիայէն ընդունուած կ'կարծէր . կ'զայրանայ այն պառաւը որ զինքը մատաղացած կ'տեսնար . կ'զայրանայ այն խաղամոլը որուն վիճակահանութեան քառաթիւ մ'ելած էր . կ'զայրանայ այն դժբախտը որ չգիտեր հետեւեալ օրը ինչպէս հաց պիտի տայ իւր զաւակաց . կ'ուրախանայ այն կինը որ քնացած էր իր սիրահարին հետ . կ'ուրախանայ այն մարդը որուն անթերի երջանկութիւնը մի վարդագոյն ապագայ կ'խոստանայ նմանայ միահամուռ առմամբ , բազում են զայրացողք քան ուրախացողք :

— Ահաւասիկ դուռ մը , զարնենք . ուժգին զարնենք :

Երկրորդ յարկէն պատուհան մը կ'բացուի . բամպակէ գտակով ծածկուած գլուխ մը կ'յառաջանայ :

— Ավ է ան . ով կուղեք :

— Կրարեհաճիք յայտնել ինձ , թափիշ  
օրիորդ Լիզին բնակարանը :

— Օրիորդէն ալ կսկսիմ ձենէ ալ . եր-  
բէք այսպիսի բան մը տեսնուած չէ . գի-  
շեր ատեն բնակարան մը հարցնելու համար  
բոլոր տունը վրդովե՛լ :

— Բայց ստիպողական դործ մ'է :

— Եթէ պահնորդն անցնի , ստիպողա-  
կանը կցուցնեմքեղի :

— Եթէ դուք ալ չլուէք , պատուհանէն  
քարեր կտեղացնեմ :

Պարոնը քաշուեցաւ եւ բարկութեամբ  
գոցեց պատուհանը : Կիւսթավ առանց վր-  
հատելու , տասնեհինգ քայլ յառաջացաւ ,  
և կանաչ դրան մ'առջեւ կենալով , դռնա-  
բախը թեթեւ իմն ձգեց . անմիջապէս վեր-  
նայարկէն պատուհան մը բացին :

— Դո՞ւ ես բարեկամ , հարցուց նորատի  
կին մը քաղցը ձայնով :

— Ա՛ռ քեղի դիպուած մ' ալ , նայինք  
ասոր վերջը ի՞նչ պիտի ըլլայ :

Եւ կիւսթավ խղդուած ձայնով մը «Ա-  
յօ » ըսաւ :

— Գիտես որ էրիկս Շախօ ա՛Յի գիշե-

ըապահն է, այսօր չ'պիտի գայ, յարմար  
ատեն եկար. սպասէ՛քիշ մը, բանալին վար  
նետեմ, զի ես շապիկով եմ, չ'եմ կրնար.  
վար իջնալ:

Նորատի կինը պատուհանէն քաշուեցաւ:  
Մեր ապշեալ երիտասարդն ալ ականջը կը<sup>1</sup>  
քերէր և շատ կ'վարանէր:

— Մանկամարդ կին մը, ըստու, գի-  
շերուան մէջ իր տունը կ'ընդունի զիս:  
Թէև գէշ չ'է ասիկա. սակայն ինծի հա-  
մար չ'է որ տիկինը կ'սպասէր. և երբ կ'ի-  
մանայ իր սիսալանքը, ամօթապարտ և ա-  
կընկոր պիտի լինի: Ասկէ ի զատ եթէ բա-  
րեկամը վրայ գայ, ինչպէս որ հաւանական  
է, այն ատեն վերստին կադ և կռիւ պիտի  
սկսի, բոլոր թաղնորդը պիտի արթնայ:  
Ոչ, պէտք է մերժել բանալին:

Ահաւասիկ շատ խոհեմ մոտածում մը,  
լիրը երիտասարդի մը համար: Բայց, խոռ-  
քը մէջերնիս, կարծեմ մեր երիտասարդին  
այս ուղիղ գատողութիւնը, մասսամբ իւիք  
սա դիտաւորութենէ յառաջ եկած էր:  
Այսինքն թէ՝ սիրուն պատանի մը, այն-  
պիտի անվայել հագուստով և ճգմուած քի-

թով չհամարձակիր առաջին անդամ՝ կնկան  
մը ներկայանալ :

Փոքր տիկինը նորէն երեւցաւ պատու-  
հանը . բանալին՝ վար նետելու վրայ էր երբ  
կիւսթավիր ձայնը որոշապէս լսելի ըրաւ :

— Ներողութիւն կ'խնդրեմ, տիկին, կար-  
ծեմ զիրար կ'խարեմք :

— Աստուած իմ, ասիկա ան չէ :

— Կ'աղաշեմ, մի՛ հեռանաք առանց զիս  
լսելու :

— Պարոն, մի՛ գուցէ ուրիշ բաներ կար-  
ծէք . . . ես եղրօրս համար կ'սպասէի,  
երկանս հետ գժտած ըլլալուն համար, այս  
վայրկեանը ընտրած էի հետը տեսնուելու :

— Տիկին, չեմ տարակուսիր անանկ ըլ-  
լալուն, մանաւանդ որ կինաք վստահիլ իմ  
պարկեշտութեանս և հաւատարմութեանս,  
քանդի կ'տեսնաք թէ՞ չընդունեցի բանա-  
լին, զոր պիտի ձգէիք ինծի :

— Ասիկա ստոյգ է :

— Ուրեմն կ'բարեհաճի՞ք ինձ ըսել, այս  
փողոցին մէջ լուացարար թխագոյն աղ-  
ջիկ մը :

— Փոքրիկ լի՞զը :

— Նոյն ինքն, տիկին, կ'ճանչնա՞ք զայն :

— Այո՛, պարոն, ես անոր յաճախորդ-ներէն մին եմ. ա՛հ . . . ո՛չ պարոն, ըսել կուզեմ որ. ես չ'եմ ճանչնար զայն, բարե-կամներէս մէկուն լուացարարն է :

« Տիկինը կ'վախնայ որ, իրեն անունը կը հասկնամ օրիորդ Լիզէն . և ըստ մեր երի-տասարդը մտքէն, յետոյ շարայարեց .

— Կրնաք ըսել ինձ, տիկին, այս լուա-ցարարին տանը թիւը :

— Թիւը աղէկ մը չեմ գիտեր, բայց տունը կրնամ ձեզի ցուցնել նայեցէք, պա-րոն, Աէնթ - Ֆուայի փողոցէն շխակ . . . ա՛հ, Աստուած իմ, գիշերապահ մը . . . իմ էրիկս է . . .

Հոս, տիկինը որ Լիզին բնակարանը ցու-ցընելու համար ծռած էր, շտապաւ իր սենեակը մտնելով պատուհանը դոցեց :

Ստուգիւ, գիշերապահի խումբ մը կը տեսնայ կիւսթավ, որք դէպի իրեն կ'գա-յին : Ասոնցմէ մէկը նորատի կնկան էրիկն էր և հեռուէն տեսած էր իր կինը, պա-տուհանէն անծանօթ մարդու մը հետ խօ-սակցիլը, խումբէն զատուեցաւ և մեր ե-րիտասարդին վրայ վաղելով պոռաց .

— Օ՞ն, տասնապետ, հասէք :

Պահնորդը մօտեցաւ, կիւսթավին օձիքէն բռնեց, մեր քաջը կոռուփի հարուած մը իջեցնելով, խեղճ մարդը գետափի մը վրայ տապալեց և սկսաւ միւս փողոցը վազելու: Տասնապետը հրամայեց իր զինուորներուն թէ փախչողը հալածեն. բայց այն մարդիկ որ հրացան, սուր և պայուսակ կը կրեն, չկըցին հասնիլ կիւսթավին, որ աւելի շուտ կ'վազէր: Ճամբուն վրայ բաց դուռ մը տեսնելով, ներս մտաւ, դուռը իր ետեւէն գոցեց, և չորս առ չորս կամակոր սանդուղէ մը վեր ելաւ. յորմէ ցերեկ ատեն առանց լաւ ուշադրութիւն ընելու չէր կրնար ելլալ: Գիշերապահէն խուսափելու համար ատեն չպիտի համարձակէր դիմագրաւելու:

Երբ դլուխը տաքցած է, մարդ այնպիսի բաններ կ'ընէ, որ պաղարիւնութեամբ եւ հանդարտ ատեն չպիտի համարձակէր դիմագրաւելու:

Կիւսթավ վերջապէս կեցաւ. վերնայարկի սենեակը հասած էր, վեր ելլելու համար ա'լ ճամբայ չկար. ուր պիտի երթար, ինքն ալ չէր գիտեր. ըստ բախտին

առջեւէն դուռ մը հռեց , դուռը բացուեցաւ . սակայն հեռացաւ անկէ , վասն զի կան այնպիսի տեղուանք զորս կ'գուշակէ մարդ առանց աղէկ տեսնելու :

Տասնապետը տեսած էր այն տունը , ուրու մէջ կիւսթավ պահուեցաւ . դուռը կը զարնէր և կ'հրամայէր բնակչաց , ոճրագործը իրեն յանձնելու . սակայն ո՛չ ոք կը պատասխանէր նորա հրամաններուն :

Կիւսթավ վեցերորդ յարկէն կ'լսէր փողոցին մէջ եղած աղմուկը , երբոր աւելի աղէկ լսելու համար՝ հինգերորդ յարկը իջաւ շատ ծանօթ ձայն մը եկաւ ականջին :

— Ահ , Աստուած իմ , ի՞նչ աղմուկ կ'ընեն այս գիշեր փողոցին մէջ , քնանալուն ճար չկայ :

— Ան է , բօաւ մեր երիտասարդը , աղատեցայ :

Քովի մէկ դուռը զարկաւ , ուսկից ձայնը կ'ելնէր :

— Ո՞վ է ան :

— Ես եմ , լի՛զ , կիւսթավն է , շուտ ըրէ բաց :

Դեռահաս լուացարարը իր անկողնէն վար

ցատկեց և վազեց դուռը բանալու : Երի-  
տասարդը տեսածին պէս ահոելի աղաղակ  
մ'արձակեց : Կիւսթավլ շտապաւ ներս մըտ-  
նալով դուռը գոցեց և Լիզի անկողնոյն վը-  
րայ նետուելով .

— Վերջապէս աղատեցայ , ըստ , հոս  
կրնամ խրոխտալ գիշերապահի խմբին , նոյն  
խակ տասնապետին և հարիւրապետին :

Լիզ իր գիշերային կանթեղը առնելով ,  
կիւսթավին երեսը մօտեցուց :

— Բայց ստուգիւ ան է :

— Հարկաւ ես եմ , ովք պիտի ըլլայ ,  
կարծեմ շատ անճանաչելի եղած եմ :

— ԱՇ , Աստուած իմ , ի՞նչ վիճակի մէջ ,  
աչքը բոլորովին սեցած , երեսը արիւնոտ ,  
հագուստը ցեխոտ : ԱՇ , ի՞նչ սարսափելի  
դէմք , պերճ երիտասարդի մը համար :

— Երբոր գիտնաս բոլոր ինծի պատա-  
հածները : Բայց կը լսե՞ս դրան բախումը :

— Ուրեմն ձեզի՞ համար կ'ընեն այս աղ-  
մուկը :

— Այո՞ , սիրուհիդ իմ . Վելէդի մէջ խը-  
ռովութիւն հանեցի , երենադործ պատան-  
ւոյ մը նախանձը դրգուեցի :

— Կռի՞ւ ըլիր , չարագո՞րծ :

— Այս՝ թէե վիրաւոր, սակայն յաղթող եմ:

— Բայց այս դուռը զարնող անձինք ի՞նչ կ'ուզեն :

— Զիս բոնել կ'ուզեն . . . ասոնք խումբ մը գիշերապահներ են, զորս յետին տաղնապը դրի . . . որովհետեւ . . . աղէկ միտքս ինկաւ, ասկէ երկու հարիւր քայլի չափ հեռու կանաչ դրան մը վրայ՝ առաջին յարկը բնակող կին մը կ'ճանչնաս :

— Այս՝ հարկաւ, տիկին Տիւպուրկըն է :

— Գեղեցիկ է այդ տիկինը :

— Շատ գեղանի, զուարժ և կայտառ :

— Ահ, եթէ դիտնայի ասոնք : Երիկը ի՞նչպէս է :

— Քառասուն տարեկան բարեսիրտ մարդմ'է, և պատուանշաններ կը կրէ :

— Կարծեմ ուրիշ բան մ'ալ կը կրէ :

— Բայց ինչու կը հարցնէք, տիկին Տիւպուրկի հետ յարաբերութիւն մ'ունիք :

— Ո՛չ երբէք, փողոցին մէջ տեսնամ չեմ ճանչնար զինքը . . . բայց մտիկ ըրէ, տակաւին կ'լսե՞ս դրան զարնուիլը :

— Ո՛չ :

- Տեսնելով թէ մէկը իրենց չպատաս-  
խաներ, ձգեցին դացին :
- Պէտք է որ քիթդ և աչքդ լուամ:
- Գոհ եմ որ մինակ դտայ զքեզ, լիզ:
- Առ ի՞նչ խօսք է. ես արդէն մինակ  
չեմ:
- Այս . բայց ասիկա չ'արգիլեր որ եր-  
բեմն գիշերուան մէջ այցելութիւններ ըն-  
դունիս :
- Ո՛հ, պարոն, ես բնաւ չեմ ընդու-  
նիր այդ այցելութիւնները :
- Ուրեմն շատ պարկեշտ ես հիմա :
- Միթէ չէի միշտ :
- Բայց աւելի համեստ ըլլալովը հան-  
դերձ, մարդ՝ կրնայ փոքր ծանօթութիւն  
մ'եւս ունենալ :
- Ո՛չ, ո՛չ, ես չեմ ուզեր երբէք փոքր  
ծանօթութիւններ . քանզի մարդիկ այդ-  
մասին շատ նենգաւոր եւ խարեբայ են :
- Իրաւոնք ունիս : Բայց զգուշութիւն  
ըրէ քիչ մը . բոլոր երեսս օղիով և ջրով  
թրջեցիր :
- Միթէ դոհ չեմ, որ զքեզ կ'իսնամեմ  
և վէրքերդ կ'պատեմ: Ա՛հ, շարագործ .

քեռիդ շատ իրաւունք ունի քեզ կշտամ-  
բելու :

— Սիրելիդ իմ Լիզ, ալ չե՞ս սիրեր զիս :  
— Կ'ուզէի չսիրել . բայց ընդհակառակը  
միշտ կ'սիրեմ: Այ . . . ի՞նչ կ'ընես, ձեռքդ  
քաշէ, պարսն, եթէ ոչ օղին երեսդ պիտի  
թափեմ:

— Ա՛ն, Լիզ, գիշերուան հագուստով  
որչա՞փ ալ գեղեցիկ կ'երեւաս :

— Պ. կիւսթավ, ալ հերիք է, պիտի  
բարկանամ:

— Այսօր շատ փայլուն աչքեր ունիս :

— Բարկութիւնն է որ կ'փայլի . է՛ն,  
ի՞նչ է ան :

— Չե՞ս տեսնար կը հանուիմ, որ պի-  
տի պառկիմ, խիստ յոդնած եմ:

— Ես ո՞ւր պիտի պառկիմ:

— Դուն ալ իմ քովս :

— Ա՛ն, գէշ չըլլար, խելօք պիտի կե-  
նաս ա: Բայց քանի որ պարոնը յոդնած է  
վախնալու բան մը չկայ . կարծեմ կ'քնա-  
նայ շուտով պառկինք :

## ԳԼՈՒԽ ԺԱ

### ՏԻԿԻՆ ՏԻՒՊՈՒՐԿ

Այնչափ ուրիշութեամբ անցած գիշերէ  
մը յետոյ , կիւսթավ արթնցաւ : Լիզ ար-  
դէն ելած էր . կաթ տաքցնելու և կիւս-  
թավին թաս մը սուրճ տալու համար կը-  
րակ կ'փշէր :

— Սիրելի բարեկամուհիդ իմ , ի՞նչ կը-  
նես հոն :

— Զեր նախաճաշին համար սուրճ կը-  
պատրաստեմ :

— Շնորհակալ եմ , սուրճը չառ կ'սիրեմ .  
բայց երբ մարդ մը վաղէ , կռուի , վանա-  
տու կնկան մը համար հալածուի , այն ա-  
տեն պէտք ունի կերակրոյ .քան թէ սուրճին  
Սա կապոյտ պարեգօտին մէջ քսակ մը կայ ,  
անիկա առ , մավաճառին և համեմավա-  
ճառին քովը դնայ , ոչխարի կողեր , որ-  
թեր , խողերշիկներ , խողապուխտներ , ձու-  
կեր , պանիր , պտուղներ և մանաւանդ գի-  
նիին լաւագոյնը առ :

— Ըսել է որ կոչունք պիտի տաս : Բայց  
ես հիմա ճերմկեղէններս պիտի հարթէի ,  
զորս այս առաւօտ կ'սպասեն յաճախորդ-  
ներս :

— Վաղը կը տանիս :

— Եւ այս փոքր նկարակերտուհին՝ որ  
իր խոյրը կ'ուզէ այս իրիկուն Գոլիղէ եր-  
թալ պարելու համար :

— Առանց փեղոյրի թող պարէ :

— Բայց սա գեղանի օրիո՞րդը՝ որ իր  
բեհեղեայ շապիկը կ'սպասէ :

— Ան ալ վաղը թող առնէ : 0՞ն , շուտ  
ըրէ , Լիդ , անօթութենէ պիտի մեռնիմ :

— Ահ , Աստուած իմ , ուզածը ընելու է:  
Լիդ դուրս ելածին պէս , կիւսթավ կը  
սկսի խորհիլ դոր ինչ կը պարտէր ընել :

— Սա կատաէ տափատը և կապոյտ թե-  
ղանիքը հագնիլ և ասով Փարիզի փողոցներ-  
ուն մէջ երեւնալ , երբեք չեմ ուզեր . բայց  
ինչպէս դժոխալու է ուրիշ հագուստ : Լիդը  
Օլիվիէին տունը կ'զրկեմ և անկէ հագուստ  
բերել կ'տամ , նորա հագուստը ինձի յար-  
մար կ'գայ . սակայն նայինք որ , ան ալա-  
ւելի հագուստ ունի : Պէսօա Փարիզ բե-  
րած ըլլալու է Լոմբոնվիլի մէջ հագած ըզ-

գեստու , եթէ ճամբան կորսնցուցած չէ :  
ինչ որ ալ ըլլայ , տակաւին ստակ ունիմ ,  
Փարփիզի մէջ աղբակիր մը հինգ վայրկենի  
մէջ մարգիզի մը պէս կրնայ հագնիլ :

Լիդ կողով մը պարէնով կ'վերադառնայ ,  
Կիւսթավ պառաւ հասառուի մը ներքնակը  
ստանձնելով , նախաճաշը կազմելու համար  
Լիզին օգնելու կը պատրաստուի : Մեծկակ  
կրակ մը կ'շինեն . կողերը , ձուկերը և եր-  
շիկները կասկարային վրայ , կաթն ալ վորքը  
ակութի մը վրայ կ'դնեն . յետոյ պանիրը ,  
պտուղները , կարկանդակները և շիշերը  
սեղանի վրայ կյարդարեն . տասը վայրկե-  
նէն ամէն բան պատրաստ ըյլալով սեղան  
կ'նստին :

Կերակրոյա տեն , Լիդ Կիւսթավին անյագ  
ախորժակին վրայ կ'խնդայ : Կ'խօսակցին ,  
զիրար կը խուեն , փոքր աղջիկը ապտակ  
մը յետոյ համբոյր մը կ'տայ :

— Ահ , սիրելիս , կ'ըսէ Կիւսթավիլ իր  
բոլոր ախորժակը յադեցնելէ յետոյ , բա-  
ւական խինթութիւն ըրինք , կատակը մէկ  
դի , հիմա պէտք է այս տեղէն դուրս ել-  
լելուս համար հնարքներ հայթայթել :

— Ավ կ'արգիլէ ձեզ ասկէ դուքս ել-  
լելու :

— Ուրեմն մոռցա՞ր որ գիւղացիի հա-  
դուստով եկայ հոս :

— Ստուգիւ, ես ասիկա չ'մտածեցի,  
ձեզի հագուստ պէտք է . երթամ տունէն  
բերե՞մ :

— Տունը ուր է . չե՞ս գիտեր որ քեռ-  
ւոյս հետ կը բնակիմ. բայց ան ալ հի-  
մա սրդողած է ինձի, պիտի թողում որ  
ժամանակը մեղմացնէ նորա բարկութիւնը :

— Խեղճ գնդապետը, միշտ անդոհի  
մէջ է քեզի համար :

— Ենորհակալ ըլլալու է ասկէ, զի  
պաշտօնադադար զինուորական մը զբաղ-  
մունքի պէտք ունի : Ինչ և իցէ դու Օլի-  
վիէին քովը գնա . . . :

— Առ քեզի համեստ պատանի մ'ալ.  
ով գիտէ հիմա որ խաղարանի, որ պարա-  
հանդէսի մէջ կ'գտնուի : Ան է որ զձեզ  
դլսէ հանեց, պարոն :

— Օ . . . դուն բարոյական դասերու  
մէջ շատ յառաջացեր ես, Լիդ, եթէ քե-  
ռիս հոս ըլլար վստահ եմ որ քեզի լկոտի  
ըսելուն համար ներում պիտի խնդրէր :

— Վայ, այդպէս կ'կարծէ զիս ձեր քեռին, սա ցնդած կապիկը նայէ, ի՞նչ իրաւամբ զրպարտութիւն կ'ընէ. Երբ զինքը տեսնամ աշքերը պիտի խլեմ:

— Խնայեցէք քիչ մը քեռիս, օրիո՞ւդ՝

— Ահ, լկտի կըսէ ինձի, պատիւ կը պահանջեմ անկէ, պոչը կտրած աղուէս, այն քաշած ախտերուն պատճառը լոկ պատերազմը չէ:

— Օրիորդ Լիգ, պիտի լուս:

— Բայց ես չ'եմ ուզեր որ, իմ բարի վարքս արատաւորել համարձակի ոք, ես որ այնչափ պարկեշտ եմ, դուրս չ'եմ ելլեր:

— Իրաւ է, դուն կոյսի մը պէս կ'ապրիս:

— Մէյ մ'ալ ինձի լկտի ըսեն:

— Հերիք է արդ. հասկցանք: Ահա ասանկ է. երբ կանանց մէկ զգայուն տեղը հպիս, ալ չ'են լուեր, Օլիվիեին տունը պիտի երթաս:

— Զեղի համար զգեստ պիտի ուզեմ, այնպէս չէ:

— Այո՛. գլուխս եկած բաներն ալ պատմէ անոր:

— Միայն թէ չ'եմ ըսեր որ դու դիշերը քովս էիր:

— Աւզածդ ըսէ՛ . բաւական է որ ինձի  
հագուստ բերես : Բայց կ'վախնամ որ , Պէ-  
նօա դքեղ կը ճանչնայ և ետեւէդ կ'գայ :

— Ահա ես հիմա ձեր յանձնարարու-  
թիւնը ընելու կերթամ , սակայն իմ բացա-  
կայութեանս ատեն չըլլայ որ դուռը բա-  
նաք . որովհետեւ մեծ ամօթ է ինձի հա-  
մար , եթէ սենեկիս մէջ յաճախորդներուս  
ներքնակը հագած է բիտասարդ մը տես-  
նան :

— Դու անհոգ եղիք : Բայց մինակ ի՞նչ  
ընեմ կ'ձանձրանամ :

— Սա դարանին մէջ դրքեր կայ , որոնք  
շատ զբոսուցիչ են :

— Լաւ , բայց կ'աղաչեմքիշ մը աճա-  
պարէ :

Լիզ , բանալին դրպանը դնելով , Փըթիթ  
զ'էքիւրի փողոցը գնաց :

Մեր երիտասարդը վիպասանութիւնները  
թղթատեց , քանի մ'երես կարդաց , յետոյ  
համբերութիւնը հատնելով՝ սենեկին մէջ  
ճեմել սկսաւ . բնաւ չէր յիշեր թէ Փըթիթ  
զ'էքիւրի փողոցը հեռու է . և թէ նորա-  
սէր երիտասարդի մը զարդարանը պատ-  
րաստելու համար ժամանակ պէտք է :

Կամացուկ մը դուռը զարնուեցաւ :  
— Այ, ձայն չ'հանենք, ըստ կիւսթավ :  
Դուռը երկրորդ անգամ զարնուեցաւ :  
— Բացէք օրիորդ Լիզ, ես եմ, տիկին  
Տիւպուրկ :

— Տիկին Տիւպուրկ, գոչեց երիտասարդ -  
դը . ա՞հ, այս պատեհութիւնը չեմ փախ -  
ցըներ :

Այս ըսելով, դուռը կ'վազէ, և կ'բանայ  
այն կնոջ որուն հետ դիշերային խօսակցու -  
թիւն մ'ըրած էր . և զոր տեսնելու կ'փա -  
փաքէր :

Տիկին Տիւպուրկ կ'վախնար այն գէշ հե -  
տեւանքէն զոր կընար յառաջ բերել իր  
դիշերային դէպքը, և հետաքրքիր էր ի-  
մանալ թէ ով էր այն աղնիւ երիտասարդը  
որ մերժած էր դեռատի կնկան մը բա -  
նալին, նաև բաւական անհեղեղ էր դի-  
շեր ատեն լուացարարի մը տունը վրնտ -  
ռելուն համար . Այս երիտասարդին վրայ  
քանի մը տեղեկութիւններ ստանալու հա -  
մար բնականաբար հարկ էր փնտուած  
աղջկան տունը երժալ որնոր ճիշդ իր լուա -  
ցարարն էր . ի մէջ կանանց հազար տե -  
սակ փանաքի բաներ կըսուի, զորս էրիկ մը

պարտի անգիտունալ։ Հետեւաբար տիկին Տիւպուրկ եկած էր, օրիորդ Լիղի հետ խօսակցելով, զգուշութիւն պատուիրել անոր, եթէ պարոնը զինքը հարցնէ։ Տիկինը յանկարծադէմ շարժում մը ըրաւ կիւսթավը տեսնելով, զոր սակայն չ'ճանչեց, քանզի գիշերը որոշապէս տեսած չ'էր երեսը. թէպէտե տանը քով մեծ լապտեր մը կար, բայց անոր մէջ ալ իւզ չ'կար, կարծեսթէ լապտերները լոյս տալու համար դրուած չ'են։

Տիկին Տիւպուրկ չ'էր կարծեր որ գիշերուան մէջ օրիորդ Լիղը տեսնել ուզող պարոնը՝ կէսօրէն ետքը տակաւին անոր տունը ըլլայ, ուստի կ'վարանէր ներս մըտնելու, Բայց կիւսթավ կարելի եղածին չափի իր ձայնը փոխելով, շատ քաղաքավար կեպով մը կ'հրաւիրէ տիկինը վայրկեան մը սպասելու, ըսելով թէ օրիորդ Լիղ պիտի վերադառնայ։ Ասոր վրայ տիկին Տիւպուրկ ներս կը մտնայ։ Մեր երիտասարդը զայն ուզածին պէս աչքէ անցնելէ ետքը, իր բնական ձայնովը կ'հարցնէ։

— Երիկնիդ գետափին քով իյնալուն վը-

ըայ , կարծեմ ալ եւս չէք սպասեր ձեր  
եղբայրը :

Խեղճ տիկինը կ'շուարի , և երեսը թաշ-  
կինակին մէջ կ'ծածկէ :

— Ահ , տիկին , հաւատացէք թէ իմ  
միտքս ձեզի նեղութիւն և ամօթ պատճա-  
ռել չէ . նոյնինքն ես ներողութեան և ար-  
դահատութեան դեռ շատ կարօտ եմ : Արդ-  
եօք ի՞նչ կ'մտածէք այնպիսի երիտասարդի  
մը վրայօք , որ դիշեր ատեն բոլոր դռները  
կը զարնէ , ցերեկը լուացարարի մը տունը  
կը պահուի այս ձեւով : Չեր մոռացումը կը  
հայցեմ , տիկին , իմ անմտութեանս վրայ .  
և կ'աղաչեմ զիս չդատէք արտաքուստ :

Այս խօսքեր հանդարտեց տիկին Տիւ-  
պուրկի ծփանքը :

— Արդարեւ , շատ սիրուն պատանի մը ,  
ըսաւ մոքէն . իր ջատագովութենէն և անոյշ  
խօսքերէն յայտնի է որ ասիկա բնաւ ան-  
կիրթ մարդ մը չէ . նա մանաւանդ լաւ վար-  
ժուած է տարփական դէպքերուն :

Տիկինը վար առաւ թաշկինակը և ժըպ-  
տելով կիւսթավին երեսը նայեցաւ :

— Պարո՞ն , հասկցայ հիմա թէ դուք  
էիք գիշերուան երիտասարդը : Չեր հոս

գտնուելուն համար չեմ կրնաք դէշ կարծիք ունենալ ձեր վրայ . ուրեմն բարեհաճացէք հաւատալու թէ իմ եղբայրս էր որ կ'սպասէի երէկ գիշեր :

— Չեմ տարակուսիր , տիկին , բայց երջանիկ կը համարիմ ձեր եղբայրը որ ձեզի պէս քոյր մոռնի :

— Կ'ցաւիմ որ գիշերապահը հալածեց զձեզ . էրիկս անգութ է այս մասին , ամենուրէք գողեր կ'տեսնայ :

— Ընդհանրապէս ասանկ են էրիկները :

— Նաև իմանալով գոհ եղայ թէ չկրցին ձերբակալել զձեզ . սակայն կարծեմ այսօր հոս պիտի գան հարցաքննելու :

— Հանդարտ եղէք , տիկին , հոս չպիտի գտնան զիս :

— Էրկանս ըսի թէ , քիչ մը նեղութիւն զգալով , օդ առնելու համար պատուհանը բացած էի , անծանօթ մարդը իր ճամբան հարցուց ինձի . ասոր համար յանցանք մը չունի : Կ'յուսամ թէ օրիորդ լիդ տեղեակ չէ այս բաներուն :

— Ո՛չ , տիկին , բան մը չեմ ըսեր անոր :

— Ուրեմն , ալ հարկ չկայ զայն սպա-

սելու . որովհետեւ այս գեղաքին խափան -  
ման համար հռո եկած էի ,

— Կ'դուշակէի արդէն , տիկին , և ասոր  
համար է որ կատարելապէս վստահացուցի  
զձեղ :

Տիկին Տիւպուրկ կիւսթավին վայելչական  
ողջոյն մընելով , դուրս ելլելու վրայ էր ,  
երբ օրիորդ Լիզ բազիին տակ ծրարով մը  
վերադարձաւ : Տիկին Տիւպուրկ կարմրեցաւ :

— Ի՞նչ կ'ուզէր տիկին , ի՞նչ կ'հարցը-  
նէք . կ'ըսէ փոքրիկ լուացարարը հեզնա-  
կան գեմքով մը :

— Օրիորդ , էրկանս շապիկը առնելու ե-  
կած էի :

— Բայց ես ձեզի ըստծ էի թէ իրիկունք  
պիտի բերեմ :

— Այս' , իրաւունք ունիք , սակայն հիմա  
դուրս պիտի ելլայ և շապիկ չ'ունի , եթէ  
դուք ժամանակ չ'ունիք ես կ'առնիմ . կար-  
ծեմ ասոնք են :

Տիկին Տիւպուրկ սեղանի մը վրայէն ե-  
րեք հատ շապիկ առնելով , անմիջապէս  
տունէն դուրս ելաւ , առանց Լիզը լսելու  
որ ետեւէն կ'պոռար .

— Տիկին , սխալ առիք շապիկները , ե-

կէք ձերինը տամ։ արհեստաւորի մը շա-  
պիկները կտանիք ԱՇ, պարոն կիւսթավ,  
կըսէ աղջիկը ներս մտնելով, չեմ գիտեր,  
ինչ կընէիք այս կնկան հետ։ այնշափ վըր-  
դոված է որ, ըրածը չդիտեր։

— Որչա փ շարամիտ ես, Լիզ։

— Սա բարեմիտը նայէ, ի՞նչու բացիր  
դուռը, քեզի արդիլած չէ՞ի։

— Քու ձայնդ լսել կարծեցի։

— Աղէ՛, ստախօս, ես դրաւ կ'դնեմ որ  
դուն կ'ճանչնայիր տիկինը։

— Աստուած գիտէ, առաջին անգամն է  
որ տեսայ։

— Եւ այս գիշերուան հարցումները ինչ  
էր. կը կարծէք որ ես զանոնք մոռցած  
եմ. ժամը շորսին իր տունը պիտի երթամ։  
Նայինք եթէ զիս խարեց. կ'հասկնամ։

— Օրիորդ, ոչ ոք կ'ինայէք, միշտ գէշ  
կը խօսիք այլոց վրայ. մէյմ'ալ կ'ուզէք որ  
ուրիշները ձեզի համար բան մը շըսեն։  
բայց եթէ այս պարկեշտ կնկան նեղութիւն  
մը տալ ուզէք, գիտցած եղէք որ կ'ըսր-  
կանամ ձեզի։

— Օ՛, ի՞նչ մեծ կորուստ, պարոնը պի-  
տի բարկանայ. երկու բնիոն չալժող եւ

ինքզինքը համեստ կեղծող կնկան մը հետ  
իմ տանս մէջ տեսնամ, և տակաւին ձայն  
չհանեմ: Ես աղէկ դիտեմ որ, ամէն տե-  
սակ տարփածուներ ունիք, սակայն չեմ  
ուզեր որ անոնք իմ տունս գան: Ահ, սա  
կարդուած կանայք, անամօթ ժպիրհներ,  
կը կարծեն որ ամենայն ինչ ներելի է ի-  
րենց. պէտք է որ ծանակ և խայտառակ  
ըլլան, իրենց պարզամիտ էրիկները խա-  
բելնուն համար. գոնէ ինծի պէս օրիորդ մը  
իր տիրուհին է և ազատ է ուզածն ընելու:

Մինչդեռ օրիորդ լիզ կը խօսէր, միւս  
կողմէն կիւսթավ լիզին բերած հագուստը  
կը հագնէր, որոնք պարահանդիսի անդ-  
րավարտիք մը, ձմեռային բաճկոն մը և զի-  
նակը մը կօշիկներն էին:

— Օլլիվիէն տուաւ այս հագուստները,  
հարցուց վերջապէս կիւսթավ:

— Աչ, ձեր բարեկամը հոն չէր, մինակ  
Պէնօան տեսայ, այն տուաւ ինծի այս ծը-  
րարը. ո՞րչափ ալ ապուշ ծառայ ունիք:

— Ուրեմն չեմ զարմանար:

— Հա՛, հա՛, հա՛, այս ծաղրելի և կարճ  
հագուստով, գիւղի վեսայի մը կ'նմանիք:

— Կ'երեւայ թէ անպիտանը իր հա-

գուստներէն մէկը խրկեր է ինձ , եթէ կա-  
մաւ ըրած է այս խաղը , պիտի տուժէ :  
Ի՞նչ ընեմ հիմա , օրիորդը կը բարեհաճի  
ինծի կառք մը գտնելու :

— Այո՛ , պարոն , միանգամայն կը տես-  
նամ թէ տիկին Տիւպուրկ դրան առջեւ  
ձեզ կ'սպասէ :

Իիդ վար ի՞նաւ և անմիջապէս կառքով մը  
վերադարձաւ :

— Մնայք բարեաւ , օրիորդ :

— Երթայք բարեաւ , չարագործ , է՛հ ,  
այդպէս առանց զիս գրկելով պիտի մեկնիս :

— Ինծի դէմ բարկացած ես կարծեցի ,  
եկուր ուրեմն , Օլիվիէին տանը հասցէն  
գիտե՞ս :

— Այո՛ գիտեմ :

— Լաւ ուրեմն , հոն եկուր զիս տեսնե-  
լու համար :

— Բայց ասանկ երիտասարդներուն քով  
ես ի՞նչ գործ ունիմ , աղէկ չեն ըսեր ին-  
ծի . . . ինչ և իցէ կ'գամ :

Կիւսթավ դրան քով սպասող կառքին  
հեծնալով , դէպ ի Օլիվիէին տունը համ-  
բայ ելաւ :

## ԳԼՈՒԽ ԺԲ.

### ՀԱՅԿԵՐՈՅԹ ՄԸ

Օլիվիէ , կանխաւ իր ծնողքը կորուսած ըլլալով , դեռ պատանեկութեանը մէջ իր դործքերուն տէրը կը գտնուէր . կը սիրէր խաղը , գինին և կիները : Կ'ծառայէր պաշտօնատան մը մէջ՝ ուր կանոնաւորապէս դէպ ի ամսոց վերջերը կ'շարունակէր (ամսական առնելու համար) : Եւ երբոր ձեռք անցնէր իր ստակը , ալ այնուհետև ութ օր չէր տեսնուեր : Այս բացակայութեանը համար ստէպ կը յանդիմանէին զինքը , որովքիշ մ'ատեն լաւ կ'կատարէր իր պաշտօնը :

Կիւսթավ կառքէն վար իջած ժամանակ : Օլիվիէ զայն պատուհանէն տեսաւ , եւ բարձրածայն ծիծաղելով իւր բարեկամին դէմիւ ելաւ :

— Բարեկամ , ըսաւ կիւսթավ , ի՞նչ կայ որ կը խնդաք :

— Աս ինչ անշնորհք վիճակի մէջ ես կիւսթավ . հայելույ մէջ նայէ մէյմը . եկուր

այսպէս թալէ - Թօայեալը շրջան մը ընենք .

նոր ճամբորդ մը պիտի կարծեն զքեզ :

— Սա անպիտան Պէնօան խրկեց այս հա-  
գուստը : Ուր է նայիմ, Պէնօա :

— Հոս եմ, պարոն :

— Ապուշ, ինչո՞ւ քու հագուստդ խրկե-  
ցիր ինձի :

— Ահ, պարոն, սխալմունք մ'եղաւ . Փա-  
րիզ մոտած ժամանակս Պ. գնդապետէն շը-  
ճանչցուելու համար, ձեր հագուստը հա-  
գած էի : Նաև ձեր տափատն ալ հագնիլ  
է՛ուղէի, բայց չկրցայ մէջը մոնալ :

— Զիարդ և իցէ . յասմհետէ ջանա՛ որ  
ասանկ անվայել բաներ չընես : Իմս սիրելի  
Օլիվիէ պէտք է որ հիւրընկալեռ զիս : Քեռ-  
ւոյս աչքին երեւնալէ յառաջ կուղեմ՝ որ  
մոռնայ զիս ամուսնացնելու նպատակը . Օ-  
լիվիէ, շատ պիտի խնդաս եթէ գլուխս ե-  
կած բաները պատմեմ քեզի . Հա՛, աղէկ  
միտքս եկաւ, ձիերը ծախեցի՞ր :

— Շատո՞նց :

— Գոնէ լա՞ւ գնով :

— Էհ, գէշ չէ . ատոր հաշիւը վերջը  
կը տեսնենք . առ այժմ, հագուէ, և եր-  
թանք ճաշելու :

— Աչ, ես ցորեկը դուքս ելլալ չեմ  
ուղեր :

— Ուրեմն շատ կը վախնաս քեռիէդ :

— Չեմ ուղեր քեռւոյս բարկութիւնը  
գրգռել, վասն զի շատ խստաբարոյ է :  
Պէսօա, կրնած մեզի համար կերակուր  
բերել :

— Կ'բերեմ, բայց կը վախնամ որ ճամ-  
բան քեռինիդ կ'տեսնայ :

— Սա հին լոդիկը հագիր, սա մեծ փե-  
ղոյրն ալ աչքերուդ վրայ ա՛ռ, ահա ա-  
սանկ ծեր հրէի մը նմանեցար . շուտ ըրէ  
լաւ խոհարարի մը քով գնայ :

Կիւսթավ իւր բարեկամին հետ մինակ  
մնալով, կ'պատմէ անոր իր դիպաց մէկ  
մասը . սահելով սակայն այն կէտը որ տի-  
կին Պէրլիի կը վերաբերէր : Մեր երիտա-  
սարդը, թէև անխորհուրդ, սակայն գիտէր  
գաղտնապահ ըլլալ, երբ խնդիրը ազնուա-  
կան եւ պատուաւոր կնկան մը վրայ է :  
Այս մասին Պ. Կիւսթավ շատ տարբեր էր  
այն անձնագով երիտասարդներէն, որը  
տմենուրէք կ'պարծին իւրեանց գործերը .  
բայց պէտք չ'է հաւատ ընծայել այսպիս-  
եաց խօսքերուն . քանզի անոնք որ աւելի

կ դովեն զիրենք , միշտ քիչ յաջողութիւն գտնողներ են : Ստուգիւ աւելի ջատագովելի չէ մեր երիտասարդը քան այն որ իւր տենչանաց զիջանիլ չ'ուզող կին մը կը ջանայ անպատուել : Այսպիսի մարդիկ շատ են աշխարհիս մէջ : Անհաստատութիւնը , թեթեւամտութիւնն եւ անմտածութիւնը կրնայ ներուիլ . բայց կեղծաւորութիւնը , զրպարտութիւնը վատ և խարդախ մարդկանց մոլութիւնն է :

Պէնօա , ծաղարարի մը , ոստրէվաճառի մը և խոհարարի մը հետ վերագարձաւ :

— 0՞ն , ըստ կիւսթավ , այս անգամ փառաւորապէս խնճոյք մընենք , բայց ուրիշ անգամ խնայողութեամբ վարուինք :

— Բարեկամ , կ'ըսէ Օլիվիէ գաւաթ մը դինի տնկելով , գեղեցիկ դրացուհի մ'ունիմ , որուն փանդեռի դաս կ'տամ , և երաժշտութիւնը շատ սիրելուն համար , ստէպ նուագահանդէմներու կ'տանիմ :

— Նուագահանդէ՞ս , կ'ըսէ կիւսթավ , ասի իմ ուղած բանս է . դու գիտես որ ես լաւ քնար կ'զարնեմ , հետդ տար զիս բարեկամ :

Ճաշէն յետոյ , կիւսթավ Աանթիէ փողոցը

երթալով Պ. Պէրլիի տունը հարցուց : Քիչ  
ժ'ատեն դրան առջեւ պտտեցաւ . Ժիւլին  
տեսնելու համար պատուհանները կ'դիտէր ,  
բայց մէկը չ'տեսաւ :

— Եթէ դիտնայ որ ես դրան առջեւ կը  
շրջագայիմ , կ'ըսէր մնքէն , հնարք մը կը  
դտնայ դուրս ելլելու : Ես չեմ կրնար ներս  
մննալ , որովհետեւ իմ ներկայութիւնս ա-  
նոր վիշտերը կ'նորոգէ :

Այս կերպով շատ օրեր անցան . Կիւս-  
թավ միայն դիշերները դուրս կ'ելլար , Սան-  
թիէ փողոցը շրջագայելու : Իսկ Օլիվիէ առ-  
տուն ոլաշտօնատուն կ'երթար , Փեղոյրը կը  
բանար , յերեկոյին՝ փանդեռի դասը կ'տար  
իր դրացի սիրուհւոյն : Օլիվիէ իր թոշակին  
քառորդը միայն կ'ստանար , զի միւս երեք  
քառորդները պարտասէրներու մէջ բաժ-  
նուած էին :

Կիւսթավ սեսնել սկսաւ , իր քսակին  
յատակը . բայց տակաւին կը յուսար ձիե-  
րուն ստակը առնուլ : Մանաւանդ արդէն  
շատ ակնածական նամակ մը դրած էր դրն-  
դապետին որոն մէջ այսպէս կ'մերկինէր .

« Տիկին Պէրլիի վրայ ունեցած սէրս այն-  
պիսի սաստէկ և հրապուրիչ կերք մ'էր որ

վերջապէս ստիպեց զիս անխորհրդաբար նորա սենետկը մտնելու . սակայն և այնպէս պէտք է խոստովանիլ թէ տիկինը չուզեց երբէք մասնակցիլ իմ յանցանքիս :

Կիւսթավ չէր կարծեր որ քեռին դիւրախար ըլլայ , իր այս ստախօսութեանը . բայց սակայն կ'պարտէր ջատագովել զտիկին Պէրլի , և ստուդել ինչ որ սա բոած է իր էրկանը :

Օր մը Օլիվիէի մեկնելէն յետոյ դուռը զարնուեցաւ : Նորեկը օրիորդ Լիզն էր :

Փոքր տղջիկը վարդագոյն փեղոյր մը , զարդարուն շրջազգեստ մը և աղնիւ ցփոփ մը հագած եւ այնչափ պճնեալ էր , որ տեսնազը չէր կրնար հաւատալ անոր թափշուհի ըլլալուն :

Փարիզի մէջ ոչ ինչ ունքան պատրիչ է այլ միայն արտոքին երեւոյթը : Տեսարանի մը մէջ երկու մարդկան միջեւը նստած կ'ըլլաք , որոնց զարդարանքը միևնոյն է . ուրեմն իրենց հարստութիւնն ալ քիչ տարբերութեամբ հաւասար է , ոչ երբէք . մէկը նախարար մ'է , իսկ միւսը ստորին ծառայ մը :

Ի՞նչ ցաւալի բան , թէ մարդիկ չեն կըր-

նար գնել գուշակիչ գործիք մը որպէս կը գնեն թաշկինակ մը : Համբերութիւն . թերեւս կըլլայ նոյն օրը :

— Ահաւասիկ , պարոն , ըստ աղջիկը , ձեզ տեսնելու եկայ , կ'տեսնաք որ խոստմապահ եմ ես :

— Ստուգիւ , սիրելիդ իմ Լիզ , ճիշդյարմար ատեն եկար , զի ես տիսուր խորհրդաժութիւններ կ'ընէի :

— Խորհի՛լ , կարծեմ առաջին անգամն է որ կ'ընէք :

— Եհ , ինչ օգուտ , ծերանալս կ'զգայի :

— Քսան և մէկ տարեկան ծե՛ր :

— Ինչ և իցէ , այսօր հոս կեցիք , ընտիր կերակուր մը կ'պատրաստենք , Օլիվիէ բարեկամէս մի՛քաշուփր :

— Նախամեծար կ'սեպէի ձեզի հետ մինակ ըլլալ , բայց քանի որ անոր տռւնն ենք :

— Ո՞րչափ գեղանի ես Լիզ , մօտեցիք քիչ մը :

— Թողէք պարո՞ն , Պէնօան մեզ կ'դիտէ : Հա՛ , մօրաքրո՞ջս այցելութիւն մը պիտի տայի , ներեցէք , կերակուրէն յառաջ երթամ , շուտ կ'գամ :

— Գնայ , բայց մի՛ռ ուշանար :

Լիդ գուրս ելածին պէս , կիւսթավ կան .  
չեց իր ծառան .

— Պէսօ՞ա , պէտք է այսօր համադամ  
կերակուրներէ սեղան մը պատրաստել մե-  
զի , փոքր աղջկունք շատ կ'սիրեն անուշա-  
համ կերակուրները . ես ալ քիչ մը փոքր  
աղջկանց ճաշակը ունիմ :

— Տէր իմ , եթէ քիչ մը կերակուր գրա-  
նաք շնորհակալ եղէք :

— Ի՞նչ ըսել կ'ուզես :

— Արդէն հինգ կերակուր պարտք ու-  
նինք խոհարարին , առանց այս պարտքը  
վճարելու կերակուր չ'պիտի տայ : Ցակաւին  
իմ կերածներս ալ զատ :

— Ինչու համար ասիկա չըսիր Օլիվիէի :

— Պ. Օլիվիէ միշտ ձեզի կ'խրկէ զիս երբ  
ինգիրը ստակի վրայ է :

— Ի՞նչ . իմ քսակս անսպառ դրամա-  
տուն մը կարծեր է , շատ առնելիք ունիմ  
ես անկէ , ձիերուն ստակը գեռ չ'առինք :  
Ոտքի ձայն կայ , կարծեմ ան է :

Ստուգիւ Օլիվիէ իր գրացի սիրուհւոյն  
քովէն վար իջնալով , ուրախ դէմքով մը  
ներս մտաւ :

— Աղէկ որ եկար , ըսաւ կիւսթավ , բայց

ի՞նչ ունիս , ի՞նչ ցնծում երես , կ'երեւայ  
թէ թոշակդ առեր ես :

— Աչ բարեկամ , անանկ բան մը չ'տե-  
սայ . իմ ուրախութիւնս սա է որ , դրա-  
ցուհւոյս քովին կ'գամ հիմա , ասի շատ  
բարերարոյ կին մ'է , բայց ոչ թէ ան-  
ուանարկ :

— Է , վերջապէս :

— Վերջապէս , կերակուրի հրաւիրեցի ,  
պիտի դայ հիմա :

— Վաշ , շատ լաւ , մեր լիզն ալ պիտի  
դայ , քառակուսի սեղան մը կ'կազմենք ,  
Սակայն պէտք է լաւ կերակուրներ պատ-  
րաստել :

— Ես ալ ասոր համար քեզի եկած էի :

— Եթէ ոչ ես քեզի պիտի դայի ստակ  
ուղելու համար , որովհետեւ խոհարարք  
չուզեր կերակուր տալ տռանց պարտքեր-  
նիս վճարելու : Օ՞ն , գնայ հաշիւը դոցէ  
և նորէն կերակուր ապսպրէ :

— Հաշիւը դոցե՛մ , բայց ինչո՞վ :

— Միթէ ձիերու ստակը չ'ունի՞ս :

— Ահ , իմն խեղճ կիւսթավ , այս խըն-  
դիրը տակաւին համարձակած չ'էի քեզի  
յայտնելու . բայց , բարեկամ , յոյսդ կտրէ

անկէ , ան ստակները շատոնց հատաւ :  
— Ի՞նչ ըրիր , խաղի մէջ կորուսիր :  
— Այո՛ , դերձակիս վճարելի տօմսակ մը  
ունէի : Զեր դումարը կրկնապատկել ուզեցի :  
— Օ՞ն անդր , լաւ կրկնաշահ մը ըրեր  
էք : Օլիվիէ , դուն չ'պիտի զգաստանաս :  
— Բարէ՛ , եթէ վաստկած ըլլայի , դու  
հիմա չ'պիտի կշամքէիր զիս :  
— Է՛ , ի՞նչ ընենք հիմա , իմ քովս ստակ  
չ'մնաց :

— Իմ քովս բնաւ չ'գտնուիր : Ի՞նչ ը-  
նենք ուրեմն այս տիկիններուն . խեղճ դը-  
րացուհիս ինծի յայտնած էր թէ շատ կը  
սիրէ շահանչոյն դինին :

— Հը՛ , շատ շնորհակալ թողըլլայ , եթէ  
կրնայ գտնալ պարզ գինի մը : Բարեկամ,  
այս կրծիմէն աղատելու համար պէտք է  
հնարք մը մտածել : Պէհօա , արդեօք քիչ  
մը պահեստի ստակ ունի՞ս :

— Այո՛ ունիմ :

— Արդարեւ , դու շատ սիրուն տղայ  
մ'ես Պէհօա , գրեթէ օրքան ունիս :

— Կարծեմ . . . քսան ---ի մը չափ :

— Կորսուէ՛ , ապուշ , ես ալ բան մը կար-

ծեցի : Գոնէ հնարագէտ ալ չես որ կա-  
րենաս այս գործը ի գլուխ հանել :

Օլիվիէ կը շըջէր սենեկին մէջ , ոտքը  
զարնելով և անիծելով դքուէն և զկրկնա-  
շահ : Կիւսթավիլ ալ խորագոյն կ'մտածէր :  
Իսկ Պէնօա , անշարժ երկու երիտասար-  
դաց առջեւ , կ'սպասէր անոնց հրաման-  
ները , զորս պիտի հաճին իրեն տալու :  
Յանկարծ կիւսթավի դէմքը փայլելով .

— Բարեկամ՝, ըստ Օլիվիէի , վերջապէս  
գտայ , լաւ սեղան մը պիտի կաղմենք ,  
բայց աղէկ մը չեմ գիտեր թէ ինչպէս պի-  
տի վճարենք ստակը , սակայն վճարման  
կերպը ուտելէ յետոյ կ'խորհինք : Ասկէ վեց  
ամիս առաջ , կերակուր ուտելու համար  
կնկան մը ճաշարանը կը յաճախէի , այս սի-  
րելի տիկինը , երիտասարդները շատ կ'սի-  
րէր , հետեւաբար երեսս նայելով կը ժըպ-  
տէր և մեծ յարգանօք կ'խօսէր հետս . և  
ամէն ստակ տալուս « ինչո՞ւ կ'աճապարէք ,  
վերջը տուէք » կ'ըսէր . յայնժամ ստակ ու-  
նենալուս համար , չ'կրցի ասկէ օգուտ քա-  
ղել . բայց հիմա որ կարօտութիւն ունիմ  
անոր հաւատարմութեանը , ուստի շուտով  
քովը կ'վազեմ , և « Տիկին , կ'ըսեմ , այսօր

նոր գիւղէն եկայ , քանի մը բարեկամներուս հացկերոյթ պիտի տամ : » Վստահ եմ որ բարի տիկինք , այս պարագայիս մէջ ոչ ինչ պիտի զլանայ յինէ :

— Կեցցե՞ս բարեկամ , շատ յարմար է այս գիւտդ : Ես ալ անուշարարի մը քեռաղջիկը կ'ճանչնամ , որուն հետ քիչ մը բարեկամական հաղորդութիւն ունիմ , ասոր խանութը կ'երթամ , յուսով եմ որ պիտակներ և շաքարեղէններ պիտի առնեմ :

— Օ՞ն , աս ալ գէշ չ'է . աճապարենք ուրեմն մեր սիրուհեաց կոչունքին համար պէտք եղածը տնօրինելու :

Երկու երիտասարդները դուրս ելնելու վրայ էին , Պէնօա կեցուց զանոնք :

— Պարոններ , կարծեմ ձեր հացկերոյթին համար տակաւին բան մ'ալ կ'պակսի :

— Ի՞նչ է նայինք :

— Գինի :

— Այ , աղան իրաւունք ունի , գլխաւոր բանք աս էր . Օլիվի՛է , կ'ճանչնա՞ս նաեւ գինեվաճառի մը կինը կամ քեռաղջիկը :

— Ո՛չ , բարեկամ :

— Սակայն խրախ մը զուարթագին չըլւար առանց զինիի :

— Գարեջուր ծախող մէկը կ' ճանչնամ ,  
գինիի տեղ գարեջուր առնենք չըլլա՞ր , կ' ը-  
սենք որ , ասիկա խիստ ազնիւ դինի մ'է :  
— Անոնք չեն խաբուիր , բարեկամ :  
— Կամ թէ հոն ալ կրնանք առնել :  
— Որթի միսով հոն չխմօւիր :  
— Ահ , կիւսթավ , մոքիս բան մ'եկաւ ,  
գինի պիտի ունենանք , պէտք է որ ինծի  
ձգես Պէնօան :

Կիւսթավ , իր ծառան Օլիվիէլի քովը թող-  
լով , ուղղակի խոշոր մայրիկին ճաշարանը  
վաղեց : Օլիվիէն ալ ըստ իւր նալատակին ,  
խիստ երկայն թիկնոց մը հագաւ , մազերը  
օծեց և լաւ սանտրեց . քթին ծայրը կար-  
միր քսեց , դլուխը փոքր և սրածայր փե-  
ղոյր մը դրաւ , և ձեռքն ալ խարազան մը  
առնելով , հայելիին առջեւ ջանաց իրեն  
տալու անոպայ և պարզամիտ անդդիացիի  
մը դէմքը :

— Միթէ պարոնը կատակերգութիւն  
պիտի խաղայ , ըսաւ վերջապէս Պէնօա , որ  
ապշած կ' դիտէր տիրոջը բարեկամը :

— Ահա ես հագուեցայ , Պէնօա , կար-  
դը քուկդ է :

— Ի՞նչ , պարոն , զիս ալ ծպտել կ'ուղէք :

— Լոէ՛ և հնազանդէ՛, օ՞ն, հագիր սա  
հին կաշիէ վարտիքը :

— Պարոն շատ նեղ է աս, չեմ կրնար  
մէջը մտնալ :

— Զանք ըրէ քիչ մը, կ' մտնաս, ջանքը  
ամէն ինչ կ' կատարելագործէ . առ սա կար-  
միր բաճկոնը և այս դեղին թիկնոցը, սա  
գտակն ալ գլուխդ դիր :

— Պարոն ասոնց մէջ կ' խղդուիմ ես :

— Աւելի աղէկ, մեղի ալ խղդուածի պէս  
դէմք մ' ունենալ պէտք է, Պէնօա՛, ինձի  
մտիկ ըրէ, որ սխալ բան մը չ' ընես : Ես  
Միլօրտ մ' եմ, դուն ալ իմ սպասաւորս ես :

— Միլօրտ ի՞նչ ըսել է :

— Միլօրտ, հարուստ անգղիացիներուն  
կ' ըսուի, ասոնք մեր յիշատակարանները,  
թատրոնները, և աղջիկները տեսնելու հա-  
մար Փարիզ կ' գան . դիւրաւ կը ճանչցուին  
ասոնք . փողոցներու մէջ՝ իրենց այլանդակ  
և կոպիտ կերպարանքէն, խաղի մէջ՝ իրենց  
հայհոյանքէն, աղջկանց քով՝ իրենց անգ-  
ղիական ոսկիներէն :

— Այս պարոն, ես անցեալ օր փողո-  
ցին մէջ երկու հատ տեսայ ասկէ . որոնք  
երկու աքաղաղներու կոխւը տեսնելով, ու-

բախութենէ կ'լային . քանզի իրենց երկիրը  
կ'յիշեցնէ եղեր այս կռիւը :

— Ահա այն անդղիացիներուն պէս , քե-  
զի հետ գինեվաճառի մը խանութը պիտի  
երթանք , եթէ քեզի խօսին , միմիայն « Ես »  
(այս) պիտի պատասխանես :

— « Ես » . ասիկա շատ դիւրին է պա-  
րո՞ն , կրնամ միտքս պահել :

— Ամենը այս չէ , զքեզ գինեվաճառին  
խանութը թողլով՝ ես հոս պիտի գամ , և  
մինչեւ իմ գալուս պիտի սպասես . եթէ ա-  
ռանց մեր թոյլտուութեան տուն վերա-  
դառնաս կամ թէ մեր հասցէն իմաց տաս ,  
դիտցիր որ յիսուն գաւազանի հարուած  
պիտի ուտես . հասկցա՞ր :

— Այս պարոն հասկցայ . չպիտի վե-  
րագառնամ :

— Ահա ասանկ . հիմա եկուը նայիմ ե-  
տեւէս :

Օլիվիէ և Պէնօա տունէն դուրս ելան .  
խեղճ տղան իր կաշիէ վարտիքովը հազիւ  
հաղ կ'քալէր և իր մտքին մէջ առած դասր  
կ'ոերտէր . միանգամայն գաւազանի հար-  
ուածները և անդղիական ձեւերը շատ կը  
նեղէին զինքը .

Ճամբան կառք մը վարձեռով , կեղծ և  
խառնախօս անդղիացին պատուիրեց կա-  
ռավարին զիրենք Փարիզի լաւ գինեվա-  
ճառի մը խանութը տանելու : Կառապանը  
սկսաւ մորակել իր ձիերը եւ քիչ առե-  
նէն գինետան մ'առջեւ կանգ առին : Օ-  
լիվիէ վար իջաւ , եւ փորը ուռեցնելով  
խանութէն ներս մտաւ : Եւ որովհետեւ  
վաճառականները շատ կ'սիրեն օտարներու  
հետ առուտուր ընել , միլորտին բոլորտիքը  
ժողվեցան :

— « Իփ եռւ բլիղ » (եթէ կ'հաճիք) լա-  
ւագոյն գինի կ'ուզեմ :

— Միլորտ , ամէն տեսակ լաւ եւ հին  
գինիներ ունինք :

— Շատ հին և աղէկը կ'ուզեմ , գնոյն  
չեմ նայիր :

— Գոհ պիտի ըլլաք միլորտ , քա՞նի շիշ :

— Ինը շիշ ուրուս և երեք շիշ շահանեւ :

— Այս միլորտ , փրփրած շահանեւ :

— « Այ վիլ » (կ'ուզեմ) որ խիցը երեսս  
ցատքելու է :

— Առիքը անգամ կը ցատքի , Միլորտ :

Գինեվաճառը տաներկու շիշ գինին կտո-  
քին մէջ դնելէ յետոյ հաշուեցոյցը ներկա-

յեց միլօրտին , որն որ գնոյն վրայ առանց  
դժուարութիւն մը ցուցնելու և առանց իր  
գրպանը որոնելու .

— Պարոն վաճառական , ըստ , քսակս  
պանդոկը մոռցեր եմ , ձեր ծառաներէն  
մին հետո խրկեցէք որ այս փոքր հաշիւք  
գոցեմ :

— Հոդ չէ միլօրտ : Ֆրանսօա , այս անդ-  
ղիացի պարոնին հետ գացէք , եօթանա-  
սունուհինդ ֆրանք պիտի տայ ձեզի : Մի-  
լօրտ կ'աղաչեմ մեզ չ'մոռնաք :

— Շատ աղէկ , պարոն վաճառական ,  
«կուտ մօրնինկ » ( բարի լոյս ) . երթանք  
Փէնօա — սօն :

Օլիվիէ՛ հրամայեց կառավարին Շանդ-է-  
լիդէի կողմը երթալու : Քիչ մը ժամանակ  
երթալէ յետոյ , յանկարծ կեղծ միլօրտ  
ձեռքը ճակտին դարկաւ , իբր թէ խիստ  
կարեւոր բան մը մոռցեր է :

— Բարեկամ , ըստ ֆրանսօաի , գլխա-  
ւոր բանը մոռցանք , ինծի վեց շիշ ալ Սպա-  
նիոյ գինի պէտք էք , ծառայիս հետ գացէք  
զանոնք ալ միլօրտներու պանդոկը բերէք :

Դինեվաճառի մանչը Փէնօա - սօնին հետ  
մէկտեղ գացին : Օլիվիէ պատուիրեց կա-

ուավարին զինքը Սէն - Մարթէնի կողմը տա-  
նելու : Հն , կառքէն վար իջաւ և դինի-  
ներու կողովը բեռնակիր տղու մը տալով  
կիւսթավին քովը վերադարձաւ :

— Ի՞նչ սատանութիւն բանեցուցիր այս  
գինիները ձեռք բերելու համար , հարցուց  
կիւսթավ :

Օլիվիէ պատմեց իր բարեկամին իւր  
ծպտման և ճարալիկութեան յաջողութիւնը :

— Գիտես Օլիվիէ , ըսաւ կիւսթավ որ  
իւր բարեկամին հնարագիտութեանը վրայ  
այնչափ գոհ չէր երեւար , այս ըրած բանդ  
բոլորովին անվայել է . ծպտիլ եւ առանց  
ստակ վճարելու գինի բերել :

— Ինչո՞ւ , ստակը պիտի վճարեմ , միթէ  
դրաւ տալս ասոր ապացոյցը չէ՞ :

— Ի՞նչ աղէկ դրաւ , խեղճ Պէնօա :

— Բարեկամ որչափ ալ խեղճ և ապոշ  
ըլլայ , քսան տարեկան մանչ մը 75 ֆրանք  
կարժէ :

— Բայց կ'մատնէ զմեղ :

— Անկարելի է , ես անոր դասը տուի .  
մի վախնար բարեկամ , ձեզի կ'խոստանամ  
որ ամսականս առած ատեն կ'երթամ կ'ա-  
զատեմ տղան : Դո՞ւն ինչ ըրիր նայինք :

— Ես իմ դերս լաւ կերպով կատարեցի .  
խիստ ընտիր կերակուր մը պիտի գայ . բան  
մը պակաս չ'է . ստակը տալ ուղեցի , բայց  
սիրելի տիկինը մէկ ամիս վերջը վճարելու  
ստիպեց զիս :

— Ա՛հ , Կիւսթավ , եթէ ասանկ տամն-  
ու մէկ տիկին եւս ունենանք , տարի մը ա-  
ղէկ կ'ապրինք :

— Օլիվիէ , կատակը մէկդի , սեղանը  
կարդադրենք , հիմա տիկինները կ'գան :  
Ա՛հ , որչափ փցուն ես , պնակ մը դնել շես  
գիտեր : Ի՞նչ պիտի ըսեն մեր անուշիկ-  
ները , երբ տեսնան թէ մեզի ծառայելու  
համար սպասաւոր մը չ'ունինք :

— Ի՞նչ պիտի ըսեն . ուրախութեան մէջ  
ազատ ըլլալու համար մեր մարդիկը խըր-  
կած ենք կը կարծեն , եւ ասկէ դոհ ալ  
կ'ըլլան :

— Օլիվիէ , դուն ամէն բանին աղէկ կող-  
մը կը տեսնես . բայց ես կ'վախնամ որ սա  
անմիտ Պէնօան սխալ բան մը կ'ընէ :

— Լուէ , դուռը զարկին :

— Յառաջ էմքէն նայէ , կերակուրն է :

— Ո՞չ , դրացուհիս է :

Դրացի տիկինը ներս մտնելով , ուրիշ եւ

ըիտասարդ մը տեսածին պէս, պարսաւեց զինքը իր անպատեհութեանը վրայ : Բայց այս պարոնները ապահովեցին զինքը թէ քաղաքավարութեամբ պիտի վարուին, եւ մանաւանդ ուրիշ օրիորդ մ'ալ պիտի գըտնուի : Նոյն պահուն օրիորդ Լիզն ալ դաւով, ընտիր կերակուրներէ բազկացեալ սեղանի մը բոլորտիքը քառակուսի բազմեցան :

Այս պարոնները և այս տիկինները իրենց զուարճութեան մէջ թողլով, մեք խեղճ Պէնօա - սօնի դլխուն եկածը պատմենք :

Պէնօա - սօն կաշիէ դլխարկին և Օլիվիէին վրայ անէծքներ կարդալով, Ֆրանսօայի հետ միատեղ խանութ դարձան :

— Միլօրտը գինիէն գոհ չեղաւ, հարցուց վաճառականը Պէնօային :

— «Ես» պատասխանեց վերջինը :

— Ո՞չ պարօն, ըսաւ ֆրանսօա, միլօրտը տակաւին գինիին համը նայած չէ . բայց ճամբան միտքը եկաւ թէ իրեն վեց շիշ ալ Սպանիոյ գինի պէտք է եղեր :

— Վեց շիշ Սպանիոյ գինի . բայց ո՞ր տեսակը, Գիտէ՞ք պարօն սպասաւոր, ո՞ր տեսակը կը սիրէ տէրդ, Մատէ՞րը, Քոէ՞րէ՞սը, Մալակա՞ն :

— «Ես , Ես » :

— Հասկցայ , Մալական է ուղածը . Ֆըրանսօա՞ , ա՛ռ սա կողովը տար , հիմա փոխանակ 75 ի 93 ֆրանք պիտի առնես : Պ. Պէնօա - սօն , միլօրտ հեռո՞ւ տեղ կ'ընակի :

— «Ես :

— Միլօրտներու պանդոկը , ըստ Ֆըրանսօա կողովը առնելով . օ՞ն , քալեցէք պարոն Պէնօա - սօն :

Պ. Պէնօա - սօն ալ ինչ ընելիքը չէր գիտեր . որովհետեւ Օլիվիէ գաւազանի հարուածներու սպառնալեօք արգիլած էր իրեն տունը ցոյց տալու . ըստ որում ֆրանսօափրան մը չպատասխանեց և կոթողի մը պէս փողոցին մէջ տեղը կեցաւ :

— Արգեօք . այս ծառան ճամբան մուշե՞ր է , ըստ վաճառականը համբերութիւնը հատնելով , ո՞ւր է միլօրտներու պանդոկը բարեկամ :

— «Ես , Ես :

— Կրողը տանի սա ես երը , կ'երեւայ թէ այս տղան գաղղիերէն չհասկնար . Ֆրանսօա , կարծեմ մեծ միլօրտները Օթէլ Մէօրիսի կ'իջնեն , թերեւս աս ալ հօն ըլլայ :

Շուտ ըբէ՛ պարոն Պէնօա - սօնի հետ Մէծ լիսի պանդոկը զնայ ,

Ֆրանսօա փողոցին մէջ ծառան հռելով ,  
մղելով ոգեսպառ Մէօրիսի պանդոկը կու-  
դայ , Հոն իւր լռապահ ընկերին նշաններ  
ընելով տիրոջը սենեակը կը հարցնէ : Պէ-  
նօա - սօն շատ մը եւեր կ'շարայարէ :

Գինեվաճառի տղան պանդոկապետին կը  
հարցնէ .

— Ո՞րն է միլօրտին սենեակը :

— Պանդոկին մէջ քսանի չափ Լօրտեր  
կան , ո՞րը կ'հարցնէք դուք :

— Այս ծառային տէրը կ'փնտռեմ , ըստ  
ֆրանսօա Պէնօան ցուցնելով :

Պանդոկապետը Պէնօան աչքէ անցնելով .

— Երբէք այդպիսի մէկը տեսած չեմ ,  
ըստ :

Ֆրանսօա կատղած և պտտելէ ձանձրա-  
ցած առջեւը ձգեց Պէնօան և առանց աչ-  
քէն հեռացնելու նորէն խանութ վերա-  
դարձաւ :

Խանութպանը շատ դայրացաւ Ֆրանսօաի  
դէմ և սկսաւ դաւաճանէ մը խարուած ըւ-  
լալը իմանալու նաև ըսելու թէ ինչպէս ա-  
մէն տեղ նոյնպէս անդդիոյ մէջ ալ գողեր

կան : Հուսկ ուրեմն , ճշմարտութիւնը երեւան հանելու համար անդղիերէն գիտցող պարոնին մէկը կանչեց . բայց ի զուր աշխատեցին գաղղիերէն և անդղիերէն հարցումներով ծառայի բերնեն տեղեկութիւն մ'առնուլ . զի նա իր էսերէն զատ ուրիշ խօսք չ'էր գիտեր :

Գինեվաճառը երր կ'ուղէր Պէնօան բանտարկել , յանկարծ գնդապետ մը խանութէն ներս մտաւ : Պէնօա , գնդապետ Մօրանվալը տեսածին պէս բացաւ իր լեզուն , գոչեց լալով և նորա ոտքը ինկաւ :

Գնդապետ Մօրանվալ , իր գինեվաճառ բարեկամը այցելելու եկած էր : Վաճառականը արկածը պատմելով ստակը կը պահնջէր . գնդապետը որ կ'յուսար իր քեռորդիէն այսպիսի բան մը , Պէնօաի համար երաշխաւոր ըլլալով , գինիի ստակը վճարեց , և իր ծառային հետ միատեղ դուրս ելաւ :

ԳԼՈՒԽ ՃԳ.

ԴԱՐՁԵԱԼ ԽԵՆԹՈՒԹԻՒՆ ՄԸ

Մեր երիտասարդ պարոնները, Պէհոան  
և իրենց պարտատէրները մօռնալով, եր-  
կու գեռատի և դեղանի աղջկանց սեղա-  
նակցութեամբ զիրենք վերջին ծայր դուար-  
ճութեան և բերկրութեան անձնատուր ը-  
րած էին, կ'երգէին, կ'ինդային և ամէն  
իրենց բերնին եկածը զուրցելով, մերթ ընդ-  
մերթ իրենց սիրելեաց երեսը համբոյրներ  
կ'տպէին. բայց ոչ աւելի ինչ։ Զի նորատի  
կանայք՝ երիտասարդաց յանդուղն ձեռ-  
քերը յետս կ'մղէին։

Ինչպէս որ զինեվաճառը միլօրտին ըսած  
էր, շամփանեայի խիցերը ձեղունը կ'ցատ-  
քէին, զինին գաւաթներու մէջ կ'փրփրէր  
և արդէն բորբոքած սրտերը ըմպելեաց ազ-  
դու զօրութենէն ալ աւելի տաքնալու վր-  
բայ էր, երբոր դրան շատ մը սաստիկ հար-  
ուածներ կիւսթավի Բաքոսական մէկ երգը  
ընդմիջեցին։ Երիտասարդք, ապշած իրար

նայեցան . և օրիորդք սոցա անհանդստութեան պատճառը իրենց աչքերէն դուշակելու ջանացին : Դուռը երկրորդ անդամ զարնուեցաւ :

— Պարոններ , բայս օրիորդ Ախ , չէք լսեր :

— Ապաքէն կ'լսեմք , բայց չ'եմք դիտեր թէ պատասխան տալու է , տարաժամ այցելութիւն մ'է աս :

— Ա՛հ , հասկցայ ես , կնիկ մ'ըլլալու է որ պարոնները տեսնելու եկած է : Ինչ որ ալ ըլլայ , ես պիտի բանամ դուռը . նայինք դոնէ գեղեցիկ է այս վախ պատճառող կինը :

Օրիորդ Լիդ , որ շատ հետաքրքիր էր . կիւսթավի և Օլիվիէի աղաչանացը հակառակ գնաց դուռը բանալու :

Այս միջոցիս , բարձրաձայն հայհոյութիւն մը մինչեւ սեղան լսուեցաւ . փոքր աղջիկը փոխեց իր դիտաւորութիւնը եւ դողդալով դէպ ի կիւսթավ ետ դարձաւ :

— Ա՛հ , Աստուած իմ , ծեր գնդապետի ձայնն է , ես աղէկ կ'ճանչնամ անոք ձայնը :

— Ա՛հ , աս առառ զիս փողոցը տեսած ըլլալու է , ի՞նչ ընենք հիմա Օլիվիէ :

— Աւզածին չափ թող զարնէ չենք բանար :

— Քեռինիդ այնչափ գէշ մարդ է որ ,  
ըսաւ փոքրիկ դրացուհին :

— Ահ , տիկին հոգս չէ , բայց զիս բիրտ  
եւ տգեղ աղջկան մը հետ ամուսնացնել  
կուզէ : Կ'լսէ՞ք ինչպէս ուժդին կը զարնէ  
դուռը . մտիկ ընենք , կարծեմ կ'խօսի :

— Պիտի բանաք , պարոն չարաճնիներ ,  
եթէ ոչ դուռը պիտի խորտակեմ :

— Ահ , Աստուած իմ , ըսածին պէս կ'ը-  
նէ , ըսաւ Լիզ գնդապետէն պահուելու  
համար սենեկին մէջ յարմար տեղ մը փընտ-  
ռելով : Կիւսթավ ճակատը կը շփէր և իր  
քեռւոյն ձեռքէն աղատելու համար հը-  
նարք մը կ'որոնէր . Փոքր դրացուհին դըն-  
դապետին ձայնէն կ'դողար որմէ այնչափ  
կը վախնային իր ընկերները . իսկ Օլիվիէ  
միտրը ամփոփելու համար անդադար դա-  
ւախները կ'պարպէր :

— Վերջապէս ասկէ ուրիշ ճար չկայ ,  
պիտի պառկիմ , ըսաւ կիւսթավ թիկնոցը ,  
բաճկոնը և վզնոցը հանելով :

— Մեր առջեւը ասանկ պառկիլ , ի՞նչ  
խայտառակ բան :

— Տիկիններ , այսպիսի պարագայի մը  
մէջ . տղայութիւնը ստակ չըներ , ասկէ ի  
զատ ձեզի յարդանք ընելու համար վար-  
տիքս չ'հանեցի :

— Հիմա ասանկ պարապ խօսքերուն տե-  
ղը չկայ , ըստ Օլիվիէ , ի՞նչ է միտքդ  
նայինք :

— Իրը թէ ես երեկուընէ ի վեր ան-  
կողնոյ մէջ ծանը հիւանդ եղեր եմ , դուն  
ալ զիս կ'հոգաս :

— Լաւ հասկցայ . բայց այս տիկինները  
ինչ ընենք :

— Զանոնք ալ տեղ մը պահելու է :

— Այո՛ , բայց ո՞ւր . այնշափ մեծ դա-  
րան չկայ : Հա՛ , աղէկ միտքս եկաւ , ճե-  
միշը կ'պահենք : Եկէք տիկիններ , երկուք-  
նիդ ալ հոս կ'ողմիք :

— Այ , ըստ դրացուհին . ի՞նչ ընենք  
ճեմիշին մէջ , հոտէն կ'խղդուինք :

— Ինձի համար հոգ չէ , ըստ Լիզ , ես  
կամաւ կ'երթամ , զի արդէն գնդապետին  
գալուստը խիթ պատճառեց ինձի :

— Տիկիններ կ'աղաչենք , ասիկա երկայն  
ատենուան համար չէ :

— Օ՞ն , քանի որ ստիպողական է , ճե-

միշը մանանկք . բայց դոնէ , պարսն Օլիվիէ  
շիշ մը նարդոս տուր մեզի :

— Առէք տիկին , ահաւասիկ :

Երկու նորատի կիներ , կիւսթավին ան-  
կողնոյն ետևը գտնուող ճեմիշին մէջ պահ-  
ութեցան : Կիւսթավ՝ աչքերուն վրայ բամ.  
պակէ գտակ մ'անցուցած և վերմակին տակ  
ծածկուած ժամանակ , Օլիվիէ կրցածին  
շափ շուտով կերակուրի մնացորդները եւ  
պնակները թէ անկողնոյն տակ և թէ սե-  
նեկին մէկ անկիւնը վերցնելով , ձեռքը  
թաշկինակ մ'առաւ և խիստ յուզեալ դէմ.  
քով մը դուռը բացաւ :

— ԱՇ , վերջապէս կրցաք որոշում տալ  
դուռը բանալու այնպէս չէ<sup>շ</sup> . պարսն դի-  
տէք թէ որչափ անպատեհ բան է ասանկ  
երկայն ժամանակ դուռը չբանալ :

— Պ. գնդապետ դուք աղատ էիր դը-  
րան առջեւ չսպասել :

— Միթէ կ'կարծէիք որ կ'առնեմ կ'բա-  
լեմ . քանի որ ճանչցուցի ինքնինքս

— Ես ալ ասոր համար չուզեցի բանալ :

— Ի՞նչ համարձակութեամբ :

— Զեր դութը չշարժելու համար :

— Թողէք այժմ այդ բարբաջանքը . քեռ-  
որդիս ուր է նայիմ :

— Լուցէք , կ'աղաշեմ պարոն կամաց  
խօսեցէք :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք , ես իմ քեռորդիս  
տեսնալ կ'ուզեմ :

— Պիտի տեսնաք հիմա Պ . գնդապետ .  
երկրորդ սենեակը եկէք , և կ'աղաշեմ ու-  
քերնուդ ծայրովը քալեցէք :

— Կ'ծաղրէք զիս , պարոն Օխվէէ :

— Ա՛հ , պարոն , ծաղրելու սիրտ ու-  
նիմ . սա խեղճ կիւսմավը , եկէք պա-  
րոն գնդապետ տեսէք թէ ի՞նչ վիճակի  
մէջ է :

Գնդապետը անկողոյն քով մօտեցաւ .  
որուն մէջ կիւսմավ երեսը չոր թուզով շը-  
փած էր , որպես զի դեղին և ահռելի ըլ-  
լոյ դէմքը : Օխվէէ կիւսմավին ծեփուած  
երեսը տեսնելով , խողալէ կ'լժալանար եւ  
զինքը զսպելու կ'ջանար :

— Ի՞նչ է հիւանդութիւնը , ըսաւ զըն-  
դապետը քիչ մը թերահաւատ դիմօք կիւս-  
մավը քննելով :

— Հիւանդութիւնը , պարոն գնդապետ ,  
ըղեղի ջերմութիւն կամ տենդ մ'է որ կ'ե-

ըեւայ թէ շատ ժանտահոտ և վնասակար պիտի լինի :

— Ուրեմն իր տենդը բուժելո՞ւ հսմար էր որ այս առառու անդղիացիի հաղուստով ծպտած գինի կորզելու ելաք :

— Բնաւ չեմ ընդունիր այդպիսի բան մը :

— Աղէ՛, պարոն, այլ եւս չ'եմ հաւատար ձեր խօսքերուն : Հիւանդի մը շամբանեա՞ կ'տան :

— Ո՞չ պարոն . բարեկամօ հողալու զօրութիւն ստանալու համար անիկա ես խըմեցի :

— Սա խեղճ Պէնօան ինչու հոն թողուցիք, եթէ ես չ'համնէի տղան պիտի բանտարկէին :

— Պարոն դնդապետ, Սուրբ Վէնստն տը Բօլ առանց յանցաւոր ըլլալու թիապարտ եղաւ . Օրֆէ իր կնոջը համար գեհէն դընաց . պարոն Պէնօան ալ իր տիրոջը համար չը կրնար բանտարկուիլ :

— Օրֆէ և Վէնստն տը Բօլ պէտք չ'է, պարոն Օլիվիէ դուք էք որ իմ քեռորդիս դլիւէ կ'հանէք . բայց ինչո՞ւ չ'խօսիր :

— Պարոն, ջերմէն ետքը վաղանցուկ թմրութեան մը մէջ կ'իյնայ :

— Ուրեմն սա երեսին վրայի բանե՞րը  
ինչ է :

— Ոչինչ պարոն , տենդի արդիւնքն է :  
— Բժիշկ մը կանչեցի՞ք :  
— Ո՛չ տակաւին :  
— Ի՞նչու , քանի որ բարեկամնիդ հիւ-  
անդ է :

— Պարոն գնդապետ ստակ ուր է . բը-  
ժըշկին պատուիրած դեղերը ի՞նչով պիտի  
առնենք :

— Շատ բան , ապրելու համար ստակ  
չունենալ . Ամօթ չէ ձեզի , տէրութեան մէկ  
պաշտօնատարը պիտի ըլլաք :

— Պարոն գնդապետ հիմա անոնք առ  
անկուտի են :

— Գացէք պարոն Օլիվիէ , բժիշկ մը  
կանչեցէք :

— Բժիշկ մը , և ինչու համար :  
— Նորօրինակ հարցում , դացէք պա-  
րոն , հասկնալ կ'ուզեմ թէ նայինք քեռոր-  
դիս ձեր ըսածին պէս հիւանդ է : Ահ ,  
ասո՞նք ինչ են , ի՞նչ անկարգութիւն . սե-  
ղանի տակ պնակներ , աստ և անդ զգեստ-  
ներ , խիցեր :

— Կատու մունիմ , ան ըրեր է :

— Աս սեկէ շմբրոցը ի՞նչ է , ձեր կա-  
տուին համար աթոռին տակը դրիք :

— ԱՇ , Աստուած իմ , վերջապէս դտայ ,  
իմ լուացարարիս է ասիկա , աս առտու-  
դրեթէ երկու ժամ փնտռեց . խեղճ ֆան-  
շեթ , կ'կարծէր թէ փողոցը ձգած է :

— Զեր լուացարարը պողովատէ կղպան-  
.քով շմբրո՞ց կ'դործածէ :

— Այո՝ պարոն դնդապետ :

— Լաւ : Շուտ ըրէք պարոն , դացէք .  
ձեր բացակայութեանը ատեն ես կ'հսկեմ  
.քեռորդիս :

— Հարկ չկայ , պարոն , նա արդէն կը  
քնանայ :

— Բժիշկը պիտի կանչե՞ս դուն :

Գնդապետը կ'զայրանար և դիտաւորու-  
թիւնը փոխելու ճար չկար :

— Կիւոթավ և մեր տիկինները , ըսաւ  
Օլիվիէ մտքէն , զիրենք թող ազատեն . իսկ  
ես կարելի եղածին չափ ըրի , ալ ինքզինքս  
կ'ազատեմ :

Օլիվիէի կեղծ և ծիծաղաշարժ խօսքե-  
րուն վրայ մեր առժամանակեայ հիւանդը  
բարձրաձայն քրքիջ մը փրցնելով , սաւանը  
ու վերմակը պիտի նետէր . բայց իր քեռ-

ւոյն մեկնիլը յուսալով , հաղիւ հազ կ'զըս-  
պէր ինրզինքը . վախնալով միանգամայն թէ  
աղջիկները աղմուկ մը կ'հանեն ճեմիշին մէ-  
ջէն : Եւր Օլիվիէի երթալը և դնդապետին  
իր անկողնոյն քով նստիլը զդաց , այլէ եւս  
քաջութիւնը կորոյս , և քեռոյն ուշադրու-  
թիւնը գրաւելու և զութը շարժելու հա-  
մար ցաւազին հեծում մ'արձկեց :

— Դո՞ւք էք , քեռիդ իմ :

— Այո , քեռորդիս . կարծեմ ձեր ու-  
րախութեան արդելք եղայ , բայց ձեր ծա-  
ռան է պատճառը :

— Ա՛հ , Պէնօան ըստ ձեղի :

— Այո' , իր լուութեան համար քսան  
գաւազանի հարուած ուտելէն վերջը : Պա-  
րոն , կ'երեւայ թէ զառանցու մնիդ անցաւ :

— Քիչ մը աղէկ եմ հիմա . վաղը ե-  
թէ քալելու ոյժ ունենամ ձեր տունը պի-  
տի գամ :

— Ո՛չ պարոն , այս իրիկուն պիտի տա-  
նիմ զձեղ , հետի կամ կառքով : Ես ձեր  
կեղծ հիւանդութեանց չեմ կրնար հա-  
ւատ ընծայել , և . . . ա՛յ , այս գռնչիւնը  
ինչ է :

— Բան մը չէ քեռի , Օլիվիէի չնիկն է :

— Ենիկ, կատու, ուրեմն ամէն անտառուն հոս կայ :

— Բարեկամն շատ կ'սիրէ կենդանիները :

— Ե՞նչ մեծ դռնչիւն կ'հանէ ձեր շնիկը :

— Խեղճ կենդանին կաթը շատկեկ խմելուն համար փորհար եղեր է :

— Բայց ո՞ւր է, քու անկողնոյդ տա՞կն է . գարշահոտութիւնը մինչեւ հոս կ'գայ :

— Քիչ մը շաքար այրեցէք, քեռիդ իմ :

— Բարեկամդ գեռ չ'եկաւ, կարծեմ գալիք ալ չ'ունի, օ՞ն, կիւսթավ հագուէ և երթանք :

— Հաւատացէք թէ բնաւ քալելու ոյժ չունիմ :

— Բաքէ, տս ինչ աղմաւկ է, շնիկի դործ չէ աս . ճեմիշին մէջ նայիմ :

Գնդապետը ոտք ելածին պէս կիւսթավ քեռոյն դէմ կենալու համար անկողնոյն մէջ նստաւ :

— Ա՞ս ինչ է կիւսթավ, հիւանդը տափատով կ'պառկի, կարծեմ ժամանակ չունեցաք զայն հանելու :

Պարոն Մորանվալ խարերայութիւնը երեւան հանելու համար հակառակ իր քեռորդոյն պազատանաց ծեմիշը բանալու վա-

զեց, բայց գուռը ներսէն դոցուած էր :

— Կ'երեւայ թէ, ըստ գնդապետը, Օլիվիէի լուացարար կինը ներու իր շմբռոցը կ'փնտռէ . ես ալ առանց այս ֆանչէթը տեսնելու ասկէ չպիտի մեկնիմ:

Այս սպառնալիքը յոյժ դարհուրեց երկու գեռահաս տիկինները : Օրիորդ Լիդ կը փսխէր և իր խիթը կ'հանդարտէր, միանդամայն իր գուրս ելնել ուզող ընկերը կեցընելու կը ջանար . գնդապետին ահոելի դէմքը, և նորա ցասումէն յառաջ գալիք վտանգները ստուարացնելով : Սակայն եւ այնպէս երկուքն ալ անհանդիստ էին . երբ որ կիւսթավ նոցա անհանդստութիւնը գուշակելով, վեհանձնաբար զոհեց ինքզինքը . անկողնէն ելաւ և մէկ վայրկենի մէջ հագաւ :

— Պատրաստ եմ ձեզի հետեւելու, քեռիդ իմ :

— Ահ, խաբերայ, որչափ ալ շուտ անցաւ հիւանդութիւնդ :

— Քեռիդ իմ, կ'տեսնաք թէ այդ երկու անմեղ կանանց ամօթ չպատճառելու համար զանձս վտանգի ենթարկեցի :

— Ասկէ մեկնելէ յառաջ կ'ուզէի աղէկ մը մորակել այդ անմեղ լկտիները, բայց

այս անգամ՝ կը ներեմ. ո՞ն, քալէ նայիմ  
պարոն :

Կիւսթավ, վեղոյրը առաւ եւ ճեմիշին  
վրայ վերջին նայուածք մ'ալ ձգելով, քեռ-  
ւոյն հետ միատեղ դուրս ելաւ :



## ԳԼՈՒԽ ՃԴ.

### ԱՆԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆ

Ահաւասիկ կիւսթավ իր քեռւոյն տունը  
վերադարձաւ : Նա իր անցեալ և ներկայ  
վարքին համար սաստիկ և խօստ յանդի-  
մանութիւն մը կ'յուսար : Բայց ո՛չ . գըն-  
դապետը բան մը չ'ըսաւ իր քեռորդւոյն :

Ուսկից յառաջ կ'դար արդեօք, նորա  
այս մեղմութիւնը . թերեւս ո՛ դիտէ անօ-  
դուտ կը համարէր խրատելը . կամ կ'վախ-  
նար թէ յոյժ բարկանալովը իր յօդացաւու-  
թիւնը նորէն կ'սկսի : Կիւսթավ իր քեռւոյն  
ամոքման և ներողամութեանը փոխարէն  
որոշեց ժուժկալ և համեստ լինիլ, և ասոր

համար օրինաւոր վարք մ'ունենալով ութ  
օր քեռւոյն տունը մնաց :

Գնդապետը կ'դիտէր իր քեռորդին և կ'ը-  
սէր թէ կիւսթավի նման երիտասարդ մը կը  
խոնարհի հեզութեան և քաղցրութեան առ-  
ջեւ . սակայն կ'ապստամշի և կ'հեստի ընդ-  
դէմ բռնութեան և խստութեան : Ուրեմն  
քաղցրաբարոյ ը!լալ կ'ուղեմ և ոչ թէ սաս-  
տարար . կիւսթավ անզգամ երիտասարդ  
մ'է . բայց միանդամայն խանդաղատելի և  
դիրազգայ . նա կիները կ'սիրէ , ես ալ  
սիրեցի ատենօք , նորէն հիմա ալ պիտի սի-  
րեմ եթէ յօդացաւութիւնս թոյլ տայ ին-  
ծի : Ուրիշները կշտամբելէ յառաջ ի յուշ  
ածեմք մեր ըրածները : Զանամք միմիայն  
որ կիւսթավ չար ընկերներ չ'ունենայ , զի  
այս է կորուստ երիտասարդաց . ուստի ա-  
մասնացնենք զայն՝ եթէ կարելի է : Քանզի  
ամուսնութիւնը , անզգամութեան և ցան-  
կութեան շիրիմն է :

Կիւսթավ այս չափաւորութենէ և ժուժ-  
կալութենէ նեղանալու կ'սկսէր , ուստի իր  
ձանձրոյթը գորատելու համար առտու մը  
իր քեռւոյն քովը գնաց :

— Կիւսթավ , ըստ գնդապետը , կար-

ծեմ քիչ մը ճամբու եկար , ուստի ըստ նա .  
խորդ գաղափարիս , ամուսնացնել կ'ուզեմ  
զքեզ : Եւ այս անգամ քեզի պիտի թռա  
զում ընտրութիւնը : Վեզի հետ ազնուական  
և պարկեշտ ընտանիքներու մէջ կ'երթանք ,  
հոն գեղեցիկ օրիորդներ կ'տեսնաս ի հարկէ  
անսնցմէ մէկը կ'սիրես :

— Նատ աղէկ , քեռիդ իմ , կ'ընդունիմ:  
Ալ այնուհետեւ կիւսթավ սկսաւ քեռ .  
ոյն զացած տեղերը երթալ . ուր արդա .  
րեւ շատ գեղանի օրիորդներ կ'տեսնար ,  
բայց չէր ուզեր անսնցմէ մին կին առնուլ  
իրեն , իւրաքանչիւրին վրայ ըստգտանք մը  
դնելով :

— Կիւսթավ , շիտակը դուն ամուսնա .  
նալիք չ'ունիս , այն բոլոր ազնիւ կիները  
քծնող կ'կարծես :

— Վեռիդ իմ , թէ և կայ բացառու .  
թիւններ , բայց ընդհանրապէս բոլոր կա .  
նոյք պարաները կ'սիրեն : Սակայն և այնպէս  
խիստ բնական և ներելի է առէկա . զի մէք  
էրիկը փոխանակ առարինութեան և ար .  
ժանաւորութեան՝ պարանք և վայելչութիւն  
կը փնտռենք ի նոցանէ : Ուստի անոնք ալ  
իրենց գարնան ժամանակէն մինչեւ իրենց

ձմեռք կը ջանան հաճոյելի երեւիլ :

— Իրաւունք ունին, զի մեք ալ մեր կենաց չորս եղանակին մէջ կ'խարենք զնոսաասոր ի՞նչ անուն պիտի տաս :

— Ասիկա հրապուրանք է, քեռիդ իմ :

— Հրապուրանք, երբ դու կը զառածանուիս միահաղոյն վեց սիրահարի, երբ դու կ'փաղաքշես ի միասին մօրը և աղջկան, տիկնոջ և հարճին, մարքիզուհւոյն և նաժշտին, ասիկա հրապուրանք է. ասոր ցովութիւն և անառակութիւն կ'ըսուի : Ուրեմն զքեղ կանանց պարսաւադէտը կամ բանակրկիտը մի՛ համարիր, եւ երջանիկ սեպէ ինքզինքդ թէ նոքա տակաւին կ'բարեհաճին քո բաջաղանքդ մտիկ ընելու : Ինչ և իցէ պիտի կարգուիս, դուն ան քսէ ինծի . այս կամ ոչ :

— Այս քեռիդ իմ, երբ որ անթերի աղջիկ մը գտնամ :

— Կիւսթա՛վ, բնութեան մէջ կատարելութիւն չկայ . մեք՝ համայն մարդկային ազգս, թերութեամբ աշխարհ կ'գանք, զոր դաստիարակութիւնը միայն կրնայ տկարացնել և արմատախիլ առնել : Ես չեմ համամիտ այն անձանց որք կ'ըսեն թէ «Մար-

Դըս գառնուկի պէս անմեղ և մեզրի պէս  
քաղցը կ'ծնի : Եթէ ասանկ ըլլար, միթէ  
երկու տարեկան տղու մը ոտքերը դոփելը,  
և բարկութենէ նուաղիլը կը տեսնուէ՞ր :  
Միթէ մօրը գգուա՞նքն է, կամ ստնտուին  
խնա՞մքն է, դեռ չորս տարեկան տղայ մը  
ստախօս, գող, շատակեր եւ յամառ ը-  
նողը : Այո՛ քեռորդիդ իմ, մեք թերու-  
թեամբք կը ծնինք, որոնք մեծնալով մո-  
լութիւններ կ'ըլլան : Բայց և այնպէս եթէ  
իմաստութիւնը ստէպ կը սանձահարէ ըզ-  
մեզ, մարդկային տկարամտութիւնն ալ կը  
մեղկացնէ երբեմն, հետեւարար անկարելի  
է անթերի լինիլ : Ուր արդեօք կընամք  
գտնալ բարի և իրենց կիրքերը զսպող մար-  
դիկ : Աշխարհիս ստեղծումէն ի վեր, չեմ  
կընար գտնալ այն ոսկեղէն դարը որուն  
վրայ կը խօսին պատմագիրք : Աշխարհիս մէջ  
առաջին կինը իւր էրիկը խարեց և առա-  
ջին զաւակը իւր եղբայրը սպաննեց . կա-  
յենի և Աբելի սերունդք և Նոյի զաւակ-  
ները հանապազ ջարդեցին զմիմեանս : Արդ-  
եօք Նինուէի և Բարելոնի մէջ վնտուլու-  
է ոսկեղէն դարը : Միթէ Հռովմայեցւոց  
քո՞վ գանալու ենք կատարելութիւնը . նոցա

Հաստիւկապետութիւնը չէ, որ յառաջ բերաւ կոտորածներ, յեղափոխութիւններ, մատնութիւններ, դաւաճանութիւններ, ըստըրկութիւններ: Ուրեմն Հէնրի շորորդի ժամանակը միթէ սոկեդար էր, ուր ապրուտամբութիւնը, քաղաքական պատերազմները կը վոդովէին զժողովուրգու: Այս բարեսիրա թագաւորէն յետոյ, ուր պիտի տեսնանք այն սոկեդէն դարը և այն կատարելութիւնը:

— Սիրելինդ իմ քեռի, Սողոմոն իմաստունը մոռցաք:

— Ահ, այդպիսի իմաստուն մը ըու գործիդ կ'դայ հա՛, երեք հարիւր կին և չորս հարիւր հարճ ունենալ. բարէ՛, ի՞նչ մարդէ եղեր այս Սողոմոնը: Ահաւասիկ կիւսթավ, միաքս տարիու այնպիսի տեղերու, ուր ես երթաւ չէի ուզեր, դու կ'ուզես անթերի կին մը, ուրեմն չպիտի կընաս ամսւսնանալ:

— Ներսողութիւն քեռիդ իմ, ամսւսնանալու համար բաւական է որ աղջկան մը սիրահարուիմ: Այն որ մեք կ'սիրեմք, անթերի է մեր աչքին համար:

— Զանա՛ ուրեմն սիրահար մ' ունենա-

լու , ասիկայ շատ գիւրին է քեզի համար :  
— Ահ , քեռիդ իմ , տարփածու մը զըտ-  
նալ գիւրին է , բայց կին մը գտնալ . . .  
— Միթէ տարփածու մը կին մը չէ ,  
— Ստուգիւ , բայց . . .  
— Օ՞ն ուրեմն , կիւսթավ , քեզի պէս  
անառակութեամբ կեանք վարող երիտա-  
սարդ մը , ի՞նչ իրաւամբ դժուարութիւն  
ցոյց կտայ կին մընտրելու : Խեղճ քեռ-  
որդիդ իմ , եթէ կսիկդ ուզէ , կընայ իդե-  
րեւ հանել քո այդ զգուշութիւններդ :



## ԳԼՈՒԽ ԺԵ

### ՃԵՄԱՐԻՏ ՍԵՐԵ

իրիկուն մը կիւսթավ տուն վերագար-  
ձին գրան առջեւ կին մը տեսաւ . բայց ա-  
ռանց կարեորութիւն տալու , ներս կ'մըտ-  
նար , երբ ետեւէն խիստ ծանօթ ձայն մը  
եկաւ ականջին .

— Աստուած իմ, դու ես, Սիւզօն :  
— Այու պարոն, ես եմ, ձեզ տեսնելու  
ելայ :

— Սիրելիդ իմ Սիւզօն, բայց ո՞րու հետ  
եկար հոս, ծնողքդ ի՞նչ պիտի ընեն հիմա :

— Ես անոնց բան մը չըսի : Երէկ, կի-  
րակի օրուան համար որոշեցին մեր հարս-  
նիքը Նիգօլայի հետ, ես ալ, գիտէք որ,  
բնաւ չ'սիրեցի զնա . ուստի այս առտու-  
փախայ :

— Ի՞նչպէս դտար իմ տունս :  
— Պ. Պէնօան իսծի փողոցը և թիւը ը-  
սած էր : Միթէ բարկացա՞ք իմ դալուս :  
— Խեղճ Սիւզօն, քեզի բարկանալ կ'րւ-  
լայ . բայց . . . ո՞ւր պիտի պառկիս, քեզի  
սենեակ պէտք է :

— Ես ձեր սենեակը կը պառկիմ :  
— Եթէ մինակ ըլլայի ասիկա կարելի էր .  
բայց ես քեռւոյս տունը կ'ընակիմ :  
— Ա՛հ, պարօն կիւսթավ, զիս չէք սի-  
րեր ալ, ես կը հասկնամ, կը վանտէք զիս  
ձեր բովէն :

— Մի՛ լար Սիւզօն, մի՛ լար . կրնա՞մ վը-  
ոընտել զքեզ, ո՞չ սիրելիդ իմ: Բայց դու  
տղայութիւն ըրեր ես ծնողքդ ձգելով, սա-

կայն քանի որ ես պատճառ եղայ ասոր ,  
շեմ՝ կրնար թողուլ զքեղ :

— Պարո՞ն , ինչ որ կ'ուզէք ըրէք , բա-  
ւական է որ ես ձեր քովը ըլլամ :

— Ուրեմն , ես հիմա դուռը կ'զարնեմ ,  
և կիսարաց կ'թողում , դռնապանը խօսքի  
բռնած ատեն դու ներս կը սպրդիս :

Կիւսթավ կը վախնար բարապանէն , որ  
Պէնօափ հայրն էր , և անոր պէս ալ բժա-  
միտ . Մեր երիտասարդը դուռը զարկաւ և  
ներս մտաւ . դռնապանը ըստ թէ փոքք  
աղջիկ մ'եկաւ զինքը հարցուց : Այս սուզ  
միջոցին , Սիւզօն ներս մտաւ և մինչեւ դա-  
ւիժ սպրդեցաւ : Կիւսթավ երկրորդ յարկը  
ելնելով , իր սենեկին մէջ լոյս տեսաւ : Սիւ-  
զօնը մէկ գսափկոն ևս վիր հանեց , և ինքը  
իր սենեակը մտաւ : Պէնօան աթոռի մը վր-  
րայ քնացած էր : Մեր երիտասարդը այս-  
պէս խօրհեցաւ :

— Հիմա այս տղան արթնցածին պէս ,  
վերի յարկը իր սենեակը պիտի երթայ ,  
բնական է որ Սիւզօնը պիտի տեսնայ . ուս-  
տի պէտք է զայն վար իջեցնել :

Ծառան յանկարծ արթնցաւ :

— Պէնօա , քիչ մ'ուտելլիք բեր ինծի :

Ցղան վար իջածին պէս, Սիւզօն վերի յարկէն երիտասարդին սենեակը մտաւ և պահուեցաւ: Պէսօա հաւ մը և շիշ մը զինիով վերադարձաւ: Եւ որովհետեւ Սիւզօն ներսը մութին կ'խարիսափէր, յանկարծ աթռուի մը տապալման ձայնը ելաւ:

— Պարո՞ն լսեցի՞ք, ըստաւ ծառան գոզալով, գող կայ ձեր սենեկին մէջ:

— Գնա՛, ապուշ, երազ կ'տեսնաս, քեռույս շունը ըլլալու է:

— Ո՛հ, Ֆէտեւ շատոնց իր բոյնը գնաց. ասիկա անպատճառ գող է, կ'երթամ ատըրճանակներս կը լեցնեմ և հայրս կ'արթընցնեմ:

— Ատանկ բան մը չընես, Պէսօա, ես գողէն չեմ վախնար:

Վերջապէս տղան գնաց, եւ Կիւսթավ Սիւզօնի հետ մնալով ազատօրէն կրցաւ գրկել զնա. Փոքրիկը զիջու գգուել տալու զինքը, կերակուր կերած ատեն, Սիւզօն պատմեց իր ճամբորդութիւնը, որ մինչեւ Փարիզ հետիւտս եկած էր, առանց խոնջութիւն զգալու, քանզի սէրը՝ կ'կըրկնապատկէր իր քաջութիւնը և ոյժը:

— Խեղճ փոքրիկ, կ'ըսէր Կիւսթավ մտքէն,

ո՞հ , ուրեմն այս աղջիկը շատ կ'սիրէ զիս : Ո՛գիտէ , թերեւս այսպէս կ'ուզէ ճակատագիրս , օ՞ն , վայելենք զներկայն և ապագային համար անհաւգիստ չլինիմք :

Դեռատի օրիորդը պառկեցաւ իր տարփածուին գիրկը , որուն համար կ'տոշորէր :

— Քեռաւոյս բարկութիւնը ահռելի պիտի լինի , եթէ տեսնայ սենեկիս մէջ գեղջկուհի մը . ուրեմն ի՞նչ ընելու է . Սիւզօնը եւտ խրկելու է իր ծնողաց տունը . այն օրիորդը որ այնչափ սիրուն , զգօն և գեղանի է . ո՞ր սիրտը կընայ կամաւ մերժելնանանքինակ դանձ մը : Ո՞չ , պէտք է պահել զնա որչափ որ մարթ է :



## ԳԼՈՒԽ ՃԶ.

### ՏԻՐԱՌԻԹ ՕՐ ՄԵ

Կիւսթավ արթնցած ատեն , գեռ կ'քընանար Սիւզօն , յանկարծ դուռը դարնը-ուեցաւ :

— Թ՞վէ ան , հարցուց կամացուկ մը :

— Ես եմ, պարոն :

— Ի՞նչ կ'ուզես, Պէնօա :

— Տէր իմ, դուք որ միշտ կանուխ կ'ել-  
նէիք, այսօր ժամը տասն է, դեռ չ'ելաք.  
կարծեցի թէ գողերը բան մ' լրին ձեղի-  
ասկէ ի զատ պարոն Մօրանվալ նախաճաշի  
կ'սպասէ զձեզ :

— Լաւ, դուն գնայ, ես հիմա կ'գամ' :  
Պէնօան հեռացաւ :

— Ի՞նչ ընեմ հիմա, կ'ըսէր Կիւսթավ  
հագնելով, քեռիս զիս կ'սպասէ պէտք է  
քովը երթալ . Բայց Սիւզօնը ինչ պիտի ըլ-  
լայ, հարկաւ մինչեւ իրիկուն չ'պիտի քնա-  
նայ, պէտք է որ ճաշէ, ընթրէ, եթէ Պէ-  
նօա քիչ մը խորագէտ ըլլար, անոր կըր-  
նայի յանձնել այս գործը : Խիստ գժուա-  
րին է այս գերը, պէտք է սենեկիս զո-  
ուը գոցել և բանալին քովս պահել . ուրիշ  
ճար չ'կայ :

Կիւսթավ համբոյր մը քաղեց իր դեռա-  
տի բարեկամուհւոյն այտերեն, որ քաղց-  
րագէմ կ'քնանար : յետոյ գոցեց իր սեն-  
եակը բանալին զրադանը դրաւ և ճամբան  
իր ծառան տեսնելով .

Պէնօա՝ + բառաւ այդ եւս չ'պիտի մը տ

նաս իմ սենեակս , վասն զի երկու հատ ա-  
ղաւնիներ առած եմ կ' փախցնես դանոնք :

— Բայց ձեր անկողինը , պարո՞ն , միթէ  
աղաւնինե՞րը պիտի շտկեն դոյն :

— Ես ինքս կ' շտկեմ , նաև ասիկա մէկու  
մը չպիտի ըսես :

Կիւսթալ իր քեռւոյն քովը գնաց : Գըն-  
դապետը շքեղ կերպով հագուած էր . քեռ-  
որդին առջի բերան ուշադրութիւն չըրաւ ,  
բայց յետոյ զարմացաւ երբ լսեց թէ քե-  
ռին կ' հրամայէր իր կառքը պատրաստել .

— Գուրս պիտի ելլաք քեռիդ իմ :

— Այս , կիւսթավ , քեզի հետ :

— Ինձի հետ :

— Աչքերդ այնչափ մեծ բանալու բան  
մը չէ աս : Հիմա պէտք է որ ինձի ընկե-  
րանաս , օ՞ն :

Կիւսթավ դժգոհ եւ ակամայ քեռւոյն  
ընկերացաւ , բայց կ' յուսար որ նորէն շու-  
տով պիտի վերադառնայ : Երկուքն ալ  
կառքը հեծան . ձիերը քաղաքէն անցնելով ,  
քառարշաւ դէպի ի կ' թօալի կայտրանը կ' ըն-  
թանային :

— Բայց ի՞նչ կ' ընէք քեռիդ իմ , դի՞ւզը  
կ' տանիք դիւ :

— Առոր պէս բան մը , շատ զբօսեցուցիչ  
տեղ մը կ'տանիմ զքեղ : Բնդհակառակը ,  
չե՞ս կրնար զոհել օր մը ինձի համար :

— Ի՞նչպէս օր մը , յերեկոյի՞ն պիտի վե-  
րադառնամք :

— Թերեւս զիշերն ալ պարսն կրանսիերի  
տունը կ'անցնենք :

Կիւսմավ անձկութենէն և անհամբերու-  
թենէն՝ երկանիւ կառքէն դուրս ցատօնէլ  
կ'ուզէր , սակայն և այնպէս քանի մը խո-  
հական մտածումներ քիչ մը հանդարտե-  
ցուցին զնա : Նա չեր կրնար բարկացնել  
իր քեռին , ասկէ զատ , զինքը փողոցը նե-  
տելով , թերեւս կրնար վիրաւորիլ և Փա-  
րիզ չհասնիլ : Ուրեմն պէտք էր համբերել  
և պատեհ առթի մը սպասել , Պ. կրանսիերի  
տունէն խոյս տալու համար :

Գնդապետը , կ'պատմէր իր քեռորդւոյն  
պարօն կրանսիերի , իր հին բարեկամներէն  
և բանակի ընկերներէն մին բլալը , նորա  
քաջութիւնները : Սակայն կիւսմավ բան մը  
չեր լսեր իր քեռւոյն պատմաւթենէն , նա  
Ոիւզօնը միայն կը մոտածէր , որ անսուադ  
ոլիտի անցնէր զօրն ի բուն :

— Տակաւին շատ հեռո՞ւ է առւնը , ընդ-

մինեց կիւսթավ Պ. Մորանվալի պատմութիւնը :

— Բարե՛, միթէ այսպէս կարեւորութիւն կ'առա իմ արկածներուս :

— Բայց, քեռիդ իմ, պատերազմի դաշտը չենք հիմա :

— Կիւսթավ, չգիտեմ քեզի ինչ եղաւ այսօր :

— Քեռիդ իմ, կառքին մէջ երերաշէն սրունքներս կ'ցաւի :

— Եթէ ինձի պէս, մեռելներու և հոգեվարներու ներքեւ վիրաւորած մնայիր, յայնժամ այսպիսի փոքր ցաւերէն տրտունջ չէլը յայտներ : Օ՞ս, հանդարտէ, ահա եկանք :

Գիւղի գեղեցիկ տան մառջեւ կեցան :

Գնդապեաը, սրահին մէջ կիւսթավը իր բարեկամին ներկայեց, պարոն կրանսիէր մեծ յարգանք ըրաւ կիւսթավին, և որոնց այս վերջինը անմտագիր կերպով եւ զբաղեալ մտօք պատասխան տուաւ :

— Բարեկամգ իմ, ըստ գնդապեաը Պ. կրանսիէրի, կ'աղաչեմ ներեցէք իմ քեռորդւոյս, ևա երբեմն չգիտեր ըստոյ :

Այս գաւն կատակէն կատպելով չել ե~

րիտասսարդը , շրթունքները խածաւ , և ջանաց իր անհամբերութիւնը ամոքելու և իր սրտնեղութիւնը ձածկելու : Այս միջոցիս դեռատի կին մը սրահէն ներս մտաւ . նորա վայելավայըլ և պերճ կերպարանքը , զարմանագեղ և շքեղ գէմքը գնդապետի քեռորդւոյն ուշը գրաւեց :

— Ահաւասիկ իմ աղջիկս , ըստ Կրանսիէր , իմ սիրելի Էօժէնիս ձեզ կ'ներկայացնեմ :

Մարդ չուզեր տխմար և ապոշերեիլ գեղանի կնկան մը քոյլ , ըստ որում մեր երիտասարդը սեղեխ և խրախսալից եղաւ Պ. Կրանսիէրի դստեր առջեւ :

Հանդիսականք , ծաղկանց փունջեր կ'ներկայէին առ տիկին Էօժէնի Ֆօնպէլ :

— Քեռիդ իմ , որու համար է այս խրախունքը , հարցուց կիւսթալ :

— Տիկին Ֆօնպէլի համար , որ այրի է , տաս հաղար ոսկի եկամուտ ունի , ոչ միայն գեղեցիկ ոյլ նաև բարի և հանճարեղ կին մ'է :

Կիւսթալ խոյս տալու համար հնարք մը կ'որսնէր :

— Արդարեւ , կ'ըսէր մորքէն , շտու ան-

վայել բան մը պիտի լինի տմարդորէն դուրս  
ելլել, այնպիսի տունէ մը՝ ուր առաջին ան-  
գամ եկած եմ։ Կերակուրք ուտելէ յետոյ  
ժամադրութիւն մը կամ անհանգստութիւն  
մը կ'կեղծեմ, և կամ առանց տեսնուելու  
կ'փախչիմ։ Գիտեմ, քեռիս կ'զայրանայ ա-  
սոր, հոգս չէ, բայց տիկին ֆօնպէլ, պիտի  
ըսէ թէ ևս անկիրթ մ'եմ, թէ անհեղեղ  
մարդ մ'եմ։ Խիստ անախորժ է գեղեցիկ  
տիկինէ մը այսպէս դատուիլ։ Սակայն ինչ  
ոգուտ, փոքրիկ Սիւզոնս անօթի է. թէպէտ  
և սիրահար մը յուսով և յիշելով ալ կ'սնանի։

Եիւսթավ պարտիզին մէջ ժոռ գալով  
այսպէս կ'մտածէր, տիկին ֆօնպէլը տե-  
սաւ, մօտեցաւ անոր և ակամայ քանի մը  
յարգանք ուղեց։ Քանզի ճշմարիտ սէրը  
չմոռացուիր երբէր, բայց և այնպէս Պ.  
Իրանսիէրի դուսարը շատ հրապորիչ էր,  
տիկինը ժպտելով չուղեց ընդունիլ նորա  
ժամադրութիւնը։

— Ո՞չ պարոն, ըստ, դուք չպիտի թո-  
ղւոք դմեզ, դուք զանց պիտի ընէք ոյսօր  
ժամադրութիւն մը որ թէե յարդելի է ձեզի  
համար, սակայն այս զոհողութիւնը յոյժ  
երտիստապտրու կ'ընէ զմեզ։

Հիմա ի՞նչ պէտք է ըսել, գեղանի կընկան մը՝ որ զձեզ կ'հրաւիրէ այնչափ քաղցրութեամբ, կամ ի՞նչ ընելու է Սիւղօնը, որ իրեն համար զամենայն ինչ թողոց: Ո՞հ, ընթերցող, մի՛ կարծէք յժէ իմ՛ քաջս մտացածին էակ մը լինի, գրեթէ ամէն մարդ անոր կ'նմանին, մեք չեմք այն ժամանակին յորում մարդիկ կին մը միայն կ'ուրէին, կեցցե՞ն գաղղիացիք սիրոյ մէջ: Թողումք գերմանացիները որք հառաջին եւ ժուռ գան իրենց սիրուհեաց հետ: Ասդզիացիները, որք կախուին իրենց բարեկամուհեաց հետ: Հողանտացիները, որք իրենց կանանց քթին ծխախոտ տորոմեն իրը մեծարանք: Սպանիացիք, որք իրենց կեանքը ցայգանուագ տալով անցնեն: Ռուսիացիք, որք գաւազանի հարուածներով սիրահարութիւն ընեն: Սգոշիացիք, որք իրենց կիները ծախեն: Հնդիկք, որք տաս տարուաղջկան հետ կարգուին: Վերջապէս թողունք զիտալացիս, որք քաշեն իրենց երկրին վրայ երբեմն Սոդոմ Գոմորի կրակը. որ այժմ փոխանակ երկնքէն տեղալու, Վեղիւպի ծոցերէն կ'ելնէ: Թողումք, թողումք զայս ամենային, և մերագառնամք Խուսիթա-

վի . Նա բազմութեան հետ միատեղ կ'եր-  
թայ կանանչ չորեքկուսի վայրի մը՝ ուր սե-  
ղանը դրուած էր :

Սեղանի վրայ լոժ էնիի քով կ'գտնուի , և  
հետեւաբար ընթրիքը անոր երկարատեւ  
չժուիր :

Ճաշէն յետոյ , տիկին ֆօնպէլ , կիւսթա-  
վին ձեռքէն բռնելով ,

— Ես դիտեմ , բսաւ անոր , որ դուք  
շատ ընտիր ճաշակով կ'երգէք , եկէք , պա-  
րոն , խիստ զուարթօրէն պիտի անցնենք  
զայս գիշեր :

Մերժելու ճար չկար , ուստի հետեւե-  
ցաւ իսօմէնիին . երդեր և ուրիշ խիստ ըն-  
տիր տաղեր երգեցին . Տիկին ֆօնպէլի աչ-  
քերը հաճոյական նշան մը կ'արտայայտէին .  
Բայց ժամացոյցը տասը զարկաւ . կիւսթավ  
շտապաւ ոտք ելաւ , դաւիթը իջաւ , և ա-  
խոռէն ձին առնելով , առանց ասպատանի ,  
և առանց թամրի վրան հեծաւ , և խիստ  
աճապարանօք դէպ ի Փարփղ ուղղեց : Հա-  
զիւ երեք քառորդ ժամէն պանդոկին դա-  
ւիթը հասաւ : Խեղճ ձին այնշափ յոդնած  
էր որ դռնապանին որանը առջեւ ինկաւ-  
բարեբաղդաբար կիւսթավ միդրաւորած չէր ,

ձիէն զատուեցաւ, և յադդեց դՊէնօա  
գէալ ի մառան :

— Պէնօա՛, շուտ ըրէ բայց շուտ, կար-  
կանդակ մը, հաւ մը, անուշեղէններ, պա-  
նիր և գինի բեր ինծի :

— Կարկանդակ՝ հա՛ւ . . .

— Դեռ կեցեր ես, չլսեցի՞ր ապո՛չ, որ-  
շա՞փ ալ յոյլ ես :

Պէնօա առանց կարեւորութիւն տալու իր  
տիրոջը ախորժակին վրայ, վար իջաւ, և  
միայն հաւով մը վերադարձաւ, կիւսթավ  
դրան առջեւ դայն կ'սպասէր :

— Աս ի՞նչ է, մինակ ասիկա՞ բերիր :

— Ես այդչափ բան մէկէն կրնա՞մ բերել :

— Ապո՛չ, ինծի հետ եկուր :

Կիւսթավ հաւը սեսեկին առջեւը դնե-  
լով, Պէնօաին հետ մէկտեղ մառանը իջաւ.  
Հոն կարկանդակիներ, հաստեայներ, բան-  
ջարեղէններ, պտուղներ, պանիր և գինի  
առաւ. Պէնօա ափ ի բերան տիրոջը երեսը  
կ'նայէր :

— Կ'երեւայ թէ պարոնը շատ անօթի է :

— Անիկա քեղի պէտք չէ : Բայց քալէ  
քիչ մը նզովից արմատ :

— Պարսն զգուշութիւն ըրէք , հիմա բան  
մը կոտրել պիտի տաք ինծի :

Այս կերպով սանդուխէն վեր ելած ա-  
տեն , յանկարծ շուն մը վար կ'իջնէ իւր ե-  
րախին մէջ հաւ մը բռնած՝ զոր կիւսթավ  
սենեկին առջեր դրած էր : Մեր քաջը կատ-  
ղած ոտքը գետինը կ'զարնէ . Ֆէրելք ե-  
տեւէն կ'պոռայ . շունը , զարհուրած կը  
վազէ և Պէնօափ սրունքներուն մէջ կ'մըտ-  
նայ , որն որ իր ձեռքի բոլոր պնակներով ,  
սանդուխէն վար կ'ժաւալզ լորի , եւ վրան  
գլուխը կերակուրներէ եւ գիսիներէ կը  
ձեփուի :

Վերջապէս կիւսթավ որոշեց թողուլ զՊէ-  
նօա , և բաւ համարելով կարկանդակը և  
մի քանի պտուղները , իւր նախասնեկէն  
ներս մտնելով դուռը գոցեց , պարզոնակը  
դրաւ , և զնաց դեպ ի անդ ուր Սիւզօն  
զիսրը կ'սպասէր : Փոքր գեղջկուհին ձեռքը  
թաշկինակ մը , անկողնոյն քով տիրադէմ  
նստած և աչքերը կարմրած էր :

— Ահաւասիկ եկայ , Սիւզօն , ահա ե-  
կայ : Լացի՞ր , սիրեիդ իմ :

— Այո՛ , զրեթէ բոլոր օրը :

— Խեղճ փոքրիկ , անօթի ես հարկաւ :

— Նօթի , ո՞չ , այս առատու ախորժակ ու -  
նէի , բայց հիմա անցաւ . . .

— Ուրեմն կ'կարծէիր թէ այլ եւս չ'պի -  
տի սիրեմ զրեզ : ԱՇ , սիրելիդ իմ , յան -  
ցանքը իմն չէ . քեռիս հետք տարաւ զիս .  
Եթէ գիտնայիր ինձի որչափ երկար թուե -  
ցաւ օրը :

Կիւսթավ թերեւս կ'ստէր քիչ մը , բայց  
կան այնպիսի պարագաներ , ուր թեթեւ  
ստախօսութիւն մը կարեւոր է , նաև գո -  
վելի : Տմարդի եղած պիտի լինէր եթէ ը -  
սէր Սիւզօնի , « Գեղանի կին մը տեսայ ,  
որով խօսակցեցայ , երդեցի և նա մոռցը -  
նել տուաւ ինձի ժամանակը . » թէպէտ և  
այս էր իրողութիւնը , բայց , ինչպէս որ կը  
տեսնէք , պէտք չ'է միշտ յայտնել ամէն  
իրողութիւն :

Կիւսթավ , կ'տիպէր փոքրիկը ուտելու :  
Այս վերջինը կ'ժպտէր իւր բարեկամին , և  
նորա փոյթը տեսնելով , օրու ան անձկու -  
թիւնը կ'մոռնար :

Սակայն մեր երիտասարդը այսպէս կը  
խորհէր :

— Այն որ պտտահեցաւ այսօր , կընայ  
պատահիլ ուրիշ շատ անգամ եւս , և ծանր

անպատեհութիւն յառաջ բերել . Պէտք չէ  
թողուլ Սիւզօնը որ անցընէ իւր կեանքը  
այնպիսի սենեկի մը մէջ , ուր չ'համարձակի  
բարձր խօսիլ կամ շարժիլ : Ասկէ դատ ,  
գուրս չելլարով , հիւանդ պիտի իյնայ .  
գիւղին մէջ վազելու , կանուխ ելլելու , շատ  
աշխատելու սովորած մանկամարդ աղջիկ  
մը ոչ կարէ հանդուրժիլ Փարիզի ժահա-  
հոտ և թանձր օդոյն : Օն ուրեմն , բա-  
ցարձակապէսնա ոչ կարէ մնալ աստ . պէտք  
է նմա վարձել փոքր սենեակ մը , որպէս  
զի ամէն օր կարենամք դիրար տեսնել ան-  
վիթար . անդ նա պիտի կրնայ երգել , խօ-  
սիլ , օդ առնուլ և ուզածին պէս ուտել ,  
խմել :

Երբ կիւսթավ մանրամասնաբար յայտնեց  
այս խորհուրդը , Սիւզօն ձգեց իւր գա-  
ւաթը և իւր պատառաքաղը և լուռ կե-  
ցաւ . և արցունքի երկու մեծ կաթիլներ  
երեսէն վար սահեցան . և նա կիւսթավին  
ծնգացը նետուեցաւ հայելով նմա մի պա-  
զատական աշօք և գոշեց հեծկլտալով :

— Ահ , պարոն կիւսթավ . . . խօսք կը  
պամ որ ձեզի վիշտ չպիտի պատճառեմ .

բոլոր օրը կերակուր չ'պիտի ուտեմ, աղ-  
մուկ չ'պիտի հանեմ:

Կիւսթավ չ'կարաց փոփոգել փոքր աղ-  
ջիկը, բայց միայն նմա խոստանալով, իւր  
սենեկին մէջ պահել զի՞նքը:

Այս խոստումը հատոյց Սիւղօնի իւր բո-  
լոր ուրախութիւնը, գրկեց զկիւսթավ, սե-  
նեկին մէջ կայտուեց, ցատքեց, հաղար ու  
մէկ խենդութիւններ ըրաւ, կարծելով թէ  
իւր երջանկութիւնը ապահոված է յայ-  
նըմհետէ:

Առաւօտեան ժամը ութին, Պէնօա իւր  
տիրոջը դուռը կը զարնէր, կիւսթավ ար-  
թընցաւ և հարցուց թէ ինչ կուզեն:

— Պ. գնդապետը ձեզ կուզէ, ըստ  
Պէնօա:

Մեր յանցաւորը հաղուեցաւ և սենեկին  
դուռը կզպելով, քեռւոյն քովը գնաց:

— Բարէ՛, պարո՛ն, ըստ գնդապետը,  
ինչ էր պատճառը որ երեկ իրիկուն դուրս  
ելար տմարդօրէն այնպիսի սքանչելի տունէ  
մը՝ ուր քեզի մեծ յարգանք ըրին, ընդ-  
դէմքո պաղ և անոպայ վարմունքիդ, ըն-  
տիր ձիու մը վրայ հեծար, կարի յոյժ յոդ-  
նեցուցիր և ճաթեցուցիր այն խեղճ կեն-

դանին , տնապահի սենեկին ապակիները կոտրեցիր . տան մարդիկները ահ ու գողի մէջ ձգեցիր . հաւ մը և կարկանդակ մը ուտելու համար աճապարեցիր վերադառնալու : Բարէ՛ , ի՞նչ ախորժակ , արդէն շատ լաւ կերած էիր :

— Քեռիդ իմ , ճամբուն վրայ անհանդութելի սաստիկ քաղց մը զգացի : Տիկին ֆօնպէլ բարկացաւ ինծի :

— Ո՛հ , նա շատ ազնուասիրտ է . չբարկանալէն ի զատ , հանդարտեց միանդամայն զիս :

Կիւսթավ ձգեց իւր քեռին , և Պ . կրանսիկի տունը ուղղեցաւ . հոն իօժէնին տեսաւ , և ջատագովեց դանձն իր առջի օրուան մեկնելուն վրայ : Կիւսթավ տեսաւ թէ տիկին ֆօնպէլ յանկուցեալ էր , դադտնի ուրախութիւն մը փորձեց . տիկինը արդէն կքծնէր անմէտ չերեւնալու համար : Բայց հակառակ այն հաճոյքի զոր կ'զգար իւր խօսակցութեան մէջ , նա կարճեց իւր այցելութիւնը և վերադարձաւ ի պանդոկ :

Ժամանակը աւելի հզօրագոյնս կ'ազդէքան զյորդորս գնդապետի : Սիւզօն քաղցրաբարոյ , սիրելի և շատ ազնիւ էր , իւր

գգուանաց ներքեւ կ'ընկճէր զկիւսթավ :  
Մեր երիտասարդը , իօժէնիի քով երթալու  
համար պատրուակը կը հնարէր . Սակայն  
իօժէնի , կը խնդար երբ երիտասարդը կը  
հառաչէր . նա կ'ծաղրէր երբ սա տխուր և  
մտախոհ լինէր : Սիւզոն երբէք չէր յան-  
դիմաներ զկիւսթավ իւր բացակայութեանը  
վրայ . նա կ'հառաչէր և կ'լար երբ սա կը  
մեկնէր , բայց նորա գալը լսածին պէս կ'ա-  
ճապարէր աչքերը սրբելու , եւ իւր ար-  
ցունքները ծածկելով , զուարթ և քաղցր  
դիմօք կ'ներկայանար նմա :

Գնդապետը ուրախութեամի կը տեսնէր  
կիւսթավի սիրոյն նորոգիլը վասն իօժէնի :  
Պ. կրանսիէր ըսած էր գնդապետին թէ իւր  
աղջիկը կրնայ վերամուսնանալ :

Սիւզոն նամնակ մը գրած էր իւր ծնողա-  
ցը , որուն մէջ կը յայտնէր իւր զդումը  
այն վշտին համար որ իւր փախուստը նոցա  
պատճառած էր : Կ'ըսէր թէ Փարփղի մէջ  
է . բայց հասցէն իմաց չէր տար :

Առտու մը , գնդապետը գաւթին մէջ կը  
շրջագայէր . կառքի ախոռին կողմէն իւր  
քեռորդւոյն անուան արտասանումը լսեց .  
պատին քովը մօտեցաւ առանց տեսնուե-

լու կեցաւ . և լսեց յետադայ խօսքերը Պէ-նօսի և իւր հօրը միջեւ :

— Տղա՛ս , Պ . Կիւսթավ չո՞ւզեր ուրեմն որ իւր սենեակը մտնան :

— Այո՛ , հայր իմ , ինծի անգամ արդիլեց :

— Ե՞ն , ո՞վ կ'շինէ անկողինը , ո՞վ կը մաքրէ սենեակը :

— Չեմ գիտեր . ինծի ըսաւ որ երկու հատ աղաւնի ծախու առած է , որոնցմով կ'զրունու :

— Ուրեմն այս է եղեր , որ ես երբեմն պատուհանի վարագոյրին ետեւէն բան մը կ'տեսնէի :

— Այո՛ . բայց կարծեմ այդ թռչունները մեղի պէս կերակուր կ'ուտեն եւ գինի կը խմեն :

— Բայց Պէնօա կապիկ մը չըլլայ ասիկա :

— Հաւանական է , հայր իմ . զի երբեմն ալ աթոռներու ձայնը կ'լսեմ . թռչունք ոչ կարեն մի այդպիսի աղմուկ հանել . շատ հետաքրքիր եմ սոցա ինչ ըլլալը տեսնելու :

— Բարէ՛ , սակայն ես պիտի իմանամ , ըսաւ դնդապետը մտքէն , կապիկք , որոց սակս կերակուր և գինի . . . ո՞հ , ներսը բան մը կայ անպատճառ : Տեսնե՛մք :

Դնդապետը՝ կուղէր վերահասու լինել  
անմիջապէս, այնպիսի բաներու, որոնցմէ  
կասկածէր: Ռւստի կիւսթավին սենեակը  
ելաւ, դուռը գոց էր. վար իջաւ:

— Պէնօա՛, գնա ինծի կացաւոր բանալի  
մը դտիր:

— Արդեօք պարոնը դարբին մ'ալ կուղէ՞:

— Ո՛չ, դու ըսածս կատարէ և լուէ:

Պէնօա գնդապետին ուղածը բերաւ. Պ.  
Մօրանվալ կիւսթավին սենեակը ելաւ. եւ  
այնչափ աղէկ շարժեց դուռը, որ կարաց  
պտուտակները անջատել. սողնակը ինկաւ,  
և նա թաքուն սենեկին մէջ մտաւ: Բայց  
ի զուը նայեցաւ ամէն կողմ. ո՛չ կապիկ  
կար և ո՛չ թռչուն. սակայն և այնպէս ան-  
կողնոյն վրայ հագուստներ տեսաւ, որոնք  
կիւսթավի չէին վերաբերեր:

— Հոս կին մը կայ, ըսաւ գնդապետը,  
բայց ո՞ր ծակը մտեր է:

Յանկարծ նայուածքը անկեան մը վրայ  
նետեց ուր Սիւղօն թիկնաթոռի մը ետեւը  
կծկուած էր: Գնդապետը, դեռատի աղ-  
ջիկը տեսնելով անշարժ մնաց:

— Հոս ի՞նչ դործ ունիս, աղջիկ իմ, ը-  
սաւ վերջապէս Պ. Մօրանվալ: Բայց Սիւ-

զօն աչքերը կ'զոցէր և բնաւ չ'էր շարժեր ,  
Գնդապետը՝ թիկնաթոռը վերուց , և Սիւ-  
զօնի ձեռքէն բռնելով .

— Անքոյթ եղէք , ես զձեզ չ'պիտի ու-  
տեմ , ճշմարիտը խօսեցէք , քեռորդւոյս սե-  
նեկին մէջ ի՞նչ կ'ընէք :

— Անոր հետ կ'բնակիմ , պարոն :

— Անոր հետ կ'բնակիք . բայց այս սե-  
նեկին մէջ անկողինը մէկ հատ է :

— Միատեղ . . . .

— Ո՛ , շատ լաւ , խիստ լաւ . ո՞րքան ա-  
տենէ ի վեր կ'տեւէ այս լաւ ամուսնութիւնը :

— Վեց շաբաթէ ի վեր , պարոն :

— Ի՞նչ , վեց շաբաթէ ի վե՛ր . . . ու-  
րեմն ի՞նչ կ'ընէիր օրն ի բռւն :

— Երբ նա հոս լինի , անոր կ'նայիմ , կը  
խօսիմ , երբ մինակ լինիմ , կարդալ ո գրել  
կ'սորվիմ :

Գնդապետը քննեց զՍիւզօն , նորա շը-  
նորհքը և անմեղութիւնը հանդարտեցու-  
ցին իւր բարկութիւնը , եւ վերսկսեց իւր  
հարցմանց :

— Ուր ծանօթացար իմ քեռորդւոյս :

— Երմանվիլի մէջ , պարո՞ն , Պ. Կիւս-  
թավ մշը տունը ի՞նած էր :

— ԱՇ, քո ծնողաց տունը մնաց, և 'ի  
վարձատրութիւն նոցա ասպնջականութեան,  
հրապուրեց իւրեանց աղջիկը, հա՞ :

— Ո՞չ պարոն, ըստ պատահման, ես նո-  
րա սենելին մէջ էի . . . և յետոյ սիրե-  
ցինք դիրեար :

— Եւ անկէց վերջն ալ միատեղ եղաք :  
Բայց, նորա սէրը՝ ընտանիքդ ձգելու զո-  
հողութիւնը աչքի առնելու չափ էր :

— Այո, պարոն, նաև կ'ուղէին զիս նի-  
դօլա թուրէի տալ. զոր ես բնաւ չեմ սի-  
րեր : ԱՇ, եթէ վերստին չ'տեսնէի զպարոն  
կիւսթավ, կ'մեռնէի :

— Բայց եթէ մայրդ մեռնի, վշտանա-  
լով քո կորստեանդ . եթէ քո փախուստդ  
գերեզմա՞ն տանի զնա :

— ԱՇ, պարոն, մի՛ ըսէք ինծի այդ բանը :  
Սիւզօն սկսաւ փղձկիլ և հեծկլտալ. գըն-  
դապետը սաստիկ յուզուած էր :

— Մի լար, դուստը իմ, հանդարտէ՛,  
մի լար, սակայն, դու ո՞չ կարես ընակիլ  
առա :

— ԱՇ, պարո՞ն, սպասուհի ըրէք զիս,  
ևս կ'ծառայեմ, կ'աշխատիմ ձեղի :

— Ոչ բնաւ, Աստուած չընէ, քեզի պէս

սպասուհի մը իմ տունս վեր ի վար կ'ընէ .  
միանդամայն կ'կարծէք որ Կիւսթավլ գոհ  
պիտի լինի որ դու իմ մարդիկներուս մէջ  
լինիս :

— Ա՛հ , պարոն , գիւղ մի՛ խրկէք զիս ,  
Նիդօլայի հետ կ'ամուսնացնեն :

— Այսչափ կ'ատե՞ս դուն այս Նիդօլան ,  
եթէ Փարիզի կանանց նմանէիր , արդելք  
չպիտի լինէր . . . ինչ և իցէ . հօրդ տունը  
չպիտի վերադառնաս , կը հասկնամ , բայց  
զքեզ հոս ուրիշ տեղ մը պիտի դնեմ , եւ  
ուր ըլլալդ պիտի զրես ծնողացդ :

— Ուր որ երթամ , մի և նոյն բանն է ,  
պարոն , քանի որ անկէ հեռու պիտի դըտ-  
նուիմ :

— Տղայական խօսքեր են ատոնք , սէրը  
կ'մեռնի , աղջիկ իմ , պէտք է զ'ապագան  
մտածել . և եթէ դու աւելի փորձառու-  
թիւն ունենայիր պիտի զգայիր թէ արդէն  
կիւսթավին սէրը . . . իմ քեռորդիս անրդ-  
գամին մէկն է . ի՞նչու քո մատաղութիւնդ  
նորա սենեկին մէջ կ'փառեցնես : Ա՛հ , է-  
րիկ մարդիկ չեն արժեր բնաւ այն ար-  
ցունքները զորս դուք կը թափէք նոցա  
համար :

Սիւզօն ալ բան մը չ'ըսաւ , նա երկչու-  
տութեամբ Պ . Մօրանկալի նայեցաւ : Գըն-  
դապետը սենեակէն գուրս ելաւ . բայց տը-  
նապահը և իւր տղան սանդուխին վրայ կե-  
ցած էին , որպէս զի , գնդապետը ելածին  
պէս սենեակը մտնելով պիտի յագեցնէին  
իւրեանց հետաքրքրութիւնը :

— Դուք ի՞նչ գործ ունիք հոս , ըսաւ  
գնդապետը խստութեամբ :

— Պարոն . . . մեք . . . մեք պատրաստ  
եմք ձեր հրամանացը , պատասխանեց գըն-  
նապանը իւր բամպակէ խոյրը ակնածու-  
թեամբ հանելով :

— Զ'ըսէք որ , ես ելածիս պէս գուք  
ներս պիտի մտնայիք կապիկը տեսնելու հա-  
մար : Տեղերնիդ գացէք , ես չ'եմ սիրեր  
շատախօսները : Կառքը պատրաստեցէք :

Գնդապետը նորէն Սիւզօնի քովը եկաւ :

— Օ՞ն , երթանք աղջիկս , պատրաստուէ :

— Ո՞հ , Աստուած իմ , ի՞նչ կ'ըսէ երբ  
վերադարձին չ'տեսնայ զիս : Բայց գոնէ ,  
պարոն , զիս տեսնելու պիտի գայ , ուր ըլ-  
լալս պիտի ըսէք :

— Այո՛ , որդեակ իմ , նորէն պիտի տես-  
նէք զնա :

Այս միջոցիս կառք մը գաւթին մէջ մը-  
տաւ , և սանդուխին դիմացը կեցաւ :

— Ի՞նա՞մք , ըսաւ զնդապետը :

Փոքր աղջկան ծունկերը տկարացան , բայց  
զնդապետը չ'զայրացնելու համար արցունք-  
ները բռնեց : Կառքը ճամբայ ելաւ : Ուրս  
փողոցը , տիկին Հէնրիի տունը եկան :

— Տիկի՞ն , ըսաւ զնդապետը , ահաւա-  
սիկ ձեզի կ'յանձնեմ այս օրիորդը , զոր չեմ  
ուզեր վանատան մը մէջ դնել . թէ և շատ  
տխուր կ'երեւայ , բայց նա կ'պատմէ ձեզի  
իւր փոքր վիշտերը . առաջին տարուան հա-  
մար քսան և հինգ լուի . ըսէք , տիկի՞ն ,  
կ'ընդունի՞ք :

— Պարոն , ըսաւ փերեղակուհին , օրի-  
որդը իմ տունս ընդունելու համար ձեր  
յանձնարարութիւնը բաւական է :

— Ուրեմն , լմնցաւ գործը . մնաս բարով  
փոքրիկ , աշխատէ՛ : Ի կրկին տեսութիւն :

Քիչ մ'ալ կիւսթավին դառնամք :

Մեր քաջը օրուան մեծ մասը տիկին ֆօն-  
պէլի քովը անցնելէ զկնի , վերադարձաւ 'ի  
պանդոկ . որ ատեն պարոնայք՝ Պէնօա և  
իւր հայրը , իր սենեկին մէջ չորս կողմը կը  
խռովարկէին : Կիւսթավ , իր սենեակը ե-

լաւ, դուռը բաց գտաւ. կարծելով թէ  
ի՞նքը բաց ձգեր է, ներս մտաւ, բայց փո-  
խանակ Սիւզօնի տնապահը եւ իւր որդին  
տեսաւ, որ այս վերջինը անկողնոյն տակը  
կը նայէր :

— Ի՞նչ կ'ընէք հոս, թշուառակա՛ններ,  
դոչեց կիւսթավ, ի՞նչպէս ներս մտաք, շուտ  
պատասխան տուէք, անպիտա՛ններ :

Տնապահը և իր տղան պատճառանք մը  
չ'գտան զինքեանս արդարացնելու համար:  
կիւսթավ, Պէնօափ ականջը քաշելով .

— Ինծի պիտի ըսես, խարերայ, ո՞ւր է  
հիմա, ի՞նչ ըրին :

— Ո՞րը ինչ ըրին պարո՞ն, ըսաւ Պէնօա  
դողալով, մենք չ'տեսանք ձեր կապիկն և  
աղաւնիները :

— Բայց ո՞վ բացաւ այս դուռը :

— Ձեր պարո՞ն քեռին. առանձին ներս  
մտաւ, յետոյ կառքին մէջ բան մը տարաւ  
բայց չ'կրցինք տեսնել թէ ինչ էր :

— Դուրս ելէք :

Կիւսթավ մինակ մնաց. սենեկին չորս  
կողմը վետուեց թէ Սիւզօն գրուածք մը  
ձգեր է : Երբ Սիւզօն իր քովն էր կ'լքանէր  
զնա . բայց հիմա որ դայն իրմէ տարած

են, զգաց թէ իր սէրը կ'վերածնի. ուստի  
կ'տոշորէր զայն նորէն տեսնելու : Ահա մի  
անհեղեղութիւն մարդկային սրտի :

«Մարդ կ'ուզէ ունենալ զայն՝ զոր չունի,  
եւ երբ ունենայ՝ վայելելէ կ'դադրի : »



## ԳԼՈՒԽ ԺԵ

### ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԳԻՇԵՐ ՄԸ

Կիւսթավ՝ իւր զիշերային բարեկամուհին  
կորսնցնելուն վրայ, յոյժ նեղանալով, տու-  
նէն դուրս ելաւ, նորա հետքը դժնալու  
համար : Բայց մեծ քաղաքի մը մէջ մարդ-  
չզիտէր որ կողմ երթալու է, կիւսթավ  
հարիւր քայլ չ'առած վողոցին մէջտեղը ան-  
շարժ կեցաւ, անցորդաց արմուկի հար-  
ուածներն ընդունելով : Յանկարծ կառքի  
մը մէջէն, իւր անունը արտասանող ձայն  
մը եկաւ ականջին :

— Էհ, ուրեմն, այս կառքին մէջ է,  
ըսաւ. ասիկա Սիւղօնի ձայնն է անշուշտ,

զոր քեռիս կարծեմ էրմանվիլ կը տանի :  
0'ն , ետեւէն երթանք . եթէ գիշեր ըլլար  
կառքին ետեւը կ'նստէի . սակայն ինչ հոգ ,  
աչքէս չեմ փախցներ : Կառավարին շատ  
մօտէն չ'երթանք :

Կառքը քաղաքէն ելաւ , Պէլլվիլի մեծ  
ճամբէն գիւղ հասաւ . ձախ կողմը փողոց  
մը մտաւ , ուր բաւական դեղեցիկ տան մը  
առջև կանգ առաւ : Մեր երիտասարդն ալ  
յիսուն քայլ անդին առանց տեսնուելու ան-  
շարժ կեցաւ : Երկու տիկիններ և երիտա-  
սարդ մը տունէն ներս մտան : Տիկինները  
մեծ փեղոյրներ հագած էին որով կիւս-  
թալ չ'կարաց այնչափ հեռուէն տեսնել  
նոցա երեսը :

— Կ'վախնամ թէ խաբուեցայ , ըսաւ մեր  
քաջը փողացին մէջ վարանեալ մնալով , զի  
այս տիկիններէն և ոչ մէկը Սիւզօնի հա-  
սակը և հագուստը չունի , այսու ամենայ-  
նիւ կարելի է որ քեռիս ծպտած լինի փո-  
քըր աղջիկը , բայց գնդապետը կառքին  
մէջ չէ . ես ի զուր թափառեցայ մինչև հոս  
նաև ի զուր ժամավաճառ եղայ : Սակայն  
և այնպէս , իմ անունս կանչեցին . ուրեմն  
այս տիկիններէն մին կ'ճանաչէ զիս : Չեմ

զարմանար քանզի ես ալ կ'ճանաչեմ շատերը , զոմանս ալ մոռցած եմ . սակայն վերջապէս սոցա ով ըլլալը հասկնալ կուզեմ :

Այսպէս ըսելով կիւսթավ տան կ'մօտենար , և ստէպ պատուհանները կը դիտէր յուսալով տեսնել այն ձայնին տէրը : Պատուհանի մը բացուիլը կը գաղցը ձայնի մը իւր անունը արտասանելը լսեց . այս ձայնը առջի լսածն էր . ո՞հ , այս անդամ տարակոյս չ'մնաց . կառավարին դրան մօտեցաւ . դռնաբախը առաւ , պիտի զարնէր , բայց մի և նոյն ձայնը կեցուց զինքը :

— Մի՛ զարնէք , ձախ կողմը դարձէք և փոքր դրան առջեւ սպասեցէք :

Կիւսթավ աճապարեց ձախ կողմ դառնալու , հոն վորը դուռ մը տեսնելով կանգ առաւ : Վերջապէս թեթեւ ոտքի ձայն մը լսեց որ աւազի վրայէն կ'գար , այն ձայնը շուտ կ'քալէր . շրջաղգեստի մը ձայնէն կարծեց թէ կին մ'է այն . այս միջոցին սիրտը ուժգին կ'զարնէր . ի՞նչու համար է այս յուզումը , այն որ կ'գայ , կարելի է որ տգեղ կամ ծեր լինի , բայց գեղանի ալ կարէ լինիլ : « Քանզի տարակուսի մէջ մարդ կ'սիրէ ամենահաճոյ դաղափարը

ըմբռնել . » Է՛հ , Աստուած իմ , մեր երեւակայութեան երազները կը պատրաստեն մեր հօգին ի սէր , յուրախութիւն կամ 'ի ցուռ : Կան այնպիսի վայրկեաններ ուր միայն լալ կ'ուզեմք . կան ալ որ , ուր ամեն ինչ վարդագոյն կ'տեսնեմք : Հուսկ յետոյ , դուռը բացուեցաւ . կիւսթավ մտաւ 'ի պարտէղ և դրկեց իւր բազկացը մէջ ոչ թէ Սիւզօնը , այլ զտիկին Պէրլի :

— Այդպէս պարոն , չ'ճանչցա՞ք իմ ձայնը , ըստ տիկին Պէրլի հառաջելով , բայց ստուգիւ շատոնց է որ չ'տեսաք զիս : Ապերախտ , երբ ես ամէն վայրկեան ձեր վրայ կ'մտածէի , ձեր սիրու մի ուրիշ կընկան զբաղած էր :

Կիւսթավ չէր մտարերեր թէ ինչպէս ջատագովելու է զինքը . զի կ'զգար թէ յանցաւոր է . և սակայն Ժիւլի նորէն կ'արծարծէր երիտասարդին որտին մէջ այն ըզդացումները զորս արդէն թելադրած էր նմա :

— Ներեցէք ինծի , այդ եպերանաց համար , բարեկամդ իմ , ոչ ունիմ իրաւունս մեղադրել զձեղ : Հեռու յինէ կընա՞մ յուսալ որ չ'ճանաչիցէք դսէր ,

— Բայց ես շատ յանցաւոր եմ :

— Թողէք այդ , բարեկամդ իմ , այն յանդիմանութիւնները զորս մարդ կ'ընէ բուն իր անձին , ունին շատ աւելի աղդեցութիւն քան անոնք որք կ'լսուին :

Կիւսթավ կ'սեզմէր Ժիւլին իր բազկացը մէջ , և նորա պարանոցի թաշկինակը վեր առնելով , փափուկ և չնորհալից կուրծքէ մը համբոյրներ կ'քաղէր . կարծես տուժել կ'ուղէր շատ մ'ամիսներու բացակայութիւնը . բայց Ժիւլի արգիլեց նորա ձեռնաձըդութիւնը :

— Ի՞նչ կ'ընէք , բարեկամդ իմ , կ'մտածէք թէ որչափ վտանդի կ'ենթարկէք զիս :

— Ի՞նչ , մինակ չէք :

— Այո , բայց թերեւս կ'տեսնան զմեզ : Հոս ես իմ տանս մէջ չեմ : Չ'ճանչցաք այն տիկինը որ իմ հետո էր :

— Ո՛չ անշուշտ , ո՛վ էր այն կինը :

— Օրէլի , որով դուք պիտի ամօւնանայիք . և որ վեց շաբաթէ ի վեր կարդուած է այն երիտասարդին հետ զոր տեսաք կարծեմ , անօնց տունն եմ ես : Կը վախնամ որ , տիկին և Պ . Ֆրէմօն չդիտնան իմ բացակայութիւնս :

— Ես չեմ կընար ձեզ թողուլ : Պ. Պէրլի  
այս իրիկուն հոս պիտի դայ :

— Ո՛չ, մինչեւ կիրակի օր Փարիզ պիտի  
մնայ : Ես, սա տեսնուած սենեկին մէջ կը<sup>1</sup>  
պառկիմ . ձախ կողմը , պարտիզին մէջտեղը :

— Լա՛ւ , բանալին ինծի տուէք ես կ'եր-  
թամ հոն կը պահուիմ :

— Չարագո՛րծ . առէք ահաւասիկ բա-  
նալին : Ես հիմա անգար մը կեղծելով կը<sup>2</sup>  
ձգեմ զնոսա :

Տիկին Պէրլի , ծառուղւոյ մը մէջէն հե-  
ռացաւ : Կիւսթավ նշանակուած տեղը գը-  
նաց . փոքր դաւթէ մը ներս մտնելով , ան-  
կէց վերնայարկը ելաւ :

Մեր երիտասարդը տեսաւ գեղեցիկ սեն-  
եակ մը վայելուչ յարդարեալ և նորոգա-  
պէս շքեղացուցեալ կահ կարասեօք : Ներս  
մտաւ , կարծելով թէ այս է տիկին Պէրլիի  
սենեակը : Ստուգիւ ոչ ինչ կ'պակսէր սեն-  
եակին վայելութեանը համար . շքեղ ան-  
կողին մը , բազմոց , նստարաններ , մեծ  
հայելիներ , թիկնաթոռներ , կրկնակ վա-  
րագոյրներ եւ մի մեծ հայելի անկողնա-  
րանի քով :

— Բարէ՛ , ըստաւ նա , ի՞նչ սեթեւեթ , ի՞նչ

պաճուճանք , ասիկա շքեղ դահլիճ մէ ,  
որ վայել է իրաւամք մի գեղանի տիկնոջ .  
անշուշտ տիկին ֆրէմօնի սենեակը չ'պիտի  
նմանի ասոր : Սա կոշտ և կեղծ Օրէլի մեր-  
ժած ըլլալու է իր սենեակէն բոլոր անոնք  
որք կընան մեղկել զգացումները կամ կը  
խուճապեցնեն զամօթխածութիւն : Ես կար-  
դահատեմ նորա էրիկը , քանզի ո՛չ ինչ  
այնքան չ'ախորժելի է քան թէ կոշտ մը :

Կիւսթավ դուռը գոցեց և թիկնաթոռի  
մը վրայ նետուեցաւ . և չ'կարաց ընդ չ'տես  
առնուլ թէ Ժիւլիին համար չէր որ տու-  
նէն ելած էր , խեղճ Սիւզօն . բայց կիւս-  
թավ որոշեց հետամուտ լինիլ իւր հետա-  
զոտութեանց : Արդէն շատէն գիշեր եղած  
էր , կիւսթավ անհամբեր կ'սպասէր թիկ-  
նաթոռին վրայ . յանկարծ լոյս մը կ'փայլի  
պարտիդին մէջ և խառնակ և դժուարիմաց  
ձայներ կիւսթավին ականջը կ'հասնին : Ոտք  
ելաւ զարմանօք և մտիկ ըրաւ : Ճանաչեց  
Օրէլիի ձայնը , հաւանականաբար նոր ա-  
մուսնացեալք տիկին Պէրլիի ընկերանալ ու-  
ղած էին մինչեւ ի պատշդամ : Զայներն կը  
մօտենային : Պէտք է ամէն պարագայի մէջ  
զառաջս առնուլ վտանգին . ուստի կիւս-

թագ , անկողնոյն տակը պահուեցաւ :

Սանդուխին մօտեցան , կիւսթավ կարաց լսել :

— Ի՞նչպէս , Օրէլի , այս սենեկին մէջ պառկիլ կ'ուղէք :

— Այո՛ , մօրաքոյր իմ :

— Կնիկս , առանց ինծի հարցնելու , նորո օրինակ բաներ կ'ընէ :

— Պարո՛ն , կարծեմ աղատ եմ պառկիլ , ուր որ ինծի հաճոյ թուի :

— Սակայն Օրէլի , այս սենեակը խոնաւ է :

— Ես չեմ վախնար խոնաւութենէ . եւ կէք մօրաքոյր իմ , տեսէք թէ ինչպէս զարդարած եմ :

Այսպէս ըսելով , Օրէլի ներս մտաւ , Ժիւլի հետեւեցաւ նմա դողալով . քանզի մօռցած էր իւր բարեկամին ըսելու թէ վերի յարկը կ'պառկի , սակայն նայուածք մ'ապահովեց զնա . զի կիւսթավ հոն չէր :

— Է՛հ , ուրեմն , ես կ'երթամ պառկիլ , գլխու ցաւ մ'ունիմ , կարծեմ վաղը ուշ պիտի ելլամ :

Եւ տիկին Պէրլի ձգեց Օրէլին եւ նորա էրիկը , աճապարեց իւր սենեակը ելլելու

ուր կ'կարծէր կիւսթավը դտնալ։ Բայց այս  
խեղճ երիտասարդը անկողնոյն տակ կ'տա-  
ռապէր։ Խօսակցութիւնը իրեն կ'իմացնէր  
թէ տիկին Թրէմօնի սենեկին մէջն է։

Երկու ամուսնացեալք ներս փակուեցան  
և դացին պառկելու . հիմա լաւ է չտես-  
նուիլ քան փախուստ փորձել . զի եթէ իրը  
գող բռնուի , Օրէլին պիտի ճանաչէ զինքը ,  
հետեւաբար վտանգի ենթարկած պիտի լի-  
նէր զժիւլի։ Մեր երիտասարդը անկողնոյն  
տակ նախախնամութիւնը իրեն օդնութեան  
կ'կանչէր , որպէս զի պարոն և տիկին Թր-  
էմօն անկողնոյ տակ չ'նային , և առանց  
շարժիլ և շունչ առնուլ համարձակելու ըս-  
պասելով .

— Նայինք , ըսաւ , վերջը ինչ պիտի ըլ-  
լայ . կը կարծէի թէ զիշերը սիրով պիտի  
անցնեմ , բայց հիմա այլոց սէրը պիտի լսեմ։

— Քիչ մը շուտ ըրէ , պարոն , ըսաւ Օ-  
րէլի ,

— Կնիկ իմ , հանգոյց մը կայ . . .

— Կտրեցէք . ոչինչ բանէ մը կ'շուարիք .  
կարծեմ այս զիշեր չ'մննար : Ա՛տ ինչ է ,  
բամպակէ խոյը ալ կ'դնէք : Ա՛հ , որչափ  
ուղեղ կ'երեւաք ասով :

— Ասիկա գլուխս շատ տաք կ'պահէ .  
և այս խոնաւ սենեկին մէջ չեմ ուզեր հար-  
բուխ լինիլ :

— Ներքին բաճկոնակդ մի հագնիր :

— Բնդհակառակը , միշտ պիտի հագ-  
նիմ , քանզի ասիկա շատ մը հիւանդութենէ  
զերծ կը պահէ :

— Բայց ես չեմ ուզեր խուրձ մը ֆո-  
նելու քով պառկիլ , մորթո կը քերէ :

— Ամէն տեղս չեմ հագնիր , կնիմ իմ :

— Բարէ , ո՞քչափ մեծ փոփոխութիւն ,  
կ'ըսէ կիւսթավ մտքէն . այս աղջիկը որ միշտ  
աչքերը վար կ'առնէր երբ մէկը իրեն խօ-  
սէր . . . Ստուգիւ , մարդ շատ անգամ ար-  
տարին երեւոյթէ կը խարուի :

— Ե՞՞ արդ , պիտի պառկի՞ք պարոն ,  
այս դիշեր :

— Ահա եկայ : Կ'նայիմ որ պատուհանի  
փեղկերը աղէկ գոցուած են . զի դողերէ  
աւելի ծերպերէ ներս սպրդող հովէ կ'վախ-  
նամ , որ պարանոցի կարկամութիւն յառաջ  
կը բերէ :

— Ա՞հ , Պ. Ֆրէմօն , եթէ ամուսնանալէ  
յառաջ ըսէիք ինծի թէ հովէ և կարկամու-  
թենէ կը վախնաք , նաեւ ֆ-նելու բաճկո-

նակ և բամպակէ խոյր կ'կրէք , ես ալ կը  
մտածէի քիչ մը :

— Բայց տիկին , կին մը ազնիւ և մա-  
քուր բարք մը կ'սպասէ իւր էրիկէն , և ո՛չ  
ուրիշ բան :

Պ. Ֆրէմօն մօմը միշեց , և մօտեցաւ իւր  
սիրելի կողակցին :

— Ա՞ռ ինչ է , պարոն , ինչո՞ւ մարեցիք  
ճըագը :

— Վասն զի զիտէք որ , ես չեմ կրնար  
լուսով քնանալ : Բարկացա՞ք ասկէ , սիրե-  
լի՞դ իմ :

— Բրտութիւն մը կ'ընէք վերջապէս :

Հինգ վայրկեան լուսութիւն տիրելէ յետոյ ,  
Օրէլի նորէն խօսք բանալով .

— Ա՞հ , այդպէս պիտի քնանա՞ք :

— Սիրելիդ իմ , այսօր շատ յոգնեցայ  
Փարիզի մէջ :

— Բայց ես յոգնած չեմ : Ի՞նչ կ'ուզէք ,  
պարոն , ամուսնութեան առջի ամսոց մէջ ,  
այդպէս պիտի վարուիք :

— Ստուգիւ , տիկին , կարգուած ատեն ,  
ես երբէք չէի կարծեր որ , օր մը , մի այդ-  
պիսի լեզու գործածէք յիս : Դուք , տի-  
կին , դուք որ , այնչափ զգաստ կ'երեւնա-

յիք , դուք որ անաչառ վարք մ' ունեիք ,  
դուք որ զիս կ'սաստէիք , երբ քիչ մը յան-  
դուղն վարուէի . նորէն դուք էք հիմա որ  
կ'յանդիմանէք զիս քիչ մը հանգչիլ ուղե-  
լուս համար :

— Այո՛ , հարկաւ , հասարակաց առջեւ  
գիտեմ պարկեշտ լինիլ . բայց գիտեմ նաև  
թէ ինչու կ'ամուսնանայ մարդ : Կրօնքը՝  
մեղ կ'պատուիրէ հաւանիլ և անձնատուր  
լինիլ մեր էրկանց փափաքներուն : Նա՝ մեղի  
թոյլ տուած է , ամուսնական հաճութեամբ  
զուարճանալով , ծնանիլ էակներ ըստ նմա-  
նութեան մերում : Դուք մի անկրօն էք ,  
որ չէք հետեւիր Աստուածային պատուի-  
րանաց :

— Մի՛ բարկանաք , տիկին , աղէկ գի-  
տէք որ ես շատ կը սիրեմ զձեղ :

— Խօսքով միայն :

— Ահ , փարուինք ուրեմն , սիրելիդ իմ,  
որպէսզի խաղաղութիւնը վերահաստատուի :

— Երջանիկ սեպէ լինքինքդ , որ հաւա-  
նութիւն ցոյց կ'տամ :

Աստ կիւսթավ , չկարաց լսել խօսակցու-  
թեան շարունակութիւնը , զի անկողնոյն  
շառաշիւնները կ'արդիլէին :

Երկու ամուսնացելոց խօսակցութիւնը լը-  
մըննալով, գիշերուան լոռութիւնը չէր վըր-  
դովեր այլ եւս. նաև անկոզնոյ մէջ չէին  
դառնար. որմէ կիւսթավ վճռեց թէ քնա-  
ցած են: Չէր կրնար յուսալ մի աւելի նը-  
պաստաւոր պատեհութիւն. ուստի որոշեց  
օգուտ քաղել նոցա քունէն: Հետեւաբար,  
կիւսթավ խիստ մեղմովին ձեռացը և ծըն-  
դացը վրայէն քալելով, սենեկին մէջ տեղը  
հասաւ. ոտք ելաւ, և մութին մէջ խար-  
խափեց: Դժբախտաբար, ոտքերը աթոռի  
մը ընդհարկեցան, զոր չկարաց զդալ ձեռ-  
քովը: Այս աթոռին վրայ կոնք մը կար,  
որ սենեակին մէջ տապալելով, շաշիւնը ար-  
թընցուց քնացողները:

— Ո՞վ է ան, գովեց պարոն Ֆրէմօն:

Մեր քաջը շտապաւ դուռը բանալով  
սանդուղէն վեր ելաւ: Մինչդեռ Օրէլի իր  
բոլոր ձայնովը «Գող կայ, հասէք» կ'աղո-  
ւար, կիւսթավ վերնայարկը ելաւ, դուռը  
զարկաւ, կէս ձայնով կանչեց զժիւլի, բայց  
պատասխան չ'եկաւ: Պ. Ֆրէմօն սանդու-  
խէն վեր ելնելով սլիտի ձերբակալէր զկիւս-  
թավ, եւ կամ նորա դլխուն գնդակ մը  
սլիտի ուղղէր: Ուստի մեր անզգամ պա-

րոնը , դարձեալ վեր ելաւ , տամալւոյն գուռը բաց էր , ներս մտաւ և գոցեց : Պ. Ֆրէմօն վար իջաւ և վազեց իւր ծառաւ . ները հաւաքելու :

— Բայց ինչո՞ւ Ժիւլի դուռը չբացաւ կիւսթավին :

— Վասն զի յայնժամ իր սենեակին մէջը չէր . որուն պատճառը դիւրին է ձեզի բացայայտել :

Տիկին Պէրլի իւր սենեակը ելած ատեն , կ'կարծէր թէ կիւսթավը հոն պիտի գտնայ . որչափ զարմացաւ հոն չ'տեսնելով զնա . ամէն կողմ նայեցաւ , մինչեւ իսկ դարան-ներու մէջ . չկայ կիւսթավ . . . արդեօք ո՞ւր լինիլ կարէ : Ժիւլի պատուհանը բացաւ , պարտէղը նայեցաւ , շատ ուժով հազար . սակայն ոչ ոք կ'երեւար :

— Սպասելէ ձանձրանալով , մեկնած ըլ-լալու է . . . բայց ո՞չ . կիւսթավ այսպէս չթողուր զիս . կարելի է վախցեր է հոս գալու և նախամեծար համարեր է պարտի-դին մէջ սպասել զիս : Այցելեմք պարտէղը :

Ժիւլի ճրագ մ'առաւ , շատ կամացուկ վար իջաւ և գնաց նայելու բոլոր խոփւ-ները , մացառները և պըակները , եւ կէս

ձայնով մը «Կիւսթավ» կանչեց : Պարտէզը  
շատ մեծ էր . և Ժիւլի դեռ կէսը չ'որո-  
նած՝ Պ. և տիկին Ֆրէմօնի աղաղակները  
լսեց . դողալով կանդ առաւ :

— Կորսուեցանք . երևան ելած է , ըստ :

Տիկին Պէրլի փութացուց իւր քայլերը  
դէպ ի պատշգամ , ծառուղւոյ մը ետեւը  
Օրէլի շապիկով եկաւ բազկացը մէջ նետ-  
ուեցաւ :

— Ա՞հ , մօրաքոյր իմ , փախչիմք , տան  
մէջ գող կայ : Չ'լսեցիք մեր ձայները :

— Լսեցի և անոր համար է որ պարտէզ  
իջայ . բայց դուք վստահ էք :

— Ո՞հ , հարկաւ , անկողնոյս տակ պահ-  
ուեր էր . հիմա տանիքին վրայ է . բայց  
մօրաքոյր մի՛ մօտենաք պատշգամին , այս  
մարդը կարելի է վերէն հրացան մը պարպէ :

Տիկին պէրլի Օրէլին չէր մտիկ ըներ , և  
դէպ ի իւր սենեակը կը յառաջանար . նա  
հոն հասաւ , դուռը բացաւ , և ներսը բո-  
լորովին սեւ մարդ մը տեսնելով աղաղակ  
մ'արձակեց : Այս սեւ մարդը կիւսթավն  
էր , որ ծխնելոյզէն վար սահած էր :

— Դո՞ւք էք . լսեղճ կիւսթավ , ի՞նչ-  
պէս եղաւ :

— Անոնց ձեռքէն խոյս տալու համար ասկէ ուրիշ ճար չ'դտայ :

— Բայց զձեղ տամալւոյն վրայ չ'տեսնելով ի՞նչ պիտի մտածեն :

— Թէ ես պարտէղը իջած եմ :

Ժիւլի պատուհանը բացաւ . Ֆրէմօն՝ պարտիղանին եւ քանի մը դրացիներու հետ կ'գար : Այս պարոնները ջահեր և հրացաններ ի ձեռին տանիքը կ'ելլային , իսկոյն տիկին Պէրլի կեցուց զնոսա :

— Պարոննե՛ր , դողը փախաւ , ես տեսայ , որ պարտիղին մէջ ցատքեց եւ այս որմին վրայէն ելաւ :

— Սակայն , մօրաքոյր իմ , այս որմը շատ բարձր է . պարոններ , կաղաչեմ խուզարկեցէք ամէն կողմը :

Կիւսթավ ներսը պառկած էր : Տիկին Պէրլին ալ անմիջապէս դուռը գոցեց և դընաց պառկիլ իր բարեկամին քով : Պ. Ֆրէմօն և իւր ընկերները վար իջան , ուժով դուռը զարկին :

— Բացէք , բացէք մօրաքոյր , ըստ Պ. Ֆրէմօն :

— Սակայն ինչո՞ւ համար :

— Կընայ ըլլաւ որ գողը ձեր սենեկին ,

կամ ծխնելոյդին մէջն է , զի ծխնելոյդին  
ծայրը կոտրած է :

— Բարէ , մարդ չ'կայ սենեկիս մէջ :

— Նա պահուած է , մօրաքոյր իմ,  
շուտ բացէք , ապա թէ ոչ կորսուած էք :

— Բայց պարոն , ես բոլորովին մերկ  
եմ . վայրկեան մը սպասեցէք :

— Ժիւլի կ'հանուէք ստուգիւ , նա կիւսա  
թավին հագուստները իր անկողնոյն մէջ  
խոթելուլ , դրան մօտեցաւ :

— Պարօններ , պիտի բանամ , բայց ան-  
միջապէս ներս մի՛ մտնաք , որպէս զի ան-  
կողնոյս մէջ մտնելու ժամանակ ունենամ :

— Այո՛ , մօրաքոյր , բացէ՛ք :

Ժիւլի բացաւ գուռը , և գնաց պառկիլ  
նորէն կիւթավին քովը , որ մանկան մը շափ  
կծկուած էր :

Ֆրէմօն և դրացիք ներս մուան , որոնե-  
նեցին ամէն կողմը , ծխնելոյդին մէջը , մին-  
ջեւ անկողնոյ տակ նայեցան : Ոչ ոք . . . :

— Աղէկ կ'տեսնաք թէ հոս չ'կայ ըստ  
տիկին Պէրլի , զի ես տեսայ նորա պատին  
վրայէն մագլիլը :

— Բայց մօրաքոյր իմ , անոնք շատ աւ  
կրնան ըլլալ :

— Վերջապէս, հոս մէկը չկայ, կ'յու-  
սամ որ քնանալու աղատ կ'թողուք զիս :

— Քնանա՛լ, ի՞նչպէս քնանալ կ'խորհիք  
դուք, երբ մենք շրջապատուած եմք դո-  
ղերէ :

— Օ՞ն, երթանք, պարոնայք, ըստ  
Ֆրէմօն իւր դրացեաց, երթանք պարտէ-  
զին մէջ աղէկ մը նայինք :

— Բայց պարոն, ըստ պարտիզպանը,  
եթէ դողը պատէն վեր ելեր է, Պ. Գուր-  
թօ վարժապետին տունը իջած պիտի լինի:

— Իրաւ է պէտք է երթալ արթնցնել,  
զՊ. Գուրթօ : Կարելի է Հոն կ'ձերբակա-  
լեմք չարագործը :

— Է՛, պարոննե՛ր, միթէ զիս առանձի՞ն  
պիտի թողուք, ես չեմ ուզեր մինակ մնալ  
այն դետնայարկը :

— Մեզի հետ եկէք, տիկին :

— Ի՞նչ, այսպէս կիսամերկ դու՞րս ել-  
լամ: Ա՛հ, ես իմ մօրաքըոջս քով կ'կենամ.  
Նա քաջասիրտ և արի է. անոր քով այն-  
չափ վախ չեմ զգար: Մօրաքոյը իմ, կ'ու-  
զէք որ ձեզի հետ պառկիմ:

— Ի՞նչ անմոռութիւն :

— Ա՛հ, կ'աղաչեմ ձեզի մօրաքոյը իմ,

Գնացէք, պարոններ, բայց պարտիզանը  
իր պահապան առ մեղ թողէք :

Պ. Ֆրէմօնի խումբը գնացին զՊ. Գուր-  
թօ արթնցնելու, թողլով զՕրէլի տիկին  
Պէրլիի քով :

Կիւսթավին կացութիւնը դժնդակ և վը-  
տանգալից էր յոյժ : Մեր քաջը ստացած  
էր մի չար ոգի, և ոչ կարէր մարտնչիլ  
ընդ նմա : Ժիւլի ալ աւելի դժդոհ էր քան  
կիւսթավ . նա սարսուելով կ'դիտէր զՕրէլի,  
որ կ'դնէր իր գլխուն թաշկինակ մը և կը  
պատրաստուէր բաժանելիւր մօրաքեռ զան-  
կողին . վայրկեան մը յետոյ, տիկին Ֆրէ-  
մօն ամէն ինչ պիտի տեսնար : Անկողինը  
բոլորովին պատին կցորդ էր, հետեւաբար  
անկարելի էր սպրդիլ անկողնոյն տակ : Ու-  
րեմն ի՞նչ ընելու է :

Պէտք է յաճախ դիմագրաւել զանձն,  
պաշտպանելու համար մի մեծ բան, պա-  
տիւ :

Ուստի և հետեւաբար, Ժիւլի ոտք ե-  
լաւ այն պահուն՝ յորում Օրէլի պառկելու  
կ'գար :

— Ո՞ւր կ'երթաք մօրաքոյր իմ,

— Զայն մը լսել կարծեցի . կարծեմ

այդ պարոնները չ' նայեցան այս մեծ դարանին մէջ :

— ԱՇ, մօրաքոյր իմ, դուք կ' սարսափեցնէք զիս : Մի՛ մօտենաք, ստուգիւ հոնմէկը կայ :

— ԷՇ ուրեմն պէտք է ստուգել :

— Բայց քիչ մը կեցէք . երթամյառաջ պարտիզպանին աղդ առնեմ :

Երբ Օրէլի դուռը բացաւ և գնաց պարտիզպանը կանչելու, Ժիւլի, դարանին մէջ դտնեռած թուղթերուն ճրագը մօտեցուց, յորժամ պարտիզպանը վազելով կ' դար :

— Խաբուեր եմ, ըսաւ տիկին Պէրլի, բան մը չ' տեսայ :

— Հոգ չ' մօրաքոյր . թողէք որ պարտիզպանն որոնէ ամէն կողմը :

Պարտիզպանը սենեակէն ներս մնաւ եւ տեսաւ մի թանձը ծուխ որ կ' ելլէր դարանին մէջէն :

— ԱՇ, տիկիններ, դողը կրակ ձգեր է սենեկին մէջ :

— Կրակ, . . . փախչիմք, մօրաքոյր իմ; ծուխը պիտի խղդէ զիս :

Արդարեւ ծուխը կ' սկսէր լեցնելու սենեակը : Օրէլի վար իջաւ սուր աղաղակներ

արձակելով, պարտիզանն ալ վազեց ջուր  
բերելու : Ժիւլի հիւսթավին մօտենալով .

— Փախէ՛ք, բարեկամդ իմ, շուտ փա-  
խէ՛ք :

— Սակայն պէտք է որ հագուստներս  
առնեմ, կարծեմ ասոնք են . . .

Ժիւլի հրեց ղկիւսթավ սենեակէն դուրս  
ուր ծուխը գամքան զգամ կ'լենար : Պար-  
տիզանը որ յայնժամ վեր կ'ելլէր, երկու  
դոյլ ջուր ի ձեռին, ետես մի երիտասարդ  
որ ծրարով մը մերկ կ'փախչէր . անմիջա-  
պէս դոյլին մէկը զետինը դրաւ, և միւսը  
կիւսթավին դլխէն ի վար թափեց : Խեղճ  
երիտասարդը, մինչև յոսկեր թրջած, կատ-  
ղեցաւ և ուժգին հրեց իր ոսոխը : Պար-  
տիզանը կորոյս հաւասարակշռութիւնը և  
սանդուղէն վար դլորեցաւ : Հուսկ յետոյ,  
մեր քաջը շտապաւ փողոցը ելաւ, և սկսաւ  
բոլոր ուժովը վաղել :

Պ. Ֆրէմօնի տունէն նետքնկէց մի հե-  
ռու լինելով, կիւսթավ կ'սկսի հագնիլ :  
Բայց նոր վորձանք մ'ալ, զի փոխանակ իր  
հագուստները առնելու, ծուխին մէջ աղէկ  
չ'տեսնելով, Ժիւլին, ներքին բաճկոնակը,

բեհեղեայ վտաւակը , անդուսէ շրջազգես-  
տը և շղաշատեռէ գտակը ժողված էր :

— Կ'ըսուի թէ , սիրահարաց աստուածը  
կայ , ըսաւ մեր երիտասարդը մոխրագոյն  
շրջազգեստը հագնիլ ջանալով , բայց կ'թուի  
ինձ թէ այս գիշեր սատանան միայն խառ-  
նուեցաւ իմ գործերուս : 0՞ն , կնիկ ըլ-  
լանք . զի ուրիշ ճար չկայ . գոնէ ամառ-  
ուան մէջ ըլլայինք : Ա՛հ , որպիսի գժնդակ  
հագուստ , ի՞նչ ընեմ այս ժապաւէնները ,  
ծոպքերը , լարերը , Ա՛հ , ի՞նչ աղէտալի  
գիշեր : Այս կինը շատ սուղի նստեցաւ ին-  
ծի : Գեղանի կնկան մը հետ պառկիլ , ա-  
ռանց . . . 0՞ն անդը , աճապարենք լուս-  
նալէ յառաջ Փարիզ հասնիլ . քանզի այս հա-  
գուստով , ոստիկանութեան կ'յանձնուիմ :

Մինչդեռ այսպէս կը խորհէր մեր երի-  
տասարդը , տիկին Պէրլի նորա համար մեծ  
վտանգի մը կ'ենթարկուէր : Երբոր պար-  
տիղպանը ոռոգեց զկիւոթավ յոտից մին-  
չեւ ցգլուխ , Ժիւլի տեսաւ պարտիղպանը  
վար նետելով պարտէզին ճամբան ձեռք  
առնուլը :

— Ազատեցաւ , ըսաւ նա , բայց ի՞նչ կ'ը-  
սեմ , հագուստը անկողնոյս մէջ պահած էի ,

արդեօք սխալմամբ շրջազգեստս առած է :


Խսկոյն Ժիւլի մի յանդուզն որոշում ը-  
րաւ : Կանայք հաշուի չեն առներ բնաւ  
այն վտանգը , որով իրենց սիրահարը պի-  
տի ազատի : Հետեւաբար տիկին Պէրլի վեր  
ելաւ սանդուղէն , բոցը՝ կ'ըոլորէր արդէն  
սենեակին մի մասը . նա աչքերը գոցեց ,  
և իր չնշառութիւնը բռնելով , դէպ ի ան-  
կողին յառաջացաւ , հագուստը գտաւ եւ  
ուժով քաշեց . սակայն բոցի յորձանք մը  
վրան նետուելով , խառնակ մազերը շուտով  
բռնկեցան . սանդուղին առջեւը ինկաւ :  
Ժիւլի պիտի կորնչէր , եթէ պարտիզանը  
եկած չլինէր իր օդնութեանը : Քաջ մարդը  
վեր ելաւ , բազկացը մէջ առաւ զժիւլի ,  
պարտէզը բերաւ և անդ նորա գլխուն ջուր  
թափեց : Այս վայրկենիս սենեկին կահ կա-  
րասիքը այրեցան , որոնցմավ կիւսիմ ավին  
հագուստն ալ : Տիկին Պէրլի սթափեցաւ :  
Բայց նա յոյժ կ'վշտանար , քանզի երեսին  
ամէն կողմը երած էր , եւ իր բոլոր կե-  
նացը մէջ պիտի կրէր այս այրումին նը-  
շանները :

— Տգեղ պիտի լինիմ , ըստ Ժիւլի , այլ  
ևս զիս չպիտի սիրէ , սակայն իմ սիրտ միշտ

մի և նոյն է . բայց նա այսուհետեւ զանձն վտանգի չպիտի ենթարկէ ինծի համար :

Արդարեւ տիկին Պէրլի կորոյս իր բոլոր վայելչութիւնը :

Արդարուքեամբ կը դառնայ ամենայն ինչ յայսմ աշխարհի :



## ԳԼՈՒԽ ՃԸ.

### ՄԻ ՏԵՍԱՐԱՆ Ի ԳՈՒՐԹԻԼ

Կիւսթավ , շրջազգեստը ցեխերու մէջէն կ'քալէր . և այս հագուստով պէտք էր շուտով երթալ . որովհետեւ Գուրթիլի թաղը մի ընդհանուր բնակարան էր գինովաց : Կիւսթավ քայլերը կ'կրկնապատկէր , դըժուարաւ մէկ ձեռքովը շրջազգեստը բռնելով , միւսովը վտաւակը , և ստէպ կ'ստիպուէր մէկը կամ միւսը թողլով , խոյրը բըռնելու , դոր հողմը յափշտակել կ'սպառնար :

Պ . Ֆալօրի , մի հուժկու վայրենի , որ իր թմրկահարութեամբը և ստուար վերնա-

բամբովը անուանի էր : Ժան - Ժան Գուլթ -  
բօանթի հետ վէճ մ'ունէր , օրիորդ Նա -  
նօնի պատճառաւ : Պ . Ֆալօրի շոդմոդ ,  
բայց հաստատամիտ էր : Նա՝ Նանօնի աչ -  
քերը կ'համրուրէր , երբեմն իսկ կ'ընդու -  
նէր ապահակ մը ի պատիժ իւր ժպրհու -  
թեան : Սակայն և այնպէս ոսոխները իրա -  
բու կ'նետէին սպառնալից աչքեր . և մար -  
մաջում մը կ'զգային մարտնչելու : Քանզի  
ամենէն անդութ մարդն իսկ , սիրոյ առջեւ  
կ'մեղկանայ : Մարդկային մարմինը տկար  
է : Զարագործը , հրապուրիչը , նաև սա -  
տանան իսկ շատ կը սիրէ օրիորդաց մար -  
մինը . և այս է պատճառ որ այնշափ հո -  
դիներ կ'շեղին երկնային ճամբէն :

Պ . Ժան - Ժան բերել տուաւ շիշ մը ճեր -  
մակ գինի , Նանօն ընդունեց անկէ մի գտ -  
ւաթ : Դինւոյ ազդեցութենէն պարոն Ժան -  
Ժանի սէրը արծարծելով սկսաւ ձեռք նե -  
տել օրիորդին : Դժբախտաբար , պարոն Ֆա -  
լօրի , որ սէրը և նախանձը կը չարչարէին  
զինքը , պատուհանէն Նանօնը իր ոսոխին  
բազկացը մէջ տեսնելով , կատղեցաւ , եւ  
բիր ի ձեռին մոլեղնաբար վեր ելաւ :

— Է , բաւական զուարճացաք , պէտք

է վերջ տալ եւ զգալ իմ մահակիս ծանընթիւնը :

— Ի՞նչ կ'ըսես դու , վայրենի թաթափան , կ'կարծես որ պիտի վախցնե՞ս դիս քո մահակովդ :

— Պարոններ , ըսաւ Նանօն , զէնքերնիդ վար առէք , դուք երկուքնիդ ալ աղէկ մարդիկ էք , սակայն ես կ'ուզեմ Պ. Ժանժանի տալ ձեռքս :

Ֆավորի շրտնեցաւ , եւ իր որտին ցաւը փարատելու համար շատ բաժակներ պարպեց . բայց ընդհակառակը , կ'առաւելուր իր տապը . վար իջաւ : Այս միջոցիս կին մը մեծ քայլերով , Պէլվիլէն վար կ'իջնար . իր գնացըը քիչ մ'արական էր :

— Ահա իմ բաժինս , ըսաւ վայրենին մօտենալով , բառ մը և գաւաթ մը գինի :

— Անցիր ճամբէն :

— Շատ դեղեցիկ էք , տիկին ,

— Օն անդը , մէկ կողմ կեցիր , նեղութիւն մի՛ տար :

Անծանօթ կինը ապտակ մ'իջեցուց :

— Հօ՛ , հօ՛ , ըսաւ ֆավորի , ուրիշ կերպ ընելու է :

Կինը կռուիլ ուզեց , բայց վայրենին զայն

դրկածին պէս դէպ ի իր բնակարանը վազել սկսաւ : Երկու գիւղացիներ , իրենց իշուն վրայ հեծած հաւկիթ և կաթ կ'ըքրէին ի Փարիզ : Վայրենին որ նոցա գալը տեսած չէր , առջի իշուն վրայ ուժդնաբար զարնուելով , գիւղացին վար գլորեցաւ և բոլոր կաթը առուակին մէջ թափեցաւ : Անծանօթ կինը որ վայրենին բազկէն ելած էր , սկսաւ փախչիլ , Ֆավորին ալ ետեւէն : Կնկան շրջազդեստը իր ոտքերուն պլուելով , միւս իշուն զարնուեցաւ , գիւղացին , ինքը և հաւկիթները կաթին վրայ գլորեցան : Անծանօթ կինը , կամ աւելի ճիշդը խօսելով , կիւսթավ , անվարտի լինելով , Ֆավորի խաբուած ըլլալը տեսաւ , և սկսաւ փախչիլ . կիւսթավն ալ կը փախչէր . գիւղացիներն ալ ետեւէն վազելով կը պոռային .

— Բոնեցէք , սա գող կինը , որ մեր կաթը թափեց և մեր հաւկիթները կոտրեց :

Անցորդները կ'ինդային կիւսթավին վըրայ և չ'էին բռներ , շաղաշուտ տղայքներ գիւղացւոց հետ կ'վազէին . սակայն կիւսթավ զարմանալի արագութեամբ կ'վազէր . շատ յառաջացաւ և շատ մը պտոյտներ ը-

նելէ յետոյ , վերջապէս ներս մոտաւ խա-  
նութէ մը զոր դեռատի կին մը նոր կը  
բանար :

— Կ'աղաչեմ , տիկին , սա խաժամուժ  
ամբոխի հալածումներէն փրկեցէք զիս :

— Սակայն չեմ ճանչնար զձեղ , տիկին  
... պարոն ... ա՛հ , Աստուած իմ , այս  
դէմքը , բայց այո , դուք էք , նիգօլա  
թուփէ :

— Դուք ալ տիկին Հէնրի , Ուրս փողո-  
ցին սիրուն փերեղակուհին :

— Այո , պարոն , ես եմ , ա՛հ , զարմա-  
նալի հանդիպում :

Տիկին Հէնրի , կիւօթավը խանութին մէջ  
թողլով , վերի սենեակը ելաւ ; ուր Սիւզօն  
կ'պառկէր : Տակաւին գիշեր մի միայն Սիւ-  
զօն տիկին Հէնրիի քովն էր . սակայն եր-  
կու զգայուն սրտեր խիստ շուտով զիրար  
կըմբռնեն : Փերեղակուհին գիտէր ներո-  
ղամիտ լինիլ այն յանցանաց համար , զորս  
այս տարիքը կ'գործէ :

— Բայց կ'ճանաչեմ զայս Պ . Նիգօլա  
նաև անոր հետ Վիլէթի մի հարսնիքի մէջ  
գտնուած եմ :

— Ստուգիւ , տգեղ և անմիտ չէ :

— Ընդհակառակը , սիրուն և հանճարեղ մի երիտասարդ է . սքանչելի կերպով կը պարէ :

— Նիգօլա՛ , ոչ տիկին կ'սխալիք , նա շատ փծուն է . հաղիւ աւ աշաւ ուս երթալ գիտէ : Նա և վատասիրտ է զերդ մի նապաստակ :

— Վատասիրտ , երենագործ մանչ մը դանալից ըրաւ :

— Ա՛հ , տիկի՛ն , եթէ դուք ճանաչէիք զՊ . Կիւսթավ , պիտի տեսնայիք թէ ի՛նչ տարբերութիւն կայ անոր եւ այս տգեղ Նիգօլայի միջեւ :

— Կարելի է որ նա աւելի աղէկ է , բայց չեմ կրնար ըսել թէ Նիգօլա տգեղ է :

Սոյն գիշերը որչա՛փ երկար թուեցաւ Սիւղօնի : Ժամանակը քանիցս ծանրադին կ'անցնի երբ հեռու լինի մարդ իւր սիրելիէն :

Հետեւեալ առաւօտ , տիկին Հէնրի , մինակ վար իջաւ խանութը բանալու համար , ահա այս միջոցին կիւսթավ յանկարծակի ներս մտած էր : Տիկին Հէնրի փոքրէկին քովը ելաւ :

— Այն Նիդոլա Թոռւփէն , զոր կատես ,  
վարը խանութիս մէջն է :

— Ո՞վ երկինք , գոչեց Սիւղոն , ա՞հ , տի-  
կին կաղաչեմ , մի՛ ըսէք թէ ես հոս եմ :

— Մի վախնաք բնաւ , ես անոր չեմ ը-  
սեր որ գու հոս ես :

Տիկին Հէնրի նորէն կիւսթավին քովը ի-  
շաւ . բայց Սիւզօն հանդարտած չէր բնաւ .  
Նիդոլայի փերեղակուհոյն քով գալուստը ,  
յաչս Սիւղօնի այն ապացոյցն էր որ իր նը-  
շանածը տակաւին զինքը առնուլ կ'ուղէ :  
Ուստի ոտք ելաւ , շուտով հագուեցաւ . ա-  
մէն վայրկեան զարհուրանքը կ'աւելնար ,  
կարծելով թէ Նիդոլա սանդուղէն կ'գայ .  
Խուճապաւ գոյգերը ծրար մ'ըրաւ , գաղտնի  
սանդուղէ մը վար իջաւ , եւ անկից փո-  
ղոցը ելաւ . յետոյ ծրարը թեկին տակ սկը-  
սաւ վաղել :

Կիւսթավ կ'հանդչէր խանութին մէջ , ու-  
րախութեամբ կ'տեսնէր թէ հետքը կորու-  
սած են : Տիկին Հէնրի վերադարձաւ :

— Տիկին , ըսաւ կիւսթավ , չնորհք մ'ը-  
րէք ինծի , առնական զգեստ մը հոյթայ-  
թեցէք :

— Կ'ցաւիմ որ չեմ կընար , քանզի պա-

տիւ ունիմ ես . ի՞նչ կ'մտածեն իմ վրայօքս ,  
թաղին մէջ , եթէ յանօթ կամ ծախու առ  
նեմ մի արական հագուստ . ասկէ ի զատ ,  
պարոն , դուք չէք կընար հոս հանուիլ :

— Ռւբեմն , տիկին , կ'ուղէք որ այս այ-  
լանդակ հագուստով դուրս ելլամ :

— Բայց ինչու այսպիսի ծպտեր էք :

— Ա՛հ , տիկին , պարագայները ստէպ կը  
տիրեն առ մեզ . մեք պատահարաց խա-  
ղալիքն եմք : Այս ինչ զրօննելու համար  
տունէն դուրս կ'ելլայ , և իր բարեկամին  
մեռնիլը լսելով , յուղարկաւորութեան եր-  
թալ կ'ստիպուի : Այն ինչ պարահանդէս  
երթալու համար դուրս ելած ատեն , տա-  
նիքէն մի կղմինտը կ'իյնայ դլխուն , և փո-  
խանակ պարելու յանկողին կ'ծառայէ : Գա-  
լով ինծի , տիկին , երէկ տունէն դուրս ե-  
լայ , հագուստներս այրեցան . և թէպէտ  
շատ անվայել եմ այս կերպով , սակայն ա-  
ւելի աղէկ սեպեցի մի շրջաղգեստ հադ-  
նիլ քան մերկ մնալ : Ահաւասիկ թէ ինչու  
ծպտած եմ առանց բարեկենդանի մէջ լի-  
նելու :

— Բայց դուք հիմա իրմանվիլէն չէք  
դար :

— Երմանվիլ, և ի՞նչ գործ ունիմ անդ։  
— Միթէ պարոն Լիւքայի տունը չէ՞ք  
բնակիր։

— Ա՛հ, մեծապէս կ'սխաղիք տիկին, լաւ  
դիտցէք որ ես Նիդօլա Թուփէ շեմ։ Ես  
այս անունը առած էի Պ. Լէտրիւի հարս-  
նիքին մէջ չ'ճանչցուելու համար։

— Ուրեմն անո՞ր համար է որ խեղճ Սիւ-  
զօն կ'պնդէք թէ . . .

— Սիւզօ՞ն, Սիւզօ՞ն, ա՛հ, սիրելիոդ իմ  
տիկին Հէնրի, կ'ճանաչէ՞ք դայն։

— Այո պարոն։

— Փոքրիկ, բարեկիրթ, սիրուն, կայ-  
տառ, ա՛հ, տիկին, ո՞ւր է նա։

— Էհ, Աստուած իմ, ի՞նչ եռանդ, որ-  
պի՞սի աւիւն, բայց ո՞վ էք դուք ուրեմն։

— Ես այն երիտասարդն եմ, որուն հա-  
մար Սիւզօն զոհեց զամենայն ինչ։ Կիւս-  
թավ, գնդապետ Մօրանվալի քեռորդին։

— Դուք կիւսթավ, ա՛հ, իրաւ պարոն,  
կը դուշակէի։

— Սիւզօն ձեր քոնիս է կարծեմ։ դուք  
կ'վախնաք անոր հետ խօսել տալու զիս,  
սակայն հանդարտ եղէք։ մի միայն հինգ-  
վայրկեան տեսնամ, կ'մեկնիմ։

Տիկին Հէնրի իր սենեակը ելաւ . ի՞նչ մեծ  
եղեւ զարմանքը երբ չդտաւ Սիւզօնը . շըր-  
ջեց բոլոր կողմը , այսր անդր նայեցաւ ,  
կանչեց , անօդուտ ջանք : Փերեզակուհին  
տխուր վերադարձաւ Կիւսթավին քով :

— ԱՇ , Աստուած իմ , աւասիկ մի ու-  
րիշ չարիք . Սիւզօն մեկներ է :

— Մեկնած . . .

— Զձեղ նիդոլա Թուփէ կարծելով , վեր  
ելած էի ձեր գալուստը իմաց տալու , կար-  
ծեմ անոր համար փախած է . սակայն հան-  
դարտեցէք , պարոն , նա հարկաւ պիտի  
վերադառնայ իմ քովս , ձեզի կ'իմացնեմ :

— Շնորհակալ եմ տիկին . առ այժմ բա-  
րեհաճեցէք ինծի կառք մը բերել տալ :

Կիւսթավ պահուեցաւ կառքին ունջը .  
և վշտակից փերեզակուհոյն շնորհակալ լի-  
նելէ զկնի դէպ ի տուն ճամբայ ելաւ :

Կիւսթավ կառքէն վար իջաւ և շուտով  
իր սենեակը ելաւ :

Գնդապետը իր քեռորդւոյն քովը եկաւ :  
Կիւսթավ դեռ պառկած էր , եւ Սիւզօնը  
վնտուելու համար հնարք կ'մտածէր , սա-  
կայն ճակատագիրը իրեն կ'արգիլէր սոյն  
դիտաւորութիւնը ի դործ դնելու : Քանզի

պարտիզանին դոյլին ջուրը , դաշտերու մէջ շապիկով և թեթեւ շրջազգեստով վազելը , նորա առողջութիւնը համակ խանդաբած էր :

Դո՛ւք , մեծդ Աղամէմնօն , որ ձեր զաւակը խղղուելու թոյլ կ'տայիք աստուածներու զօրավիզն ըլլալու համար , և դո՛ւք , յանդուզն Տելեմաք , որ Մինէրվ կ'ծածկէր զձեղ ամպի մը ներքեւ , երբ լինէիք մի մաքառումի մէջ : Կ'չնորհաւորեմ զձեղ թելադրուած լինելնուդ համար դիցն Հօմերէ . մեր ժամանակին մէջ , ձեր սնապարծութիւնը և արութիւնները բնաւ յարդոյ չպիտի լինէին :

Ուստի մեր երիտասարդը առանց ընդմիջելու մտիկ ըրաւ իր քեռւոյն խրատը . զիտենդը տկարացուցած էր զինքը : Անդութն Դրօմիֆիլ , որ կ'գողացնէր համայն աշխարհը , կ'ըլլար , կ'ըսեն , շատ քաղցր երբ ջերմէ բռնուէր : Գնդապետը բժիշկ մը կանչել տուաւ : Ժամէ մը յետոյ բժիշկը եկաւ , և ըսաւ թէ կուրծքի կաթուած մ'է իւր քեռորդւոյն հիւանդութիւնը : Գնդապետը յուսահատեցաւ . և յայտնեց բժշկին թէ եթէ կիւսթավ մեռնի , ինքն ալ չկրնար ապրիլ

նորա ցաւէն : թժիշկը անձնասպանութեան  
մը պատճառ ըլլալէ վախնալով այլ եւս չե-  
կաւ : Պ. Մորանվալ ուրիշ թժիշկներ կան-  
չեց : Վերջապէս վեց շաբաթէ յետոյ կիւս-  
թավ քիչ մ'ապաքինեցաւ :

Գնդապետը առտու մը հիւանդին քովը  
եկաւ .

— Գոհ եմ որ բաւական առողջացար ,  
ըսաւ կիւսթավը գրկելով :

— Այո քեռիդ իմ , բայց արդեօք Սիւ-  
զօ՞ն ինչ եղաւ :

— Դեռ կ'սիրե՞ս այդ գիւղացի աղջիկը :

— Այո , քեռիդ իմ :

— Սակայն դու չե՞ս ըսեր որ հեռաւու-  
րութիւնը կ'շիջուցանէ զսէր :

— Այո , բայց երբ հարեւանցի լինի :

կիւսթավ վերջապէս դուրս ելած ատեն ,  
դունապանը տեսաւ որ կ'վիճէր 15 տարե-  
կան կօշիկ ներկող տղու մը հետ , իր տու-  
փը դրան առջեւը դնելուն համար :

— Զեզի ի՞նչ ըրաւ այս տղան :

— Պարոն , այս աղտոտ տփովը դրան  
դիմացը նստած կ'աղտեղէ . նայեցէր ե-  
րեսը որչափ սեւ է :

Պարզամիտ տղան դլուխը կ'ծռէր և չէր

պատասխաներ: Կիւսթավ խանդաղատեցաւ:

— Պարոն Պէնօա, ինչու կ'վռնտես այս  
խեղճը, քանի որ ստակ շահելու համար  
հոս նստած է: Փողոցը ազատ է ամենեւ-  
ցուն: Ես կ'ուզեմ որ նստի: Առ փոքրիկ:

Կիւսթավ սկուգ մը նետեց խեղճ տղուն  
և հեռացաւ: Մեր երիտասարդը իր ա-  
ռողջութեանը հետ, վերստին կ'առնուր իր  
կայտառութիւնը և իր սիրային եռանդը:  
Նա դրեթէ իր ամէն վայրկեանը տիկին  
Ֆօնպէլի քով կանցնէր:

Երեք շաբաթէ յետոյ Կիւսթավ պիտի ա-  
մուսնանար Էօժէնիին հետ: Բայց ի՞նչ դէպ-  
քեր կընան պատահիլ այս կարճ միջոցին  
մէջ իսկ:



## ԳԼՈՒԽ ԺԹ.

Կ'ՆԿԱՆ ՆԵՆԳԵԴԱՐԾԱԹԻՒՅԵՐ

— Բարեհանեցէք ինձի ընկերանալու  
այս դիշեր տիկին Աէն-Գլէրի տունը. ըստ  
առտու մը Էօժէնի կիւսթավին, նուադա-  
հանդէս մը կայ:

— Ներեցէք, ես չեմ սիրեր ձեր տիկին Սէն - Գլէրը, այդ կինը միշտ կը նուաճէ զձեղ չափազանց մեծարանօք, կ'կարծէ՞ք որ անկեղծութեամբ կ'մտածէ, որպէս կ'խօսի :

— Դուք աղէկ գիտէք, կիւսթավ, որ ես կը մեծարեմ ընկերային հաղորդակցութիւնները. և ափկին Սէն - Գլէր յաչս իմ, անկեղծ կին մ'է, ուրեմն եկէք այս գիշեր հոն :

— Պատրաստ եմ ձեր հրամանին :

— Այո՛, գիտեմ որ այդպէս կ'ըսէք, մինչեւ որ ամուսնանայք . . . նայեցէք կիւսթավ, երբ ես կ'խորհիմ' ի վերայ այն փոփոխամտութեան զոր ամուսնութիւնը կ'ածէ ձեր վրայ. ա՛հ, կ'դողամ . . . իցի՛ւ թէ այսպէս առանց ամուսնութեան մեայինք : Եթէ էրիկ մը սիրահարէ մ'աւելի իրաւունք չունենար, յայնժամ ամուսնութիւնը մինչեւ վերջ հաճոյելի պիտի լինէր :

— Իմս սիրելի իօձէնի, դուք գիտէք որ որչափ կ'սիրեմ զձեղ. ամուսնութիւնը ոչ թէ փոփոխամտութիւն, այլ կատարեալ հաստատամտութիւն պիտի ներմուծէ իմ սիրոյս մէջ, քանզի մարդ կ'պահէ մի տար-

փածու կամ մի հարճ ի հաճոյից , սակայն  
կին մը ի հարկէ :

— Օն ուրեմն , կիւսթավ , ես ձեր կլնը  
պիտի լինիմ , բայց չեմ ուղեր որ ձեր սէրը  
անմիջապէս բարեկամութեան փոխուի :

— Անշուշտ , տարբեր սեռէ երկու ան-  
ձանց մէջ հաղուագիւտ կ'տեսնուի ընտա-  
նութիւններ որք բարեկամական լինին :

Կիւսթավ վերադարձաւ ի տուն իւր ,  
միշտ տիկին ֆօնապէլի վրայ խորհելով , զոր  
սիրելէ չեր կրնար դադրիլ . սակայն էօժէնի  
միշտ փաղաքշական խօսքերով կ'ծազրէր իր  
սիրահարները : Ուստի , տիկիններ , ասիկա  
մի նմանութիւն է աւետարանական բարո-  
յականի . « Զընել այլոց զայն՝ զոր դու չես  
ուղեր : »

Կիւսթավ ահա այս մելամաղձոտ խոր-  
հրդածութեան մատնուած , ներս մտած  
ատեն , դրան առջեւ կը տեսնէ ներկարար  
տղան որ քարին վրայ նստած և աչքերուն  
վրայ թաշկինակ մը բռնած էր :

— Ի՞նչ ունիս , բարեկամ :

— Պարօն , ըստ Պէտօս իր տիրոջը մօ-  
տենալով , պիտի ըսեմ ձեզի նորա լալուն  
պատճառը : Հօրս հետ ձեր ամուսնութեան

վրայ կ'խօսէինք . Նաև ձեր փոքր մանկիկ-ներուն վրայ , զորս պիտի ունենաք : Ահա յայնժամ այս տղան մեղի մօտեցաւ բաւական ընտանեկան կերպով , և հարցուց թէ ո՞վ է այն մարդը որ պիտի ամուսնանայ : Դեռ մեք հաղիւ թէ ձեր անունը տուածէինք , յանկարծ գոյնը նետեց , դեղնեցաւ եւ սկսաւ սուտ արցունք թափել , ինչպէս որ կ'տեսնէք . Կարծեմ կ'վախնայ , որ ձեր տիկին ամուսինը , իր տգեղութեանը համար թոյլ չպիտի տայ դրան առջև նստելուն :

— Ի՞նչ է քու վիշտդ , բարեկամ՝ կ'վախնաս որ ասկէ կ'վանտե՞ն զքեղ . անքոյթ եղիք . Երբ ես կարգուիմ , քովս կ'առնեմ զքեղ , դու իմ փոքր ծառաս կ'ըլլաս . Գո՞հ ես ասկէ :

Պարզամիտ տղան չպատասխանեց , բայց կիւսթավին ձեռքը համբուրեց : Մեր երիտասարդը խեղճ տղուն վշտին վրայ առանց բան մ'իմանալու խիստ յուզուած էր . բայց շուտով լոժէնիի և իր ամուսնանալու յիշողութիւնը հալածեց նոյն յուզումը :

Յերեկոյին , կիւսթավ , լոժէնիի հետ միամեղ , տիկին Սէն - Գլէրի տունը գնացին , Ակումբը բաղմամարդ էր . որք լաւ ընդու-

նելութեամբ հիւրընկալեցին զկիւսթավ . որն որ տիկին Աէն - Գլէրի աչացը մէջ չարասիրտ ուրախութեան մը տպաւորութիւնը նշմարեց : Այս տիկինը թէեւ բաւական դեղանի , սակայն հաճելի չէր թուեր կիւսթավին , հետեւաբար կ'վախնար նորա քինտպահութենէն :

Մօմերու նշոյլը , պաճուճեալ զարդարանքները , պճնեալ հագուստները և նըռուադը յոյժ կ'չքեղացնէին ակումբը , կիւսթավ գնաց նստելու կնկան մը քով , որուն մեծ փեղոյրը զրեթէ եր բոլոր երեսը կը ծածկէր . անոր քանի մը աննշան բառեր ուղղեց , սակայն փեղոյրով կինը չը պատասխանեց :

— Ինչո՞ւ չխօսիր արդեօք , ըստ մըտքէն , ակումբի մը մէջ սովորութիւն է մեզի խօսողներուն պատասխան տալ , կարելի է խուլ է կամ հանի մ'է :

Ապա քիչ մը երկնցուց զլուխը և ջանաց տեսնել զնա փեղոյրին տակէն :

— Ասիկա դեռատի կին մ'է , բայց գեղեցիկ չ'է . երեսը խաղաւարտով և սպիներով աւըուած է :

Մեր երիտասարդը երեսը կը դարձնէր ,

երբ շատ քաղցր եւ ծանօթ ձայն մ'ելաւ  
այն մեծ փեղոյրին տակէն :

— Ուրեմն, ստոյդ է, կիւսթավ, որ չը  
կարողացաք ճանաչել զիս :

Եւ այս ձայնը թնդաց մինչև կիւսթավին  
որտին խորը : Առ անմիջապէս դարձաւ :

— ԱՇ, ի՞նչ է. պատիր երեւոյթ մը չէ  
աս : Սիրելիդ իմ ժիւլի, սերեցէք ինձի .  
բայց ի՞նչ հիւանդութիւն եկաւ ձեր վրայ :

— Ասիկա հիւանդութիւն մը չէ, բարե-  
կամ. կ'յիշէք այն ձախող զիշերը՝ յորում  
այնշափ նեղութիւն քաշեցի զձեզ փրկելու :  
Սենեակս մուայ ձեր զգեստերը փնտուե-  
լով, ձեր ետեւէն բերելու համար : Մա-  
զերս բռնկեցան և ծուխէն խղդուելով ինք-  
ղինքս կորուսի :

— Խեղճ ժիւլի, և ասիկա ինձի համար .  
վատարախտ կին . . .

— Բարեկամդ իմ, չեմ գանդատիր . յան-  
ցաւոր էի պատիժը կրեցի :

— ԱՇ ժիւլի, որշափ կիներ ձենէ հար-  
իւր անդամ աւելի յանցաւոր ըլլալով հան-  
դերձ չեն պատժուիր :

— Ես կորուսի ձեր սէրը, բայց կ'յու-  
նամ պահել ձեր բարեկամութիւնը . հիմա

Երիկս հոս պիտի դայ . ա՞հ , կիւսթավ , շատ  
կ'վախնամ այս բանակցութենէ . տիկին Սէն-  
Գլէր կ'ճանաչէր զՊ . Տէժարտէն , իմացած  
է անկէ թէ դուք երբեմն զիս տեսնելու  
կ'դայիք : Ուստի այս նենգամիտ կլնը Պ .  
Պէրլիի քով զմեղ խայտառակելու համար  
հոս հրաւիրած է :

— Իրաւունք ունիք . պէտք է խոյս տալ  
այս չարասիրտ կնկան ձեռքէն :

Կիւսթավ գորովանօք Ժիւլիին ձեռքը  
սեղմելով սրահին դուռը եկաւ : Տիկին Սէն-  
Գլէր որ կ'դիտէր երիտասարդին բոլոր շար-  
ժութերը նորա առջեւը ելաւ .

— Է , ուր պարոն , կ'թողո՞ւք զմեղ :

— Ա՛չ , տիկին , պատասխանեց կիւսթավ  
իր բարկութիւնը ծածկելով , քիչ մ'օդ պի-  
տի առնեմ :

Երբ կիւսթավ կ'նկրտէր աիկին Սէն-Գլ-  
էրի ձեռքէն խոյս տալու , երկու նոր հիւ-  
րեր սրահէն ներս մտան և իր ճամբան ցան-  
կեցին : Այս երկու պատուաւոր անձինք Պ .  
աը Պէրլի և Տէժարտէն էին : Յանկարծ ե-  
րեկոյթը փոխուեցաւ . Ժիւլի սկսաւ դո-  
ղալ , իր ոյժը լքոյց զինքը . մարեցաւ եւ  
իր քովի պառաւ կնկան վրայ ինկաւ , որն

որ իր սկզբնդին հետ կը խաղար :

— Պարո՞ն, ըսաւ մեր քաջը, եթէ կուզէք իսծի հետ խօսիլ, պատրաստ եմ ձեր հրամանին . ահաւասիկ իմ հասցէս :

Եւ կիւսթավ իր այցետումսը պարոն Պէրլիին ձեռքը դսելով, առանց պատասխանին սպասելու դուրս ելաւ :

Այս դէպքին հետեւեալ օրը, կիւսթավ դնաց կանուխ առ Էօժէնի . որմէ յանդիմանութիւն մը լսել կ'կարծէր : Տիկին Ֆօնալէլ թէև չըրաւ այնպիսի բան մը, սակայն իր վարմունքը փոխուած էր . պաղ և մըտախոհ լուութիւն մը կ'սպահէր :

— Պարո՞ն, ըսաւ վերջապէս Էօժէնի, այս իրիկուն թատրոն պիտի երթամ կ'բարեհաճի՞ք ինծի ընկերանալու :

— Մեծաւ հաճութեամբ, տիկին :

Կիւսթավ տուն վերադարձին .

— Ի՞նչ կը նշանակէ այս անձնակամութիւնը, ըսաւ, սրդողած կ'երեւի, և տեսարան երթալ կ'առաջարկէ ինձ : Էօժէնի նորօրինակ եւ նախանձու կին մ'է, ըարկանալ այնպիսի բաներու համար որոնք մեր բարեկամութենէն յառաջ տեղի ունեցած են :

Յերեկոյին կիւսթավ տիկին Թօնպէլի հետ  
թատրոն գնացին : Երկու տիկիններ օթեա-  
կէն ներս մտան . մին տիկին Սէն - Գլէր էր  
եւ միւսը նորատի կին մը , որուն երեսը  
համակ անծանօթ չէր կիւսթավին : Միւս  
կողմէն , տիկինն ալ մեր երիտասարդը ճանչ-  
ցած կ'երեւար : Իրարու նայեցան , ժպտե-  
ցան : Տիկին Տիւպուրկն էր այս կինը որ  
գիշերները իր եղբայրը կ'սպասէր : Յան-  
կարծ Պ. Տիւպուրկն ալ եկաւ :

Տիկին Սէն - Գլէր որ կիւսթավի և իօժէ-  
նիկ միջև երկպառակութիւն ձգել ու կ'ջա-  
նար . դժբաղդաբար օրիորդ Լիզէն իմա-  
ցած էր իիւսթավին խենդութիւնները եւ  
գիշերուան գէպքը , ի վազուց հետէ , իր  
վըէժխնդրութեանը վրայ կ'խոկար : Եւ տի-  
կին Թօնպէլի իմացուցած էր կիւսթավին  
սենեկին մէջ , Սիւզօնի դաղտնի բնակու-  
թիւնը , եւ ի՞նչու համար է բոլոր այս շա-  
րակամութիւնը : Վըէժ լուծելու համար  
կիւսթավէն որ զինքը կ'անարգէր և կ'խո-  
տէր : Եթէ կ'ուզէք գիտնալ թէ հակառա-  
կորդի մը երջանկութիւնը խանդարելու հա-  
մար , մինչեւ ո՞ւր կընայ հասնիլ մարդկա-  
յին հնարիմացութիւնը ,

Ոխակալ կնկան մը սրտին մէջ նայեցէք :  
Տիկին Սէն-Գլէր , խօսակցութեան մը  
սկսելով ,

— Պարոն Սէն - Ռէալ , ըստ նենդամը -  
տութեամբ՝ տիկին Տիւպուրկի նայելով , կը  
յուսամ որ ամուսնանալէ յետոյ գիշերա -  
պահներու հետ չպիտի կռուիք :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք տիկին :

— Բսել կ'ուզեմ որ , ինծի պատմած են  
ձեր խենդութիւններէն մէկը , որուն վրայ  
շատ խնդացի :

— Ի՞նչ է ան , հարցուց էօժէնի :

— Մտղրակից գիպուած մը . պարոնը գի -  
շերային ժամադրութիւն մ'ունեցեր է կըն -  
կան մը հետ :

— Բայց տիկին . . .

— Աստուած իմ , ինչու կ'զչարէք , պա -  
րոն Սէն - Ռէալ , դուք բոլորովին աղատ էք  
ձեր գործոց մէջ : Վերջապէս , պարոնը իր  
սիրահարին հետ պատուհանէն խօսած ժա -  
մանակ անկէ գիշերապահի խումբ մը կ'անց -  
նի , որոնց մէջ այդ կնկան էրիկը դժնը -  
ուելով . . .

— Բաւական է արդ , տիկին , չեմ գի -

տեր ի՞նչ է ձեր նպատակը , այսպիսի շին-  
ծու դէպքեր պատմելով :

Պ. Տիւպուրկ ուշադրութեամբ մտիկ կ'ը-  
նէր դտիկին Սէն - Գլէր եւ խիստ յուղեալ  
կ'երեւար . որոշեց վրէժ լուծել այս նա-  
խատինքէ , ըստ որում կիւսթավին բաղկին  
վրայ զարնելով՝ հրաւիրեց զնա իր ետևէն  
դալու : Անմիջապէս կիւսթավ հետեւեցաւ  
Պ. Տիւպուրկի և երկուքն ալ թատրոնէն  
դուրս ելան :

— Կրնա՞մ հասկնալ , պարոն , ըսաւ վեր-  
ջապէս կիւսթավ , թէ ի՞նչ ըսել կ'ուզէք  
ինձի :

— Դուք աղէկ գիտէք պարոն թէ , իմ  
պատիւս աղարտած էք . վասն որոյ ձեզի  
պիտի հասկցնեմ որ լուտանք չեմ ըլլար  
ես : Շատ դէշ և ծանր բան է կնկան մը  
պատոյն դպչիլ . դոնէ , երբ կ'անգիտա-  
նաք պէտք չէր շարագունիլ : Բարէ , պա-  
րոն , տուժելու էք :

— Բոլորո ին զրպարտութիւն է . որով-  
հետեւ եթէ ստոյդ եղած ըլլար , երբէք  
վասնզի չպիտի ենթաւկէի ձեր տիկին ա-  
մուսինը , զոր բնաւ չէի ճանչնար . մոտ-  
ծեցէք անգամ մը . պարոն , արդէն ծա-

նօթ սիրահար մը աղմուկ չըներ :

— Վերջապէս, դուք ինձի անպատռութիւն մ'ըրած էք, պիտի մենամարտինք :

— Բարէ, պարոն, խոռվարկու կնկան մը խօսքերուն ի՞նչպէս հաւատ կ'ընծայէք :


— Տիկին Սէն - Գլէր սուտ չխօսիր :

— Լաւ ուրեմն, պարոն, կոռինք :

Կիւսթավ եւ Տիւպուրկ ժամադրութիւն մը հաստատեցին հետեւեալ օրուան համար : Յորմէ հետէ մեր երիտասարդը փողցին սէջ մինակ մնալով,

— Խեղճ տիկի՞ն, ըսաւ, քո ամուսինդ նորօրինակ մարդ մ'է . եթէ պատեհ առիթ ձեռք բերեմ, պիտի ջանամ նորա կարծիքը իրականացնել : Առ այժմ թատրոն վերադառնամք :

Կիւսթավ օթեակին դուռը բանալով տիկին Սէն - Գլէրը միայն գտաւ, որուն ցասումը պիտի թափէր, սակայն համբերեց և դուրս ելաւ խորհելով թէ նա այնպիսի սեռ մ'է զոր մարդ պատռել եւ ակնածել կը պարտի ամէն պարագայի մէջ :



ԳԼՈՒԽԻ Ի.

ՄԵՆԱՄԱՐՏ

Կիւսթավ, հետեւեալ օր առաւօտուն՝  
իր ատրճանակները առնելով, տունէն դուրս  
ելաւ . փոքր պարզամիտը արդէն քարին  
վրայ նստած պատառ մը հաց կ'ուտէր զոր  
արցունքովը կ'թրջէր . Կիւսթավ մեղմովին  
անոր մօտեցաւ և ուսը դպաւ :

— Ի՞նչ ունիս, բարեկամ, ի՞նչու միշտ  
կ'լաս . ի՞նչու չես ուզեր ինձի պատմել քու  
վիշտերդ . եթէ թշուառութեան մէջ ես,  
եթէ քո ծնողքդ դժբախտ են, առ այս  
քսակը և մի՛ խնայեր :

— Ես բանի մը պէտք չունիմ, պարոն,  
պատասխանեց կէս ձայնով մը փոքրիկը,  
մերժելով այն քսակը զոր կիւսթավ կու-  
տար նմա :

— Հետեւէ՛ ինձ ուրեմն, ըստ փոքրի-  
կին, քեզի պէտք ունիմ:

Պարզամիտ տղան անմիջապէս ոտք ելաւ  
և սկսաւ կիւսթավին ետեւէն քալելու . քիչ

մը վերջը նանդ էլիդէ եկան . ուր մեր պա-  
րոնը գտաւ իր հակառակորդը . և անդ իր  
փոքրիկ ընկերը ձգելով ինքը իւր ոսոխին  
մօտեցաւ :

— Ահա եկայ , պարոն , բայց կ'աղաչեմ  
քիչ մը հեռուն երթանք :

Աւրիշ ծառուղւոյ մը մէջ երթալով , կիւս-  
թավ հոն կանդ առաւ . երկու հակառա-  
կորդք իրարմէ հեռացան :

— Ներեցէք , պարոն , գոչեց կիւսթավ .  
քանի որ զձեղ անարդուած կ'կարծէք պէտք  
է որ դուք սկսիք :

Պ. Տիւպուրկ իր ատրճանակը կիւսթավին  
ուղելով աջ կողմէն զարկաւ . Մեր երի-  
տասարդը գետինը ինկաւ : Պ. Տիւպուրկ  
հեռացաւ , և փոքրիկը շատ խռովեալ գը-  
տաւ : Երբ Պ. Տիւպուրկ ըստ թէ իւր տէրը  
վիրաւորած է , փոքր մանչը ալացաւ անմի-  
ջապէս կիւսթավին դտնուած աեղը , ուր  
դայն գետինը պառկած եւ արեամք լեց-  
ուած տեսնելով , մօտեցաւ անոր և ուզեց  
օդնել . բայց որովհետեւ ոյժ չունէր , ինք-  
զինքը կորոյս և վիրաւորին քով ինկաւ :

— Բարէ , մումուաց կիւսթավ , կ'զգամ  
որ քալելու անկարող եմ , և ոչ ոք կ'անց-

նի , դեռ շատ կանուխ է . կիւսթավ կան-  
չեց . . . մէկը չկար . քալել ուղեց , բայց  
իր ոյժը կը լքանէին զի՞նքը . վերջապէս  
ինքն ալ փոքրիկին քովը ինկաւ մարեցաւ :

Բարեբաղդաբար հայր Պէնօա , որ շատ  
հետաքրքիր էր , դուռը բանալէ յետոյ ,  
շուտով իր տղան կանչած էր :

— Գաղտնիք մը , զաւակ իմ , Պ . կիւս-  
թավ հիմա տունէն դուրս ելաւ . նայէ հոն  
է . պղտիկ տղուն հետ կը խօսի . ահա գը-  
նաց անկէ . փոքրիկը ետևէն կ'երթայ . Պէ-  
նօա , պէտք է նա և դուն ալ հետեւիս ,  
բայց հեռուէն :

Պէնօա մինչեւ Շանգ - Էլիզէ կիւսթավին  
ետեւէն գնաց . ուր ատրճանակին ձայնը  
լսելով , իր տիրոջը քով եկաւ . յետոյ կառք  
մը բերաւ , իր տէրը կառքին մէջ դրաւ , և  
խեղճ նուաղեալ տղան հոն թողլով տուն  
վերադարձաւ : Պ . Պէնօա վրէժինդիր էր .  
շոիրած մարդէն վրէժ առնուլ կուզէր : Տը-  
դանձն հոգւոց համար է շարեաց փոխարէն  
բարիք հատուցանել , և ներել յանցանաց :

Բարեբաղդաբար կիւսթավին վէրբը թե-  
թեւ էր . կը պատմէր իր քեռուոյն նախքն-

թաց օրուան բոլոր դէպքերը , երբ էօժէ .  
նիէն նամակ մը բերին : Կիւսթավ կարդաց  
զայն և իր քեռւոյն տուաւ :

Գնդապետը հետեւեալը կարդաց .

« Կիւսթավ .

« Զեզի հետ ամսւսնանալով , չեմ ուզեր  
ոչ զձեղ եւ ոչ զիս թշուառութեան մատ-  
նել : Կ'զգամ որ շատ կ'սիրեմ զձեղ , բայց  
ձեր թեթեւամիւտ և յողդողդ բնաւորու-  
թիւնը անդադար պիտի յանձնէ զիմ հոգի  
ամենադժնդակ նեղութեանց : Երկու օրէ  
ի վեր կ'իմանամ ձեր փոփոխամտութեան  
ապացոյցները . և անցեալը կ'զողացնէ զիս  
ապագ ային համար : Մնայք բարեաւ . Ժիւ-  
լիներ , Տիւպուրկներ , Լիզեր , գեղջկուհի-  
ներ պիտի մխիթարեն զձեղ վասն կորըստ-  
եանն : »

ԷՕԺԷՆԻ

— Սիրելիդ իմ քեռի , այս անդամ ես  
բնաւ յանցաւոր չեմ . տիկին Սէն - Գլէր եր-  
կար ատենէ ի վեր կ'ջանար էօժէնիին սիր-  
ութ յինէ պաղեցնելու , վերջապէս յաջողե-  
ցաւ : Սակայն քանի որ տիկին մօնպէլ գիւ-  
րահաւատ է , չեմ ուզեր նորա ձեռքը ըն-  
դունիլ : Ամուսինք , երջանիկ ապրելու հա-

մար պէտք չէ իրարու դաղտնեաց վերա-  
հասու լինին . մանաւանդ պէտք չէ ականջ  
դնել այն խօսքերուն , որոնք մեր հանգըս-  
տութիւնը կը վրդովեն :

— Կիւսթավ , ճակատակիրդ ամուրի  
մեռնելու դատապարտած է զքեզ :

— Ո՞չ , քեռիդ իմ , ոչ , պիտի ամուս-  
նանամ . սակայն քանի որ հոս Փարփղի մէջ  
չդտայ ինծի յարմար կին մը . ուրեմն կը  
ճամբորդեմ : կ'երթամ ի Զու իցերիա , ուր  
կ'ըսեն թէ կանայք պարզամիտ և անկեղծ  
են . յԱնգղիա , ուր նոքա տարփանօք կը  
սիրեն իւրեանց ամուսինը . վերջապէս պի-  
տի այցելեմ աշխարհիս չորս մասերը թե-  
րեւս կին մը գտնամ :

Յանկարծ ծառայ մ'եկաւ իմաց տալու  
թէ փոքր տղան կ'գայ և կ'թախանձէ զՊ .  
Կիւսթավ տեսնելու : Պարզամիտ մանչը վա-  
զելով եկաւ . Կիւսթավին ոտքը նետուեցաւ  
և սկսաւ լալ :

— Ա՞հ , վոքր կեղծաւոր , ըսաւ մոքէն  
Պէնօա , որչափ ալ ողոքիչ է . տիրոջս ծա-  
ռան ըլլալ կ'ուզէ :

Գնդապետը տղան կ'քննէր և յոյժ դրադ-  
եալ կ'երեւար : Տասք օր վերջը կիւսթավին

վերքը գոցուելով, իր ճամբորդութեանը  
վրայ խորհեց, և հաւանեցաւ Պէնօան հե-  
տը տանելու: Գնդապետը ուզեց ընկերա-  
նալ իր քեռորդւոյն մինչեւ Սէն — Ժէր-  
մէն: Կառքը հեծնալով, Կիւսթավ աչքովը  
փնտուց փոքր մանչը, բայց տղան իր տե-  
ղը չէր:

Երկանիւ կառքը ճամբայ ելաւ, և եր-  
կու ժամէն Սէն - Ժէրմէն կ'մօտենար, եր-  
բօր հովի պէս վազող կառք մը թեթեւ  
երկանիւին զարնուելով տապալեց զնա: Կա-  
ռավավարը իւր ձիերը մորակելով փախաւ:  
Գնդապետը վիրաւորած չէր, ոսկայն կիւս-  
թավին մէկ ոտքը ճնշուած էր: Ասկէ զատ  
ետեւի կողմէն ցաւագին աղաղակ մը լսե-  
ցին: Պ. Մօրանվալ ետես փոքր ներկարար  
տղան զոր վերուցին եւ օթեւան տարին,  
զի կառքէն իյնալով խեղճ տղան միւսառ-  
բած էր: Կիւսթավ ճանաչեց փոքր մանչը  
որ կառքին ետեւը նստած էր: Գնդապետը  
տղուն քով զնաց: Կիւսթավը սենետակ մը  
փոխադրեցին ուր անհամբեր կ'սպասէր,  
երբ Պ. Մօրանվալ ներս մտաւ:

— Ի՞նչ ունիք քեռիդ իմ, ըստ Կիւս-

թավ վախնալով, խեղճ տղան շատ վիրաւ-  
ւորած է :

— Ո՞չ վէրքը թեթեւ է :

— Ուրեմն ի՞նչու համար յուղեալ էք :  
Բան մը կ'ծածկէք.յինէ, կ'աղաչեմ խօսեցէք :

— Է՞ն, բան մը չեմ ծածկեր, ի՞նչ կ'ու-  
ղես որ ըսեմ: Զե՞ս գիտեր որ շաղաշուտ  
տղայք սովորութիւն ունին կառքին ետեը  
հեծնալու . ինչ և իցէ, ես զայն կ'բուժեմ,  
ապահով եղիր . գալով քեզի, որովհետեւ  
վէրքդ այնչափ վտանգաւոր չէ, վազը համ-  
բայ պիտի ելլաս . մեաս բարեաւ ես Փարիզ  
պիտի վերադառնամ:

Մի քանի վայրկեան յետոյ, կիւսթավ լսեց  
որ իր քեռւոյն կառքը պանդոկէն կը մեկ-  
նէր : Եւ չէր իմանար նորա յանկարծակի  
մեկնումին պատճառը : Ճաշէն յետոյ նա  
պատուիրեց Պէնօաի, փոքր մանչէն լուր  
բերելու համար : Մառան դուրս ելաւ եւ  
անմիջապէս ետ դարձաւ :

— Կ'երեւայ թէ աղէկ է տղան, պարոն,  
զի մեկնած է : Պանդոկի սպասուհին ինծի  
ըսաւ թէ ձեր պարոն քեռին հետը տարեր  
է . կարծեմ այս սե տղան կախարդ մ'է :

Հետեւեալ օր, մեր երիտասարդք ձիուն

վրայ կենալու ոյժ ունենալով, Սէն - Ժէր-  
մէնը կ'թռղու իր ճամբորդութիւնը սկսելու  
համար : Եւ փոխանակ իտալիոյ ճամբան  
բռնելու դէպ ի էրմմոնվիլ կ'ուղղէ : Պէնօա  
կ'ճանչնայ գղեակը, փոքր կամուրջը, եւ  
հայր Լիւքայի տունը, որուն առջե. կեցաւ  
իր տէրը :

Կիւսթավ տան գաւիթը մտաւ : Մարի -  
ֆան, երիտասարդը ճանչնալով,

— Ա՞հ, դուք էք պարոն կիւսթավ :

Մեր պարոնը Լիւքայի ընտանիքը տեսնելէ  
յառաջ խոշոր աղջկան հետ խօսիլ ուղեց :

— Սիրելիդ իմ Մարի - ֆան, ինչպէս էք  
միշտ դոհ և ուրածիս էք :

— Ո՛չ, պարո՞ն, մեծ փոփոխութիւն կայ.  
արդարեւ դուք չէք դիտեր ասիկա, օրի-  
որդ Սիւզօն ձգեց զմեղ. բայց ներս մտէք  
պարոն, տիկինը ձեզի պիտի պատմէ :

Կիւսթավ Մարի - ֆանի խօսքերէն նոյա  
անտեղեակ լինելը իմանալով ներս կ'մտնայ  
ուր կ'տեսնէ զհայր և զմայր Լիւքա : Գիւ-  
ղացիք յօժարութեամբ կ'ընդունին զնա :  
Տիկին Լիւքա լալով կ'պատմէ կիւսթավին,  
իր աղջկան աներեւութանալը :

— Սիրելի պարոն, կշարայարէ մայր Լիւ-

քա , Նիդօլա արդէն ամուսնացած է , վասն որոյ ալ չ'խորհիր Սիւզօնի վրայ : Գալով մեղի , արդարեւ խիստ կ'բարկանայինք յառաջուց նորա փախուստին վրայ , բայց հիմա որ գորովալից նամակներ դրելով , մենէ ներում կը խնդրէ , ա՛հ , պատրաստ ենք ներելու :

— Ալ չ'խորհինք Սիւզօնի վրայ , կ'ըսէ կիւսթավ մտքէն , ես անմիտ մ'եմ կարծեւ . լով թէ մի այդպիսի դեղանի օրիորդ ինձի հաւատարիմ կ'մնայ : Նա այլոց պէս ըրածէ . հիմա չ'սիրեր զիս :

Եւ երիտասարդը թողլով հայր Լիւքային տունը դէպ ի հտալիա յուղի ինկաւ :

Մեր երիտասարդը , ուժ ամիս հտալիոյ մէջ , վեց ամիս Սպանիոյ մէջ , տարի մը Գերմանիոյ մէջ , երեք ամիս Բոլոնիոյ մէջ վերջապէս վեց ամիս ալ Անդղիոյ մէջ մնաց :

— Գիտե՞ս , ըստ օր մը կիւսթավ Պէնօահի , որ երեք տարիէ ի վեր Փարիզէն բացակայ կ'գտնուինք . բաւական է արդ Պէնօա , բացորոշապէս նախամեծար կ'համարիմ , ֆրանսուհի մը , քան այլ օտարուհիք : Քանզի , իտալացիք կայտառ և չափաղանց ցանկութեամբ բորբոքեալ են , և ստէպ որ-

լաքի հարուածներ կ'տան միմեանց : Սպա-  
նիացիք յոյժ նախանձոտ են , զեղխութիւնը  
եւ մուրողութիւնը աւելի շատ է հօն , եւ  
սպանիոյ բնակիչք մեղմութեամբ կ'վարուին  
մուրացկաններու հետ : Գերմանացիք շա-  
տախօս ու խիւտ պարամոլ են նաև Հռա-  
մոլ . Բոլոնիացիք պաղարիւն և անփոյթ են :  
Անգղիացիք զգայուն , սովորութեանց ճշդը-  
րիտ , և փոքր բաներու ուշադիր են . զի-  
նին և ձիարշաւը յոյժ կ'սիրեն . Անգղիոյ օ-  
րիորդները մի մեծ ազատութիւն կ'վայե-  
լեն , նոքա կրնան երիտասարդի մը հետ  
դուրս ելլալ , թատրոն կամ պարահանդէս  
երթալ , բայց ամուսնակալէն յետոյ , ալ  
չեն թողուր իւրեանց ամուսինը :

Կիւսթավ հրաժեշտ տուաւ Թայմղի եղե-  
րաց եւ անտի շոգենաւ հեծնալով , Գալէ  
եկաւ : Ժլատ եւ ցանկացող էր վերստին  
տեսնելու իր հայրենիքը , քեռին , և իր բա-  
րեկամները :



ԳԼՈՒԽԻ ԻԱ.

ԳՈՒՅԱՎԱՐ ԵՒՄ

Կիւսթավ արդէն քեռւոյն գրած էր իր  
վերադարձը, նաւէն Գալէ ելած ատեն,  
գեղեցկադէմ օժանդակ մը քովը մօտեցաւ:

— Պարոն կիւսթավը դո՞ւք էք :

— Այո, բարեկամ, ի՞նչ կայ :

— Առէք սա նամակը :

Կիւսթավ առաւ և հետեւալը կարդաց :

« Սիրելիդ իմ կիւսթավ .

« Ճամբորդութենէ յոդնած ըլլալով, ան-  
շուշտ կ'փափաքիս քիչ օրէն վերադառնալ ի  
Փարիզ. զքեզ կարի վաղ տեսնելու հա-  
մար, իմ նոր ծխապանս կը խրկեմ քեղի,  
սուրհանդակի մի աղէկ կառքով. Ժէրմէն  
քեղի առաջնորդ պիտի լինի, ուստի կը  
ցանկամ ողջագուրել զքեզ ընդհուպ : »

ԳՆԴԱՊԵՏ ՄՕՐԱՆՎԱԼ

Կիւսթավ կերակուր ուտելէ յետոյ ճամ-  
բայ ելաւ: Ճամբորդութեան երկրորդ օրը,

Երիկուան դէմ, կիւսթավ դլուխը կառքէն  
դուրս հանելով.

— Ժէրմէն, ըստ, ուր եմք հիմա :

— Պարոն, կարծեմ ճամբան զարտու-  
ղեր եմ :

— Ես կ'գուշակէի, ուրեմն միշտ քալէ,  
Ժէրմէն, առջեւի կայարանին, ճամբան կը  
հարցնես :

— Բայց պարոն, ձիուն պայտն ալ ին-  
կաւ, հիմա դժուարին է ընդուստ երթալ :  
Չափ կողմէն լոյս մը տեսայ երթանք ճամ-  
բանիս հարցնենք :

— Լաւ, և եթէ այդ տան մէջ հիւրըն-  
կալեն զմեղ, դիշերը հօն կ'անցնեմք :

Ժէրմէն դնաց, քիչ մը ետքը վերադար-  
նալով .

— Պարոն Աէն - Բէալ, ըստ, այն լոյսը  
գեղեցիկ մեծ տունէ մը կ'ելլէ, ուր սիրով  
կ'ընդունին զճանապարհորդս :

— Օ՞ն ուրեմն, երթանք :

Կիւսթավ կառքէն վար իջնալով, հոյա-  
կապ տան մ'առջեւ կ'գայ . տարիքոտ կին  
մ'անմիջապէս դուռը կ'բանայ :

— Ցիկին, կարծեմ կ'բարեհաճիք քանի  
մը ժամ ձեր տունը ընդունիլ զիս :

— Այս՝, պարոն, կրնաք ներս մտնալ:

Սպասուհին վերնայարկը կ'հանէ զեխութավ և զՊէնօա, և անոնց, վայելուչ զարդարեալ սրահ մը կը բանայ:

— Կրնամ արդեօք շնորհակալութիւնս մատուցանել ձեր տիրոջը, նորա այս հիւրասիրութեանը համար:

— Պարոն, մեր տէրը տիկին մ'է, որ կամակար կ'հիւրընկալէ զուղեւորս. բայց երբէք չ'տեսներ զնոսս:

— Շատ տարօրինակ բան:

Յանկարծ Ժէրմէն, երերուն դէմքով մը ներս կը մտնայ:

— Ահ, պարոն, ճամբուն վրայ ակօս մը կայ եղեր, զոր չ'տեսայ, կրրամք, փոքր կառքը կողմնակի թաւալեցաւ: Ահ, Աստուած իմ, անիւը խորտակեցաւ, սեռը կոտրեցաւ:

— Բարէ՛, յիրաւի քեռիս շատ աղեկ դըտեր է քեզի պէս ձիապան մը, է՛հ ուրեմն, Ժէրմէն, հիմա ո՞ւր պիտի անցնեմ այս գիշերը:

— Հոս, պարոն, ըստ պառաւ սպասուհին, անքոյթ եղէք. այս տան մէջ ձեզի համար բան մը պակաս չէ՛: Քանզի տիկինը

ինծի պատուիրեց ձեղի ըսելու թէ , կընա  
մնալ հոս որչափ որ կ'ուզէք :

— Արդարեւ ձեր տիկինը չափազանց մար-  
դասէր և ազնուասիրտ է եղեր : Շնորհա-  
կալութեամբ կ'ընդունիմ այս գիշեր նորա  
քաղցր հիւրընկալութիւնը :

Սպասուհին և Ժէրմէն դուրս ելան :

— Հետաքրքրութիւնս կը դրդռէ այս  
գաղտնի տիկինը , կ'ըսէ կիւսթավ Պէնօաի ,  
այս տիկինը որ այնչափ մարդասիրաբար  
կ'ընդունի օտարականները և ինքզինքը շը-  
ցուցնէր . . .

— Կ'երեւայ թէ շատ տգեղ է :

Ստուգիւ , մեք նորօրինակ եմք , երբ որ  
բան մը մեր աչքէն կ'խուսափի և կ'թաք-  
չի , կ'ջանամք և կ'մաշիմք զայն տեսնելու :

Կիւսթավ , կերակրոյ սրահը անցաւ : Ժամ  
մը վերջը սպասուհին , դեղեցիկ սենեակ մը  
տարաւ մեր երիտասարդը : Նա պառկեց ,  
բայց քունք չ'տարաւ . ելաւ պատուհանը  
բացաւ , լուսինը թոյլ կ'տար լաւ կերպով  
տեսնել ամէն բան . աջ կողմին վրայ սեն-  
եակ մը տեսաւ :

— Անտարակոյս , ըսաւ , հոն կը բնակի  
այն ասպնջական տիկինը :

Մեր երիտասարդը սենեակին մէջ թափանցել կ'ուղէր, բայց անմիջապէս իր հետաքրքրութեանը վրայ ամօթապարտ ըլլալով.

— Է՞ն, ի՞նչ կայ, ըստու, քանի որ տիկին մը չ'ուզեր օտարական մը տեսնել, ըստաքանչելի կին մը ըլլալու է. ասոր մէջ մեծ դաղտնիք մը չ'կայ :

Կիւսթավ կ'գոցէր իր պատուհանը, երբ որ տաւիղի մը ձայները եկան ականջին. նորէն պատուհանին առջեւ կ'նստի և ուշադրութեամբ մտիկ կ'ընէ : Յանկարծ ձայն մը կ'խառնուի տաւիղի ձայնին . մեր երիտասարդը արտասովոր հաճոյք մը կ'զգայ այս երդը լսելով, զոր անշուշտ անծանօթ կինը կ'երգէր : Բայց, աւազ, տաւիղը եւ երդը կը դադրի, զորս կիւսթավ միշտ լըսել կ'ուղէր : Նուագարանը, երբէք այսպիսի քաղցր ազդեցութիւն ըրած չէր իրեն : Ի զուր ժամ մը մտիկ ընելէ յետոյ, վերջապէս կը պառկի, և այն տիկինը ճանչնալու որոշում տալով կը քնանայ : Հետեւ եալ օրը, կիւսթավ շատ կանուխ կ'արթըննայ, և վար իջած ատեն սպասուհւոյն կը հանդիպի :

— Կրնա՞մ արդեօք պարտէզը շըլադայիլ :  
— Ա.յո , պարո՞ն , ուր որ կ'ուղէք կըլ-  
նաք երթալ :

— Զուարճալի տուն , կ'ըսէ կիւսթավ  
պարտէզ մտնալով , օր մ'ալ կենանք , կա-  
րելի է բաղդը ինծի հանդէալ կը բերէ այս  
տիկինը :

Աքանչելի ծաղիկներով զարդարեալ բու-  
րաստանի մը մէջ մտնելով , կիւսթավ կը  
տեսնէ փոքր աղջիկ մը որ հաղիւ երեք տա-  
րեկան կ'երեւար . մանկիկը յոյժ կայտառ և  
սիրուն էր . պարտէզին մէջ աստ եւ անդ  
վաղելով , ծաղիկներ կը ժողվէր , իրը թէ  
փունջ մը շինելու համար :

— Ի՞նչ կ'ընես հոս , դստրիկ , կ'ըսէ կիւս-  
թավ զայն գրկելով :

— Ծաղիկ կը ժողվեմ մայրիկիս տալու  
համար , պատասխան տուաւ փոքր աղջիկը  
ժպտելով :

— Շատ կը սիրե՞ս զայն :

— Ա.յո , հարկաւ . նաև իմ հայրս ալ :

— Իր հայրն ալ , այ , ահա պատաս-  
խան մը որ միտքս կը շփոթէ , այս հայրը  
կայ ուրեմն . բայց ինչո՞ւ համար իր կնոջը  
հետ միատեղ չէ : Կարելի է նորա բացա-

կայութեանը համար է որ տիկինը մարդ չընդունիր :

Կիւսթավ ուրիշ հարցումներ ալլրաւ աղջըկան . սակայն մանկիկը չէր կրնար աղեկ պատասխան տալ , իսկոյն երիտասարդին ձեռքքէն զերծաւ եւ տան ճամբան ձեռք առաւ : Մեր երիտասարդը ակնկառոյց կը նայէր փոքրիկին ետեւէն , որուն զարմանագեղ և չնորհալից դէմքը , ընդ միտս կ'ածէին դժուարիմաց և մթին յիշողութիւններ :

— Պէսօա՛ , դոչեց կիւսթավ , արդեօք ի՞նչ ընելու է տան տիկինը տեսնելու համար :

— Ա՛հ , ես տեսայ զնա , պարոն , այսինքն . անդաստակի մէջէն անցած ատեն ետեւէն տեսայ . նաև ձայնը լսեցի , որ տաւիդը հովանոց բերելու համար սպասուհւոյն կը հրամայէր :

— Բարէ՛ , պիտի տեսնեմ զնա , ուրեմն :

Կիւսթավ պարտիզին խորը շքեղ հովանոց մը նշմարեց , որուն ներքին կողմը հազիւ թէ կը տեսնուէր : Մեր երիտասարդը վաղվաղակի պարտէղ իջաւ , հովանոցին մօ . տեցաւ . ականջ դրաւ տակաւին ոչ ոք կարքայց իր ներկայութեամբը տիկինը չզայրացնելու համար , քիչ մը հեռացաւ և թանձ-

ըախիտ նշդարէնիի մը ետեը նստաւ : Յան-  
կարծ ոտքի ձայն լսեց , փոքր նշդարէնին  
քիչ մը մէկդի ընելով , տեսաւ դեռատի կին  
մը որ մանկիկի մը ձեռքէն բռնած հովա-  
նոցէն ներս կը մտնար , որուն դէմքը կիւս-  
թավ չկարաց տեսնել , վասն զի ստուար  
քող մը իր երեսը կ'սքողէը :

Կիւսթավ հովանոցին մօտեցաւ . ներս  
մտնալը անվայել պիտի ըլլար , քանի որ տի-  
կինը մարդ չընդունիր . բայց գէթ մտիկ ը-  
նելու թոյլտուութիւն կայ :

Տաւիղը հնչեց . տխուր և մելամաղձուտ  
երդ մը լսելի եղաւ , որուն խօսքերը մի  
ուխտաղանց երիտասարդի սիրովը տուորող  
սրտի մը ցաւը կարտայայտէր : Սակայն խեղճ  
կնկան վիշար երդը շարունակելու թոյլ չը-  
տալով , տաւիղը մէկ կողմ նետեց , և սկը-  
սաւ լալ : Կիւսթավ ջանաց ի յուշ ածել այն  
տխրագին ձայնը զոր արդէն լսած էր . հո-  
վանոցին բոլորտիքը շրջեց և ի զուր փոր-  
ձեց վանդակաց մէջէն տեսնելու . զի ա-  
մէնուրէք պատուհանները վարագոյրներով  
դոցուած էին : Բայց ի՞նչ բարեբախտու-  
թիւն . յանկարծ անծանօթ կինը պատու-  
հան մը բանալու եկաւ : Կիւսթավ վանդա-

կին մէկը մեղմովին բացաւ և իր ակնկառոյց նայուածքը հովանոցին մէջ ներմուծեց : Սակայն և այնպէս դեռատի կինը թիկունքը , պատուհանին դարձած ըլլալով , մեր երթասարդը չկարաց տեսնելնորա երեսը : Դատրիկը իր մօրը ճնգացը վրայ նստած նորա մաղերովը կ'խաղար :

— Մայրիկ , ալ չես երդեր . նորէն վրշտացար . . . միշտ կ'լաս . . .

Դեռատի կինը չպատասխանեց այլ համբոյրներ քաղեց նորա անմեղ այտերէն , և ապա իր թաշկինակը աչքերուն ատարաւ : Կիւսթավ կ'դողար , դժուարաւ կ'արտաշրնչէր . և իրեն այնպէս կ'թուէր թէ ինքն է պատճառ որ այն տիկինը արցունք կ'հեղու : Դատրիկը իր մայրը թողլով .

— Սպասէ , մայրիկ , ըսաւ , դուն աղէկ գիտես որ ես կարող եմ խափանել արցունքներդ :

Փոքր աղջիկը դնաց մի մեծ պատկեր առնելու , զոր կիւսթավ դեռ տեսած չէր : Փոքրիկը հազիւ հաղ բերաւ այս նկարը , որ դրեթէ իրեն չափ մեծ էր . համբուրեց դայն և իր մօրը տուաւ :

Նորատի կինը դրկեց իւր դստրիկը եւ

զայն նկարի առջեւ ծնբադրել տալով .

— Աղօթէ՛ առ Աստուած , ըսաւ , որպէս զի քո հայրդ տակաւին զիս սիրէ եւ մի օր վերադառնայ առ մեզ :

Կիւսթավ այլ եւս չկրցաւ իր անձին տէր ըլլալ . զի այս ձայնը շատ ծանօթ էր իրեն . նկարը աւելի լաւ . տեսնելու համար պատուհանը ելաւ , ուսկից նա ճանչցաւ այս կարի նմանադոյն իր պատկերը :

Երիտասարդը անմիջապէս հովանու և ներս մտաւ , գժուարաւ հաւատաց աչքերուն : Սիւղօնն էր այս կինը որ իր բազկացը մէջ նետուեցաւ . և իրեն ներկայացուց իր աղջիկը : Կիւսթավին սիրտը չկարաց հանդուրժել այս բոլոր զգայութեանց , որոնցմով ընկճեալ և ծանրաբեռնեալ աթուին վրայ ինկաւ :

Այս միջոցին դահլիճի մը դուռը կ'բացուի և գնդապետ Մօրանվալ կ'երեւի :

— Իմս սիրելի Կիւսթավ , կ'ըսէ նա ուրախութեամբ իւր քեռորդին գըկելով , ուրախ եմ որ չկրցար աղջիկ մը բերել . քանզի իս հոս քեզի համար կին մը և մանկիկ մը կ'պահէի :

Կիւսթավ չկարաց տակաւին պատասխա-

նել, նա բազկացը մէջ զՄիւզօն և իր աղ-  
ջիկը բռնելով կ'համբռորէր զնոսա :

— Օ՞ն, հանդարտէ, բսաւ դնդապետը  
ժպտելով, կարծեմ շատ հետաքրքիր ես ի-  
մանալու թէ ինչ եղաւ այն պղտիկ գեղջ-  
կուհին, զոր Փարփիղի մէջ կորուսած էիր :  
Քիչ բառեր կը տեղեկացնեն զքեզ : Այն  
փոքր ներկարար տղան որ դրան առջեւ կը  
նստէր, Սիւզօնն է եղեր . . .

— Սիւզօն, գոչեց կիւսթավ, և ես ըը-  
նաւ չճանչցայ զքեզ . . .

— Ահ, բարեկամիլ իմ, ես այնչափ ծըպ-  
տած և այնչափ սեւցած էի որ դուք չեիք  
կրնար ճանաչել զիս :

— Եւ ինչո՞ւ ուրեմն այս ծպտումը :

— Միշտ քու քովդ ըլլալու և ամէն օր  
զքեզ տեսնելու համար : Տիկին Հէնրիի քո-  
վէն փախած տտենս այս հնարքը մտածե-  
լով, ինչ որ ունէի փոխանակեցի, ծախեցի  
ներկարարի մը հագուստը ձեռք բերելու  
համար : Աւազ . . . մայր էի . . . և ար-  
դանդիս մէջ մեր սիրոյ արդասիքը կ'կրէի,  
և երբ դու իմ քովէս անցնէիր, շատ կը  
փափաքէի ինքինքս քո բազկացդ մէջ նե-  
տելու . բայց քենէ բաժնուելու վախր :

կ'արգիլէր ինծի սրտիս մղման և թելադրութեան հաւանելու :

— Խեղճ փոքրիկը յինէ կ'վախնար , պատասխանեց գնդապետը , սակայն ես չեմ այնքան խստասիրտ որչափ կ'երեւամ առ երեւոյթու : Սիւզօն , Փարիզէն մեկնած ժամանակ մեր կառքին ետեւը կ'հեծնայ , որ տապալեցաւ ի Սէն-Ժէրմէն : Երբ տղուն վիճակը տեսնելու դացի , որչափ զարմացայ տեսնելով թէ Սիւզօնն է եղեր այն մանչը : Դեռատի աղջիկը մեռնիլ կ'ուղեր , որովհետեւ դու կ'մեկնէիր առանց նորա . ես կը միմիթարէի զնա , յոյս տալով որ դու վերըստին պիտի տեսնաս զինքը , Արդարեւ շատ կ'հաւնէի Սիւզօնի կամարարութիւնը , սիրոյն զօրութիւնը , անկեղծութիւնը եւ մատաղութիւնը , վասն որոյ իմ տանս մէջ բնակեցուցի և մեծ խնամք տարի իր դաստիարակութեանը : Նա կ'ուսանէր զարմանափի դիւրութեամբ մը եւ իր բոլոր հաճոյքն էր , երբեմն քո վրայօքդ ինծի խօսիլ : Նա յաշխարհ բերաւ այս փոքր մանկիկը , զոր իր մօրը պէս կ'սիրէի , վասն զինորա քաղցրութիւնը եւ գեղեցկութիւնը ունէր : Օր մը Սիւզօն իմացաւ թէ իւր մայրը

ծանր հիւանդ է , իսկոյն անոր քովը վազեց : Մայր Լիւքա մեռաւ , ներելով իւր աղջկան այն յանցանքը զոր սէրը անոր դործել տուած էր : Սիւզօն ութ ամիս յէրմասն վիլ մնաց , այս միջոցին մէջ սաստիկ տենդմը առաւ տարրաւ զպարզամիտն Լիւքա : Ես էրմասն վիլ գացի եւ բաւական նեղութիւն քաշեցի Սիւզօնը զհետ բերելու համար . քանզի այլ ևս չէր ուզեր թողուլ իւր գիւղը և իր ծնողաց շիրիմը : Բայց ձեր սէրը վերըստին բերաւ զայն : Վերջապէս , սիրելիդիմ կիւսմավ , միշտ կ'գնահատէի սիրուհւոյդ առաքինութիւնները և սիրելի յատկութիւնները : Արչափ մեծարանօք կ'նայէր և կը խօսէր ինձի . քո նամակներդ որչափ անձկութեամբ մտիկ կ'ընէր . որոնց մէջ անդադար կը վախնար լսելու թէ չըլլայ որ դու ընտրութիւն մըլրած ըլլաս . որ զքեզկատարելապէս զիւրեւ ածէ եւ նուաճէ : Հուսկ ուրեմն , վերադարձդ դրեցիր ինձի և ես քեզի խրկեցի ժէրմէնը որուն դասը տուած էի արդէն զքեզ հոս բերելուն համար : Ես կ'ճանաչէի քո սիրտդ , կիւսմավ , բայց կ'ուզէի զայն հզօրագոյնս եւ զգալի կերպով յուզելու , որպէս զի առաւել եւս

մեծարես բոլոր այն երջանկութիւնը զոր  
ես քեզի վերապահած եմ։ Երջանիկ ե-  
ղիր, բարեկամդ իմ, ես քեզի կտամ աղ-  
նիւ, մեծարոյ և անձնուէր կին մը, որուն  
միտքը լաւ մշակած ըլլալով, անոր հետ  
կրնաս խօսիլ սիրահարութենէ ուրիշ նիւ-  
թերու վրայ։

— Սիրելիդ իմ քեռի, կըսէ կիւսթավ,  
Սիւզօնի, ձեր եւ իմ աղջկանս քով գտայ  
այն երջանկութիւնը զոր ի զուր փնտուել  
կը ջանայի։

— Սիրելի դուստր իմ, կըսէ դնդապե-  
տը միացնելով երկու սիրահարները, դուք  
ինձի յայտ առիք թէ առաքինութիւնը, հե-  
զութիւնը, հանճարը եւ գեղեցկութիւնը,  
կրնան տոհմին եւ հարստութեան տեղը  
բռնել։









2531

2532

